Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material


Ասլիբ
268

Ս. Էջմիածնի Մատենադարանի
ՍԵՐԲԵՐԱԿԱՆ
Ա Ա Գ Ա Բ Ա Ն

N. 26
XIII

1/4
62.

Մեր. 268

Ս. ՊԱԼԱՍԱՆԵԱՆ

2003

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

Ինչ որ սովորեցնես, նախ մայրենի լեզուով սովորեցուր. այս այն օգուտն ունի, որ ուշադրութիւնդ դարձած է լինում բուն առարկայի եւ ոչ բառերի վրայ։

Վ. ՌԱՏԻՉ։



ԹԻՓԼԻՍ

Въ типографіи Амбарцума Энфіаджіанцъ и


1874.

Дозволено цензурою Тифлисъ. 15-го Іюня 1874 года.

268-2003
(Ղ247.57)
ՀՍ 267

Ե. Ց.

Ղուիրվում է հանգուցեալ Տիկին ԵՂԻՍԱԲԵԹ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ յիշատակին, որի օժանդակութեամբը լոյս տեսաւ այս գիրքը:



...Ուսուցիչը պիտի պահանջէ աշակերտից տուած դասի միտքն ու պատրուակութիւնը եւ ոչ թէ միայն բառերը։ Իմանալու համար թէ աշակերտը որքան օգուտ քաղեց իւր սովորածից, նա չպէտք է աչքի առաջ ունենայ նորա յիշողութիւնը, այլ նորա գործողութիւնները, նորա ամբողջ կեանքը։ Նա պէտք է ստիպէ աշակերտին գործ դնել իւր սովորածը հազարումէկ ձեւով, հազարումէկ առարկայի վրայ, որպէս զի տեսնէ՝ թէ սովորածը լաւ է հասկացել ու սեպհականել, թէ ոչ։ Մեղուները ծաղիկներից հիւթ են ծծում. բայց նոքա այդ հիւթից մեղր են պատրաստում, որ արդէն իրանց սեպհական գործողութեան արդիւնքն է եւ ամենեւին ծաղկի նման չէ։ Այսպէս եւ աշակերտը ուրիշներից ընդունածը պիտի փոփոխէ ու մշակէ։ Մեզ այնպէս վարժեցրին ծծել օգնութեանը դիմել, որ ինքներս մենակ չենք կարող մի քայլ անգամ գալ. մեր ազատութիւնն ու զօրութիւնը կորան։ Ուրեմն թող դաստիարակը ստիպէ աշակերտին քննել ամէն կարծիք եւ ոչինչ չխրէ գլուխը՝ որ հաւատ է պահանջում։...

ՄՈՆՏԵՆ։

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Շատ հեռու չեն մեզանից այն ժամանակները, երբ հայերէն լեզուի ուսումը գրաբարով սկսվում ու գրաբարով աւարտվում էր, երբ ամէն բան հիմնվում էր լոկ մեքենայականութեան վրայ, երբ յիշողութիւնը ամենամեծ դերն էր խաղում մեր ուսումնարաններում, իսկ մտաւոր զարգացում բառերը դատարկ ու աննշանակ հնչիւններ էին։ Երկար տարիների փորձը և արևմտեան մանկավարժների լուսաւոր մտքերը արմատական փոփոխութիւններ մտցրին մեր բանիմաց ուսուցիչների դասատուութեան եղանակի մէջ. նոքա պարզ կերպով հասկացան, որ ինչպէս մեր հին կամ գրոց լեզուի, այնպէս և ուրիշ լեզուների ուսման և առհասարակ դաստիարակութեան գործի մէջ արդիւնաւոր հետևանքների հասնելու համար՝ լեզուի դասատուութիւնը սկսելու է անշուշտ մայրենի խօսուն բարբառով, և թէ կենդանի լեզուն պիտի համարուի միակ հաստատ հիմ, որի վրայ պիտի բարձրանայ կանոնաւոր դաստիարակութեան շէնքը։

Եւ ահա հետզհետէ լոյս են տեսնում կենդանի լեզուով գրած այբբենարանները և սկզբնական ընթերցանութեան գրքեր մանուկների ամէնօրեայ կեանքից, նոցա շրջապատող բնութիւնից առած նիւթերի վրայ, որոնք նոր սերունդի կրթութեան առաջին քայլը ապահովացնում են։ Բայց ինչպէս ամէն գործի մէջ, այնպէս և այստեղ մի կէտի վրայ անշաքժ մնալով մեծ վնասների պատճառ կարող ենք դառնալ. պէտք է քաջութիւն ունենանք սխալներս գլուխ տանելու, որպէս զի մեր յաջորդների արդարացի դատապարտութեանը չենթարկուինք՝ թէ հեռևաբար չենք վարուել, թէ եւրոպական գիտութեան պահանջողութիւնները կատարելապէս չենք ըմբռնել ու սեպհականել, այլ միայն իբրև մի նորաձևութիւն ընդունել ենք նոր ուղղութիւնը, որ ցոյց տանք թէ մենք էլ ընդունակ ենք ժամանակի հետ ընթանալու։ Առաջին ընթերցանութեան գրքից յետոյ ուղղակի գրաբար լեզուի քերականութեանը դիմել, ինչպէս որ մինչև հիմայ անում ենք, այնքան անբնական՝ հետևաբար և վնասակար է, որքան եթէ նոր ուղ եղած և բեխայից պահանջէինք չափահաս մարդու պէս հաստատ քայլերով շրջել ու վազել։

Վերջին ժամանակերս սկսած են առանձին ուշադրութիւն դարձնել մեր ուսումնարանների այս կենսական հարցի վրայ. կազմվում և առաջարկվում են նոր նախագծեր հայերէն լեզուի ուսման համար, որոնց նպատակն է որոշել հին և նոր հայերէնի սահմանները դասատուութեան մէջ։ Այս նախագծերի պահանջողութիւնները ընդհանրապէս մինոյնն են. խորշել անբնական ցայտումներից և աչխատել միշտ հեչտից դժուարը անցնել և հասկանալիից անհասկանալին։ Սկզբնական ուսումը մայրենի խօսուն լեզուով աւանդելուց յետոյ, չդիմել ուղղակի գրաբար լեզուի քերականութեանը, որ միայն զզուանք է յարուցանում աչակերտների մէջ, այլ նախ կենդանի լեզուի քերականութիւնը ուսուցանել, յետոյ անցնել գրաբար լեզուին, որ եթէ աչխարհաբարի հետ համեմատութեամբ աւանդուի աչակերտներին, կր թեթևանայ ու կեանք կր ստանայ։

Այս կողմից մեր աչխատութիւնը, համարձակում ենք ասել, մի փոքրիկ ծառայութիւն կարող է մատուցանել ազգային ուսումնարաններին։ Այս գրքով մայրենի խօսուն լեզուի քերականութիւնը աւանդելուց յետոյ, կը մնայ գրաբար լեզուի հոլովմունքը, խոնարհմունքը և բաղդասութեան առանձնութիւնները ուսուցանել, որի համար անտարակոյս առաջուանից չատ քիչ ժամանակ ու աչխատանք պիտի գործ դրուի թէ ուսուցչի և թէ ուսանողի կողմից։

Անելորդ է յիչել որ մեր աչխատութիւնը, իբրև փորձ, թերութիւններից ազատ չէ։ Այսքան կ'ասենք միայն որ մենք աչխատել ենք, որքան հնար էր, ընտրել լեզուի հիմնական օրէնքները և գրականութեան մէջ ընդհանրացած ձևերը, և խորշել ենք այն ամէն բանից որ կարող է մանաւոր անձի ճաչակի արգասիք համարուիլ։ Այս է մեր պատասխանը այն պարոններին, որոնք կարծում են թէ վաղ է աչխարհաբար լեզուի քերականութիւնը գրել։

Ս. Պալասանեան։

Թիֆլիս,
Յունիս 15,
1874.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

Ալեքսանդրապոլի Պետական Մանկավարժական Ինստիտուտի Գրադարան

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ

ՀԱՅՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Կազմուրիւն Բանի

§ 1. Ինչից է կազմվում բանը կամ խոսքը։

Մարդս միւս արարածներից զանազանվում է գլխաւորապէս խօսելու ընդունակութիւնով կամ լեզուով։ Խօսքը մեզ նորա համար է տուած՝ որ մեր մտքերը ուրիշներին հաղորդենք, մերձաւորներին խօսելով, իսկ հեռաւորներին գրելով։

Ուրեմն ամէն խօսք, բանաւոր լինի կամ գրաւոր, բաղկանում է մեր ունեցած մտքերից զանազան առարկաների վրայ։

Խօսակցութեան մէջ մեր մտքերը միմեանց հետ հաւասարելու համար՝ յաճախ կանգ ենք առնում, իսկ գրութեան մէջ միևնոյն նպատակով գործ ենք ածում այլևայլ կէտադրութեան նշաններ—ստորակէտ (՝), ստորակէտ (,), ջէջակէտ (.) և վերջակէտ (։)։ Իսկ ուր որ խօսելիս կամ կարդալիս առանձին կերպով շեշտում ենք, գործ ենք դնում հետևեալ արտասանութեան նշանները. շեշտ (՛), հարցական նշան (՞), և բացագանչական նշան (՜)։

Ա. Նախադասութեան կազմութիւնը։

§ 2. Ի՞նչ է նախադասութիւնը։

Արեգակը վայրկեամբ է։ Սոխակն երգում է։ Ծոտը հնձած է։ Մշակները բանում են։ Ձիւնը սպիտակ է։ Ոսկին մետաղ է։

Քանի առանձին միտք կայ այստեղ։ Ո՞րն է առաջինը։ (Պատասխան, արեգակը վայրկեամբ է։) Ո՞րն է երկրորդը, երրորդը, չորրորդը, հինգերորդը, վեցերորդը։ Ինչպէ՞ս են բաժանուած միմեանցից այդ մտքերը։ Ի՞նչ տառով է սկսւում իւրաքանչիւր միտքը։

Իւրաքանչիւր առանձին միտք որ արտայայտում ենք բառերով, կոչւում է նախադասութի՛ւն։—Ա՞րեգակը ի՞նչ է։ Նախադասութիւն է։

Իւրաքանչիւր նախադասութիւնից յետոյ դրւում է երկու կէտ կամ վերջակէտ։

Եթէ նախադասութիւնը խօսքի սկզբում է դանւում կամ վերջակէտից յետոյ, գլխատառով է սկսւում։

Համարեցէք թէ քանի նախադասութիւն կայ հետեւեալ օրինակների մէջ։ Դրէք, ուր հարկաւոր է, վերջակէտեր ու գլխատառեր։

ուսումը հարկաւոր է մարդուս մենք սովորում ենք գրել ծառերը ծաղկում են գարունքին ամառը շատ չոր է լինում պղինձը օդոտակար մետաղ է չոնը հաւատարիմ անասուն է վարդը հոտաւէտ ծաղիկ է ձմեռը շատ ձիւն է գալիս։

§ 3. Նախադասութեան գլխաւոր անդամները—ենթակայ եւ ստորոգեալ։

Արեգակը տաքացնում է։ Վարդը բացվում է։ Երեխան խաղում է։ Կատուն մլաւում է։ Մեղուն աշխատասէր է։ Ոչխարը անասուն է։

Քանի՞ առանձին միտք կայ այս օրինակների մէջ։ Քանի՞ նախադասութիւն կայ։ Ի՞նչ առարկայի վրայ է խօսւում առաջին նախադասութեան մէջ։ (Պատասխան. առաջին նախադասութեան մէջ խօսւում է արեգակի վրայ։) Ի՞նչ է ասւում այդ առարկայի վրայ։ (Պատասխան. թէ նա տաքացնում է։) Ի՞նչ առարկայի վրայ է խօսւում երկրորդ նախադասութեան մէջ։ Ի՞նչ է ասւում այդ առարկայի վրայ։ Աչքատեցէք գտնել և յաջորդ նախադասութիւնների մէջ՝ թէ ինչ առարկաների վրայ է խօսւում և ինչ է ասւում այդ առարկաների վրայ։

Իւրաքանչիւր նախադասութեան մէջ երկու գլխաւոր անդամ կայ.—1. առարկան որի վրայ խօսւում է, որ կոչվում է ենթակայ. 2. ինչը որ ասւում է առարկայի վրայ, որ մենք կ՚անուանենք ստորոգեալ։—Ո՞րը ենթակայ է նախադասութեան մէջ ընդդէմ ենթակայ է, իսկ ի՞նչը ստորոգեալ։

Ենթական և ստորոգեալը նախադասութեան գլխաւոր անդամներն են, որովհետև առանց նոցա ոչ մի նախադասութիւն չէ կարող կազմուիլ։

Նախադասութեան մէջ ենթական կարելի է դանել ո՞վ կամ ի՞նչ հարցը անելով ստորոգեալի հետ։ Ո՞վ է խաղում.—Երեխան։ Ի՞նչ է բացվում.—Վարդը։

Գրութեան մէջ ենթական ստորոգեալից ոչ մի կէտագրութեան նշանով չէ բաժանվում։

---

1. Հետևեալ հարցերի պատասխանները գրեցէք ձեր տետրակների մէջ, այնպէս որ առանձին նախադասութիւններ կազմուին, և ապա զատ տեղը գլխատառ ու վերջակէտ դրէք։ Ցետոյ գտէք իւրաքանչիւր նախադասութեան ենթական ու ստորոգեալը։

Ի՞նչ է վարդը։ (Վարդը ծաղիկ է։) Ի՞նչ է արծաթը։ Ի՞նչ է թուխը։ Ե՞րբ են կանաչում ծառերը։ Ե՞րբ են թափվում տերևները։ Ի՞նչ է անում դերձակը։ Ի՞նչ է անում աշակերտը։ Ի՞նչ անում վարժապետը։

2. Կազմեցէք ինքներդ առանձին նախադասութիւններ, որ ի-

մէջ ենթակայ լինին հետեւեալ բառերը, և գրեցէք ձեր տետրակների մէջ։

Երկաթ—չաքար—քացախ—ճրագ—թռչուն—մեղու—գայլ—աքաղաղ—հաւ—հողագործ—ջաղացպան—վաճառական։

3. Կազմեցէք նախադասութիւններ, որոնց մէջ ստորոգեալ լինին հետեւեալ բառերը։

Գրում է—կարդում է—երգում է—խօսում է—մտածում է—սողում է—լողում է—բառաչում է—մայում է—հաչում է—ոռնում է—մռնչում է—խրխնջում է—համով է—զօրեղ է—սողուն է—թռչուն է—քոյս է։

4. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ դասատուի մէջ գտնուած առարկաներով։

§ 4. Համառօտ եւ ընդարձակ նախադասութիւն։

Գիւղացիքը հնձում են։

Ո՞րն է այս նախադասութեան մէջ ենթակայ և որը ստորոգեալ։

Աշխատասէր գիւղացիքը ամառը լաւ են հնձում դաշտում։

Այս վերջին նախադասութեան մէջ բացի ենթակայից ու ստորոգեալից կան էլի ուրիշ բառեր, որոնք պարզում, մանրում են թէ գիւղացիքը ինչ են հնձում (խոտ), որտեղ են հնձում (դաշտում), երբ են հնձում (ամառը), որ գիւղացիքը հնձում են (աշխատասէրը)։ Այս հարցերին պատասխանող բառերը կոչւում են երկրորդական անդամներ, որովհետեւ կարող են լինել ու չլինել նախադասութեան մէջ, և միայն պարզում, ամբողջացնում են նորա միտքը։ Որոնք են նախադասութեան գլխաւոր անդամները։

Այն նախադասութիւնը որի մէջ միայն գլխաւոր անդամները կան, կոչւում է համառօտ։—Գիւղացիքը հնձում են համառօտ նախադասութիւն է։

Այն նախադասութիւնը որի մէջ երկրորդական անդամներ էլ կան, ասւում է ընդարձակ։—Աշխատասէր գիւղացիքը ամառը խոտ են հնձում դաշտում ընդարձակ նախադասութիւն է։

Նախադասութեան երկրորդական անդամները կարելի է գտնել ղեկավար հարցեր անելով ստորոգեալի հետ։

---

1. Հետեւեալ օրինակների մէջ ցոյց տուէք նախադասութեան գլխաւոր և երկրորդական անդամները։

Գոյրս գիրք է կարդում։—Մեծ մայրս նկեղեցի է գնում։—Պառաւ կինը կաւ է գործում։—Երեխայքը խաղում են ուսումնարանի բակում։—Մեր պարտէզի ծառերը լաւ պտուղներ են տալիս։—Գարնան ու աշնան օրերում շատ անձրեւներ են գալիս։—Փոքրիկիկից յետոյ միշտ խաղաղ եղանակ է լինում։

2. Հետեւեալ օրինակների մէջ այլեայլ հարցերի պատասխանները այնպէս դասաւորեցէք որ կարգաւորեալ նախադասութիւններ կազմուին։

Սովորում են։ Ո՞վ է սովորում. (Աշակերտները սովորում են։) Ի՞նչ են սովորում. (դասերը)։ Ո՞ւմ դասերը սովորում են. (իրանց)։ Ե՞րբ են սովորում. (միշտ)։ Ո՞ր աշակերտները սովորում են. (աշխատասէրը)։

Շինում են։ Ո՞վ է շինում։ (Մեղուները շինում են։) Ի՞նչ են շինում. (մեղր)։ Ի՞նչպիսի մեղր (քաղցր), ո՞րտեղ (փեթակում)։

Փայլում է։ Ի՞նչ է փայլում։ (Լուսինը փայլում է)։ Ե՞րբ է փայլում (գիշերները), ո՞րտեղ (երկնքում), ինչպիսի լուսով (գեղեցիկ)։

Կտրում են։ Ո՞վ է կտրում։ (Գիւղացիքը կտրում են։) Ի՞նչ են կտրում (փայտ), երբ (ձմեռը), ո՞րտեղ (անտառում)։

Բարեկամ է։ Ո՞վ է բարեկամ։ (Շունը բարեկամ է։) Ո՞ւմ (մարդու), ինչպիսի բարեկամ (հաւատարիմ)։

§ 5. Ցատկացուցիչ բառեր։

Հայէ որդիքը երկար ժամանակ հովտակոն կեանք են վարել։

Ինչպիսի նախադասութիւն է այս, համառօտ թէ ընդարձակ։ Որոնք են գլխաւոր անդամները և որոնք երկրորդական։ Ինչ հարց

պիտի աննկատ ոչ դանկնք Հայէն բառը։ (Ո՞ր օրդիքը հավատական կնանք են վարել) Ի՞նչ հարց պիտի անենք որ դանենք հավատան բառը։ Ի՞նչ պիտի կնանք են վարել Հայկի որդիքը։) Ուրեմն Հայէն բառը դրուելով որպէս բառի մօտ՝ ցոյց է տալիս թէ ում որդոց վրայ է խօսքը, և զանազանում է նոցա ուրիշ անձի պատկանող որդիներից։ Այսպէս և Հավատան բառը որոշում է թէ ինչպիսի կնանքի վրայ է խօսքը, —հավատական և ոչ ուրիշ որևիցե կնանքի վրայ։

Այն բառերը որոնք որոշում են մի առարկայ ուրիշ իր նման առարկաներից, ցոյց տալով նորա որպիսութիւնը կամ պատկանելութիւնը, կոչվում են յատկացուցիչ։—Հայէն որդիքը երբ քամանակ Հավատան կերան վաքել նախատատութեան մէջ Հայէն և Հավատան յատկացուցիչ են որդիքը և կերան բառերի, որոնք այս պատճառով կոչվում են յատկացուցիչ։ Յատկացուցիչը պատասխանում է հետևեալ հարցերին. ո՞ր, ո՞ր կամ ինչի՞, որ-պիսի կամ ի՞նչպիսի։

Յատկացուցիչը յատկացեալից ոչ մի կէտադրութեան նշանով չէ բաժանվում։

---

1. Հետևեալ նախատատութիւնների մէջ գտէք յատկացուցիչ բառերը։

Գիշատիչ գազանները ուրիշ կենդանիների մսով են կերակրվում։ Բարձր լեռների գագաթները ծածկուած են ձիւնով։—Ձմեռուան գիշերները երկար են։—Գարնան օրերը զուարճալի են։—Վահագն Երուանդեան Տիգրանի որդին էր։—Հայկական պատմութիւնը շատ հարուստ է պատմական դրուագներով։

2. Հետևեալ նախատատութիւնների մէջ իւրաքանչիւր նիշ ակայի մօտ մի յարմար յատկացուցիչ գրէք։

— (ձրպիսի) ջուրը պղտոր է։— ջուրը պարզ է։—մրգերը վնասակար են։—(ձր) օրերը կարճ են։—օրերը երկար են։—մարդը չէ տեսնում։—մարդը չէ լսում։—մարդը չէ խօսում։—մարդը չէ կարող ման գալ։—(ինչի) հոտը անտանելի է։—համը քաղցր է։—գոյնը կա-նաչ է։—(ում) ականջները երկար են։—միտքը սուր է։—տետրակը մաքուր է։

3. Հետևեալ նախատատութիւնների մէջ իւրաքանչիւր տօտրոգեալի մօտ մի յատկացուցիչ գրէք։

Ձին—կենդանի է։—Ոչխարը—անասուն է։—Սիրամարգը—թռչուն է։—Օձը—սողուն է։—Մկնդան—միջատ է։—Մանուշակը—ծաղիկ է։—Աղամանդը—քար է։

§ 6. Բացայայտիչ բառեր։

Արտաշատ կռատակը շինեց Արտաշատ փոլոտը Եփրատի ձախ ափերի վրայ։

Այս նախատատութեան մէջ նշանակած բառերը իմաստով աւելորդ են, և միայն աւելի մեկնում, բացայայտում են այն առարկաները, որոնց մօտ դրուած են։ Կարենալ դրուելով Արտաշատ անուան մօտ՝ ցոյց է տալիս թէ ով էր Արտաշատը.—հռետոր, և ոչ հասարակ մարդ։ Նոյնպէս և փոլոտ դրուելով Արտաշատ անուան մօտ՝ մեկնում է թէ ինչ է Արտաշատ.—քաղաք, և ոչ մի ուրիշ բան։

Այն բառերը որոնք մեկնում են մեկ առարկայի ով կամ ինչ լինելը կոչվում են բացայայտիչ։—Արտաշէս հռետորը շինեց Արտաշատ փոլոտը Եփրատի ձախ ափերի վրայ նախատատութեան մէջ հռետորը և փոլոտը բացայայտիչ են Արտաշէս և Արտաշատ բառերի, որոնք այս պատճառով ասվում են քացայայտելի։

Բացայայտիչ լինում է առ հասարակ ընդհանուր հասկացողութիւնը մասնաւորի մօտ, ինչպէս. քաղք Երուսաղէմ քօտ ձիւ, տասնեակ ձուկ, գայլ կատու. թռչուն ծով մարտ անձ. ուրբաթ օր։

Բացայայտիչը երբ մեկ բառով է արտայայտուած, ոչ մի կէտադրութեան նշանով չէ բաժանվում բացայայտելիից. իսկ երբ մի քանի բառից է կազմուած, բաժանվում՝ երբ բացայայտելիից յետոյ է դրուած, կամ երկու ստորակէտի մէջ է դրվում, երբ նախադասութեան մէջ է ընկած. ինչպէս. Սուրբն Գրիգորիոս կրասոսի գլուխն ուղարկեց Տիգրանին՝ Հռոմայեցոց սենեկ քաջագոյն Հայոց Հռոմայեցոյ ա-

Խերիմ Թշնամի Տիգրանին)։ Ցաղկերտ Պարսից Ցաղկերտ Թագաւորը) մեծամեծ հալածանքներ հանեց քրիստոնեաների դէմ։

---

1. *Հետեւեալ նախադասութիւնների մէջ գտէք բացայայտիչ բառերը և ըսէք հարկաւոր է, բուն ու ստորակէտներ դրէք։*

Արամ նահապետը յաղթեց Ասորեստանցոց Բարշամ իշխանին։— Արա գեղեցիկը Արամ նահապետի որդին էր։—Պարոյր իշխանը թագաւորական թագը ստացաւ Մարաց Կիաքսար թագաւորից։—Արտաւազդը Տիգրան բ-ի որդին գերի տարուեցաւ Եգիպտոս։—Սաթինիկը Արտաշէս բ-ի կինը Աշանաց թագաւորի աղջիկն էր։—Ցուսուի Սրբաթացոց ասիկանը մեծ վնասներ հասցրեց Հայոց։—Կիրակոս դանձակեցին ԺԲ դարու պատմիչը հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում Թաթարաց վրայ։—Աղէքսանդր Մակեդոնացին բարկութեան ժամանակ սպանեց Կլիդոնին իր հաւատարիմ զօրավարին։

2. *Հետեւեալ նախադասութիւնների մէջ բացայայտիչ բառեր աւելացրէք։*

Անի—նշանաւոր էր իր ճարտարապետութեամբը։—Վոլգա—թափվում է Կասպից ծովը։—Արմաւիր—չինուեցաւ Երասխ (ի)—վրայ։ Նապոլէոն Ա.—մեռաւ Սուրբ Հեղինէ—Տրդատը քրիստոնեայ մկրտուեցաւ սուրբ Գրիգորի ձեռով։—Վաղարշակ—քաղաքական և դինուորական օրէնքներ տուաւ Հայոց։—Անիերաղ—Հռոմայեցոց ձեռից վախչելով ապաւինեցաւ Հայաստան։—Վահէ—մեռաւ Արբելայի պատերազմում։

§ 7. Լրացուցիչ բառեր։

Հողագործները երէկը վարում են գութանով։

Այս նախադասութեան միտքը բոլորովին ամբողջ է։ Եթէ ասէինք միայն հողագործները վարում են, միտքը թերի կը լինէր։ Մեզ կը հարցնէին թէ «ինչ են վարում հողագործները» և «ինչում են վարում»։ Այս պատճառով այստեղ աւելացրած են երէկը և գութանով բառերը, որոնք ստորոգեալի միտքը լրացնում են։ Երէկը ցոյց է տալիս թէ ուր վրայ է անցնում հողագործների գործողութիւնը. իսկ գութանով ցոյց է տալիս թէ ինչ գործիքով հողագործները կատարում են իրանց գործը։

Այն բառերը որոնք ստորոգեալի միտքը լրացնում են, կոչվում են լրացուցիչ։—Հողագործները երէկը վարում են գութանով նախադասութեան մէջ երէկը և գութանով լրացուցիչ բառեր են։

Ենթական նախադասութեան մէջ գլխաւոր առարկան է, իսկ լրացուցիչ բառերը երկրորդական առարկաներ են, որոնց վրայ անցնում է ենթակայի գործողութիւնը, կամ մօտիկ յարաբերութիւն ունին նորա գործողութեան հետ։

Լրացուցիչ բառերը պատասխանում են հետեւեալ գլխաւոր հարցերին։

1. *Ո՞ւմ, ի՞նչ։ Հայերը վախճենին Աստուծոյ տեղ էին պաշտում։ Քրիստափոր կոլոմբոսը գտաւ Ամերիկան։*

2. *Ո՞ւմ, ինչի՞։ Հարուստները օգնում են աղքատներին։—Այս աշակերտը արժանի է վարձատրութեան։*

3. *Ո՞ւմ, ինչի՞։ Պարոյր իր թագը ստացաւ կիաքսարից։ Քաջասիրտ մարդը վտանգից երկիւղ չունի։*

4. *Ո՞ւմով, ինչո՞վ։ Յովհէփը իր եղբայրների հետ թաթգմանով էր խօսում։—Մասիսի գագաթը ամբողջ տարին պատած է ձիւնով։*

Լրացուցիչ բառերը ստորոգեալից ոչ մի կէտադրութեան նշանով չեն բաժանվում։

---

1. *Հետեւեալ նախադասութիւնների մէջ գտէք լրացուցիչ բառերը։*

Մեղուն մեղր է չինում։—Որթը խաղող է բերում։—Լուսինը իր լոյսը ստանում է արեգակից։—Փիւնիկեցիք գտան ապակին։—Ագռաւները զանազանվում են մնմնանցից լեզուով, վարք ու բարքով, երբեմն նաև կրօնով։ Անձնասէր մարդը ատելի է ամենին։—Արաբացիք հնարել են թուանշանները։—Աբգարը խորհուրդ տուաւ Պարսից և Ասորեստանցոց թագաւորներին ընդունել քրիստոնէական հաւատը։

2. Հետևեալ նախադասութիւններուն մէջ իւրաքանչիւր առթական մասը լրացուցիչ բառերը դրէք.

Գիւղացին մշակում է (ինչ)—Ոսկերիչը չինում է—Զաղացպանը աղում է—Պատկերահանը նկարում է—Կառուն բանում է—Շունը պահպանում է—Մեծաղ Մաշտոցը հնարեց—Բժիշկը լաւացնում է (ում) վարդան Մամիկոնեանը մի քանի անգամ յաղթեց—Ես ամէն օր անում եմ—Հայրը սիրում է—Ոչ ոք չէ սիրում—Ջանասէր աշակերտը արժանի է (ինչի)—Ծոյլ աշակերտը արժանի է—Ջինուորը հպատակում է (ում)—Մենք պարտական ենք օգնել—Ամէն քաղաքացի պարտական է հնազանդել (ինչին)—Ով որ աշխատում է, հառնում է—Ա.յսօր նամակ ստացայ (ումից)—Վահէն յաղթուեցաւ—Զարմայր նահապետը սպանուեցաւ—Աշակերտները դրում են (ինչո՞վ)—Մարդիկ կերակրվում են—փայտը կարում են—Ձիրենը հնձում են—

§ 8. Պարագայական բառեր.

Գաղիները բնակում են որ երկրում:—Մարդիկ ուրբէ աշխատում են և գիշերը հանգստանում:—Արծիւը շատ բարձր է թռչում:—Մարդս անփոյթ-ութենէ ձանձրանում է:

Այս օրինակների մէջ առարկայից առաջ կամ յետոյ դանազան բառեր կան դրած, որոնք ներհականների գործողութեան կամ դրութեան այլ և այլ հանգամանքներն են ցոյց տալիս: Առաջին օրինակի մէջ որ երկրում և ուրբէ բնութ են առարկայի մասն ցոյց են տալիս թէ ո՛րտեղ են բնակում գաղիները: Երկրորդ օրինակի մէջ ուրբէ և գիշերը բառերը ցոյց են տալիս թէ ե՛րբ աշխատում են մարդիկ և ե՛րբ հանգստանում: Երրորդ օրինակի մէջ շատ բառը ցոյց է տալիս թէ որքա՛ն բարձր է թռչում արծիւները: Չորրորդի մէջ անփոյթ-ութենէ բառը ցոյց է տալիս թէ ինչո՞վ կամ ի՛նչ պատճառով ձանձրանում է մարդս:

Այն բառերը որոնք ներհակի գործողութեան կամ դրութեան այլ և այլ հանգամանքներն են ցոյց տալիս, կոչվում են պարագայական բառեր:—Մարդիկ ուրբէ աշխատում են և գիշերը հանգստանում է. երկուսն էլ ամբողջացնում են առարկայի միտքը, այն պահապանութեամբ միայն որ լրացուցիչ բառերը առնի կարող են և առնի մօրիկ կապակցութիւն ունին առարկայի հետ քան թէ պարագայական բառերը: Այսպէս, երբոր առում ենք Աշնէրդը պատրաստում է, պատրաստուած առարկայի միտքը անկատար է, և պահանջում է բացատրել թէ ինչ է պատրաստում աշակերտը.—եր պատերը: Իսկ երբ որ առում ենք Աշնէրդը պատրաստում է հարկ չէ անպատճառ մեկնել թէ ո՛ր տեղ է նստած աշակերտը, պատուան տեղ, թէ ամառ վրայ և այլն: Ուրեմն եր պատերը լրացուցիչ կը լինի, իսկ պատուան տեղ, ամառ վրայ պարագայական բառեր:

1. Հետևեալ նախադասութիւններուն մէջ գտէք պարագայական բառերը:

Ծառերը ձմեռը հանգստանում են, գարունքին ծաղկում են, ա-

հանգստանում է նախադասութեան մէջ գերբէնը և գիշերը պարագայական բառեր են:

Պարագայական բառերը ցոյց են տալիս.

1. Գործողութեան տեղը, և պատասխանում են այս հարցերին, ո՞րտեղ, ո՞րտեղից, ո՞ւր. ղոր օրինակ. Ձկները լողում են ջրում:

2. գործողութեան ժամանակը, և պատասխանում են այս հարցերին. ե՞րբ, ո՞րքան ժամանակ, ո՞ր ժամանակից և մինչև ո՞ր ժամանակ. ինչպես. Արշակունեաց թագաւորութիւնը տևեց վեց հարիւր տարի:

3. Գործողութեան պատճառը, և պատասխանում են այս հարցերին. ի՞նչպես, ի՞նչ էերպով. ղոր օրինակ. Օրերը ամպերի էերպով անցնում են:

4. Գործողութեան պատճառն ու նպատակը, և պատասխանում են այս հարցերին. ինչից, ի՞նչ պայմանով, ինչի՞ համար. ղոր օրինակ. Ձիւնը հալվում է պատճառից:

Պարագայական բառերը ոչ մի կէտով չեն բաժանվում նախադասութեան միւս բառերից:

Պարագայական բառերը մեծ նմանութիւն ունին լրացուցիչ բառերի հետ. երկուսն էլ ամբողջացնում են առարկայի միտքը, այն պահապանութեամբ միայն որ լրացուցիչ բառերը առնի կարող են և առնի մօրիկ կապակցութիւն ունին առարկայի հետ քան թէ պարագայական բառերը: Այսպէս, երբոր առում ենք Աշնէրդը պատրաստում է, պատրաստուած առարկայի միտքը անկատար է, և պահանջում է բացատրել թէ ինչ է պատրաստում աշակերտը.—եր պատերը: Իսկ երբ որ առում ենք Աշնէրդը պատրաստում է հարկ չէ անպատճառ մեկնել թէ ո՛ր տեղ է նստած աշակերտը, պատուան տեղ, թէ ամառ վրայ և այլն: Ուրեմն եր պատերը լրացուցիչ կը լինի, իսկ պատուան տեղ, ամառ վրայ պարագայական բառեր:

1. Հետևեալ նախադասութիւններուն մէջ գտէք պարագայական բառերը:

Ծառերը ձմեռը հանգստանում են, գարունքին ծաղկում են, ա-

մաւը պտուղ են տալիս և աչունքին հասցնում։—Աշունքին ծիծեռնակները թռչում են տաք երկրներ և գարունքին կրկին վերադառնում են մեր կողմերը։—Օրը տեւում է 24 ժամ, ժամը 60 րոպէ և րոպէն 60 վայրկեան։—Ծաղիկները սառել են ցրտից։—Սահակ Պարթևը նըստաւ կաթուղիկոս 390-ից մինչև 440։—Երեխաները պատժում են իրանց ծուլութեան համար։—Աշխատասէրը աչակերտը իր դասերը միշտ լաւ է պատրաստում։—Ուշադրութեամբ կարդացէք ձեր դասը, որ բան հասկանաք։—Մարդիկ տներ են շինում ցրտից ու տաքութիւնից պաշտպանուելու համար։—Հայաստանում երեք լիճ կայ, որոնք իրանց մեծութեան պատճառով ծով են կոչվում։

2. Հետևեալ նախադասութիւնների մէջ աւելացրէք յարմար պարագայական բառեր։

Մարդիկ բնակում են (ո՞րտեղ)—Գիւղացիքը աշխատում են—Ծառերը անկում են—Այն մարդիկը որ—են բնակում, կոչվում են Եւրոպացիք, նորա որ—են բնակում, կոչվում են Ասիացիք։—Լևոն Ջ մեռաւ—Մեղուները թռչում են (ո՞րտեղից)—Տերևները թափվում են—Հանքերը հանում են—Բազրատունիք եկած են—Մենք չատ օգտակար բաներ ենք սովորում—Քրիստոնեայք կիրակի և տօն օրերը գնում են (ո՞ւր)—Մենք ամէն օր գնում ենք—Դանուբ գետը թափվում է—Տրդատը խոսքովի մահից յետոյ փախաւ—Հոյսերը սկսում են ծլիլ (ե՞րբ)—Արեգակը ծագում է—Արեգակը մայր է մտնում—տաք է լինում—ցուրտ է լինում—օրն ու գիշերը հաւասար են լինում։—Հայերը քրիստոնէութիւնը ընդունեցին—Տարին տեւում է (ո՞րքան ժամանակ)—Ամիսը տեւում է—Շաբաթը տեւում է—Բարի երեխան (ինչպէս)—լսում է մեծերի ասածները։—Ուսուցիչը—պատժում է ծոյլ աչակերտներին։—Ջուրը սառում է (ինչից)—Սառը հալվում է—Օդը մաքրվում է—Ջուրը գոլորշի է դառնում—Բերանս պապակում է—Մշակը յոգնեցաւ—Գիլքը ոլորում են (ինչի համար)—Ձանապարհները չինվում են—Տները չինում են—Ջօրքը պահում են։

§ 9. Կոչական բառեր։

Դո՛ւ, Տէր, ճանաչում ես մեր սրտի դաղտնիքը։

Այս նախադասութեան մէջ ճանաչում ես ստորոգեալ է, դու՝ ենթակայ, իսկ Տէր կոչական բառ է, որով խօսողը Աստուծոյ է դառնում, և նախադասութեան մէջ ոչ մէկ բառից կախում չունի։

Այն բառերը որոնք ցոյց են տալիս թէ խօսողը ումն է դառնում իր խօսքովը, սովորաբար կոչական բառեր։—Դո՛ւ, Տէր, ճանաչում ես մեր սրտի գաղտնիքը նախադասութեան մէջ Տէր կոչական բառ է։

Եթէ կոչական բառը նախադասութեան մէջ է ընկած, երկու ստորակէտի մէջ է դրվում. իսկ եթէ նախադասութեան սկիզբը կամ վերջն է դանվում, ստորակետով է բաժանվում նորանից։ Կոչական բառի վրայ շեշտ է դրվում, եթէ իրանից առաջ շեշտուած բառ չկայ. շեշտ չէ դրվում, եթէ իրանից առաջ շեշտուած բառ կայ. ինչպէս. Հա՛յր, ներէ՛ ինձ իմ յանցանքը։ Սիրելի՛ հայր, ներէ՛ ինձ իմ յանցանքը։

Հետևեալ նախադասութիւնների մէջ դտէք կոչական բառերը և դրէք, ուր հարկաւոր է, շեշտ ու ստորակէտ։

Տիգրան ո՛ւր ես գնում։—Արշակ գնանք պարտէզ դբօսնելու։—Շնորհակալ եմ քեզ սիրելի բարեկամ քո տուած յիշատակի համար։—Ընդունէ՛ ինձանից այս փոքրիկ ընծան սիրելի մայր։—Աշակերտը ասաց ուսուցչին. «Մեկնեցէք ինձ այս բառը վարժապետ»։—Յիսուս ասաց խաչի վրայ. «Աստուած իմ Աստուած իմ ինչի՞ թողիր ինձ։

Կրկնութիւն.—Ի՞նչ է նախադասութիւնը։ Որո՞նք են նախադասութեան գլխաւոր անդամները։ Ո՞ր նախադասութիւնը կոչվում է համառօտ և ո՞րը ընդարձակ։ Ի՞նչ է յատկացուցիչը, ի՞նչ է բացայայտիչը Ո՞ր բառերը կոչվում են լրացուցիչ։ Ի՞նչ են ցոյց տալիս պարագայական բառերը։ Ի՞նչ է կոչական բառը։ Իւրաքանչիւր առանձին նախադասութիւնից յետոյ ինչ կէտեր են դրվում։ Իւրաքանչիւր առանձին նախադասութիւն ինչ տառով է սկսում։ Ի՞նչ կէտադրութեան նշանով բաժանվում է ենթական ստորոգեալից, յատկացուցիչը յատկա-

ցեալից, լրացուցիչ և պարագայական բառերը նախադասութեան միւս բառերից։ Ո՞րը և ինչ կէսերով բաժանվում է բայայայտիչը բայայայտեալից։ Ի՞նչ կեսերով բաժանվում է կոչական բառը նախադասութեան միւս բառերից։

Կարդացէք ընթերցանութեան առաջին հատուածը և իւրաքանչիւր նախադասութիւնը առանձին լուծեցէք, ցոյց տալով որոշակի նախադասութեան գլխաւոր և երկրորդական անդամները։ Ցետոյ այդ հատուածը անգիր սերտեցէք։

Ը. Նախադասութեան տեսակները։

§ 10. Դիմաւոր եւ անդէմ նախադասութիւն։

Աբրամը հայրենասէր ու քաջ մարդ էր։—Արշակ, այս իրիկուն մեզ մօտ արի։

Առաջին օրինակի մէջ ենթական որոշ յիշվում է, որ և պատասխանում է ո՞վ հարցմանը։ Ո՞վ էր հայրենասէր ու քաջ մարդ.—Աբրամը։ Երկրորդ օրինակի մէջ թէև ենթական չէ յիշվում, բայց յայտնի իմացվում է կոչական բառից. արի, ի հարկէ դո՛, Արշակ։ Բայց կայ նախադասութիւն, որի մէջ ենթական որոշ յայտնի չէ, կամ բոլորովին անյայտ է. ղորօրինակ, պտտո՞ւմ է—ինչ է որոտում—անյայտ է։ Ասո՞ւմ են, պտտո՞ւմ են, բայց ով է ասում, պատռում, որոշ յայտնի չէ։

Այն նախադասութիւնը որի մէջ ենթական յիշվում է կամ մտքով լրացվում է, կոչվում է պնդո՞ւթիւն։—Արամը հայրենասէր էր։ Ես տուն չէի գնում։

Այն նախադասութիւնը որի մէջ ենթական որոշ յայտնի չէ կամ բոլորովին անյայտ է, կոչվում է անպնդո՞ւթիւն։—Որոտո՞ւմ է, ասո՞ւմ են նախադասութիւնները անդէմ են։

Հետևեալ հարցերի պատասխաններից կազմեցէք անդէմ նախադասութիւններ։

Ի՞նչ է լինում առաւօտեան վաղ։—Ի՞նչ է լինում երեկոյեան։—Ի՞նչ է լինում ամառը։—Ի՞նչ է լինում ձմեռը։—Ի՞նչ է լինում աշունքին։ Ի՞նչ է պատահում երբ ամպերը միմեանց չիվում են։—Ի՞նչ է լինում երբ երկինքը ամպում է։—(Վերջին հարցման պատասխանը կարող է անդէմ նախադասութիւնից դիմաւորի փոխուիլ. անձրևո՞ւմ է կամ անձրևում է գալիս. վերջին ձևը աւելի գործածական է մեր լեզուում։ Այսպէս պատում են նաև՝ ձիւն է գալիս, ւոբւո՞ւր է գալիս, և այլն։)

§ 11 Գլխաւոր եւ երկրորդական նախադասութիւն։

Վասակ Սիւնին որ իր աղգը դաւաճանեց, բանտի մէջ մեռաւ։

Այս նախադասութիւնը կազմուած է երկու նախադասութիւնից. 1) Վասակ Սիւնին բանտի մէջ մեռաւ, 2) որ իր ազգը դաւաճանեց։ Առաջին նախադասութիւնը բոլորովին անկախ է, իսկ երկրորդը առաջինից կախում ունի և նորա հետ կապուած է։

Այն նախադասութիւնը որ կախում չունի ուրիշ նախադասութիւնից, կոչվում է գլխաւո՞ր։ Իսկ այն նախադասութիւնը որ գլխաւորից կախում ունի և նորան պարզելու համար է գործ դրվում, կոչվում է երկրորդակա՞ն։—Վասակ Սիւնին բանտի մէջ մեռաւ՝ նախադասութիւնը գլխաւոր է. որ իր ազգը դաւաճանեց-երկրորդական։

Հետևեալ նախադասութիւնների մէջ զանազանեցէք միմեանցից գլխաւոր և երկրորդական նախադասութիւնները, և ցոյց տուէք թէ երկրորդականները ինչ բառերով կապուած են գլխաւորների հետ։

Վարդան Մամիկոնեանը որ իր կեանքը ազգի անկախութեան համար նուիրեց, յաւիտենական երախտագիտութեան արժանի է։—Տիգրան Ե որ Անիայ մեծ մասն առ էր գարձել, թշուառ ծերութիւն ունեցաւ։ Հարկաւոր է որ մորը ժամանակներս սովորենք, որպէս զի յետոյ մեզ էլ ուրիշներն էլ օգտակար լինինք։—Մեծ բազդաւորութիւն է երեխանց

(7242-57)
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՈՒԶԵՅ
ՀՍՍՌ Արվ.ԳՊ

համար որ ուսումնարաններ կան։—Մենք գիտենք որ արեգակը լուսատորում և տաքացնում է երկիրը։—Կոլոմբոսից առաջ չէին իմանում թէ Ամերիկան կայ։—Պէտք է խօսել այնպէս որ մեզ հասկանան։

§ 12 Երկրորդական ենթակայ նախադասութիւն։

Ով որ շատ բան է խնդում, պարտական է իր դիտութիւնը ուրիշների օգտի համար գործ դնել։—Ցայտնի է որ էքիքը պըտղատու է պըէգուէյի շուրջը։

Որոնք են այս օրինակների մէջ գլխաւոր նախադասութիւնները և որոնք երկրորդական։ Ի՞նչ հարցման է պատասխանում ով որ շատ բան է խնդում երկրորդական նախադասութիւնը։ (Ո՞վ պարտական է իր դիտութիւնը ուրիշների օգտի համար գործ դնել։) Ի՞նչ հարցման է պատասխանում որ էքիքը պտղատու է պըէգուէյի շուրջը երկրորդական նախադասութիւնը։ (Ի՞նչ ցայտնի է։) Ուրեմն այստեղ երկրորդական նախադասութիւնները գլխաւոր նախադասութիւնների ենթակաների տեղ են բռնում։

Եթէ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան ենթակայի տեղ է բռնում, կոչվում է էքիքըզիսթենս ենթակայ նախադասութիւն։—Ով որ շատ բան է խնդում և Որ էքիքը պտղատու է պըէգուէյի շուրջը երկրորդական ենթակայ նախադասութիւններ են։

Եթէ երկրորդական ենթակայ նախադասութիւնը գլխաւորից առաջ է դասուած, ստորակէտով է բաժանվում նորանից. իսկ եթէ յետոյ՝ ոչ մէկ կէտով չէ բաժանվում. ինչպէս Ով էլ խոպան, նա կը կաղայ։ Ցայտնի է որ էքիքը պտղատու է պըէգուէյի շուրջը։ Բայց եթէ ասենք՝ Ինչ էքիքը պտղատու է պըէգուէյի շուրջը, (ստորակէտ դնելու է, որովհետև երկրդ. ենթ. նախդ. գլխաւորից նախադաս է.) այդ վարդից յայտնի է։

1. Հնարևէալ նախադասութիւնների մէջ գտնք երկրորդական ենթակայ նախադասութիւնները և, ուր հարկաւոր է, ստորակէտ դրէք։

Ով ալարի ոչ դալարի։—Ով չուսա նա կուշտ։—Ով որ վքանայ չուտով չքանայ։—Ով որ փող ունի խելք չունի. ով որ խելք ունի փող չունի։—Պէտք է որ հիւանդը ճշդութեամբ կատարէ բժշկի խորհուրդները։—Կարելի է թէ անձրև գայ։—Լաւ է որ ժամանակին տուն հասանք։

2. Հնարևէալ նախադասութիւնների մօտ աւելացրէք երկրորդական ենթակայ նախադասութիւններ։

(ով)—բաղդաւոր է։—միշտ անբաղդ է։—վարձատրութեան արժանի է։—պատժի արժանի է։—կարելի է (ինչ)—Հաւանական է—կասկածելի է—ցայտնի է—

§ 13. Երկրորդական յատկացուցիչ նախադասութիւն։

Այն մարդիկը որոնք Ամերիկայում են քնում, կոչվում են Ամերիկացիք։

Ո՞րն է այս օրինակի մէջ գլխաւոր նախադասութիւնը և որը երկրորդական։ Ի՞նչ հարցման է պատասխանում Որոնք Ամերիկայում են քնում երկրորդական նախադասութիւնը։ (Ո՞ր կամ որպիսի մարդիկը կոչվում են Ամերիկացիք։) Ուրեմն այստեղ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան ենթակայի որպիսութիւնն է ցոյց տալիս։

Եթէ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան մէկ որևիցէ անդամի որպիսութիւնն է ցոյց տալիս, կոչվում է էքիքըզիսթենս յոփ-ցու-ցէչ նախադասութիւն։—Որոնք Ամերիկայում են քնում երկրորդական յատկացուցիչ նախադասութիւն է։

Եթէ երկրորդական յատկացուցիչ նախադասութիւնը գլխաւորից յետոյ է դասուած, ստորակէտով է բաժանվում նորանից, եթէ գլխաւոր նախադասութիւնը քիչ շատ երկար է, և չէ բաժանվում, եթէ կարճ է. ինչպէս Կղզին կոչվում է այն

ցամաք երկիրը, որի շուրջը ջուրն պտոյտ է։ կայ ծառ որ պտուղ է պուչիս, կայ էլ որ պտուղ չէ պուչիս։

Իսկ եթէ երկրորդական յատկացուցիչ նախադասութիւնը գլխաւորի մէջ է ընկած, բաժանվում է նորանից երկու ստորակէտով կամ բութով և ստորակէտով, եթէ ընդհանուր կամ սովորական որպիսութիւն է ցոյց տալիս. իսկ եթէ մասնաւոր կամ էական որպիսութիւն է ցոյց տալիս, յատկացուցիչ նախադասութիւնը չէ բաժանվում իր յատկացեալից, և միայն ստորակէտ է դրվում այնտեղ ուր վերջանում է երկրորդական նախադասութիւնը. ինչպէս. Մարդս, կամ (մարդս՝ որ պատկանում է, չէ սիրում իր յանցանքը խոստովանել։

Այն մարդը որ ուրիշներին օգնում է, երախտագիտութեան արժանի է։

Առաջին օրինակի մէջ ընդհանրապէս բոլոր մարդկանց սխալականութեան վրայ է խօսքը, իսկ երկրորդի մէջ մանաւանդ մի կարգի (ուրիշներին օգնող) մարդկանց վրայ։

Բայց շատերը հետևելով առս. ու դերմ. կէտադրութեան ամէն յատկացուցիչ նախադասութիւն անխտիր բաժանում են երկու ստորակէտով։

---

1. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք երկրորդական յատկացուցիչ նախադասութիւնները, և պէտք եղած տեղը բութ ու ստորակէտ դրէք։

Շունը որ հաւատարիմ անասուն է ճանաչում է իր տիրոջ ձայնը։—Ջանձրութիւնը մի հիւանդութիւն է որի դեղը աշխատութիւնն է։ Սոկրատը որ դատապարտուեցաւ թոյն խմելու առաքինի քաղաքացի էր։—Երկիրս որի վերայ մենք ապրում ենք տիեզերքի ամենափոքր մասն է։—Մարդս որ մահկանացու է մեծամեծ գործերի ձեռնամուխ է լինում։—Ժամանակը որ ամէն բան փոխում է փոխում է և մարդկանց բնաւորութիւնը։—Ինչպէս է կոչվում այն ջուրը որ ամէն կողմից ցամաքով պատած է։—Կայ կետ որ դետի մէջ է թափվում, կայ էլ որ ծովն է թափվում։

2. Հետևեալ նախադասութիւնների մէջ ենթակաների, լրացուցիչ կամ պարագայական բառերի մօտ աւելացրէք երկրորդական յատկացուցիչ նախադասութիւններ։

Այն թռչունը—չէ կարող թռչել։—Այն ցամաքը—կոչվում է թերակղզի։—Այն անասունը—կոչվում է չորքոտանի։ Այն ժամացոյցը—չէ կարող բանել։—Մարդս—կարող է շատ բաներ ստեղծել—Անասունը—չէ կարող խօսել։—Կարելի է ուտել այն մրգերը—Պէտք է հնձել այն ցորենը—Շինեցէք մէկ մէկ փուճ այն ծաղիկներից—Գնանք ըզբօսնելու այն պարտէզը—Կարելի է հիւանդանալ այն սենեակում—

§ 14. Երկրորդական լրացուցիչ նախադասութիւն։

Կարծում են նէ լուսնի վրայ քնում են նա։

Որն է այստեղ գլխաւոր նախադասութիւնը և որը երկրորդական։ Ինչ հարցման է պատասխանում նէ լուսնի վրայ քնում են նա երկրորդական նախադասութիւնը։ (Ինչ են կարծում։) Որևէն այստեղ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան ստորոգեալի մասը լրացնում, ամբողջացնում է։

Եթէ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան միտքը լրացնում է, կոչվում է էքսպոզիցէ նախադասութիւն։—Թէ լուսնի վրայ քնում են նա երկրորդական լրացուցիչ նախադասութիւն է։

Եթէ երկրորդական լրացուցիչ նախադասութիւնը գլխաւորից նախադաս է, ստորակէտով է բաժանվում նորանից. ինչպէս. Նէ նա ցանէ, այն կը հնձէ։ Իսկ եթէ լրացուցիչ նախադասութիւնը գլխաւորից յետոյ է դասուած, սովորաբար չէ բաժանվում նորանից, մանաւանդ եթէ գլխաւոր նախադասութիւնը հատառօտ է. բայց կարող է և բաժանուիլ բութով կամ ստորակէտով, եթէ գլխաւոր նախադասութիւնը քիչ շատ ընդ-

դարձակ է, ուրեմն և մեկնութեան կարօտ չէ: Ջորօրինակ. կարծեմ ընչ չէմ պնաչքոմ: Պարսից թագաւորների դիտաւորութիւնն այն էր, (կամ այն էր՝) որ երկոտնեաներ հետ հայոց պատերազմեն եւ ոչնչացնեն:

---

1. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք երկրորդական լրացուցիչ նախադասութիւնները և, ուր հարկաւոր է, բաժանեցէք գլխաւորներից:

Ինչ կ'ասես այն կը լսես:—Ինչ կը բերես այն կը խրթես:—Դուք գիտէք որ ես հիւանդ եմ:—Յուսամ թէ ասածս հասկացար:—Տիգրան Բ կամենում էր որ բոլոր Ասիան իրան տէր ճանաչէ:—Վահան Մամիկոնեանի դիտաւորութիւնն այն էր որ մանր կռիւներով Պարսից զօրութիւնը տկարացնէ:—Վռամշապուհ թագաւորի ցանկութիւնն այն էր որ դիտութիւններն ու արուեստները ծաղկին հայոց մէջ:

2. Հետևեալ նախադասութիւնների մէջ իւրաքանչիւր ստորոգեալ մօտ աւելացրէք երկրորդական լրացուցիչ նախադասութիւններ:

Աչխատասէր աշակերտը յոյս ունի—Բրիստոնէական կրօնը պատուիրում է մեզ—Հողագործը աշխատում է—Բժիշկը կարծում է—Վաճառականի բանը գործը այն է—Գիտէք—Մենք չգիտենք—կարող էք ասել—Ասացէք ինձ—

§ 15 Երկրորդական պարագայական նախադասութիւն:

Ինչուեղ հոգ, այնտեղ կաց:

Ո՞րն է այս առածի մէջ գլխաւոր նախադասութիւնը և որը երկրորդական: Ի՞նչ հարցման է պատասխանում ինչուեղ հոգ երկրորդական նախադասութիւնը: (Ո՞րտեղ կաց).—ինչտեղ հոգ (կաց): Ուրեմն այստեղ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան գրութեան պարագան է ցոյց տալիս:

Եթէ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան ներթակայն գործողութեան կամ գրութեան պարագաները ցոյց տալիս, կոչվում է երկրորդական պարագայական նախադասութիւն: Ինչուեղ հոգ (կաց) երկրորդական պարագայական նախադասութիւն է:

Երկրորդական պարագայական նախադասութիւնների կետադրութեան կանոնը այս է. եթէ պարագայական նախադասութիւնը գլխաւորից նախադաս է, ընդհանրապէս ստորակէտով բաժանվում է նորանից. ինչպէս. երբոր լուինք գովեմ եւ աբեգործ ին ու երկրի մէջ, արևը խաւարում է: Իսկ եթէ պարագայական նախադասութիւնը գլխաւորից յետոյ է դասուած, սովորաբար չէ բաժանվում նորանից. ինչպէս. Բանդ այնպէս բռնէ որ յետո չեղջյու: Բայց երբեմն կարող է բաժանուիլ ստորակէտով, մանաւանդ եթէ գլխաւոր նախադասութիւնը ընդարձակ և ամբողջ է. ես ձեզ ասլիս եմ այս գիրքը, որպէս զի ուղղութ ու չեր ուղղութիւը յայտնէք:

---

1. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք երկրորդական պարագայական նախադասութիւնները և, ուր հարկաւոր է, ստորակետներ դրէք:

Որտեղ գնաս այնտեղի դրակը ծածկիր:—Ինչտեղ պանիր այն տեղ բանիր:—Ինչ տեղ վիրք կայ դիրք չկայ. ինչտեղ դիրք կայ վիրք չկայ:—Արևմուտքն այնտեղ է որտեղ արևը մայր է մանում:—Երբ որ մարդ քաղցած է ուտել է կամենում, երբ որ ծարաւ է խմել է կամենում:—Ջուրը գոլորշիանում է երբ որ կրակի վրայ տաքացնում են:—Աստղերը ջուր է կտրում երբ որ տաք տեղ է լինում:—Լոյսը այնպիսի արագութեամբ է տարածվում որ մենք չենք կարող երևակայել:—Ինչպէս դիտես այնպէս արա:—Ինչպէս որ արեգակը ցրվում է երկնքի ամպերը այնպէս և ճշմարտութիւնը ցրվում է տգիտութիւնը:—Ձմեռը անձրևի տեղ ձիւն է գալիս որովհետև գոլորշիները չափազանց ցրտից ոչ միայն ջուր են կտրում, այլ և սառչում են:

2. Հետևեալ նախադասութիւնների մէջ աւելացրէք երկրորդական պարագայական նախադասութիւններ:

Բրինձը ցանում են այնտեղ—Գետնախնձորը աւելի լաւ է բուսնում այնտեղ—Աստղասարակ գիւղերը չինվում են այնտեղ—Մենք ու-

բախտաւորեամբ գնում ենք այն տեղ—Լուսանում է (երբ)—Մթնում է—Գիշերը լոյս է լինում—Ծառերը ծաղկում են—Տերևները թափվում են—Պէտք է կարդալ այնպէս—Ուրիշների հետ այնպէս վարուեցէք—այնքան աւելի սիրելի ենք լինում:—Աշակերտը սովորում է (ինչի՞ համար)—Մեղուն ծաղիկների վրայ թռչկոտում է—Հաւը թուխս է նստում—Աշոտ Բ կոչուեցաւ երկար—Աշոտ Գ Ողորմած կոչուեցաւ:—

§ 16 Միջանկեալ նախադասութիւն:

Հայկ նահապետը, որ էր ազգային պարծանքը, շատ որդիք ու թոռներ ունեցաւ:

Այս օրինակի մէջ Հայկ նահապետը շատ որդիք ու թոռներ ունեցաւ անկախ, ուրիմն և գլխաւոր նախադասութիւն է. իսկ որ էր ազգային պարծանքը նախադասութիւնը գլխաւորի մէջ ընկած է և ոչինչ կախում չունի նորանից, ուստի և կարող է դուրս թողուիլ, առանց գլխաւոր նախադասութեան մտքին մթութիւն պատճառելու:

Այն նախադասութիւնը որ ուրիշ նախադասութեան մէջ է ընկած և ոչ մէկ բառից կախում չունի, կոչւում է միջանկեալ: Որ էր ազգային պարծանքը միջանկեալ նախադասութիւն է:

Միջանկեալ նախադասութիւնը գլխաւորից բաժանւում է երկու ստորակէտով, երբեմն նաև երկու գծով և փակագծով. ինչպէս. Լուսնի վրայ—ինչպէս կարծում են—բնակիչներ կան: Տրդատ յաջող քարոզութեամբ Ագաթանգեղոսը (այսպէս է անուանում Նորան Խորենացին) ազգով հռոմայեցի էր:

Հետևեալ նախադասութիւնների մէջ դուք միջանկեալ նախադասութիւնները և գլխաւորներից բաժանեցէք ստորակէտներով, երկու գծով կամ փակագծով.

Գնացէք պատուիրեց Յիսուս իր աշակերտներին քարոզեցէք հեթանոսներին և մկրտեցէք նոցա:—Արամը ասում է պատմութիւնը աւելի լաւ էր համարում մնալ քան թէ իր ազգը օտարի լծի տակ ընկած տեսնել:—Բէլը կարծում է Աբիւդենոս մատենագիրը սպանուեցաւ Արմենակի և ոչ Հայկի ձեռով:—Նինոսն ու Շամիրամը ինչպէս կարծում են մի քանի պատմաբաններ առասպելական անձներ են:—Ուրացող վասակը այսպէս է անուանում նորան Եղիշէն միայն իր անձի օգտի համար էր աշխատում:

§ 17. Կրճատեալ նախադասութիւն:

Որ որ իմ յանիծոքութեանը չէ հպատակ, վարձատրութիւն կը կստանայ:	Իմ յանիծոքութեանը հպատակողը վարձատրութիւն կը ստանայ:
Այն աշակերտը, որ պատրաստ եմանամատ է, կարող է խաղալ:	Պատրաստ եմացող աշակերտը կարող է խաղալ:
Ինչին ցանես, այն կը հնձես:	Ցանածդ կը հնձես:
Երբ որ ձեզի հետ խօսում եմ, մտածէք թէ ինչ ես խօսում:	Ձեզի հետ խօսելիս, մտածէք թէ ինչ ես խօսում:
Տրդատ թագաւորը, որ էր պատմիչներից, զարմանալի ուժի տէր մարդ էր:	Տրդատ թագաւորը, պատմիչների խօսքով, զարմանալի ուժի տէր մարդ էր:

Այս օրինակների մէջ երկրորդական նախադասութիւնները երկու ձևով են գործ դրուած,—կատարեալ եւ կրճատեալ ձևերով: Առաջին օրինակի մէջ Որ որ իմ յանիծոքութեանը չէ հպատակ ենթակայ նախադասութիւնը կրճատուելով պարզ ենթակայի է փոխուել: Որ վարձատրութիւն կը ստանայ.—իմ յանիծոքութեանը հպատակողը: Երկրորդ օրինակի մէջ Որ էր եմանամատ է երկրորդական յատկացուցիչ նախադասութիւնը կրճատուելով՝ պարզ յատկացուցչի է փոխուել: Որ աշակերտը կարող է խաղալ.—իր էր եմացող աշակերտը: Երրորդ օրինակի մէջ Ինչ չէ ցանես լրացուցիչ նախադասութիւնը կրճատուելով պարզ լրացուցչի է փոխուել: Ինչ կը հնձես.—Ցանածդ: Չորրորդ օրինակի մէջ Երբ որ ձեզի հետ խօսում եմ պարագայական նախադասութիւնը կրճատեալ նախադասութեան ձև է ստացել: Երբ մտածէք թէ ինչ ես ասում.—Որ խօսելիս էինդերորդ օրինակի մէջ Որ էր ազգային պարծանքը միջանկեալ նախադասութիւնը կրճատուել ու միջանկեալ բառերի է փոխուել—Ազգային պարծանքը խօսքով կամ առելով:

Եթէ երկրորդական նախադասութիւնը իւր առանձին ենթական ու ստորոգեալը ունի, կոչվում է լրացուցիչ նախադասութիւն. իսկ եթէ երկրորդական նախադասութիւնը կրճատուելով՝ պարզ ենթակայի, յատկացուցչի, պարագայական կամ միջանկեալ բառերի պաշտօն է վարում, կոչվում է կրճատեալ:

Երկրորդական կրճատեալ նախադասութիւնները զլխաւոր[1] ոչ մի կէտով չեն բաժանվում: Միայն պարագայական նախադասութիւնները, եթէ քիչ շատ ընդարձակ են և կրճատուելուց յետոյ կանոնաւոր նախադասութեան ձևը պահպանում են, սովորաբար բաժանվում են բութով կամ ստորակէտով. Չե՞նք լինելով (փոխանակ՝ որովհետև ես հիւանդ էի,) չկարողացայ հանդէսին ներկայ գտնուիլ: Իսկ միջանկեալ բառերը միջանեալ նախադասութիւնների պէս՝ երկու ստորակէտի մէջ են դրվում:

---

1. Հետևեալ առածների մէջ կրճատեալ նախադասութիւնները կատարեալ նախադասութիւնների փոխեցէք:

Ջուրը ընկնողը անձրևից չի վախենալ:—Մեղր ծախողը մասը կը լպսակ (կը լղէ):—Երազումը սոված հաց կը տեսնի (կը տեսնէ), ծարաւը ջուր:—Կեռ չծնած երեխեն չոր մի կարիլ:—Ցուն քանդողի տունն Աստուած կը քանդի (կը քանդէ):—Ձու ածան հաւը կչկչան կը լի (կը լինի):—Բամու բերածը քամին կը տանի:—Մինչև հաստի բաբակիլը, բարակի հոգին դուրս եկաւ:

2. Հետևեալ նախադասութիւնների մէջ երկրորդական նախադասութիւնները կրճատեցէք:

Ով որ երաժշտութեան ընդունակութիւն ունի, պէտք է շատ աշխատի որ լաւ երաժիշտ դառնայ:—Ով որ նկարելու սէր ունի, պէտք է համբերութեամբ պարապի, որ լաւ նկարիչ դառնայ:— Ով կը խաղայ, նա կը կաղայ:—Ով որ փող ունի, խելք չունի. ով որ խելք ունի, փող չունի:—Այն ցամաքը որ շրջապատած է ջրով կոչվում է կղզի:—Այն ցամաքը որ երկու ծով միմիանցից բաժանում և երկու ցամաք իրարու հետ կապում է, կոչվում է պարանոց:—Այն մարդիկը, որոնք հողագործութեամբ են պարապում, կոչվում են հողագործ:—Դժուար է յուսալ այն մարդկանց վերայ, որոնք չատ են խոստանում և քիչ են կատարում: Ինչ չէը տեսել պատէն կախ, հիմի (այժմ) տեսաւ ճակատն կախ:—Երբ որ խոսքովը մնում էր, հրամայեց որ Անակի ցեղը անուղ տեղով չնչնեն:—Երբ որ Տրդատը Հռոմից վերադարձաւ, բոլոր ժողովուրդը և նախարարները իրեն փրկիչ ընդունեցին նորան:—Այն մէջոցին որ դուք խոսում էիք, ես մի ամբողջ գլուխ կարդացի:—Գնում եմ դիւղ որ կարդի գնեմ իմ գործերը:—Մինչև չորը կը քրջի, հիւանդի հոգին կը թռչի:—Մինչև թութն եկաւ, լեզուն գլուխը կըտրեց:—Մինչև հերիքը մեզ հասաւ, լիսը (լոյսը) վրայ հասաւ:—Ես բազդաւոր եմ երբ որ լաւ գիրք եմ կարդում:—Պարթևները, ասում է Մովսէս Խորենացին, իրանց ծագումը առնում են Աբրահամի երկրորդ կնոջից՝ Քետուրայից:

§ 18. Պարզ եւ բաղադրեալ նախադասութիւն:

Մարդիկ մահկանացու են:

Մարդիկ, որ մահկանացու են, մեծամեծ գործերի ձեռնամուխ են լինում:

Առաջին օրինակի մէջ մի ենթակայ կայ և մի ստորոգեալ, ուրեմն և մէկ նախադասութիւնից կազմուած է: Երկրորդ օրինակը կազմուած է երկու նախադասութիւնից. Մարդիկ մահկանացու են նախադասութիւն է. իսկ Որ մահկանացու են երկրորդական յատկացուցիչ նախադասութիւն է:

Այն նախադասութիւնը որի մէջ միայն մէկ ենթակայ կայ, մէկ ստորոգեալ, մէկ յատկացուցիչ ու մէկ լրացուցիչ, կոչվում է պարզ—:Մարդիկ մահկանացու են պարզ նախադասութիւն է: Այն նախադասութիւնը որ երկու կամ աւելի նախադասութիւններից է կազմուած, կոչվում է բաղադրեալ:—Մարդիկ, որ մահկանացու են, մեծամեծ գործերի ձեռնամուխ են լինում՝ բաղադրեալ նախադասութիւն է:

Բաղադրեալ նախադասութիւնը կազմվում է սովորաբար մէկ գլխաւոր և մէկ կամ աւելի երկրորդական նախադասութիւններից, որոնք գլխաւորից բաժանվում են ստորակէտներով: Բայց պատահում է որ բաղադրեալ նախադասութիւնը կազմվում է երկու կամ աւելի անկախ նախադասութիւններից, որոնք միջակէտներով են բաժանվում, եթէ ոչ մի բառով կապուած չեն, և ստորակէտով եթէ և, բայց և ուրիշ բառերով կապուած են: Զորօրինակ. Մայիսի գեղեցիկ գիշերներից մէնն էր. օդը մեղմ էր ու հանդարտ. գիշերուան թագուհին՝ լուսինը կամաց կամաց բարձրանում էր երկնքի կապուտ կամարի վերայ, և իր վայելքով նեհմացնում էր անհամար աստղերը: Այստեղ չորս նախադասութիւն կայ, չորսն էլ անկախ, և այս պատճառով միջակէտներով են բաժանուած. միայն վերջինը և-ով կապուած է, ուրեմն և նախընթաց նախադասութիւնից ստորակէտով է բաժանուած:

Հետևեալ նախադասութիւնները կապեցէք միմեանց հետ, այնպէս որ մինը գլխաւոր լինի, իսկ միւսը կամ միւսները երկրորդական:

Ծառերը ծաղկել են պարտէզում: Այդ պարտէզը գտնվում է մեր տան մօտ:—Թուղթը բամբակից են չինում: Այդ թղթի վրայ մենք գրում ենք:—Վայրենի ձիանները գտնվում են Ամերիկայի ու Ասիայի անապատներումը: Այդ ձիանները իրանց ազատ կամքով թափառում են:—Հայերը այժմ ցրուած են աշխարհիս ամէն կողմերը: Հայերը մի ժամանակ կենդրոնացած էին իրանց երկրում:—Սոխակը արդէն թռաւ: Այդ սոխակը երգում էր մեր պարտէզումը: Նա կը վերադառնայ մեզ մօտ գալ տարի:—Ձմեռ փոքր է, լաւ ու տզեղ: Այդ ձիով գիւղացին գնում է: Նա չատ թանկագին ձիաներից օգտակար է:—Սև բիբը փոքրիկ է: Այդ բիբը գտնվում է մեր աչքի մէջ տեղումը: Մենք այդ բիբով տեսնում ենք երկինքն ու երկիրը:

§ 19 Միաւորեալ նախադասութիւն:

Խնձորենին ծաղկում է զարունքին:—Տանձենին ծաղկում է զարունքին:

Այս երկու պարզ նախադասութիւնները կարելի է այսպէս կապել. *Խնձորենին ծաղկում է զարունքին և տանձենին ծաղկում է զարունքին*, Բայց ծաղիկ է և ծաղիկ բառերը չկրկնելու համար՝ կարող ենք այս երկու նախադասութիւններից մէկ նախադասութիւն կազմել. *Խնձորենին և տանձենին ծաղիկ են գարունքին:*

Այն նախադասութիւնը որ երկու կամ աւելի նախադասութիւնների միաւորութիւնից է կազմուած, կոչվում է *միաւորեալ նախադասութիւն*:—*Խնձորենին և տանձենին ծաղիկ են գարունքին* նախադասութիւնը միաւորեալ է:

Միաւորեալ նախադասութեան մէջ կարող են լինել մի քանի ենթակայ կամ մի քանի ստորոգեալ, մի քանի միատեսակ լրացուցիչ կամ մի քանի պարագայական բառեր:

Եթէ միաւորեալ նախադասութեան մէջ երկու ենթակայ կայ, երկու ստորոգեալ և այլն, որ և, ու, կամ բառերով կապուած են, ստորակէտով են բաժանվում. *Ընչպէս. Անգղն ու արծիւը որսական թռչուններ են: Մարդս մտածում ու խօսում է: Ուրիշ ամէն դէպքերի մէջ միաւորեալ նախադասութեան մէջ մի քանի ենթականեր, ստորոգեալներ, լրացուցիչներ և այլն բաժանվում են ստորակէտներով.—այսինքն՝ 1) եթէ ոչ մի բառով կապուած չեն, 2) եթէ կապուած են և-և, ըէ-ըէ, կամ-կամ, եըէ-եըէ կրկնաւոր բառերով:*

---

1 Հետևեալ միաւորեալ նախադասութիւնների մէջ, ուր որ հարկն է, ստորակէտներ դրէք, և յետոյ պարզ նախադասութիւնների փոխեցէք:

Պղինձը ոսկին ու արծաթը մետաղներ են:—(Պղինձը մետաղ է: Ոսկին մետաղ է: Արծաթը մետաղ է:) Դերձակը կօշկակարը ոսկերիչը արհեստաւորներ են:—Կովը ոչխարը ձին չորքոտանի կենդանիներ են:—Տիգրան Երուանդեանից յետոյ հետզհետէ թագաւորեցին Վահագն Առաւան Ներսեհ Զարեհ Արմոգ Բայգամ Վան և Վահէ:—Գիւղացին վարում է ցանում է և հնձում:—Կէտը ռնգեղջիւրը և դլիւինը ապրում են ծովերում և կերակրվում են ծովային բոյսերով որդերով

ու ձկներով։—Բոլոր տաք և ցուրտ երկրներում ծովերում գետերում ու ճահիճներում կան կրիաներ։—Թէ ամառը թէ ձմեռը թէ աշունքին թէ գարնանքին մենք ունինք մեր առօրեայ զուարճութիւնները։ Աղքատները և հարուստները վայելում են բնութեան պարգևները։—Մենք գնում ենք դպրոցելու երբեմն պարտէզ երբեմն դաշտ երբեմն անտառ։

2 Հետևեալ երկու կամ աւելի պարզ նախադասութիւններից միաւորեալ նախադասութիւններ կազմեցէք։

Առիւծը անգութ է։ վագրը անգութ է։—Ադամանդը թանկագին քար է։ Զմռուխտը թանկագին քար է։—Ղեղձը համեղ միրգ է։ Զմեռուկը համեղ միրգ է։ Խաղողը համեղ միրգ է։—Կերձակը չորեր է ձեւում։ Կերձակը չորեր է կարում։—Տիգրանը բարի երեխայ է։ Տիգրանը աշխատասէր երեխայ է։—Ես այսօր վաղ վերկացայ։ Ես այսօր լուացուեցայ։ Ես այսօր աղօթք արի։ Ես այսօր պատրաստեցի իմ դասերը։—Թռչունները ամառը բնակում են անտառներում։ Թռչունները ամառը բնակում են մարգերում։ Թռչունները ամառը բնակում են ճահիճներում։ Թռչունները ամառը բնակում են լճերում։ Թռչունները ամառը բնակում են պտերում։

§ 20. Պատմական, հարցական, պատասխանական, պարադայական եւ հրամայական նախադասութիւններ։

Արշակն ու Տիգրանը նստած էին դասատան մէջ։

—Ի՞նչ ես անում, հարցրեց Արշակը Տիգրանին։

—Աշխարհագրութեան դաս եմ դրում։

—Երբ կլինի որ ես էլ աշխարհագրութիւն սովորիմ։

—Աշխատէ, և դու էլ շուտով կը սկսես սովորել։

Այս օրինակի մէջ այլ և այլ նախադասութիւններ կան, որոնք ցոյց են տալիս թէ խօսողը ինչ նպատակով է յայտնում իր միտքը։ Առաջին նախադասութեան մէջ—Արշակն ու Տիգրանը նստած էին դասատան մէջ—պարզ կերպով պատմվում է թէ ինչ էին անում Արշակն ու Տիգրանը։ Երկրորդ նախադասութիւնը—Ի՞նչ ես անում—պարունակում է Արշակի առաջարկած հարցը Տիգրանին։ Երրորդ նախադասութիւնը—Աշխատէ, ես դու էլ շուտով կը սկսես սովորել—պատասխան է Արշակի առաջարկած հարցին։ Ներէ ինձ լինի որ ես էլ ազգային պատմութիւն սովորեմ նախադասութեամբ Արշակն իր ցանկութիւնն է յայտնում ազգային պատմութիւն սովորելու։ Աշխատէ, և դու էլ շուտով կը սկսես սովորել նախադասութեամբ Տիգրանը հրամայում կամ աւելի ուղիղ՝ յորդորում է Արշակին աշխատելու։

Այն նախադասութիւնը որով պարզապէս պատմվում է մի բան, կամ մի որևիցէ միտք է յայտնվում, կոչվում է պատմական նախադասութիւն է։

Այն նախադասութիւնը որով խօսողը չհամոզվով մի բան՝ կամ կասկածելով մի բանի վերայ հարցմունք է անում, կոչվում է հարցական, իսկ պատասխանը—պատասխանական։ Ի՞նչ ես անում հարցական նախադասութիւն է։ Ազգային պատմութիւն եմ գրում—պատասխանական։

Այն նախադասութիւնը որով խօսողը ստստիկ զգածուածք լինելով՝ բացագանչում է, կոչվում է բացագանչական նախադասութիւն է։—Երբ ինձ լինի որ ես էլ ազգային պատմութիւն սովորիմ բացագանչական նախադասութիւն է։

Այն նախադասութիւնը որով խօսողը պահանջում, հրամայում կամ ցանկանում է որ գործողութիւնը կատարուի, կոչվում է հրամայական։—Աշխատէ, և դու էլ շուտով կը սկսես սովորել հրամայական նախադասութիւն է։

Հարցական նախադասութեան մէջ հարցական նշանը դրվում է այն բառերի վերայ, որի մէջ պարունակվում է հարցը. բացագանչական նախադասութեան մէջ բացագանչութիւն պարունակող բառի վերայ, ինչպէս վերևի օրինակներից երևում է։ Հրամայական նախադասութեան մէջ գործ է դրվում շեշտը, երբէ միայն հրաման կամ

ցանկութիւն պարունակող բառը իրմէ առաջ շեշտակ բառ չունենայ. ինչպէս. գնա՛ դուն և դո՛ւն գնա: Իսկ պատմական և պատասխանական նախադասութիւններից յետոյ, մոքին ու տեղին նայելով, կարող է գրուիլ վերջակէտ, միջակէտ, ստորակէտ:

Պատասխանական նախադասութիւնը շատ անգամ անկատար է լինում, այսինքն պարունակում է իր մէջ միայն այն բառերը՝ որ ամենահարկաւոր են. ինչպէս. Ո՞ւր եւ գնում: — Ուսուցիչը: Ա՛յսօր դաս կա՞յ: — Կայ: Ուր աւելորդ կրկնութիւն կը լինէր ասել՝ Ուսուցիչը եմ գնում: Այո՛, այսօր դաս կայ:

Կրկնութիւն: — Ո՞ր նախադասութիւնը կոչւում է դիմաւոր և ո՛րը անդէմ: Որ նախադասութիւնը կոչւում է դլխաւոր և ո՛րը երկրորդական: Քանի՞ տեսակ են լինում երկրորդական նախադասութիւնները: Ի՞նչ է միջանկեալ նախադասութիւնը: Ո՞ր նախադասութիւնը կոչւում է կատարեալ և ո՛րը կրճատեալ: Ո՞ր նախադասութիւնը կոչւում է պարզ և ո՛րը բաղադրեալ: Ո՞րն է միաւորեալ նախադասութիւնը: Մեկնեցէք պատմական, հարցական, պատասխանական, բացագանչական և հրամայական նախադասութիւնների մէջ եղած զանազանութիւնը: Երկրորդական յատկացուցիչ նախադասութիւնը երբ և ինչ կէտերով բաժանւում է դլխաւորից: Ե՞րբ և ինչ կէտադրութեան նշանով են բաժանւում դլխաւորից երկրորդական ենթակայ, լրացուցիչ և պարագայական նախադասութիւնները: Ի՞նչ նշաններով բաժանւում է միջանկեալ նախադասութիւնը դլխաւորից: Կրճատեալ նախադասութիւնները երբ և ինչ կէտով բաժանւում են դլխաւորից: Ի՞նչ կէտադրութեան նշաններ գործ են ածւում բաղադրեալ նախադասութեան մէջ: Միաւորեալ նախադասութեան մէջ այլ և այլ ենթակաները, ստորոգեալները, յատկացուցիչները նոյն, երբ են բաժանւում միմեանցից ստորակէտով և երբ ոչ: Ի՞նչ առանձին նշաններ գործ են ածւում հարցական, բացագանչական և հրամայական նախադասութիւնների մէջ:

Կարդացէք ընթերցանութեան 2-րդ հատուածը և ցոյց տուէք իւրաքանչիւր նախադասութեան տեսակը: Լուծեցէք իւրաքանչիւր նախադասութիւնը առանձին, յիշելով նախադասութեան գլխաւոր և երկրորդական անդամները: Ցետոյ այդ հատուածը անգիր սերտեցէք:

ՀԱՑՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Մասունք Բանի

§ 21. Բառերի նշանակութիւնը:

Տղայք եօթներորդ ամսում ատամ են հանում և ութերորդ տարում փոխում են:

Այս բաղադրեալ նախադասութիւնը կազմուած է այլ և այլ բառերից, որոնք զանազան հասկացողութիւններ են պարունակում: Տղայ բառը չնչաւոր առարկայի անուն է, եօթներորդ բառը ցոյց է տալիս թիւ. ամսում—մտաւոր առարկայ. ատամ—նիւթական առարկայ. հանում են—գործողութիւն. և բառը կապում է երկու նախադասութիւն միմեանց հետ. ութերորդ բառը ցոյց է տալիս թիւ. փոխում—վերացական առարկայ. փոխում են—գործողութիւն:

Ամենայն նախադասութիւն կազմվում է առանձին բառերից, որոնք զանազան հասկացողութիւններ են պարունակում:

Բառերը իրանց պարունակած հասկացողութիւնների համեմատ այլ և այլ կարգերի են բաժանվում, որոնք քերականութեան մէջ կոչվում են մասունք-բանի, այսինքն խօսքի մասունք:

Ա. Գոյական անուն:

§ 22 Ի՞նչ է գոյական անունը:

Հայկազուն նահապետներէն ու նահապետներէն պատմաւնեան մէջ

ուշադրութիւն արժանի են Աւտօ և Տէգբոն երեւանդեան. երկուսն էլ նշանաւոր իրանց փոքրութեամբը, հայբենասիրութեամբը և քաղաքակրթական նպատակներով:

Այս օրինակի մէջ նշանակած բառերը—նահապետներէ, լուսաւորներէ, պարմանեան (մէջ), ուշադրութեան, Աւտօ, Տէգբոն, փոքրութեամբը, հայբենասիրութեամբը նպատակներով—նախադասութեան զանազան անդամների պաշտօն են վարում: (Լուծեցէք այս նախադասութիւնը և ցոյց տուէք թէ ինչ պաշտօն են վարում նշանակած բառերը:) Բայց ըստ նշանակութեան այդ բառերը այլ և այլ առարկաների անուններ են. այսպէս օրինակի համար՝ մինը կոչվում է նահապետ, միւսը — լուսաւոր, երրորդը — Աւտօ և այլն:

Իւրաքանչիւր առարկայ ունի իւր առանձին անունը, որ քերականութեան մէջ կոչվում է գոյական անուն:—Նահապետ, պարմանեան, Տէգբոն, նպատակ գոյական անուններ են:

---

1. Անուանեցէք դասատան մէջ գտնուած առարկանները:

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ գոյական անուններով, և ցոյց տուէք թէ որ առարկաներին տալիս ենք այդ անունները: Գոյական անունների տակ գիծ քաշեցէք:

Կօշկակար (կօշկակար կոչվում է այն արհեստաւորը որ ոտնամաններ է կարում:)—դերձակ—ժամագործ—վաճառական—հողագործ նկարիչ—աշակերտ—թանաքաման—աւազաման—թուղթ—գրիչ—քանոն—չուն—ձի—գայլ—մարդ:

§ 23. Առարկաների տեսակները:

Ա. Հասարակ բոլոր առարկաները երկուսի են բաժանվում. նիւթական և վերացական:

Նիւթական կոչվում են այն առարկաները՝ որոնց միմեանցից որոշում ենք մեր հինգ զգայարաններով, այսինքն տեսա-

նելիքով, լսելիքով, շօշափելիքով, հոտոտելիքով և ճաշակելիքով. զորօրինակ. ծառ, պանգիտ, փոք, ծաղիկ, քնդյոր:

Մ. Պարզ ասվում են այն առարկաները՝ որ չենք տեսնում, չենք լսում, չենք շօշափում և ոչ հոտոտում ենք կամ ճաշակում, այլ միայն մտքով ըմբռնում ենք. ինչպէս վարձատրութիւն, պղտութիւն, նմանութիւն:

Նիւթական առարկաների մէջ պէտք է զանազանել ընդունելիքը անշունչներից: Առաջինները կարող են իրանց ազատ կամքովը մէկ տեղից միւսը շարժուիլ. նստել, ցատկել, գողանալ, մղկտալ իսկ անշունչ առարկաները չեն կարող իրանց ազատ կամքովը շարժուիլ. քոյո, փոք, եղիւլ:

Այսպէս և մտաւոր առարկաների մէջ կան այնպիսիները՝ որ թէև միայն մտքով ենք ըմբռնում, բայց առանձին գոյութիւն ունին, ինչպէս. Աստուած, հրեշտակ, հոգի. կան էլ որոնք ուրիշ առարկաներից վեր առած յատկութիւններ ու գործողութիւններ են, և միայն մեր մտքում ներկայանում են մեզ իբրև առանձին յատկութիւններ. այսպէս են՝ փոքրութիւն, ջղուութիւն, հպարտութիւն, հանգիստ:

Այսպիսի մտաւոր առարկաները կոչվում են նաև վերացական:

---

1. Ասացէք մի քանի առարկաներ որ կարող ենք 1) տեսնել, 2) լսել, 3) շօշափել, 4) հոտոտել, 5) ճաշակել:

2. Ասացէք մի քանի առարկաներ որ միայն մտքով կարող ենք ըմբռնել:

§ 24. Ցատուկ եւ հասարակ գոյականներ:

Ձգոյ քուն և նախնական բնակութեան տեղն էր Նոյեան և

կոչ գետերի մէջ պարունակուած հովիտը, որ նշանաւոր է պատմական յիշատակարաններով: Ս.յատեղ էր գտնվում Ալմաւէի՝ Հայկազանց իշխանների աթոռանիստը. Ս.քաղաքը, Վաղարշապատ կամ Նոր Քաղաքը և այլն: Ս.յատեղ էր նոյնպէս Շէքոհայ բարերը նահանգը Ագինաւէտ գաւառը:

Ա.յս օրինակի մէջ Հայոց, Եփռատ, կոչ, Արմաւիր, Հայկազանց և միւս նշանակած բառերը այնպիսի անուններ են, որ միայն մէկ առարկայի յատուկ ու սեպհական են. այդ անունը կրող ուրիշ առարկաներ չկան: Բայց այդ առարկաները ուրիշ անուններ էլ ունին. այսպէս օրինակի համար, Երասխը՝ գետ է, Արմաւիրը՝ քաղաք, Շիրակը՝ նահանգ, միայն գետ քաղաք, նահանգ այնպիսի անուններ են որ ուրիշ գետերի, քաղաքների և նահանգների առ հասարակ պատկանում են:

Գոյական անունները լինում են յատուկ և հասարակ:

Յատուկ կոչվում է այն անունը որ միայն մէկ առարկայի է պատկանում:— Եփռատ, Արմաւիր, Շիրակ յատուկ գոյական անուններ են *:

Հասարակ ասվում է այն անունը որ շատ միատեսակ առարկաների է պատկանում:— գետ, քաղաք, նահանգ հասարակ գոյական անուններ են:

Պատահում է երբեմն որ շատ միատեսակ առարկաներ մէկ տեղ հաւաքուելով՝ մի ամբողջ են կազմում. ինչպէս գունդ (զինուորների հաւաքում), հօտ (ոչխարների հաւաքում), անտառ (ծառերի հաւաքում): Ա.յս տեսակ անունները կոչվում են հաւաքական:

* Յատուկ անուններ տալիս ենք անշունչ առարկաներին և մարդկանց: Ա.յս վերջինների յատուկ անունները շատ անգամ միևնոյնն են լինում. շատ կան, օրինակի համար, Յովհաննէսներ, Տիգրաններ, Շուշաններ: Բայց երբեմն ասում ենք Յովհաննէս, Տիգրան, Շուշան, մեր աչքի առաջ մի նշանակած անձն ունինք, որ չէ կարելի շփոթել նոյն անունը կրող ուրիշ անձի հետ: Միայն առնչի քաղաքում

թեան համար մարդկանց անունների մօտ աւելացնում են նոցա ազգանունները, երբեմն նաև տօհմը, էջմիածին. Գրիգոր Մամիկոնեան. Աբգարոսեան Աբգարեան. Խորով Ա. Տիգրան Գ:

---

1. Ո՞րն է ձեր յատուկ անունը և որն է հասարակը: Ո՞րն է ձեր քաղաքի, գետի, գաւառի յատուկ անունը և որն է հասարակը: Ասացէք ձեր ծանօթ երկրների անունները, քաղաքների անունները, լեռների անունները, գետերի անունները, մարդկանց անունները:

2. Հետևեալ յատուկ անունների մօտ դրէք նոցա յարմար հասարակ անուններ:

Հայաստան—Անի—Արարատ—Տիգրիս—Սևան—Տրդատ:

3. Հետևեալ հասարակ անունների մօտ դրէք նոցա յարմար յատուկ անուններ:

Գիւղ—քաղաք— գաւառ—երկիր—նահանգ—գետ—լիճ—կղզի—իշխան—թագաւոր—կայսր—կաթողիկոս—եպիսկոպոս:

4. Գրեցէք մի քանի նախադասութիւններ աշխարհագրութիւնից, սրբազան և ազգային պատմութիւնից այլ և այլ յատուկ և հասարակ գոյականներով: Յատուկ անունները գլխատառով գրեցէք, իսկ հասարակ անունների տակ գիծ քաշեցէք:

§ 25. Գոյական անունների Թիւը:

Մեծը մնացածով ուրուագ է:
Մեծերն մնացածներ են:

Առաջին օրինակի մէջ Հայր, արուագ գոյականները մէկ մէկ առարկայ են ցոյց տալիս, և այս պատճառով եզակի են դրուած: Երկրորդ օրինակի մէջ Հարքն, արուագներ գոյականները շատ առարկաներ են ցոյց տալիս, և այս պատճառով յոգնակի են դրուած:

Գոյական անունները երկու Թիւ ունին, եզակի և յոգնակի.

Եզակի Թիւը մէկ է ցոյց տալիս, և գործ է ածվում երբ խօսքը միայն մէկ առարկայի վրայ է:— Մարդ, արուագ եզակի են:

Յոգնակի Թիւը մէկից աւելի կամ շատ է ցոյց տալիս, և

դարձ է աճվում երբ խօսքը մեկից աւելի կամ շատ առարկաների վրայ է:—Մարդիկ, ապրուստներ յոգնակի են:

Ա. հասարակ յոգնակի թիւը անորոշ քանակութիւն է ցոյց տալիս, ինչպէս, բաժիններ գոներ: Իսկ եթէ կամենում են քանակութիւնը որոշակի յայտնել գործ են դրվում թուական անուններ, և այն ժամանակ շատ անգամ գոյականը եզակի վերջաւորութեամբ է ձեում, որովհետև յոգնակի միտքը պարունակվում է թուական անուան մէջ. հինգ բաժան, տասը գոներ: Բայց կան անյոգնակի գոյականներ, այսինքն որ միայն եզակի ունին. այսպէս են յատուկ անունները, շատ մտաւոր և մի քանի նիւթական անուններ. ինչպէս. Հայկ, Աբրահամ, ոսկի, Նախանձ, աւէրք, ցորեն, ապուր, ծուխ: Այս վերջիններս յոգնակի էլ են գործ ածվում, երբ հարկ լինի զանազան տեսակները յայտնել. — աւէրներ (զանազան տեսակ ալիւր), ապուրներ (կերակրեր, բժշկական հայեցի): Իսկ անեզական բառեր նոր լեզուի մէջ չկան:

---

1. Հետևեալ նախադասութիւնների մէջ եզակի ձևով ասածները յոգնականի փոխեցէք, և յոգնակի ձևով ասածները եզականի:

Աշակերտը պատրաստում է իւր դասը:—Ընկերս կորցրել է իւր գրքերը:—Երէկ մենք մեր եկանք պարտէզում:—Այսօր նամակ գրեցի իմ բարեկամին:—Երեխայքը խնձոր են քաղում:—Աղջիկները պակներ հիւսեցին:—Գիւղացին գետինը հերկում է:—Մշակները փայտ են կտրում:—Ձկնորսը ձուկ է բռնում:

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ աշխարհագրութիւնից, սրբազան և աղգային պատմութիւնից ձեր ծանօթ առարկաների վրայ եզակի և յոգնակի գոյական անուններով:

§ 26. Հոլովները եւ նոցա նշանակութիւնը.

Տէրը Բ. Աստուծոյ երկրին տէր դառնալուց յետոյ, իր յաղթական ղօրութեամբ հաստատ մինչև Պաղեստին և բազմաթիւ իսրայելացի գերիներով վերադարձաւ իր հայրենիքը, որոնց տեղաւորեց Հայաստանի զանազան փաղաքներում:

Այս օրինակի մէջ այլ և այլ գոյականներ կան. Տէրը, Աստուծ, երկիր, ղօրութ, Պաղեստին, գերի, հայրենիք, Հայաստան և փաղաք: Եթէ այս բոլոր գոյականները իրանց սկզբնական ձևով թողնենք, ոչինչ չենք հասկանալ, ինչի հասար.—որովհետև չենք իմանալ թէ ինչ յարաբերութիւններ ունին միմեանց հետ Տէրը, Աստուծ, ղօրութ, Պաղեստին, և մնացած բոլոր առարկաները: Այդ յարաբերութիւնները պարզ երևում են գլխաւորապէս գոյականների վերջին ծայրը աւելացրած անշնչան մասնիկներից կամ վերջաւորութիւններից: Առաջին գոյականը Տէրոն սկզբնական ձևով է դրած, որովհետև մեր խօսակցութեան գլխաւոր առարկան է և անկախ է միւս առարկաներից. ընդհակառակն միւս բոլոր առարկաները կախումն ունին նորանից, այս պատճառով և մեծ մասը իրանց վերջը զանազան անշնչան մասնիկներ են ընդունել, որոնք խօսքի ընթացքի մէջ նշանակութիւն են ստանում: Այսպէս, երկիր-ին ցոյց է տալիս թէ ինչի՞ տէր դարձաւ Տիրան. Աստուծ-ոց-թէ որ երկիր-ին ղօրութ-եր-ով ցոյց է տալիս թէ ումի՞ Տիրան հասաւ պաղեստին, նոյնպէս և գերի-նե-րով թէ ումնո՞վ վերադարձաւ իր հայրենիքը. փաղաք-ներում—թէ ինչ տեղ կամ որ տեղո՞ տեղաւորեց գերիներին, և այլն:

Առարկաների մէջ եղած յարաբերութիւնները ցոյց տալու համար՝ գոյական անուննները իրանց վերջաւորութիւնները փոխում են, և այդ փոփոխութիւնները քերականութեան մէջ կոչվում են հոլով: — Երկրի, ղօրութեամբ, փաղաքներում հոլովներ են:

Հայերէն լեզուի հոլովները եօթն են. Ուղղական, Հայցական, Սեռական, Տրական, Բացառական, Գործիական և Ներգոյական:

1. Ո՞ղղական հոլովը անուան սկզբնական ձևն է, որ յայտնում է թէ ո՛վ է կամ ի՞նչ է խօսակցութեան առարկան, և այս պատճառով պատասխանում է այս հարցերին. ո՞վ և ի՞նչ: Ո՞վ էր մեր ազգի ցեղապետը.—Հայկ: Ի՞նչ է ոսկին.—Մետաղ է:—Հայկ, մետաղ ուղղական հոլովներ են:

Ուղղականի նման է նշանակում ասած հոլովը, որ միևնոյն հար-

ցերին է պատասխանում (ով և ինչ) և միայն նշանակութեամբ է զանազանվում նորանից, այսինքն եթէ ուղղականի ձևով բառը նախադասութեան մէջ ոչ ենթակայ է և ոչ ստորոգեալ, կոչական բառ է։

2. Հայոյական հոլովը ցոյց է տալիս գլխաւորապէս թէ մէկ առարկայ ուրիշ առարկայի գործողութեան է ենթարկվում և պատասխանում է այս հարցերին. ո՞ւմ և ի՞նչ։ Ո՞ւմ սպանեց կայէն —Աբէլէն։ Ի՞նչ գտաւ կոլումբոսը.—Ամերիկան։—Աբէլէն, Ամերիկան հայցական հոլովներ են։

3. Սեռական հոլովը ցոյց է տալիս թէ մէկ առարկայ ո՞ւմ է կամ ինչից առաջ է գալիս, ո՞ւմ ո՞վ է, և պատասխանում է, այս հարցերին. ո՞վ և ինչի՞ կամ ի՞նչ բանի։ Ո՞ւմն է այս պատկերը.—Հօրեղբօրս։ Ի՞նչ բանի տերևները չորացան.—Ծառերի։—Հօրեղբօրս, ծառերի սեռական հոլովներ են։

4. Տրական հոլովը ցոյց է տալիս գլխաւորապէս թէ մէկ բան ումն են ընծայում, ո՞ւ ի, և պատասխանում է այս հարցերին ո՞վ և ինչի՞ կամ ի՞նչ բանի։ Ո՞ւմ շնորհեց վաղարշակ Թագադրութեան իրաւունքը.—Բագրատունեանց նախարարներին։ Ի՞նչ բանի արժանի է ծոյլ աշակերտը.—Պատժի։—Նախարարներին, պատժի տրական հոլովներ են։

5. Բացառական հոլովը ցոյց է տալիս թէ մէկ տեղից հեռանում ենք, կամ մէկից մի բան ենք ընդունում, և պատասխանում է այս հարցերին. ո՞ւմ ի՞նչի՞ կամ ո՞րտեղից։ Ումի՞ց առացաւ Պարոյր Թագաւորական Թագը.—Կնոջից։ Ո՞ր տեղից գաղթեցան Մամիկոնեանք.—Չինաստանից։—Կնոջից, Չինաստանից բացառական հոլովներ են։

6. Գործիական հոլովը ցոյց է տալիս թէ ումնով, ումի՞ ձեռով կամ ինչ գործիքով կատարվում է գործողութիւնը, և պատասխանում է այս հարցերին. ո՞նո՞վ կամ ո՞ւմ ձեռով և ինչո՞վ։ Ումնո՞վ միխիթարվում են ծնողքը.—Իրանց պատանեքով։ Ինչո՞վ են գրում մարդիկ.—Գրչով կամ մատիտով։—Պատանեքով, գրչով, մատիտով գործիական հոլովներ են։

7. Ներգոյական հոլովը ցոյց է տալիս թէ ո՞ր տեղ է կատարվում գործողութիւնը, և պատասխանում է այս հարցերին. ո՞ւմնո՞ւմ, ինչո՞ւմ, ո՞րտեղո՞ւմ։ Ինչո՞ւմն են լողում ձկները.—Ջրում։ Ո՞ր տեղ կամ ո՞ր տեղո՞ւմ են սովորում աշակերտները.—Ուսումնարանում։—Ջրում, ուսումնարանում ներգոյական հոլովներ են։

Եթէ հոլովների վրայ ուշադրութիւն դարձնենք, կը տեսնենք որ մի քանի հոլովների համար միևնոյն հարցերը և հարցերի հետ միևնոյն վերջաւորութիւնները գործ են ածվում. այսպէս անշունչ առարկաների համար վաղուց ենք հարցը գործ է ածվում —ղեղեռնէ, միանգամայն և հայցականի համար, որոնք միմեանց նման են, այսինքն անուան սկզբնական ձևումը են դրվում. —ո՞վ և ինչի վարվում են սերասանի և պրոկոպի համար, որոնք նոյնպէս միմեանց նման են վերջաւորութեամբ։ Նոյն —ո՞վ հարցը գործ է դրվում և հայցականի համար, երբ խօսքը մարդկանց անունների վրայ է, և այն ժամանակ հայցականը սեռականի և տրականի նման է վերջաւորութեամբ։ Այդ նոյնանուն հոլովները միմեանցից որոշելու մի միայն հնարք կայ—քննել թէ նոցանից իւրաքանչիւրը ինչ պաշտօն է վարում և կամ ինչ մտքով է վարուած նախադասութեան մէջ։

Հետևեալ հարցերի պատասխանները գրեցէք այնպէս որ կատարեալ նախադասութիւններ կազմուին։ Ցետոյ իւրաքանչիւր գոյականի հոլովը ու թիւը նշանակեցէք համառօտ կերպով։

Ո՞վ է մեր ազգի ցեղապետը։—Ո՞ւմ յանձնեց Սկայորդին իր իշխանութիւնը։—Ո՞ւմ երևեցաւ Աստուած Քորեբ սարի վրայ։ Ումից ստացար այս գիրքը։—Ովքե՞ր սիրեցին Հայաստանին վահէի մահից յետոյ։—Ո՞վ էր վաղարշակ։—Ո՞ւմ ձեռով չինուեցաւ Արտաշատ քա-

ղաքը։—Ի՞նչ է երկաթը։—Ի՞նչ է ծաղկում գարունքին և չորանում աշունքին։—Ի՞նչ չնորհեց Աստուած Իսրայելացոց Մովսէսի ձեռով։—Ի՞նչ է լոյս տալիս ցերեկով և ինչ գիշերով։—Ինչի գոները բաց են։—Ինչին դիպաւ նաւը ու խորտակուեցաւ։—Ինչից են հանում ջուրը։—Ո՞րտեղից գաղթեցաւ Հայկ նահապետը։—Ինչով են փորում հողը։—Ինչով են եփում միսը։—Ինչումն են բնակում քաղաքացիք։—Ինչումն են բնակում գիւղացիք։

§ 27. Հոլովում։

Գոյական անունները փոփոխվում են 1) հոլովով և 2) թուով։ Այս փոփոխումը կոչվում է հոլովո՛ւմ։ Ջորօրինակ.

	Եզ. Թիւ։
Ծովը մեծ է քան թէ ցամաքը։	Ո. Ծով
Կուբ գետը թափվում է Կասպից ծովը։	Հ. Ծով
Ծովի ջուրը աղի ու դառն է։	Ս. Ծովի
Ծովին կպած ցամաքը կոչվում է ափ։	Տ. Ծովի
Ծովից անդադար բարձրանում է գոլորշի։	Բ. Ծովից
Ծովով պատած ցամաքը կոչվում է կղզի։	Գ. Ծովով
Կէտերը բնակում են ծովում։	Ն. Ծովում
	Յոդն. Թիւ։
Ծովերը հեչտացնում են մարդկանց հաղորդակցութիւնը։	Ո. Ծովեր
Ծովագնացները չատ նոր ցամաքներ ու ծովեր գտան։	Հ. Ծովեր
Մի քանի ծովերի ափերը անմերձենալի են։	Ս. Ծովերի
Մեծամեծ ծովերին ովկիանոս են ասում։	Տ. Ծովերի
Ծովերից ամէն տեսակ խոշոր ձկներ են դուրս գալիս։	Բ. Ծովերից
Շատ երկրներ ծովերով են միանում։	Գ. Ծովերով
Եւրոպական ծովերում չատ ծոցեր կան։	Ն. Ծովերում։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ այլ և այլ գոյական անուններով։ Ցետոյ այդ գոյականները հոլովեցէք եզակի և յոդնակի։

§ 28. Գոյական անունների պաշտօնը նախադասութեան մէջ։

Ամէն խօսք նախադասութեան մէջ որևէ գոյականը ենթակայ է։

Ամէն ցնդեղ գոլոն է նախադասութեան մէջ գոլոն (է) գոյականը ստորոգեալ է։

Փղի ինճիլը երեար ու նոր ընկած է նախադասութեան մէջ փղի գոյականը յատկացուցիչ է։

Տրդատ Լուսաւորը ամէն ոք աւազինք մարդ էր նախադասութեան մէջ Լուսաւորը գոյականը Տրդատ յատուկ անուան բացայայտիչ է։

Բնութիւնը Աստուածներին ընծէր է պարգեւեալ Աստուածային հոմայր։ Այս նախադասութեան մէջ Աստուածներին և ընծէր գոյականները լրացուցիչ են, իսկ օդումը պարագայական բառ։

Գոյական անունը նախադասութեան մէջ լինում է ենթակայ, ստորոգեալ, յատկացուցիչ, բացայայտիչ, լրացուցիչ և պարագայական բառ։

---

1. *Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետևեալ գոյականները լինին*

1) Ենիշէյ.—սենեակ—սեղան—գրքեր—տետրակներ—քանոն—գիւղ—քաղաք—սար—ձոր—պղպիւր—գետ—ծով—անձրև—ձիւն—ցօղ Հայք—Վարդան—Արարատ։ 2) Սոփոկլէս.—քար—մետաղ—բոյս—ծաղիկ—ծառ—անասուն—թռչուն—վաճառական—պատկերահան—եբաժիշտ։

2. *Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետևեալ գոյականները լինին*

1) Յովհաննէս.—ընկեր—քոյր—եղբայր—հայր—մայր—պապ—թոռ—հօրեղբայր—մօրաքոյր—Արամ—Տիգրան—Հայք—Պարսիկք։ 2) Բոյոյոպիէ—աշակերտ—վարժապետ—մօրեղբայր—հօրաքոյր—իշխան—թագաւոր—կայսր—նախարար—վարդապետ—եպիսկոպոս—կաթողիկոս։

3. Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետևեալ գոյականները լրացուցիչ լինին՝ իրրև պատասխան

1) Ո՞ւմ, ի՞նչ հարցերին—հայր—որդի— երեխայ—ծնողք— ցիւսուս—վաղարշակ— Աւանք—դաս—տետրակ—ցորեն—ալիւր— կտաւ—կօշիկ։ 2) Ո՞ւմ, ինչի՞ հարցերին.—ընկեր—բարեկամ—հարևան—աշակերտ—վարձատրութիւն—պատիժ։ 3) Ո՞ւմ, ինչի՞ հարցերին.—եղբայր քոյր— հայր—մօրաքոյր—բարեկամ—վտանգ—նեղութիւն—ծուլութիւն։ 4) Ո՞ւմ՞ն, ինչի՞ն—դուստր—փեսայ—զաւակ— Մովսէս— Բրիտոս—գրիչ— կնքամայր— կացին— բահ—դուխան— մանգաղ— ասեղ—ջուր—սապոն։

4. Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետևեալ գոյականները պարագայական բառեր լինին։

Սենեակ—տուն—փողոց—անտառ—դաշտ—չարաթ—ամիս—տարի—տաքութիւն—ցուրտ—անձրև—ձիւն—ընթերցանութիւն—գրութիւն նկարչութիւն։

Կրկնութիւն.—ինչից է կազմվում ամենայն նախադասութիւն։ Ի՞նչ է նշանակում մասունք-բանի։ Ի՞նչ է գոյական անունը։ Առարկաները քանի տեսակի են բաժանվում։ Ո՞ր գոյականը կոչվում է յատուկ և ո՞րը հասարակ։ Ի՞նչ է հաւաքական գոյական անունը։ Գոյական անունները քանի թիւ ունին և որո՞նք են։ Ի՞նչ է հոլովը։ Հայերէն լեզուն քանի հոլով ունի։ Կրկնեցէք իւրաքանչիւր հոլովի նշանակութիւնը։ Ի՞նչ է հոլովումը։ Հոլովեցէք մի բառ եզակի և յոգնակի։ Ինչ պաշտօն է վարում գոյական անունը նախադասութեան մէջ։

Կարդացէք ընթերցանութեան 3-րդ հատուածը և ցոյց տուէք թէ իւրաքանչիւր գոյականը ինչ տեսակ է, ինչպիսի առարկայի անուն է, ինչ թուով ու հոլովով գործ դրած է, վերջապես թէ ինչ պաշտօն է վարում նախադասութեան մէջ։

Բ. Ածական անուն։

§ 29. Ինչ է ածական անունը։

Աչքին, բազրատունեաց աթոռանիստը, մեծ ու գեղեցիկ քաղաք էր, ամուր պարսպով ու քարէյր աշտարակներով պատած։

Այս օրինակի մէջ բոլոր նշանակած բառերը առարկաների այլ և այլ յատկութիւններն են ցոյց տալիս ու որոշում են նոցա ուրիշ նոյնատեսակ առարկաներից։ Այսպէս մեծ, գեղեցիկ բառերը դրուելով տղայ գոյականի մօտ ցոյց են տալիս նորա որպիսի լինելը և որոշում են նորան փոքր ու փչեղ քաղաքից. ամուր բառը դրուելով պարսպի գոյականի մօտ՝ զանազանում է նորան ևայլ պարսպից. քարէյր դրուելով աշտարակի գոյականի մօտ զանազանում է նորան ցածր աշտարակից։

Այն բառերը որոնք ցոյց են տալիս առարկաների յատկութիւնները, կոչվում են ածական անուն։—Մեծ, գեղեցիկ, ամուր, քարէյր ածական անուններ են։

Ածական բառը կազմուած է հին ածել բառից, որ նշանակում է բերել.—որովհետև ածականը բերում է ու դնում է գոյականի մօտ։

Ի՞նչ յատկութիւններ կարող են ունենալ հետևեալ առարկաները։

Գիրք—գրիչ—թուղթ—թանաք—սեղան—աթոռ—ճրագ—դանակ դպրոց—աղուէս—օչխար—առիւծ—մարդ—հող—քար—ծառ—վայրցերեկ—գիշեր—հողագործ—վաճառական—աշակերտ—երաժիշտ—նկարիչ։

2. Ինչ առարկաների կարող են պատկանել հետևեալ յատկութիւնները։

Սպիտակ—կարմիր—կապուտ—փայլուն—արթուն—սլինդ—կարծր—թանձր—աւազոտ—աղմոտ—արծաթէ—պղնձէ—երկաթի—ոսկի—բարի—հեզացի—քնական—հանճարեղ։

3. Գրեցէք մի քանի նախադասութիւններ և գործ դրէք հետեւեալ գոյականները ածականների հետ։

Ջանասէր աշակերտ—ծոյլ աշակերտ—լաւ մարդ—աւազոտ հող սև հող—կարմիր վարդ—պարզ երկինք—ամպամած օր—մութ գիշեր—մանրամասն նկարագրութիւն—կարճառօտ պատմութիւն։

§ 30. Յատուկ եւ հասարակ ածականներ։

Պիրէնէան լեռները բաժանում են Ֆրանսիան Սպանիայից։ Գալինաները օրերը զուարճալի են։

Առաջին օրինակի մէջ Պիրէնէան ածականը այնպիսի յատկութիւն է ցոյց տալիս, որ միայն նշանակած լեռների սեպհական է։ Երկրորդի մէջ գալինային ածականը այնպիսի յատկութիւն է ցոյց տալիս, որ ուրիշ շատ առարկաների կարող է պատկանել. զորօրինակ, կարող ենք ասել գալինային եղնուկ, գալինային ծաղիկ, գալինային անչքեր այլն։

Ածական անունները գոյականների պէս լինում են յատուկ և հասարակ։

Յատուկ ածական անունը ցոյց է տալիս այնպիսի յատկութիւն, որ միայն մէկ առարկայի է պատկանում. իսկ հասարակ ածական անունը ցոյց է տալիս այնպիսի յատկութիւն, որ կարող է շատ առարկաների պատկանել։—Պիրէնէան յատուկ ածական անուն է, գալինային—հասարակ։

Ինչպէս որ հասարակ գոյականները մականուն դառնալով՝ յատուկ անուան նշանակութիւն են ստանում,—ինչպէս Աղա Նէկոլ, Աբուլխա Մահակ,—այսպէս և հասարակ ածականները մի մասնաւոր առարկայի յատկութիւն ցոյց տալով յատուկ ածական անուան նշանակութիւն են առանում. ինչպէս նոր Աշխարհ. կարմիր ծով. Աչք գեղեցիկ. Ուխտը Աստիճանաց։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ աշխարհագրութիւնից, սրբազան և արտաքին պատմութիւնից յատուկ ածական անուններով։

§ 31 Որակական եւ յարաբերական ածականներ։

Երկրագունդը այնպէս հոլն ու հաստատ չէ ինչպէս մի որև իցէ փոլէ կամ ապոկէ գնդակ։

Այս օրինակի մէջ հոլն ու հաստատ ածականները այնպիսի յատկութիւն են ցոյց տալիս, որ երկրագունդ առարկայի ընութիւնից առնուած է, իսկ փոլէ և ապոկէ ածականները ցոյց են տալիս թէ ինչ յարաբերութիւն ունի գունդ առարկան քարի ու ապակիի հետ, այսինքն թէ քարից, ապակիից է շինած։ Այսպէս, երբ ասում ենք՝ գեղեցիկ լեռներ, լաւ ծառայող, գեղեցիկ և լաւ ածականները ցոյց են տալիս լոկ՝ թէ ինչպիսի են լեռները ու ժամացոյցը. իսկ եթէ ասենք՝ հայկական լեռներ, ոսկի ծառայող, հայկական ցոյց է տալիս թէ լեռները ունի պատկանում, ոսկի—թէ ինչից է շինած ժամացոյցը։

Ածականները իրանց ցոյց տուած յատկութիւններին նայելով՝ երկուսի են բաժանվում. որակական և յարաբերական։

Որակական ածականը ցոյց է տալիս ածականի այն որպիսութիւնը, որ նորա ընութիւնից առնուած է. իսկ յարաբերական ածականը ցոյց է տալիս մէկ առարկայի ունեցած յարաբերութիւնը ուրիշ առարկաների հետ, այսինքն՝ նրանից ինչից շինուած է, ում պատկանելը, ժամանակը ու տեղը, թէ երբ կամ ո՞ր տեղ է գտնվում առարկան։—Հոլն, հաստատ որակական ածականներ են.—փոլէ, ապոկէ—յարաբերական։

Որակական և յարաբերական ածականների մէջ եղած մեծ զանազանութիւնն էլ այն է, որ առաջինների ցոյց տուած յատկութիւնը կարող է աւելի կամ պակաս երևել առարկայի մէջ. ինչպէս. Այս պարտեզը գեղեցիկ է, երկրորդը աւելի գեղեցիկ է, երրորդը ամենագեղեցիկ է։ Իսկ յարաբերական ածականների ցոյց տուած յատկութիւնը չէ կարող ոչ աւելանալ, ոչ պակասիլ. չէ կարելի ասել աւելի ապոկէ գունդ, աւելի հայկական լեռներ։

1. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ որակական ածականներով, որոնք իրարու հակառակ որպիսութիւններ են ցոյց տալիս։

Աչխատասէր—ծոյլ (Աչխատասէր աշակերտը կը վարձատրուի, իսկ ծոյլը կը պատժուի։) մեծ—փոքր. երկար—կարճ, լայն—նեղ, բարձր—ցածր, հաստ—բարակ, ծեր—երիտասարդ, բարի—չար, ղօրաւոր—տկար, հարուստ—աղքատ, տաք—սառն, ցամաք—թաց, ծանր—թեթեւ, սուր—բութ, հաւատարիմ—անհաւատարիմ։

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւեալ յարաբերական ածականներով և ցոյց տուէք ածականների նշանակութիւնը։

Փայտէ ևմ փայտի—երկաթէ ևմ երկաթի—արծաթէ ևմ արծաթի—պղնձէ—քարէ—հողէ—կաւէ—այսօրուան—երեկուան—վաղուան ևմ էգուցուան—այժմեան—աչնանային—գարնանային—հայրական—որդիական—եղբայրական—բարեկամական—ընկերական—հայկական։

§ 32. Որակական ածականների աստիճանները։

Իւրաքանչիւր առարկայի որպիսութիւնը երեք կերպով կարող է համեմատուիլ ուրիշ առարկաների որպիսութեան հետ։ Այս երեք կերպ համեմատութիւնից առաջ են գալիս որակական ածականների համեմատականը։

Համեմատութեան աստիճանները երեք են. դրական, բաղդատական և գերադրական։

Դրական աստիճանը առարկայի որպիսութիւնը պարզապէս յայտնում է, առանց բաղդատելու նորան ուրիշ առարկաների հետ. Այս ծառը մեծ է։ Արշակը աշխատասէր աշակերտ է։ Վագրը կատաղի գազան է։

Բաղդատական աստիճանը երկու առարկայ իրարու հետ համեմատում կամ բաղդատում է ցոյց տալով մէկի որպիսութեան առաւելութիւնը կամ նուազութիւնը. Տիգրանը աւելի աշխատասէր է քան Թէ Արշակը։ Գարունքին ու աշունքին եղանակը աւելի անհաստատ է քան Թէ ամառն ու ձմեռը։

Գերադրական աստիճանը ցոյց է տալիս՝ Թէ մէկ առարկայ

որպիսութեան կողմից բոլոր իր նման առարկաներից գերազանց կամ ստոր է։ Ամենաքաջ լեռները յաւիտենական ձիւնով պատած են։ Կոկերբին ամենափոքր թռչունն է։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ բաղդատական և գերադրական ածականներով աչխարհագրութիւնից, սրբազան ու աղդային պատմութիւնից և ձեր ծանօթ անձների ու առարկաների վրայ։

§ 33. Ածական անունների պաշտօնը նախադասութեան մէջ։

Բոլոր փոքր ովկիան էն Տիալ նախադասութեան մէջ բոլոր ածականը փոքր գոյականի յատկացուցիչն է։

Երկիր նշոյ է նախադասութեան մէջ նշոյ (է) ածականըստորոգեալ է։

Հարուստները օգնում են աղքատներին նախադասութեան մէջ հարուստները և աղքատները ածականները գոյականաբար են վարուած, և այս պատճառով առաջինը ենթակայի, իսկ երկրորդը լրացուցչի պաշտօն է վարում։ Ո՞վ է օգնում աղքատներին.—Հարուստները. (այսինքն հարուստ մարդիկը) Ո՞ւմն են օգնում հարուստները.—Աղքատներին. (այսինքն աղքատ մարդկանց։)

Նեբոյ Մեծը քաղաքին հիւսնեց նշոյեր, բարտիներէ և ամէն տեսակ հիւանդներէ հոգաբ։—Այս նախադասութեան մէջ նշոյեր, բարտիներէ և հիւանդներէ ածականները նոյնպէս գոյականաբար են վարուած և ցոյց են տալիս գործողութեան նպատակը, որովհետև պարագայական բաներ են։

Ածական անունը նախադասութեան մէջ լինում է դէպ խաւորապէս յատկացուցիչ, երբեմն էլ ստորոգեալ. Բոլոր գործը անվարձ չի մնալ։ Հայաստանի օդը բուժիչ է։

Բայց երբ որ ածականը գոյականի մասով է վարվում, կարող է լինել ենթակայ, լրացուցիչ և ստորոգեալ։ Կուշտը

փոքրածին մանր է բրդում (լրաց)։ Ներսէս Մեծը բազմաթիւ հիւանդանոցներ շինեց խեղճի, ընչազուրկի և ամէն տեսակ հիւանդի համար (պար. բառեր)։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ ածական անունները լինին 1) ենթակայ, 2) ստորոգեալ, 3) յատկացուցիչ, 4) լրացուցիչ և 5) պարագայական բառեր։

Կրկնութիւն.—Ի՞նչ է ածական անուն։ Ո՞ր ածականը կոչւում է յատուկ և ո՞րը հասարակ։ Ի՞նչ զանազանութիւն կայ որակական և յարաբերական ածականների մէջ։ Քանի աստիճան ունին որակական ածականները և որո՞նք են։

Կարդացէք ընթերցանութեան 4-րդ հատուածը և ցոյց տուէք թէ իւրաքանչիւր ածական ինչ տեսակ է, յատուկ թէ հասարակ, որակական, թէ յարաբերական։ Ցոյց տուէք թէ իւրաքանչիւր ածական ինչ պաշտօն է վարում նախադասութեան մէջ։

Գ. Բայ

§ 34. Ի՞նչ է բայ։

Աշակերտները *նոյնած են դասատան մէջ և իրանց դասերը պատրաստում են։*

Այս բաղադրեալ նախադասութեան մէջ նոյնած են ստորոգեալը ցոյց է տալիս՝ թէ ինչ դրութեան մէջ են աշակերտները, (նստած են և ոչ կանգնած.) իսկ պատրաստում են ստորոգեալը ցոյց է տալիս՝ թէ ինչ զբաղմունքի են կատարում աշակերտները։

Այն *բառերը որոնք ցոյց են տալիս առարկաների գործողութիւնը կամ դրութիւնը, կոչւում են բայ։—Նոյնած են, պատրաստում են բայեր են։*

Հայերէն բայ արմատ է բան, բառ բառերի և նշանակում է խօսք կամ առածած. որովհետև բայն ցոյց է տալիս՝ թէ առարկան ինչ է անում և թէ ինչ կարող ենք առել նորա վերայ։

1. *Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ բայերով և ասացէք թէ ո՛ր բայերը գործողութիւն են ցոյց տալիս և որո՞նք դրութիւն։*

Սողալ—լողալ—թռչել—վազել-գնալ—ղբօսնել—պարկել—նստել-քնել—սովել—հաջել—ուռնալ—մլաւել—բառանչել—մռնչել—խրխնջել—բզզալ—երգել—խօսել—մռռալ—գրել—կարդալ։

2. *Ի՞նչ գործողութիւններ կարող են կատարել և ինչ դրութեան մէջ կարող են գտնուիլ հետևեալ առարկաները։*

Աբեղակ—լուսին —աստղեր— ծով—գետ— ցամաք— ծառ—ձի—կով—ոչխար—ձուկ—ճանճ— հաւ—սոխակ—աչակերտ— վարժապետ—հողագործ—դերձակ—կօշկակար—զօրավար։

§ 35. Բայերի սեռը։

Կեսարը *յաղթեց Պոմպէոսին։ Պոմպէոսը յաղթուեցաւ կեսարից։ Երկք Հարիւր Սպարտացի քաջութեամբ փակուեցին Պարսից դէմ և բոլորն էլ ընկան իրանց հայրենեաց ազատութեան համար։*

Առաջին նախադասութեան մէջ յաղթեց բայն ցոյց է տալիս կեսարի գործողութիւնը, որ անցնում է Պոմպէոսի վրայ։ Երկրորդ նախադասութեան մէջ յաղթուեցաւ բայն այնպիսի գործողութիւն է ցոյց տալիս, որ Պոմպէոսը կրում է ուրիշից։ Երրորդ օրինակի մէջ փակուեցին բայն ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որ չէ անցնում ուրիշ առարկայի վրայ, այլ մնում է ներգործողների (Սպարտացոց) մէջ. իսկ ընկան բայն ոչ այնքան գործողութիւն է ցոյց տալիս, որքան մի լոկ դրութիւն։ Ուրեմն բայերը զանազան տեսակ գործողութիւն են ցոյց տալիս, և այդ գործողութեան զանազանութիւնը քերականութեան մէջ կոչվում է սեռ։

Բայերը *երեք սեռ ունին. Ներգործական, Կրաւորական և Չեզոք։*

Ներգործական *բայն ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որ անցնում է ուրիշ առարկայի վրայ։—Յաղթեց ներգործական բայ է։*

Կրաւորական *բայն ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն,*

որ մի առարկայ ի՞նչ է ուրիշ առարկայից։—Ցոլենեցոս կրաւորական բայ է *։

Ձեզի բայն ցոյց է տալիս առարկայի դրութիւնը, կամ այնպիսի գործողութիւն, որ չէ անցնում ուրիշ առարկայի վրայ, այլ գործողի մէջ է մնում։— Գնացին, ընկան չէզոք բայեր են։

* Ներգործական խօսքի մէջ միշտ երկու առարկայ կայ. մինը գործաւոր (ենթակայ), որ գրվում է միշտ ուղղական հոլովով, իսկ միւսը երկրորդական (լրացուցիչ), որ գրվում է հայցական հոլովով։ Տէբրոնը նուաճեց Աւորոց երկիրը Նախադասութեան մէջ Տէբրոնը ուղղական հոլով է, երկիրը—հայցական։

Կրաւորական խօսքի կազմութիւնը ներգործականի հակառակն է, բայց միտքը մնկ է. միևնոյն է ասել Տէբրոնը նուաճեց Աւորոց երկիրը. և Աւորոց երկիրը նուաճուեցաւ Տէբրոնէց կամ Տէբրոնէ չեմով։ Այս օրինակից երևում է թէ՝ 1) երբ ներգործական բայը կրաւորականի է փոխվում, ենթական դառնում է լրացուցիչ, և լրացուցիչը ենթակայ. 2) թէ ամենայն ներգործական բայ ունի իր կրաւորականը։

---

1. Հետևեալ նախադասութիւնների մէջ ներգործական բայերը կրաւորականի փոխեցէք, այնպէս որ ամբողջ նախադասութիւնները կազմուին։ Կրաւորական բայերի տակ գիծ քաշեցէք։

Մեղուները մեղր են չինում։ (Մեղրը չինվում է մեղուներից։)—Կատուն մուկ է բռնում։—Սուրբ Մեսրոպը գտաւ հայերէն լեզուի տառերը։—Սահակ Պարթևը Սուրբ գիրքը հայերէն թարգմանեց։—կայէն սպանեց Աբէլին։—Անտոնիոսն Արտաւազդին գերի տարաւ Եգիպտոս։—Պատմաբանները ասում են թէ Հայոց նախարարները Թունաւորեցին Տրդատին։

2. Հետևեալ նախադասութիւնների մէջ կրաւորական բայերը ներգործականի փոխեցէք։ Ներգործական բայերի տակ գիծ քաշեցէք։

Երկիրը ծածկուեցաւ ձիւնով։—Երկինքն ու երկիրը ստեղծուեցան Աստուածանից։—Գալլիան նուաճուեցաւ կեսարի ձեռով։—Հռոմ քաղաքը առնուեցաւ ու այրուեցաւ Գալլիացիների ձեռով։—Յովսէփ Գեղեցիկը ծախուեցաւ իր եղբայրների ձեռով։—Երուսաղէմը պաշարուեցաւ և առնուեցաւ Տիտոսի ձեռով։—Ժան դ' Արքը այրուեցաւ Ռուանում քաղաքում Անգլիացոց ձեռով։

3. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ չէզոք բայերով։

Նստել—կանգնել—վազել—պարկել—քնել—յուսալ—վախենալ—ամաչել—ուրախանալ—նայել—դողալ—աղաղակել—լռել—ծիծաղել—լալ։

§ 36. Բայի եղանակները։

Երեկոյեանները լաւ է գնալ փոքր ինչ զբօսնելու։

—Տիգրանը գնաց պարտէզ. գնացէք և դուք, ասաց մայրը Արշակին։

—Ես էլ գնայի, պատասխանեց Արշակը, եթէ գրելու բան չունենայի։

—Կը սպասեմ քեզ մինչև գրելդ աւարտես, ասաց Ռուբէնը, որ միասին գնանք։

Այս օրինակի մէջ ենթակաների գործողութիւնը զանազան եղանակներով կամ ձևերով է բացատրուած։ Առաջին օրինակի մէջ գործողութեան լոկ անունը դրուած է, առանց յայտնելու թէ ով է ներգործում կամ երբ։ Ի՞նչ լաւ է անել երեկոյեանները.—զբօսնելու գնալ։ Երկրորդ օրինակի մէջ որոշակի պատմվում է թէ ինչ արաւ Տիգրանը.—գնաց պարտէզ։ Երրորդի մէջ մայրը հրամայելով ասում է Արշակին և Ռուբէնին.—գնացէ՛ք և դուք։ Չորրորդի մէջ Արշակը պայմանով է յայտնում իր խօսքը.—Ես էլ գնայի, եթէ գրելու բան չունենայի։ Վերջապէս հինգերորդ նախադասութեան մէջ Ռուբէնը յայտնում է իր ցանկութիւնը Արշակի հետ միասին զբօսնելու.—կը սպասեմ, ասաց Ռուբէնը, որ միասին գնանք։

Առարկաների գործողութեան վրայ խօսելիս՝ մենք կարող ենք նոցա գործողութեան լոկ անունը պահ, կամ պարզապէս մի բան պատմել նորա վրայ, կամ հրամայել, նպատակ որ գործողութիւնը

կատարուել, կամ պայմանով յայտնել գործողութիւնը, կամ վերջապէս անորոշ կերպով խօսել, յայտնելով մեր կամքը, ցանկութիւնը գործողութիւնը կատարելու մասին: Սորանից առաջ են գալիս բայերի հինգ եղանակները կամ միջոց յայտնելու ձևերը. անորոշ, ահմանական, հրամայական, պայմանական, և ստորադասական:

1. Անորոշ եղանակը բայի սկզբնական ձևն է, ինչպէս ուղղական հոլովը գոյականների մէջ: Այս եղանակով առարկայի գործողութեան լոկ անունը յիշվում է, առանց որոշելու թէ ով կամ երբ է ներգործում. այս պատճառով էլ կոչվում է անորոշ:—Գնալ անորոշ եղանակ է:

2. Ահմանական եղանակը որոշ պատմում է՝ թէ ինչպէս է կատարվում, կատարուել է կամ պիտի կատարուի առարկայի գործողութիւնը:—Գնայ ահմանական եղանակ է:

Այս եղանակը ունի երեք ժամանակ, երեք դէմք և երկու թիւ:

3. Հրամայական եղանակը յայտնում է խօսողի հրամանը կամ ինդրելը, խորհուրդը, որ գործողութիւնը կատարուի:—Գնայի՛ր հրամայական եղանակ է:

Այս եղանակը ունի մէկ ժամանակ և մէկ դէմք—երկրորդը, որովհետև չէ կարելի որ մարդ ինքն իրան հրամայէ, այլ միայն ուրիշին՝ ում հետ խօսում է:

4. Պայմանական եղանակը խօսքը պայմանի տակ է դնում, յայտնելով թէ գործողութիւնը կարող էր կատարուել, բայց մի որևիցէ պատճառով չէ կատարուել:—Ես էլ գնայի պայմանական եղանակ է:

Այս եղանակը ունի երկու ժամանակ, երեք դէմք և երկու թիւ:

5. Ստորադասական եղանակը յայտնում է խօսողի կամքը, ցանկութիւնը գործողութեան կատարուելու մասին:-կը ստացած որ ինչ գնանք նախադասութեան մէջ որ գնանք ստորադասական եղանակ է:

Այս եղանակը ունի չորս ժամանակ, երեք դէմք և երկու թիւ:

---

1. Ցոյց տուէք հետևեալ բայերի եղանակները:

Խմել—կեր—քնեցաւ—դբօսնում էր—կը կարդամ—կը գրէի...նէք—արի—գալիս եմ—ազօթել—ազօթում է—նայում ենք—նայէ—նայեցէք—կամենում է որ ես խօսիմ—կարծեմ թէ նոքա գնան—նա կը գար...նէք—տեսնել—տես—տեսաւ—դալ—եկէք—եկան:

2. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք բայերի եղանակները. յետոյ նոցանից նոր նախադասութիւններ կազմեցէք միացած չորս եղանակներով: Ահաւասիկ մէկ օրինակ. Պէտք է հաց ուտել: (Անորոշ եղ.) Ես հաց եմ ուտում: (Ահմանական եղ.) Հաց կեր: (Հրամայական եղ.) Ես հաց կ'ուտէի, եթէ քաղցած լինէի: (Պայմանական եղ.) Գրիգորը ցանկանում է որ իր հետ հաց ուտեմ: (Ստորադասական եղ.)

Տիգրանը լաւ է սովորում:—Մենք կարդում ենք այդ գիրքը:—Դու չսովորեցիր քո դասը:—Նա ամէն օր ուսումնարան է գնում:

§ 37. Բայի ժամանակները:

Արշակը նամակ է գրում:—Արշակը նամակ գրեց:—Արշակը նամակ կը գրէ:

Առաջին նախադասութեան մէջ խօսքը այժմեան կամ ներկայ ժամանակի վրայ է, երկրորդի մէջ—անցած ժամանակի վրայ, երրորդի մէջ ապագայ կամ ապառնի ժամանակի վրայ:

Ամենայն գործողութիւն կատարվում է մի որևիցէ ժամանակում. այդ ժամանակները երեք են, ներկայ անցեալ և ապառնի:

Ներկայ ժամանակը ցոյց է տալիս թէ գործողութիւնը այժմ է կատարվում։—Գրում է ներկայ ժամանակ է։

Ապագան ցոյց է տալիս թէ գործողութիւնը անցեալում է կատարուել։—Գրէց անցեալ ժամանակ է։

Պարզին ցոյց է տալիս թէ գործողութիւնը յետոյ պիտի կատարուի։—Կը գրէ ապառնի ժամանակ է։

---

1. Հետևեալ նախադասութիւնների մէջ ցոյց տուէք բայերի ժամանակները։

Ռոբէնը այսօր լաւ է պատասխանում։—Տիգրանը էգուց պարգև կը ստանայ։—Երէկ մենք ձուկ բռնեցինք։—Վաղը մենք գիւղ կը գնանք։—Այսօր բոլոր օրը անձրև է գալիս։—Շուշանը սիրում է երաժշտութիւն։—Աշունքին մրգերը կը հասնին։—Ցլակը անտառումն է բանում։—Գիւղացիքը խոտը հնձեցին։—Գիշերը մութ կը լինի։

2. Հետևեալ նախադասութիւններից նոր նախադասութիւններ կազմեցէք անցեալ և ապառնի ժամանակներով։

Իմ եղբայրը սովորում է աղգային պատմութիւն։—Այս աշակերտը լաւ է նկարում։—Մարիամը գեղեցիկ է գործում։—Իմ ընկերները գնում են ուսումնարան։

3. Ասացէք մի քանի նախադասութիւններով 1) թէ ինչ էք անում այժմ, 2) թէ ինչ էք արել երէկ և 3) թէ ինչ կ'անէք երեկոյեան կամ էգուց։

§ 38. Բայի դէմքերը։

Ամենայն խոսակցութեան համար երեք բան է հարկաւոր. նախ՝ պէտք է որ մէկը խոսի. երկրորդ՝ հարկ է որ մէկ ուրիշ էլ լինի նորան լսող. վերջապէս մի երրորդ առարկայ էլ է հարկաւոր, որի վրայ կարելի լինի մի բան ասել։ Սորանից առաջ են գալիս բայի երեք դէմքերը, որոնք որոշվում են միմեանցից առանձին վերջաւորութիւններով։

Առաջին դէմքով դրվում է խոսող անձը և նրա գործողութիւնը. ես գիրք եմ կարդում։

Երկրորդ դէմքով դրվում է նա՝ ում հետ առաջինը խոսում է. դու նամակ ես գրում։

Երրորդ դէմքով դրվում է այն անձը կամ առարկան, որի վրայ խոսվում է. Աշակերտը դաս է պատասխանում։ Վարդենին ծաղկում է։

Բայց պատահում է երբեմն որ գործողը անյայտ է մնում, և այն ժամանակ բայերը դրվում են երրորդ դէմքով, որ այս պատճառով կոչվում են դէմսիզ կամ դէմսզուկ բայեր. ինչպէս. Լուսանում է։ Մթնում է։ Անձրևում է։

1. Հետևեալ նախադասութիւնների մէջ ցոյց տուէք բայերի դէմքերը և յետոյ միւս դէմքերի փոխեցէք։

Ես գնում եմ դպրոցները։—Դու կը գնաս ուսումնարան։—Նա նրա կարում է։—Իմ եղբայրը սովորում է ֆրանսերէն։—Նորա ընկերը լաւ է կարդում։—Մեր բարեկամը սրինգ է ածում։—Արշակը երաժշտութիւն չէ իմանում։

2. Ասացէք մի քանի նախադասութիւններով 1) թէ ինչ էք անում սովորաբար առաւօտ ու երեկոյ, 2) թէ ինչ էք անում դասերից յետոյ։

3. Ասացէք ձեր ընկերներից մէկին 1) թէ ինչ է անում այժմ, 2) թէ ինչ չէ իմանում և 3) թէ ինչպէս պէտք է վարէ իրան դասատան մէջ։

4. Ասացէք մի բան ձեր աղգականների, ծանօթների և ընկերների վերայ։

§ 39. Բայերի թիւը։

Բայերը անունների նման երկու թիւ ունին. եզակի և յոգնակի։

Եզակին ցոյց է տալիս մէկի գործողութիւնը. Շունը հաչում է։ Ձկնորսը ձուկ է բռնում։

Յոգնակին ցոյց է տալիս երկու կամ աւելի առարկաների

գործողութիւնները:—Շները հոլով են: Գինորսները ձուկ են բռնում:

1. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք իւրաքանչիւր բայի ժամանակը, դէմքը և թիւը, ցետոյ եղակի նախադասութիւնները յոգնականի փոխեցէք, իսկ յոգնակիները եղականի:

Մենք երէկ գնացինք թատրոն:—Ես նամակ կը գրեմ:—Դուք պատրաստեցիք ձեր դասը:—Նա լաւ չէ նկարում:—Աշակերտը կորցրել է իր գիրքը:—Երեխայքը միրգ են քաղում—Աղջիկները փնջեր են հիւսում:—Մշակները փայտ են կտրում:

2. Հետևեալ եղակի դոյականների մօտ մի մի բայ դրէք ներկայ ժամանակում, այնպէս որ նախադասութիւններ կազմուին: Ցետոյ այդ եղակի նախադասութիւնները յոգնակի փոխեցէք:

Մուկ—կատու—քաղաք—հաւ—ձի—կով—երեխայ—աշակերտ—ընկեր—բարեկամ—մարդ:

3. Հետևեալ յոգնակի դոյականների մօտ մի մի բայ դրէք ներկայ ժամանակում: Ցետոյ այդ նախադասութիւնները եղականի փոխեցէք:

Տները—ծառերը—թռչունները—չորքոտանիքը—գազանները—ձիանները—լանճորները—տանձերը—դեղձերը:

§ 40. Խոնարհում:

Բայերը փոփոխվում են՝ 1) եղանակներով, 2) ժամանակներով, 3) դէմքերով և 4) թուով: Բայերի այս փոփոխութիւնը կոչվում է խոնարհում: Ջորբրնակ.

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ ժամանակ

Եղակի Թիւ

Ես գիրք եմ կարդում.	1. ես կարդում եմ
Դու գիրք ես կարդում.	2. դու կարդում ես
Եղբայրս գիրք է կարդում.	3. Նա կարդում է.

Յոգնակի Թիւ

Մենք գիրք ենք կարդում.	1. մենք կարդում ենք
Դուք գիրք էք կարդում.	2. դուք կարդում էք
Եղբայրներս գիրք են կարդում.	3. Նորա կարդում են.

Անցեալ ժամանակ

Եղակի Թիւ

Ես գիրք կարդացի.	1. ես կարդացի
Դու գիրք կարդացիր.	2. դու կարդացիր
Եղբայրս գիրք կարդաց.	3. Նա կարդաց.

Յոգնակի Թիւ

Մենք գիրք կարդացինք.	1. մենք կարդացինք
Դուք գիրք կարդացիք.	2. դուք կարդացիք
Եղբայրներս գիրք կարդացին.	3. Նորա կարդացին.

Ապառնի ժամանակ

Եղակի Թիւ

Ես գիրք կը կարդամ.	1. ես կը կարդամ
Դու գիրք կը կարդաս.	2. դու կը կարդաս
Եղբայրս գիրք կը կարդայ.	3. Նա կը կարդայ.

Յոգնակի Թիւ

Մենք գիրք կը կարդանք.	1. մենք կը կարդանք
Դուք գիրք կը կարդաք.	2. դուք կը կարդաք
Եղբայրներս գիրք կը կարդան.	3. Նորա կը կարդան.

ՊԱՏՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եղակի Թիւ

Ես գիրք կը կարդայի, եթէ ժամ. ունենայի.	1. ես կը կարդայի
Դու գիրք կը կարդայիր, եթէ ժամ. ունենայիր.	2. դու կը կարդայիր
Եղբ. գիրք կը կարդար, եթէ ժամ. ունենար.	3. Նա կը կարդար.

Ցոդնակի Թիւ

Մ. գիրք կը կարդայինք, եթէ ժմնկ. ունենայինք։ 1. մենք կը կարդայինք
Դ. գիրք կը կարդայիք, եթէ ժմնկ. ունենայիք։ 2. դուք կը կարդայիք
Եղբ. գիրք կը կարդային, եթէ ժմնկ. ունենային։ 3. նոքա կը կարդային։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզակի Թիւ

Պէտք է որ ես գիրք կարդամ։ 1. որ ես կարդամ
Պէտք է որ դու գիրք կարդաս։ 2. որ դու կարդաս
Պէտք է որ եղբայրս գիրք կարդայ։ 3. որ նա կարդայ

Ցոդնակի Թիւ

Պէտք է որ մենք գիրք կարդանք։ 1 որ մենք կարդանք
Պէտք է որ դուք գիրք կարդաք։ 2. որ դուք կարդաք
Պէտք է որ եղբայրներս գիրք կարդան։ 3. որ նոքա կարդան։

ՀՐԱՄԱՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզակի Թիւ

Եղբայր, գիրք կարդա։ կարդա.

Ցոդնակի Թիւ

Եղբայրնե՛ր, գիրք կարդացէ՛ք։ կարդացէ՛ք։

Գրեցէ՛ք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետևեալ բայերը գոյ՛ գրուին բոլոր ժամանակներով, 3 դէմքով ու 2 թուով, և յետոյ իւրաքանչիւր բայ առանձին խոնարհեցէ՛ք։

Գրել—սովորել—նկարել—ուտել—խմել—տալ—լուացուիլ—հագնուիլ—չինել—փակել։

§ 41. Բայերի պաշտօնը նախադասութեան մէջ։

Օ՞րերը ո՞ղջ են նախադասութեան մէջ ո՞ղջ են բայը ստորոգեալ է։
Աշխոյժը օգնական է նախադասութեան մէջ աշխոյժ բայն աշխոյժ-

ներէն կամ աշխոյժ գոյականի տեղ է վարուած, և այս պատճառովենթակայի պաշտօն է վարում։ Ի՞նչ է օգտակար —աշխոյժը—աշխոյժներ։

Ես ներո՛ղ եմ աշխոյժ նախադասութեան մէջ աշխոյժ բայն նոյնպէս գոյականի մտքով է վարուած և լրացնում է ներո՛ղ եմ բայի միտքը։ Ի՞նչ եմ սիրում ես.—աշխոյժ։

Աւխոյժը ժամանակ պէտ է աշխոյժ նախադասութեան մէջ աշխոյժը բայը նոյնպէս գոյականաբար է վարուած և յատկացուցչի պաշտօն է վարում։

Մարդիկ սպեղծուած են աշխոյժը համար նախադասութեան մէջ աշխոյժը բայն ցոյց է տալիս գործողութեան նպատակը, ուստի և պարագայական բառ է։

Բայն նախադասութեան մէջ իսկապէս սպորգեալ է լինում. ինչպէս. օձերը սողո՛ղ են։

Բայց շատ անգամ բայն գոյական, երբեմն նա և ածական անուան մտքով է վարվում, և այն ժամանակ լինում է ենթակայ, լրացուցիչ, յատկացուցիչ և պարագայական բառ։

Ասյալիսի դէպքերում վարվում է անորոշ եղանակը։

Աշխոյժը օգտակար է։ (ենթ.) Ես սիրում եմ աշխոյժ (լրաց.)։ Աշխոյժը ժամանակ պէտք է աշխատել (գոյ. յատկ.)։ Խելօքները աշխոյժ հայց չունին։ (ած. յատկ.)։ Մարդիկ ստեղծուած են աշխոյժը համար (պարագ.)։

Գրեցէ՛ք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ բայերը լինին՝ 1) ստորոգեալ, 2) ենթակայ, 3) յատկացուցիչ, 4) լրացուցիչ և 5) պարագայական բառեր։

Կրկնութիւն.—Ի՞նչ է բայն։ Քանի՞ տեսակ ունին բայերը։ Քանի՞ եղանակ ունին։ Քանի՞ ժամանակ ունին։ Քանի՞ դէմք ունին։ Քանի՞ թիւ ունին։ Ի՞նչպէս են փոփոխւում բայերը։ Խոնարհեցէ՛ք մի բայ։ Ի՞նչ պաշտօն են վարում բայերը նախադասութեան մէջ։

Կարդացէք ընթերցանութեան 5-րդ հատուածը և ցոյց տուէք իւրաքանչիւր բայի սեռը, եղանակը, ժամանակը, դէմքն ու թիւը։ Ցոյց տուէք թէ իւրաքանչիւր բայ ինչ պաշտօն է վարում նախադասութեան մէջ։

Դ. Մակբայ

§ 42. Ի՞նչ է Մակբայն։

Աբշակը դէշ լա՜ է պատրաստում իր դասերը։

Այս օրինակի մէջ նշանակած բառերը ցոյց են տալիս Աբշակ ենթակայի գործողութեան հանգամանքները կամ պարագաները. դէշ ցոյց է տալիս թէ ե՛րբ Աբշակը պատրաստում է իր դասերը, լա՜—թէ ի՛նչպէս է պատրաստում,

Այն բառերը որոնք ցոյց են տալիս առարկաների գործողութեան կամ դրութեան զանազան հանգամանքները, կոչւում են մակբայ։—Մնշդ, լա՜ մակբայներ են։

Մակբայ նշանակում է բայի վրայ դրուող բառ։ Բայց երբեմն մակբայն դրւում է ածականի և նոյն իսկ մակբայի վրայ, ինչպէս. Դրի-գորը ոտքն անհամբեր տղայ է։ Աղախինները լա՜ լաւ են երգում։

§ 43. Մակբայների տեսակները։

Մակբայները իրանց նշանակութեանը համեմատ այլ և այլ տեսակների են բաժանվում, որոնցից գլխաւորներն են. պեղչիոն, ժամանակիոն, որակիոն և փոխակիոնն։

Տեղչիոն մակբայները ցոյց են տալիս գործողութեան տեղը, ինչպէս. ո՞ւր, հետո, մօտիկ, այստեղ, այնտեղ և այլն։

Ժամանակիոն մակբայները ցոյց են տալիս գործողութեան ժամանակը. երբէք, այժմ, յետոյ, երէկ, այսօր։

Որակիոն մակբայները ցոյց են տալիս գործողութեան որպիսութիւնը. ճշդէս, այնպէս, սոսկալի, քաջի, համոյ ախմոյ *։

Քանակիոն մակբայները ցոյց են տալիս գործողութեան չափն ու թիւը. ծըչափ, այսչափ, շատ, սակաւ, էրկու անգամ, էրկուքն անգամ, և այլն։

* Որակական մակբայները, եթէ որակական ածականներից են առաջ եկած, նոցա պէս ունին համեմատութեան աստիճաններ. ինչպէս. սաէլէ լա՜ (խօսիլ), մէնէց վատ (գրել)։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ մակբայներով։

1) Տեղչիոն.—հետու—մօտիկ—ներս—դուրս—վերև—ներքև—աջ—ձախ։ 2) Ժամանակիոն.—Ա յսօր, երէկ—էգուց—վաղ—ուշ—մշտի—երբեմն—վաղուց—գիշեր—ցերեկ—օրէցօր—տարէց տարի։ 3) Որակիոն. լաւ—վատ—ձրի—կամաւ—շուտ—ընտանեբար—հայերէն—ամենևին—բոլորովին։ 4) Քանակիոն.—Ո՞րքան—ոըչափ—այնքան—այդչափ—շատ քիչ—սակաւ։

§ 44. Մակբայների պաշտօնը նախադասութեան մէջ։

Մակբայները, ինչպէս յայտնի է, նախադասութեան մէջ գործ են ածվում միայն իբրև պարագայական բառեր. ինչպէս. Այսօր ես վաղ վերկացայ։ Մենք դէշ հայերէն ենք խօսում։

Մակբայներից յետոյ գոյական անուանները յաճախ վարվում են այլ և այլ պարագաներ ցոյց տալու։ Մակբայները գոյականներից զանազանելու մէկ հեշտ միջոցն այն է, որ նոքա միայն պարագայական բառեր են լինում, իսկ գոյականները լինում են թէ ենթակայ, թէ յատկացուցիչ և թէ լրացուցիչ։ Ջօրօրինակ. Մոտերը էրէխ վրայ ե նախադասութեան մէջ էրէխ վրայ պարագայական բառ է։ Ջ՝ էրէխերը էրբոյսն ե՜—էրէխերը ենթակայ է։ Գրէխ նոմը էնէյնի ե՜—էրէխ յատկացուցիչ է։ Ս՝ էրէխ ի՛ նոթրամ՜—էրէխ լրացուցիչ է։ Ուրեմն էրէխ բառը մակբայ չէ, այլ գոյական անուն։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ աչխարհագրութիւնից, սրբազան և ազգային պատմութիւնից և ձեր ծանօթ առարկաների վրայ այլ և այլ մակբայներով։

Կարդացէք ընթերցանութեան 6-րդ հատուածը և ցոյց տուէք մակբայների տեսակները։

Ե. Դերանուն

§ 45. Ի՞նչ է Դերանունը։

—Ո՞վ առաւ իմ գրիչը, հարցրեց Տիգրանը եւթ ընկերներին։

—Ե՛ս, պատասխանեց Արշակը, եմը տանը մոռացայ։

Այստեղ առաջին նախադասութեան մէջ «ո՞վ» բառը հարցական է և դրուած է տալիս գոյականի տեղ. էս և եւթ ցոյց են տալիս թէ ումն են վերաբերում գրիչն ու ընկերները—Տէփռանին, ես, եմը դրուած են Արշակի գոյականի տեղ։

Այն բառերը որոնք գոյական ու ածական անունների տեղ են դրվում, կոչվում են դերանուններ։—Ո՞վ, էմ, ես, եւթ, եմը դերանուններ են։

Այն դերանունները որ գոյական անունների տեղ են դրվում, ասվում են գոյական դերանուններ. նորա որ ածական անունների տեղ են դրվում—ածական դերանուններ։

Հետևեալ նախադասութիւնների մէջ անունների տեղ, ուր որ կարելի է, դերանուններ դրէք։ Դերանունների տակը գիծ քաշեցէք։

Տիգրանն ու Արշակը գնացին պարտէզ պտտելու։ Տիգրանն ու Արշակը սաստիկ թրջուեցան անձրևից, այնպէս որ Տիգրանն ու Արշակը հիւանդացան։—Շուշանը աշխատասէր աղջիկ է, բայց Շուշանը իր ընկերներից յետ է մնացել, որովհետև Շուշանը երկար ժամանակ

տկար է եղել։—Մեր հայրն ու մայրը մեծ խնամք ունին մեզ վրայ. մեր հայրն ու մայրը սիրում են մեզ. մեր հայրն ու մայրը կերակրումեն մեզ, մեր հայրն ու մայրը հագցնում են մեզ. մեր հայրն ու մայրը կրթութիւն են տալիս մեզ։—Վարդան Մամիկոնեանը եկաւ Տզմուտ գետի ափը Վարդան Մամիկոնեանի զօրքով և կռուեցաւ Պարսից դէմ։

§ 46 Դերանունների տեսակները։

Դերանունները իրանց նշանակութեանը նայելով այլևայլ տեսակների են բաժանվում. Հոլոյական, անձնական, ցուցական, ոյոց ցական, յարաբերական և անորոշ։

1. Հոլոյական դերանունները գործ են ածվում իրրև հարցմունք գոյական և ածական անունների տեղ, ուսաի և լինում են

1) Գոյական. ո՞վ։—Ո՞վ է այս մարդը։

2) Ածական. ո՞ր, ո՞րթեր։—Ո՞ր պարտէզը գնանք։

3) Ածական և գոյական միանգամայն. ի՞նչ։—Ի՞նչ ես կամենում (գոյ.)։ Ի՞նչ վոյթ. ի՞նչ ճչաս. ի՞նչ օդուտ (ած.)։

2. Անձնական դերանունները անձների տեղ են դրվում և գործ են ածվում խօսակցութեան մէջ։

Ես, ձեռ գործ են դրվում խօսող անձների անուան տեղ, և կոչվում են անձնական դերանուններ ասոլչին պեհֆէ։—Ես եմ յարութիւն և կեանք, ասաց Քրիստոս։ Մենք բոլորս էլ մի հաստարակաց հօր որդիք ենք։

Դու, դուք գործ են դրվում այն անձի անուան տեղ, ում հետ առաջինը խօսում է։

Դուք էք աշխարհի լոյսը։

Ինքը, նրանք գործ են դրվում այն անձի անուան տեղ, ում վրայ խօսվում է։

Իրանք են իրանց թշուառութեան պատճառը:

Անձնական դերանունները միշտ դոյական են:

3. Ցուցական դերանունները գործ են դրվում առարկաները ու նոցա որպիսութիւնները ցոյց տալու համար, ուսոի և լինում են

1) Դոյական. սա, սա, նա:—Ո՞վ է սա որ քամին էլ, ծովն էլ հնազանդում են սորան:

2) Ածական. այս, այդ, այն. այսպիսի, այդպիսի, այնպիսի, այսքան, կամ այսչափ, այդքան, այնքան:

Սա, դա, նա և այս, այդ, այն ցուցական դերանունների միայն մէկ է, բայց առաջինները դոյական են և միշտ մենակ են վարվում, իսկ երկրորդները ածական են և սովորաբար դոյականների հետ են. չէ կարելի ասել — տղան, նա տղան, բայց պէտք է ասել այս տղան այն տղան: Այս, այդ, այն երբեմն դոյականաբար էլ են վարվում. այդ էր իմ ուզածը:

4. Աոպոյական դերանունները գործ են դրվում ածական անունների տեղ, և յայտնում են թէ մէկ առարկայ ուրիշ է պատկանում. ինչ, ոմն, իր կամ ի-ը, ոմանք, միեւնոյն, ամենայն, ոմանց:—Մէր պարտէզը հէր պարտէզից մեծ է ու գեղեցիկ:

5. Յարաբերական դերանունը մէկ է—ով: Այս դերանունը գործ է դրվում երկրորդական նախադասութիւնը գլխաւորի հետ կապելու, և ցոյց է տալիս այն առարկան որ մեկնվում է երկրորդական նախադասութեամբ:—Այն ջուրը ով ամէն կողմից ցամաքով պատած է, կոչվում է լիճ:

6. Անորոշ դերանունները վարվում են դոյական և ածական անունների տեղ անորոշ, երբեմն էլ բացասական մասքով. ի-ոչինչ-ը, ոչի՛ն, ոչ-ո, ո-քիչ, ամենի, ոմն, ոչինչ, իւրաքանչիւր:

Անորոշ դերանունների մեծ մասը թէ դոյականաբար են

վարվում և թէ ածականաբար. դոյական են՝ երբէք մենակ են, ածական են՝ երբէք դոյականի հետ են*:

Ի-ոչինչ-ը մարդ իր տունը գնաց (ածական): Ի-ոչինչը իր տունը գնաց (դոյական):

* Այս է պատճառը որ ոմանք փշրան անուան են անուանում այս դերանունները:

---

1. Գրեցէք մի քանի խօսակցութիւն հարցական, անձնական և ցուցական դերանուններով:

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ ստացական դերանուններով:

3. Գրեցէք մի քանի բազադրեալ նախադասութիւններ ոչ յարաբերական դերանունով:

§ 47. Դիմորոշ կամ դերանուանական յօդեր:

Դերանունների երիք արմատական տառերը—ս, դ, ն (ը) հոլովական բառերի վրայ դրուելով՝ որոշում են նոցա և կոչվում են դիմորոշ կամ դերանուանական յօդեր:

Ս որոշում է առաջին դէմքը կամ առաջին դէմքի վերաբերեալ բանը, դ—երկրորդ և ն կամ ը երրորդ դէմքը:

Եթէ դերանուանական յօդը անձնական դերանուան տեղ կամ նորա հետ գործ ածուի, կոչվում է անձնական յօդ. ինչպէս. (ես) ուսուցիչս, (դու) աշակերտդ, (ինքը) տերը:

Եթէ դերանուանական յօդը ցուցական դերանուան տեղ կամ նորա հետ վարուի, ասվում է ցուցական յօդ. (Այս) մարդս. (այն) այգին:

Եթէ դերանուանական յօդը ստացական դերանուան տեղ կամ նորա հետ վարուի, կոչվում է սպասական յօդ. (իմ) եղբայրս (քո) քոյրդ, (իր) ձին:

§ 48. Դերանունների պաշտոնը նախադասութեան մէջ

Դերանունը, իբրև դոյական ու ածական անուններուն տեղ վարուող մաս-բանի, նախադասութեան մէջ կարող է լինել ենթակայ, յատկացուցիչ և լրացուցիչ: Զորօրինակ. Մե-ղուների փեթակի մէջ կայ մի գլխաւոր մեղու, որի (յատկ.) իշ-խանութեան տակ են գտնվում ջա-խալ (ածական.) մեղուները. Նա (ենթ.) չէ աշխատում, այլ միայն ձու է դնում. ո-րոնցից (լրաց.) նոր մեղուներ են ծնում:

Օրինակից երևում է որ դոյական դերանունները փոխ-վում են հոլովով և թուով:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ դերանունները լինեն 1) ենթակայ, 2) յատկացուցիչ և 3) լրացուցիչ:

Կրկնութիւն.—Ի՞նչ է դերանունը: Ի՞նչպէս են կոչվում դոյական-ների տեղ վարուող դերանունները և ինչպէս ածականների տեղ վար-ուողները: Քանի են բաժանվում դերանունները և որո՞նք են այդ տե-սակները: Որո՞նք են դերանուանական յօդերը և ինչ գործածութիւն ունին: Ի՞նչ պաշտօն են վարում դերանունները նախադասու-թեան մէջ:

Կարդացէք ընթերցանութեան 7-րդ հատուածը և ցոյց տուէք իւ-րաքանչիւր դերանուան և դերանուանական յօդի տեսակը: Ցոյց տու-էք թէ իւրաքանչիւր դերանուն ինչ պաշտօն է վարում:

Զ. Թուական անուն

§ 49 Ի՞նչ է Թուական անունը եւ քանի է բաժանվում:

Տարին ունի տասնեկու- ամիս, ամիսը շաբաթ և շա-բաթը եօթն օր: Առաջին օրուայ անունն է կիրակի, երկրորդինը—երկուշաբթի, եօթներորդինը—շաբաթ:

Առաջին օրինակի մէջ տասնեկու- ցոյց է տալիս ամիսների թիւը, շորս՝ շաբաթների թիւը, իսկ եօթն օրերի թիւը: Երկրորդ օրինակի մէջ տասնեկու-, երկրորդ, եօթներորդ ոչ միայն օրերի թիւն են ցոյց տալիս, այլ նաև թէ ինչ կարգով հետևում են միմեանց շաբաթուան օրերը:

Այն բառերը որոնք ցոյց են տալիս առարկաների թիւը, կոչվում են Թուական անուն:—Տասնեկու-, շորս, եօթը, տասնեկու-, երկրորդ, եօթներորդ Թուական անուններ են:

Առարկաները կարելի է թուել երկու նպատակով. այսինքն՝ կամ նոցա թիւը յայտնելու, կամ նոցա կարգը, դա-րը ցոյց տալու համար: Այս պատճառով Թուական անունները երկուսի են բաժանվում.

1. Քանակական, որ առարկաների պարզ թիւն են ցոյց տալիս:— Տասնեկու-, շորս, եօթը քանակական Թուական անուն-ներ են:

2. Դասական, որ ցոյց են տալիս թէ առարկաները ինչ կարգով են հետևում միմեանց:— Առաջին, երկրորդ, եօթներորդ դասական Թուական անուններ են:

---

1. Համարեցէք բոլոր քանակական և դասական Թուականները:

2. Հետևեալ հարցերի պատասխանները գրեցէք, այնպէս որ ամ-բողջ նախադասութիւններ կազմեն: Թուական անունների տակը գիծ քաշեցէք:

Քանի ոտն ունի ձին:—Քանի աչք ունի մարդս:—Քանի ամիս ունի տարին, քանի շաբաթ, քանի օր:—Քանի տարեկան էք:—Քանի ժամ կայ օրուան մէջ:—Քանի րոպէ կայ ժամուան մէջ:—Քանիսին են սկսվում ձեր դասերը, քանիսին աւարտվում:—Ո՞ր Թուականին էք ծնել:

§ 50. Թուական անունների պաշտօնը նախադասութեան մէջ:

Թուական անունները, իբրև հասարակ ածականներ,

իսկապէս միայն յատկացուցիչ կարող են լինել նախադասութեան մէջ. ինչպէս. Երկու մարդ Հայ ազգի երախտագիտութեան արժանի եղան իբրև հնագէտք զարու մեծաւոր շարժողութեան ախոյանները. այդ երկու մարդկին էին Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը:

Բայց երբ որ թուական անունը մենակ է, դոյականացած է վարվում, և այն ժամանակ կարող է ենթակայի, լրացուցչի և պարագայական բառի պաշտօն վարել. ինչպէս. Հինգը պակաս կէսն է (ենթ. և լրաց.): Հայերը քրիստոնէութիւնը ընդունեցին երեք հարիւր տասնը (պարագ.):

Օրինակներից երևում է որ դոյականացած վարուող թուականները փոխվում են հոլովով և թուով:

Դրեցինք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ քանակական և դասական թուական անունները լինին 1) յատկացուցիչ, 2) ենթակայ, 3) լրացուցիչ և 4) պարագայական բառեր:

Է. Դերբայ

§ 51. Ի՞նչ է դերբայն եւ քանի է բաժանվում.

Անկախի դարմանալի բան իմ օրումը չեմ պեսած:
Տեսած բաներս շատ զարմանալի էին:
Տեսածնէրս շատ զարմանալի բաներ էին:

Առաջին օրինակի մէջ չեմ պեսած բայ է. երկրորդի մէջ նոյն պեսած բառը բառնէրս դոյականի ածական է. երրորդ օրինակի մէջ պեսածնէրս ենթակայ է և դոյականի պաշտօն է վարում.

Այն բառերը որոնք գործ են ածվում իբրև բայ և միանգամայն իբրև դոյական կամ ածական անուն, կոչվում են դերբեայ:—Ջեմ պեսած բայ է, պեսած (բաներս)—ածական, իսկ պեսածնէրս դոյական:

Դերբայները չորս են. անորոշ, ներկայ, անցեալ և ապառնի:

1. Անորոշ դերբայն բայի անորոշ եղանակն է, որ հոլովում է (միայն եղակի*) և յօդ ընդունում. Մենք գիտենք որ հարկաւոր չէ ծռելանալ (բայ): Ի՞նչ օգուտ քեզ ծռելանալոյդ (այսինքն՝ ծռելուկնէդ):

* Իսկ յոգնականում միայն ուղ. կարող է վարուել. Ձեմ հասկանում թէ ինչի փոխ դերերդ կարելիք մեր տանից:

2. Ներկայ դերբայն իբրև բայ օգնական բայով է վարվում, իբրև ածական անփոփոխ է մնում, իսկ իբրև դոյական հոլովում է և յօդ ընդունում. ինչպէս. Ես նորա մօտ գնացողը չեմ (փոխանակ՝ ամենևին չեմ գնաց): Երկուսն գնացող մարդիկը (կամ՝ երեկուան գնացողները) արդէն յետ դարձան:

3. Անցեալ դերբայն երկու է. 1. ած և 2. եր: Ած անցեալը իբրև բայ օգնական բայով է վարվում, իբրև ածական անփոփոխ է մնում, իսկ իբրև դոյական հոլովում է և յօդ ընդունում. Պատմեմ ձեզ ինչ որ պեսած ու լսած եմ: Պատմեմ ձեզ պեսած ու լսած բաներս, կամ պեսածնէրս ու լսածնէրս:

Իսկ եր անցեալը մենակ չէ գործ ածվում, այլ միայն օգնական բայով է վարվում՝ իբրև բայ, և երբէք չէ փոխվում. Նամակը կարդացել ու պատասխանն էլ գրել եմ:

Եւ անցեալի հին ձևն է եալ, որ այժմ մի քանի դէպքում միայն վարվում է ածականաբար. լուսաւորեալ ժողովուրդ անցեալ տարի. ուսեալ մարդ:—Հանգուցեալ և ննջեցեալ գոյականաբար են վարվում:

4. Ապառնի դերբայն իբրև բայ օգնական բայով է վարվում, իսկ իբրև ածական գոյականի հետ՝ անփոփոխ. ինչպէս.

Ա.յս երկոյ թատորն ԷՀ գնաց (բայ)։ Գիւղ գնալս օրդ իմաց տուր ինձ որ միասին գնանք (ած.)։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետևեալ դերբայները գործ դրուին իբրև բայ և իբրև ածական կամ գոյական անուններ։

Լսել—լսող—լսած—լսելու. Գնալ—գնացող—գնացած—գնացել—գնալու. Տեսնել—տեսնող—տեսած—տեսել—տեսնելու. Ասել—ասող—ասած—ասել—ասելու. Խօսել—խօսող—խօսած—խօսել—խօսելու. Իմանալ—իմացող—իմացած—իմացել—իմանալու։

Ը. Նախադրութիւն

§ 52. Ի՞նչ է նախադրութիւնը։

Գրիգորը Յովհաննէսի հետ գնացին պարտէզ կաղնի ծառի պտուղը հանգստանալու օրական աշխատանքից յետոյ։

Այս օրինակի մէջ գլխաւոր առարկան է Գրիգորը Յովհաննէսի հետ. հետ բառը գրուելով Յովհաննէս բառի մօտ, որ իր վերջաւորութիւնը փոխել է, ցոյց է տալիս թէ ինչ յարաբերութիւն ունին միմեանց հետ Գրիգորն ու Յովհաննէսը—միասին են։ Տալը գրուելով ծառ բառի մօտ՝ ցոյց է տալիս թէ Գրիգորն ու Յովհաննէսը ինչ յարաբերութիւն ունին ծառի հետ—նորա պտուղն են նստած։ Վերջապէս յետոյ բառը ցոյց է տալի Գրիգորի ու Յովհաննէսի և աշխատանքի մէջ եղած յարաբերութիւնը։

Այն բառերը որոնք ցոյց են տալիս առարկաների փոխադարձ յարաբերութիւնները, կոչւում են հանգոյցաբառեր։—Հետ, մօտ, յետոյ նախադրութիւններ են։

Արդեն գիտենք (§ 26)—և այս օրինակից էլ երևում է—որ հոլովները էլ նախադրութիւնների պէս ցոյց են տալիս առարկաների մէջ եղած յարաբերութիւնները, ուրեմն և նախադասութիւն

ների պաշտօնը միևնոյն է, այս պատճառով նախադասութիւնը միշտ հոլով է պահանջում, և միայն այն ժամանակ նշանակութիւն ունի, երբ գոյականի հետ է։ Միևնոյն օրինակը ցոյց է տալիս որ ոչ նախադրութիւնները առանց հոլովների, և ոչ հոլովները առանց նախադրութիւնների կարող են ցոյց տալ առարկաների մէջ եղած բոլոր յարաբերութիւնները։ Հոլովները ցոյց են տալիս առ հասարակ առարկաների մէջ եղած ընդհանուր յարաբերութիւնները, իսկ նախադրութիւնները նոցա մանաւոր բարակութիւնները։ Այսպէս վերևի օրինակի մէջ եղած հոլովները ցոյց կը տային մեզ միայն թէ Գրիգորը գնացաւոր առարկան է, իսկ նոցա ածականները երկրորդական. իսկ նախադրութիւնները բաց ի սորանից ցոյց տուին թէ ո՛րտեղ է գտնվում մի առարկայ միւսի վերաբերութեամբ. դէպ՝ն, մօտ, տակ, յետոյ և այլն։

Նախադրութիւնները բաւական չեն առարկաների մէջ եղած բոլոր յարաբերութիւնները բացատրելու, այս պատճառով շատ մակբայներ ու գոյական անուններ գործ են դրվում նախադրութեան ժամանակ. այսպէս վերևի օրինակի մէջ տակ գոյական անուն է, յետոյ մակբայ։

Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետևեալ բառերը ցոյց տան 1) այլ և այլ պարագաներ և գործ դրուին մակբայի մարդով, 2) բառերի մէջ եղած յարաբերութիւնները և գործ դրուին իբրև նախադրութիւն։

Մէջ—դուրս—ներս—մօտ—հեռու—առաջ—յետոյ—տակ—վրայ։

Կարդացէք ընթերցանութեան 8-րդ հատուածը և ցոյց տուէք նախադրութիւնները։

Թ. Շաղկապ

§ 53. Ի՞նչ է շաղկապը։

Պարսիկները և Արաբացիք մեծամեծ հալածանքներ հանեցին Հայոց դէմ, քանզի Հայերը հաստատ մնացին իրանց հաւատին։

Ա. յս օրինակի մէջ երկու նախադասութիւն կայ. 1) Պարսիկները և Արաբացիք մեծամեծ հալածանքներ հանեցին Հայոց դէմ. 2) Հայերը հաստատ մնացին իրանց հաւատին: Բայց բառը այդ նախադասութիւնները միմեանց հետ կապում է: Նոյնպէս և բառը կապում է երկու ենթակաները (Պարսիկները և Արաբացիք) միմեանց հետ:

Ա. Այն բառերը որոնք նախադասութիւնները և նախադասութեան անդամները միմեանց հետ կապում են, կոչվում են շաղկապ:—Ե՞, ԷՅՑ շաղկապներ են:

Շաղկապները կապում են 1) անկախ նախադասութիւններ միմեանց հետ. ինչպէս. Ձիները լողում են, եւ Թռչունները թռչում են. 2) երկրորդական նախադասութիւնը գլխաւորի հետ. Մենք գիտենք որ երկիրս կլոր է. 3) միատարեալ նախադասութեան մէջ երկու միատեսակ անդամներ, այսինքն ենթակայ ենթակայի հետ, ստորոգեալ ստորոգեալի, հետ այլն. Շանն — կատուն չորքոտանի անասուններ են:

---

1. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ շաղկապներով:

Ե՛—կամ—որ—Թէ—իսկ—բայց—եթէ—Թէպէտ, բայց—Թէև, այնու ամենայնիւ—Թէ, ուրեմն—որովհետև—վասնզի:

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ շաղկապները կապեն 1) անկախ նախադասութիւններ միմեանց հետ, 2) երկրորդական նախադասութիւնը գլխաւորի հետ և 3) միատարեալ նախադասութեան անդամներ:

§ 54 Շաղկապների տեսակները:

Շաղկապները իրանց ընդհանուր նշանակութեանը համեմատ՝ երկուսի են բաժանվում. ՔաղՀե-ական և ՆէրՀակ-ական:

ԲաղՀե-ական շաղկապները այնպիսի նախադասութիւններ են կապում, որոնք մտքի կողմից իրարու համաձայն են. Ե՛, ո՛, այլ, նաև, մինչդեռ, էլ:—Այսօր իմ բարեկամին տեսայ ու նորա հետ խօսեցայ:

ՆէրՀակ-ական շաղկապները այնպիսի նախադասութիւններ են կապում, որոնք մտքի կողմից համաձայն չեն, այլ ներհակ են միմեանց. Թէ, Բայց, այլ, սակայն:—Մարդուս մարմինը մեռնում է, Թէ հոգին կենդանի մնում:

Գերմաներէնը ուրիշ այլ և այլ շաղկապների անուններ են տալիս, ինչպէս են՝ պոդճոտոն (վասն զի, որովհետև), Ռեյոն (Թէ, եթէ), Տաֆբէլոն (ուրեմն, ապա ուրեմն), Զեյոն (այսինքն, նայն է) և այլն: Բայց այս երկրորդական բաժանմունքները աւելորդ ծանրաբեռնութիւն ենք համարում աշակերտների համար:

Կարդացէք ընթերցանութեան 9-րդ հատուածը և ցոյց տուէք թէ իւրաքանչիւր շաղկապ ինչ տեսակ նախադասութիւններ է կապում:

Ժ. Զայնարկութիւն

§ 55. Ի՞նչ է ձայնարկութիւնը:

Ա. Այն հնչիւններն ու բառերը որոնք մեր հոգու կրքերն են արտայայտում, այսինքն զարմանքը, երկիւղը, բարկութիւնը, ուրախութիւնը, ցանկութիւնը և այլն, կոչվում են ՀայՈյ-ական. ինչպէս. ՜Հա, ո՛հ, վա՜յ, եղո՛ղ ինձ, ախո՜ր, Տէր ո՛ղ:

Զայնարկութիւնները ակամայ ու բուռեական զղացմունքներ լինելով՝ ոչինչ միաք չեն բացատրում, և այս պատճառով նախադասութեան մէջ նշանաւոր տեղ չունին:

§ 56. Փոփոխական և անփոփոխ մասունք-բանի:

Բանի մասունքը տասն են, որոնցից վերջը փոփոխական են, չորսը անփոփոխ:

Փոփոխական	Անփոփոխ
1. Գոյական անուն.	1. Մակբայ.
2. Ածական անուն.	2. Նախադրութիւն.
3. Դերանուն.	3. Շաղկապ.
4. Թուական անուն.	4. Ձայնարկութիւն:
5. Բայ.	
6. Դերբայ.	

Փոփոխական մասանց—բանի փոփոխութիւններն են՝ հոլովը և խոնարհումն:

Հոլովում են գոյական և ածական անունները, դերանունները և թուական անունները. խոնարհվում են բայերը: Հոլովում և խոնարհում ունին միանգամայն դերբայները:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ա. Հնչիւն, վանկ և բառ

§ 57. Ի՞նչ է հնչիւնը:

Մեր միտքը ուրիշներին հաղորդելու ժամանակ գործ ենք ածում բառեր. բայց որպէս զի ուրիշները մեր ասածը լսեն, պէտք է բարձր խօսինք, այսինքն բառերը ձայնով արտաբերենք կամ հնչենք:

Ուրեմն բառերը հնչիւններ են. բայց լեզուի հնչիւնները բոլորովին զանազանվում են բնութեան մէջ լսուած ամէն տեսակ հնչիւններից, որովհետև կարող են լուծուիլ ամենափոքրիկ մասերի: Այսպէս օրինակի համար մարդ բառի մէջ իսկապէս մէկ հնչիւն է լսվում. բայց այդ հնչիւնը կարող ենք բաժանել ամենապարզ հնչիւնների. մ ա-ր-դ:

§ 58. Ի՞նչ է վանկը:

Սենեակ բառը արտաբերվում է երկու անգամով և բաժանվում է երկու մաս. 1) սե, 2) նեակ:

Բառի այն մասը որ մեկ անգամով է արտասանվում, կոչվում է վանկ։—Սենեակ բառը երկու վանկից է կազմուած. 1) սե, 2) նեակ։

Մի վանկ ունեցող բառը կոչվում է միավանկ, երկու վանկ ունեցողը՝ երկվանկ, իսկ երեք կամ աւելի վանկ ունեցողը՝ բազմավանկ. ինչպէս. հայր, ղա-ռի, քարեկամ, խոնարհութիւն։

Գրեցէք 10 միավանկ, 10 երկվանկ և 10 բազմավանկ բառ։

§ 59. Ինչից են կազմվում վանկերը։

Ա-շա-խէրտ բառի մէջ առաջին վանկը ա մեկ հնչիւնից է բաղկացած, երկրորդը—շա երկու հնչիւնից, իսկ երրորդը—խէրտ չորս հնչիւնից. ա, է հնչիւնները առանձին առած՝ կարող են արտաբերուել, իսկ շ, խ, ր, տ հնչիւնները մենակ չեն կարող արտասանուել։

Ի բոլոր անգիր վանկ բաղկացած է մեկ կամ աւելի հնչիւնից։ Այն հնչիւնները որոնք իրանք իրանցից կարող են արտաբերուիլ, ասվում են ձայնաւոր. նորա որոնք իրանք իրանցից ձայն չունեն ու ձայնաւորների օգնութեամբ են արտասանվում, կոչվում են բաղաձայն։—Աշխէրտ բառի մէջ ա, է ձայնաւոր են, իսկ շ, խ, ր, տ բաղաձայն։

Ի բոլոր անգիր բառի մէջ որքան ձայնաւոր լինի, նոյնքան էլ վանկ կ'ունենայ այն բառը։ Բայց երբեմն երկու ձայնաւոր միասին մեկ վանկ են կազմում, և այդպիսի վանկերը կոչվում են երկբարբառ։—Հայքա՝ այ-քա, հեր՝ եր, ձուկ՝ ուկ բառերի մէջ այ, եր, ուկ երկբարբառներ են։

Կարդացէք ձեր անգիացած հատուածներից մինը և բառերը վանկերի բաժանեցէք։

Ցոյց տուէք ձայնաւորները, բաղաձայներն ու երկբարբառները։

§ 60. Ի՞նչ է բառը։

Ցորեն բառի յո և ըեն վանկերը առանձին առած ոչինչ միտք չունեն, իսկ միասին—ցորեն կոչվում են այն հատիկները, որոնցից չինում են ալիւր և հաց։

Մեկ կամ աւելի վանկ, որ ինքն իրան մի միտք կամ նշանակութիւն ունի, կոչվում է բառ։—Յո, ըեն վանկեր են, իսկ ցորեն բառ։

Կարդացէք անգիացած հատուածներից մինը և մեկնեցէք իւրաքանչիւր բառի ներքին նշանակութիւնը։

§ 61. Ձայնաւորների փոփոխման ու կորուսման կանոնները։

Սէր բառը փոխուելով սիրել բառի, նորա է ձայնաւորն էլ փոխվում է ի։

Անասուն բառը փոխուելով անասնոյն բառի, նորա ու երկբարբառը բոլորովին անյայտացել է։

Բառերը փոխուելու ժամանակ՝ նոցա վերջին վանկի ձայնաւորներից ոմանք փոխվում են ուրիշ ձայնաւորների, երբեմն էլ բոլորովին անյայտանում են։—Սիրել բառի մէջ է փոխուել է ի. անասո՝նոյն բառի մէջ ու անյայտացել է։

Ձայնաւորները ու երկբարբառները հետևեալ կանոններով են փոխվում։

1. Ոյ փոխվում է ի ձայնաւորի, ինչպէս. հանդոյս—հանդիսաւոր, դղոյնք—դղնուոր։

2. ԵԱ, երկբարբառը փոխվում է ե ձայնաւորի. մատեան—մատենադիր, կեանք—կենդանի։

3. Իի փոխվում է ու. թիւ—թուել, հաշիւ—հաշուառել։

4. **ՈՅ** վոխվում է ո՝ լոյս—լուսատու—լուսատուն։

5. **Ի և ՈՒ** բոլորովին անյայտանում են. ճշմարիտ—ճշմար'տություն, ռամիկ — ռամ'կօրէն — ռամ'կական — ջուր — ջ'րել, գարուն—գար'նանային։

Այս կանոնից խոտորում են է, ո՝ ձայնաւորով սկսուող միավանկներից ոմանք. եր — երական, ոստ—ոստատուր։

Իսկ ո, է, ո, օ ձայնաւորները անվոխոխ են մնում։

> Ընտանեկան լեզուի մէջ — երբեմն անյայտանում է կամ բաղաձայնների խստութիւնը մեղմացնելու համար ը է վոխվում. ինչպէս. շաբաթ—շաբ'թական, քաղաք—քաղ'քցի։ Նոյնպէս անյայտանում է երբեմն ե. ասել ասը'ման։

---

1. Հետևեալ բառերից մէկ կամ աւելի բառեր կազմեցէք և ձայնաւորները, վերևի կանոնների համաձայն, փոխեցէք կամ դուրս թողէք։

Դէզ—կէս—տէզ—տեր—օրէնք— պէսպէս— Սննեակ—կանիք— վայրկեան—առեան։ —կռիւ—հովիւ —պատիւ —անիւ։—Բոյս—յոյս—զոյն—ծոյլ—համբոյր։—Սիրտ—գիծ—երկինք—երկիր—պարսիկ։—Ջուր սուր—աչուն—առուն—ինթականութ։

2. Գտէք թէ ինչ ձայնաւոր կամ երկբարբառ վոխուած կամ անյայտացած է հետևեալ բառերի մէջ։

Դիտել, դիտակ, դիտանոց. այսպիսի, այնպիսի, որպիսութիւն. կենդանի, կենսատու, կենսարար. առնական, առնական, առնապաշտ. Թուաբան, Թուանշան. կառնել, կառուցաբար, կառուցաձ. յունագէտ յունական, յունարէն, տաճկերէն, տաճկական, տաճկաբան. գրել, գրբաւոր, գրագէտ, գրակալ. ախորել, ախորութիւն. քնել, քնամատեան։

Բ. Բառերի կազմութիւնը և նշանակութիւնը

§ 62. Բառերի արմատը։

Շարժ-իլ, շարժ-ուն, շարժ-ական, շարժ-ողութիւն բառերի մէջ շարժ վանկը մնում է անվոխոխ։

Բառի այն մասը որ անվոխոխ է մնում և որի մէջ պարունակվում է նորա բուն նշանակութիւնը, կոչվում է արմատ։ **Շարժ** է արմատ շարժել, շարժուն, շարժական, շարժողութիւն բառերի։

Շատ անգամ ներդաշնակութեան համար արմատի ձայնաւորը կամ երկբարբառը վոխվում կամ դուրս է ընկնում։ **Այսպէս՝** վերադարձ, յառաջել, լծել բառերի արմատներն են վէր, յոյս, լուծ։

Գտէք հետևեալ բառերի արմատները։

Գովեստ, գովելի, գովական. տեսնել, տեսիլ, տեսուչ, տեսարան. վախչիլ, վախուստ, վախուստական. մեռնիլ, մեռնել, մեռած, մեռելութիւն. պաշտօն, պաշտպան, պաշտել- գիտենալ, գիտուն, գիտութիւն. խմել, խման, խմիչք. բռնի, բռնաւոր, բռնել. ծնունդ, ծնող, ծնել. գթութիւն, գթալ, գթած. աղնուական, աղնուութիւն, աղնուապետութիւն։

§ 63. Նախատիպ եւ ածանցեալ բառեր։

Վառնդ արմատական բառ է։ **Վառնդ-ա-ւոր** կազմուած է վառնդ արմատական բառից, վերջումը ա՛ր մանրիկն ընդունելով։ **Անվառնդ** կազմուած նոյն վառնդ արմատականից, սկզբումը ան մանրիկ առնելով։

Արմատական բառը կոչվում է **նախատիպ**, այսինքն այնպիսի բառ որ իր սկզբնական պիտը կամ կերպարանքը անվոխոխ է պահել։ — **Վառնդ** նախատիպ բառ է։

Իսկ եթէ նախատիպ բառը վերջից կամ սկզբից այլ և այլ մանրիկներ է ընդունում, ասվում է **ածանցեալ**։ — **Վառնդ-ոյ, ան-վառնդ** ածանցեալ բառեր են։

> Ածանցեալ բառերի կազմութեան համար հետևեալը պէտք է իմանալ։ 1) եթէ մանրիկը բաղաձայնով է սկսում, —ով կապվում է —նալ. —բառի հետ. իսկ եթէ ձայնաւորով —ով միանում է բառի հետ. ինչպէս. ալէկոծ—ա—կոծ, հանճար—եղ 2) եթէ բառը է ձայնաւորով վերջանում է, է ամբողջապէս վոխվում է Ե, երբեմն էլ բաց է թողվում. ինչպէս. տարեկան հոգեւոր, Թեր'ատ. (վոխանակ

ցարբական, թերխան): խառորամ են որդեական և բոլոր է—ով վիա-
վանկները. մեակ, թեակ, ձեաւոր: 3. ջ տառը, եթէ միայն արմա-
տական չէ, ածանցման մէջ գուրս է ընկնում. ինչպէս (փառ+) փա-
—ա—ջ, (մեղ+) պղա—ջ, անդղ (խել+) խե—ջ: ջարտուղում են ան-
շնար+, անխել+, մեղանալ և այն բոլոր բառերը որոնց մէջ + ար-
մատական է. քաղաքական, թռչային: 4. կորուման և փուխուման
կանոնը ճշտութեամբ պահվում է

Աշխատեցէք ածանցեալ բառեր կազմել հետևեալ նախատիպ բա-
ռերից:

Աշխարհ—գաւառ—նահանգ—թագ— ղէնք— ահ—վախ—ոյժ—հո-
գի—որդի—եղբայր—մայր—հայր—հիւսիս—արևելք—պարտէզ—դուռ—
նաւ—թռչուն—շուշան:

§ 64. Պարզ եւ բարդ բառեր.

Հաւատարիմ բարեկամը թանգագին գանձ է մարդուս համար:

Բաղկում բառը կազմուած է երկու նշանակութիւն ունեցող բա-
ռերից ու երկու հասկացողութիւն է պարունակում իր մէջ. բաղ և նիմ,
այսինքն բաղուկին նմանող: Գոնէ բառը ոչ մի բառի հետ կազմու-
ած չէ:

Այն բառը որ ուրիշ բառի հետ բաղադրուած չէ, կոչ-
վում է պարզ: Այն բառը որ երկու կամ աւելի նշանական բա-
ռից է կազմուած, կոչվում է բարդ: — Գոնէ պարզ բառ է, քա-
ղաքամարդ:

Բարդ բառերի կազմութեան մէջ միևնոյն կանոններն են պահվում
որ ածանցեալ բառերի համար յիշեցինք: Միայն նկատելու է, որ 1. եր-
բեմն երկու բառ բարդվում են միմեանց հետ առանց ա—ի. ինչպէս
ձիա—պահ, աչքա—լուսյ: 2. երբեմն պատահում է ա—ի տեղ ու
շաղկապ գործ դնել. աղա—հաց, կերա—խում: 3. Ու շաղկապով բար-
դուած բառերի մէջ կորուման կանոնը չէ պահվում. ցերուցան, թա-
քամարդ:

Աշխատեցէք բարդ բառեր կազմել հետևեալ բառերից.

Բարի, սիրտ—առն, սիրտ—զօրք, գլուխ—զօրք, պետ—փիղ, ոս-
կերչ—երկիր, գունդ—քաղցր. ձայն—բարձր, հասակ—փոքր, հասակ—
անց, դարձ—վար, ցան—դիրք, տուն—ժամ, գիրք:

§ 65. Բառերի բուն եւ փոխաբերական նշանակութիւնը.

Սուր դանակ.—սուր միտք:

Ի՞նչպէս ենք անուանում այն դանակը որ լաւ է կտրում.—Սուր դանակ: Ի՞նչպէս ենք անուանում այն աշակերտին որ շուտ ըմբռնում, հասկանում է վարժապետի առածը.—Սուր միտք ունեցող կամ սրամիտ աշակերտ: Ի՞նչպիսի յատկութիւն է ցոյց տալիս սուր բառը, նիւթական թէ վերացական: Ուրեմն սուր գոնէ խօսքի մէջ սուր բառը իր բուն կամ սեպհական մտքով է գործ դրուած: Իսկ սուր դէտ խօսքի մէջ նոյն սուր բառը դէտ գոյականի նշանակութիւնը փոխել է, և վերացական առարկային նիւթական առարկայի կերպարանք է տուել, որպէս զի աւելի լաւ հասկացուի:

Լեզուի մէջ բառերը գործ են դրվում իրանց բուն կամ սեպհական նշանակութեամբ և փոխաբերական մտքով: — Սուր գոնէ խօսքի մէջ սուր բառը սեպհական նշանակութեամբ է գործ ածուած. Սուր միտք խօսքի մէջ — փոխաբերական մտքով:

Փոխաբերութիւնը առաջ է եկած լեզուի աղքատութիւնից: Լեզուի մէջ աւելի իմաստ կայ քան բառ, և այս թերութիւնները լրացնելու համար 1. նիւթական առարկաների յատկութիւններն ընծայում են վերացական առարկաներին. ինչպէս ծառի պտուղ. աշխատութեան պտուղ: 2. շնչաւոր առարկաների յատկութիւններն ու գործողութիւնները տալիս են անշունչ առարկաներին, և անշունչներինը շընչաւորներին. այսպէս. երկինքը պերսոն է: Լուսինն ու աստղերը պերսոն են իրանց պատկերը ջրի մէջ:—Աչս խտացաւ: Կեանքս խտացաւ:

Հետևեալ օրինակների մէջ ցոյց տուէք սեպհական և փոխաբերական մտքով գործ դրուած բառերը:

Բուքի կամ գուլ կացին. Բուքի միտք։ Սուր կացին. Սուր յիշողութիւն. Վառ կրակ. Վառ երևակայութիւն։ Պառուղ խմաստութեան. Պառուղ գիտութեան։ Վարդագոյն ծաղիկ. Վարդագոյն կերպարանք։ Լուսաւոր լապտեր. Լուսաւոր միտք։ Մարդիկ քնում են։ Քնում են երկինքն ու երկիրը։ Ծովի ալիքները կատաղում են։ Շունը կատաղում է։ Անասունը բաց է անում իւր բերանը։ Անդունդը բաց է անում իւր բերանը։ Կատուն լափում է կերակուրի մնացորդը։ Կրակը ամէն բան է լափում։ Սարը բարձրացնում է իր գլուխը։

§ 66. Նոյնանշան բառեր։

Ինչպէս ենք անուանում այն մարդուն, որ ծածուկ և առանց մեր կամքին յափշտակում, տանում է մի բան մեզանից, որ իրան չէ պատկանում.—Գող։ Ինչպէս ենք անուանում այն մարդուն, որ գիշերով մտնում է մեր տունը, կամ ճանապարհին պատահում է մեզ, մեր ունեցած չտնեցածը խլում է և եթէ ընդդիմութիւն ցոյց տանք, պատրաստ է մինչև անգամ զրկել մեզ կեանքից.—Աւազակ։ Ի՞նչ նմանութիւն կայ գողի ու աւազակի մէջ։—Երկուսն էլ առանց մեր կամքին յափշտակում են մեր ստացուածքը։ Ի՞նչ զանազանութիւն կայ նոցա մէջ։ Գողը թաքուն անում է իր գողութիւնը, այնպէս որ մենք չվանանք. իսկ աւազակը յայտնի համարձակ յարձակում է մեզ վրայ և մեր կեանքին սպառնում։

Ինչպէս որ միևնոյն բառը այլ և այլ մտքով գործ է ածվում, այսպէս էլ երբեմն երկու կամ աւելի բառեր միևնոյն նշանակութիւնն ունին։ Այս տեսակ բառերը կոչվում են նոյնաշանակ։—Գող և աւազակ բառերը նոյնանշան են։

Նոյնանշան բառերը միևնոյն ժամանակ թէև նման են միմեանց և թէ զանազանվում են միմեանցից։

Նոյնանշան բառերի մէջ կայ որ այլ և այլ մտքով կարող են վարվիլ, կայ էլ որ միայն մէկ մտքով, այսպէս ասում ենք բարի կամ լաւ գործ, բայց չենք կարող ասել բարի խաղ, լաւ գործ, այլ լաւ խաղ, վատ գործ։ Երբեմն մի բառ միայն իր նոյնանշա-

նը աւելանում է միայն զարդարանքի համար. ինչպէս. յոյնաց գործ, չինաց, ընթերց, հալէլ, հալէլ, կամ հալ — հալ մնիլ։

Աշխատեցէք հետևեալ բառերի նոյնաշանակները գտնել։

Վարժապետ—աչակերտ— միրգ—անասուն—տունկ—ջրիմ—թողնել—թռչնել—քանդել—ջնջել—քննել—վերջացնել—գթալ—բանալ։

Գ. Ուղղագրութեան ընդհանուր կանոնները

§ 67. Գրերը եւ նոցա զանազանութիւնը հնչիւններից։

Լեզուի իւրաքանչիւր հնչիւնը կոչվում է ձայն, որ եթէ թղթի վրայ ձևակերպենք գիր է ասվում։ Գրերը առանձին պայմանական նշաններ են, որ տեսնելով ենք որոշում միմեանցից, իսկ հնչիւնները՝ լսելով։

Հայերէն լեզուն երեսունուվեց գիր ունի, որոնցից ութը ձայնաւոր, ա, ե, է, ը, ի, ո, ու, օ-իսկ երեսունը բաղաձայն. բ, գ, դ, զ, լ, խ, ծ, հ, ձ, ղ, ճ, մ, յ*, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք։

* յ տառը երբեմն ձայնաւոր է, երբեմն բաղաձայն և երբեմն էլ անձայն. ինչպէս մայր, յաջողութիւն, կաթսայ։

Ուղղագրութեան համար գրերը պէտք է զանազանել հնչիւններից, որովհետև հնչիւնները ու գրերը միշտ իրարու նման չեն. արտաբերութեամբ շատ անգամ մէկ հնչիւն ուրիշի է փոխվում, իսկ ուղղագրութիւնը սովորաբար անփոփոխ է պահում բառերի արմատական հնչիւնները։ Այսպէս գրում ենք՝ յարմար գնաւակ, մարդ, որդի, եղբայր, բայց կարդում ենք՝ հարմար, գնաւակ, մարդ, ձորի, եղբայր։

§ 68. Ձայնաւորների գործածութիւնը։

Ձայնաւորների արտաբերութեան և ուղղագրութեան հա-մար հետևեալ կանոնները իմանալու է։

1. **Ա, և ո** ձայնաւորները բառերի վերջը մենակ չեն մնում, այլ միշտ անձայն յ են ընդունում. ինչպէս. վկայ, քահանայ, կը մնայ, դշխոյ, հաճոյ։ Խոտորում են յատուկ անունները. Ցուդա, Ամերիկա. դերանունները. սա, նորա, քո, և բայերի հրամայականները. ասա՛, կարդա՛։

2. **Ը և օ** ձայնաւորները բառի վերջը չեն մնում, այլ է փոխվում է. զօրօրինակ. կը գրեմ, կը գրես. կը գրէ։ Իսկ օ-ից յետոյ միայն բաղաձայն կարող է լինել. օր, աւօն, դրօշ։

Միայն օտար բառերի վերջում կարող է օ մենակ մնալ. Մօռօ, կառաւօ, Ռաւօ. Թէև այս դէպքի մէջ էլ աւելի ընտիր է համարվում օ փոխել ա, մանաւանդ հոլովներում. Ռուսա, Մօռայի, պէից, դրօսով։

3. **Ե և ո** ձայնաւորները բառերի սկիզբը պատահելու են իրրև նէ և ո-ո. երկիր, ոսկ. բացի ով, ովկիանոս և առհասարակ օտար բառերը։ Իսկ բառերի մէջ է և ո պատահելու են կարճ է և օ. ձմ՛եռ, Աւետիք, նորոգել։

Առաջին դէպքում է-ի ուղղագրութիւնը արտաբերութիւնից պարզ երևում է, իսկ երկրորդ դէպքում բառի քերականական կազմութիւնից։ Այսպէս սէռ և սէր նմանաձայն բառերից կազմելով սերունդ և սերմի բառերը, կը տեսնենք որ առաջինը է—ով գրելու է, իսկ երկրորդը ե—ով։ (Ո—ի ուղղագրութիւնը միայն երկարաւոր կրթութեամբ կարելի է իմանալ։)

4. **Ե** գիլը իրանից յետոյ միայն ա և ո ձայնաւոր կարող է ընդունել և եա, եո երկբարբառներ կազմել. մանեակ, թեաւոր։

Ա՛կ երկու տեղ պատահում է է-ից յետոյ օ-էօ. եօթը, կարճեօք, արդեօք։

5. **Ը** ձայնաւորը միայն բազմավանկ բառերի սկիզբը կարող է լինել. ընտիր, ընդունակ, ըմբռնել, երբեմն և բառի վերջը, ուր նոր լեզուի մէջ փոխուած է ը. մարդը (փոխանակ մարդո), անձը, դասը։

Բառի առաջին վանկի մէջ, ուր երկու կամ երեք բաղաձայն է պատահում. առաջին բաղաձայնից յետոյ կարճ ը է լսվում, բայց չէ գրվում. հնազանդ (կարդա՛. հընազանդ), դլուխ, քրտնել, զըպարտութիւն։

Բառի սկիզբը եթէ ա, ը, ը բաղաձայններից յետոյ պ, ն, ա, է, գ պատահի, կարճ ը է լսվում, բայց նոյնպէս չէ գրվում. ինչպէս. սպասել (կարդա՛ ըսպասել), սկիզբ, ղբաղմունք, շտապել։

6. **Յ** գրից առաջ միայն ա և ո ձայնաւորները կարող են լինել, և այ, ոյ երկբարբառները կազմել, որոնք բառերի մէջ կարդացվում են իբրև կարճ է. հայր, եղբայր, երկայն. լոյս. մայկ։ Իսկ բառերի վերջը, ինչպէս ասացինք, յ անձայն է, բացի մի քանի միավանկ բառերից. հայ, վայ, խոյ։

7. **Ի** գրից առաջ կարող են միայն ա, է, է, ո ձայնաւորները գալ և ա—, է—, է—, ո— երկբարբառները կազմել. Թագաւոր, արեւելք, հիւսիս, ժողովուրդ։

Ի— և ո— երկբարբառների արտաբերութեան համար հետևեալը դիտելու է։ Ի— երկբարբարը է— է արտաբերվում, եթէ իրանից յետոյ բաղաձայն ունի, և եվ եթէ բաղաձայն չունի. ինչպէս. հիւր, է—տոյ բաղաձայն ունի, և եվ եթէ իրանից յետոյ ոչ-ինչ տառ կամ բաղաձայն չունենայ, սովորական արտաբերութիւնը պահում է, իսկ եթէ ձայնաւոր, համարեա վ—ի ձայն է ընդունում. քը—, քը—ել. լեզո—, լեզո—ագէտ։

Հետևեալ բառերի մէջ տառասխալները ուղղեցէք.

Շղթա—ընծա—քայանա—հրէա—հրսկա—յետո—նայ—սոցայ—գնայ,—հաւատայ—Եվրոպայ—գնում է—բրնում է—Ռուսօի—Բօրդօյից

տերունական—փոխարեն—ղենք—երկինք—երկիր—սենեակ—որդեակ—արդիօք—սընունդ—սընընդարար—ծընունդ—ծընընդական—հրլու—տը ղա—թըթու—թըչնամի—ըսպիտակ—ըղձայուն—ըղբօսանք—ըշտեմարան—այս—ծայիր—ճառադայիթ—մայիր—քուիր—յուիս—ողջույն—հանձնել—հառաջաբան—հետադեմ—ադեալ—հավ—հավասար—թեթեվ արեվ—թագավոր—կրօնավոր—թիվ—հովիվ—հիվանդ—մեղվի խայիթող հեռվան հաչիվը։

§ 69. Բաղաձայնների դործածութիւնը։

Բաղաձայնների ուղղադրութեան վրայ նոյնպէս մէկ երկու դիտելիք կայ։

1. Վ բաղաձայնը միայն բառերի սկիզբը կարող է դրուիլ, իսկ բառերի մէջ միայն ո ձայնաւորներից յետոյ. (ուրիշ ամէն տեղ — կամ ու է դրվում, ուր վ—ի ձայն է լսվում.) վարժ, վերին, ժողովել, խորոված։

Զարտուղում են բարդ ու ածանցեալ բառերը, որոնց մէջ վ պատահմամբ կարող է ուրիշ ձայնաւորներից և նոյն իսկ բաղաձայնից յետոյ դալ. նաւավար (նաու և վարել բառերից)։ հոդեվարք, անվաւեր։ Նոյնպէս սովորութիւն եղած է բայերի մէջ դրել հաշվում է, կուվում էին, ու երկբարբառը չկրկնելու համար։ Բայց դոյականների մէջ սովորաբար պահվում է ու. աղունաւութիւն, ձեռնաւութիւն։

2. Ր տառով բառ չէ սկսվում հայերէն, այլ գրվում է հր. հրեշտակ, հրապարակ։

Զարտուղում են՝ քարունկ, բուկէ օտարազդի բառերը։

3. Ր գրից յետոյ, եթէ ն պատահի, գրվում է միշտ ն, թէ հայ և թէ օտար բառերում, առնել, փառնակ, կոռնելիոս*։

Զարտուղում են բարդ ու ածանցեալ բառերը և հոլովները, որոնց մէջ ր-ից յետոյ պատահմամբ ն է դալիս. վինուտուն (վերին տուն), դաչնանային, ընկերներ։

* Այս է պատճառը որ ամառ, ձմեռ, դուռ, ձեռ և ուրիշ սոցա նը. ման բառերի մէջ ր է գրվում, ուր ն արմատական տառը դուրս է ընկել. հին ժամանակ ասում էին ձմեռն, ամառն, ձեռն, բեռն։

4. Ո տառով բառ չէ սկսվում հայերէն, այլ գրվում է հս, մինչև անգամ օտար բառերի մէջ. հսկական, հսում։ Բացի սոճկիկ և մի քանի օտարազդի բառեր. սարբել, Ռուբէն, Ռոբովամ։

5. Բ. պ, փ շրթնաձայններից առաջ պատահում է երբեմն ն տառը մ-ի վոխել. ամբաս (փոխանակ անբաս, ամիրուի, ռւսումնք։

6. Հայերէն լեզուի մէջ միևնոյն դիրը չէ կրկնվում, թէ ձայնաւոր լինի և թէ բաղաձայն։ Մինչև անգամ օտար անուններ մէջ կրկնուած բաղաձայնները հայերէն մէկ տառով են դրվում. ինչպէս. թադէոս (փոխանակ թադդէոս), Աբէաս, թեոդոսիոս։

Միայն պատահմամբ կարող են երկու նոյնահնչիւն տառ միասին դրուիլ. պնակ (պինակ արմատից), աններելի, խրատտու, (խրատ տալ), հրրորդ, առաաներ։

Հետևեալ բառերի մէջ ուղղագրութեան սխալները ուղղեցէք։

Խարդան—ւարժապետ—ւարդապետ—զօրաւար-օրաւար—կառավար—անւարձ—բրնել—դարնալ—գառնանամուտ—ամարնամուտ—բերնակիր—Ջմիւրնիա—Ռիփսիմէ—Ռոդոս—Ռոմայեցի—անբիծ—նեղուԹեանք—քաջուԹեանք—Ռուսաստան—չորորդ—փեթել—անսման—անախանձ։

§ 70. Տողադարձի կանոնները։

Բառերը մէկ տողից միւսը փոխադրելու կանոնը կոչւում է տողադարձ։

Տողադարձի կանոնները հիմնւում են բառերի վանկ առ վանկ բաժանուելու վրայ։ Այս հիման վրայ

1. Միավանկ բառերը չեն կարող մէկ տողից միւս տողը փոխադրուիլ։ Այսպէս անբաժան են՝ մարդ, ոչխար, ձուկ, ծով։

2. Երկբարբառները նոյնպէս չեն բաժանւում, որովհետև մէկ վանկ են կազմում. տուն, սկան, եղ—բայր, գու—նաս - որ, հայ—ե—րէն։

3. Երկու ձայնաւորներից միևը առաջին տողի վերջում և միւսը յաջորդի սկզբումն է դրւում. է—ակ, դէ—ակ, տէ—եզերք։

4. Մի բաղաձայն բառի մէջ միշտ փոխադրւում է. բա—րէ, ծա—պիկ, գե—ղե—ցիկ։

5. Երկու բաղաձայններից միևը առաջին տողի ծայրը, միւսը յաջորդի սկիզբն է դրւում. եր-էիր, պատ—էր, հան-գիստ։

6. Եթէ բառի մէջ երեք բաղաձայն պատահի, միայն վերջինը անցնում է յաջորդ տողը. թարգ—ման, պաշտ—պան, քաղց—րութիւն։

7. Եթէ բառի մէջ երկու-երեք բաղաձայնի մօտ լսւում է ը, տողադարձի մէջ ը գիրը ներգործութեամբ դրւում է, թէ տողի սկիզբը լինի և թէ վերջը. ինչպէս. գը—լուխ, դը—կանք բը—նել, տը—տընջել, մը—կըրտել։

8. Բառերը մէկ տողից միւսը փոխադրելու ժամանակ կապւում են այս նշանով (-), որ կոչւում է էնթաճայ և դրւում է տողի վերջը սեռ-ղան, տախ-տակ։

Հետևեալ բառերը բաժանեցէք վերևի կանոնների համաձայն։

Ծով—ցամաք—ծեր—ժամ—հայ—հայեր—տղայ—ձայն—ձայնաւոր—լուծաւոր—բարեկամ—ձիւն—ձիւնապատ—ուտել—խմել—սովորել—զրկել—միաքիրան—որդիական—կը խօսէի—եթէ աչխատէին—ժամանակ—խորովել—խռովել—դառնալ—արդարութիւն—մանկակից—թըշնամի—ընկղմել։

§ 71. Համառօտագրութիւն։

Գրութեան ինչպէս նաև տպագրութեան մէջ շատ անգամ պատահում է բառի մէկ մասը միայն գրել, և այս կոչվում է համառօտագրութիւն։ Զորօրինակ. գոյ. ան. (գոյական անուն), հարց. նախադ. (հարցական նախադասութիւն)։

Համառօտագրութեան նշանն է մի պարզ կէտ (.), որ դրվում է համառօտուած բառի մօտ, ինչպէս վերևը ցոյց տուինք։

Համառօտագրութեան համար բաւական է որ բառի առաջին մասը բաղաձայնով վերջանայ, կամ միայն էական տառերը նշանակուին, իսկ ձայնաւորներն ու այլ և այլ վերջաւորութիւնները դուրս թողուին. ինչպէս. Յովհ. Մաթ. (Յովհան Մանդակունի), Զէք. Խաչ. (Զաքարիա կաթողիկոս). Գրբ. (գրաբար)։

Եան բառեր որոնց մէջ բաւական է միայն առաջին տառը գրել. ինչպէս. Պ. (պարոն), Տ. (տիկին)։ Նոյնպէս առաջին, երկրորդ և այլն ասելու համար գործ են ածվում թուանշանները կամ գրերը. գլուխ Ա. Լուսն Զ։

Համառօտեցէք հետևեալ բառերը։

Եզակի—յոգնակի—ածական անուն—մակբայ—աչխարհաբար—Ներսէս Շնորհալի—Ներսէս Լամբրոնացի—Մովսէս Խորենացի—Ղազար Փարպեցի—Յովհաննէս կաթողիկոս—Տիգրան երկրորդ—Արտաչէս երրորդ—գիրք առաքելոցդ—գլուխ քսաներկուերորդ։

§ 72. Գլուխ եւ վանդ տառեր.

Լեզուի գրերը երկու տեսակ են. 1. Գլուխ կամ մեծ տառեր և 2. Ցանգ կամ փոքր տառեր. Ա, ա, Բ, բ և այլն:

Գլխատառով սկսում են

1. Իւրաքանչիւր նոր խօսքի առաջին բառը: Ցորօրինակ. «Հինգերորդ դարու Հայերը քաջութեամբ կռուեցան պարսից դէմ ազգի անկախութեան համար»:

2. Ոտնաւորների մէջ իւրաքանչիւր տողի առաջին բառը: Ցորօրինակ.

Լեռնագագաթները
Հանգստանում են,
Ծառերի ճիւղերը
Բնաւ շարժվում չեն.
Անտառում թռչնիկը
Չէ հանում ծպտուն,
Կամ, կը հանգստանաս
Դու եւըս խկոյն:

3. Յատուկ անունները. Սահակ Պարթև, Արա Գեղեցիկ, Երասխ, Արագած, Էջմիածին և այլն:

4. Սրբազան անունները, ինչպէս նաև պատուանունները և տիտղոսները. ինչպէս. Աստուած, Արարիչ, Փրկիչ, Պատրիարք, Կաթողիկոս, Վեհափառ Տէր, Վսեմափայլ Կոմս և այլն:

5. Գրուածների անունները, ցորօրինակ. Վէրք Հայաստանի (Խորենացու Աբովեանի), Բլբուլ Աւարայրի (Նահապետի), Պատմութիւն Վարդանանց (Եղիշէի):

Դ. Գոյական անունների կազմութիւնը

§ 73. Գոյականների արմատները.

Հայերէն լեզուում արմատական գոյական անուններ շատ քիչ են. այսպէս են՝ ոտն, հուղ, ջուր, ոչխար, մարդ նիւթականները և գործ, խաղ, ծեծ, ողբ, գէն վերացականները: Սնացած գոյականների մեծ մասը կազմուած են

1. Ածական անուններից. լոյնք, պեղծուց, ապիսակուց, ջեռուԹիւն, օգտակարութիւն:

2. Բայերի արմատներից և բայերից. ծուլք, էեղք, գրուԹիւն, աշխատանք, էոնալի, խաղալիք:

3. Գոյական անուններից. յեռանոց, հետրանոց, լուացուհի, պարոկասան:

4. Թուական անուններից. ՋուԹիւն, տասնուԹիւն, հինգանոց, տասանոց:

5. Դերանուններից. ՆոյնուԹիւն, ինքնուԹիւն:

§ 74. Նիւթական գոյականների ածանցական վերջաւորութիւնները.

1. Աբուեստ կամ պաշտօն ցոյց տուող գոյական անունները կազմուած են ուդ և պան ածանցական վերջաւորուԹիւններով. որսուդ, պարտիզպան:

2. Գործիք ցոյց տուող անունները կազմուած են ան, ոց, նոց մասնիկներով. դուԹան, սղոց, մատնոց:

3. Տեղ ցոյց տուող գոյականները, ուր մի որևիցէ բան կատարուում կամ գտնուում է, կազմուած են ոց, նոց, քան, ոտն մասնիկներով. դպրոց, աղքատանոց, ճեմարան, Հայաստան, բուրաստան:

Սրան մանրիկը գալիս է ածվում մանաւորապէս հին երկրների համար և իբ նոր երկրների համար. Ցունաստան, Պարսկաստան, Ռուսաստան կամ Ռուսիա, Գերմանիա, Անգլիա:

Հայրենիք ու ծագում ցոյց տուող անունները կազմվում են ցի, ցի, կան մանրիկներով. երևանցի, քաղաքացի, պարսկի, գիւղացիկան, ռամկի, ազնուականի:

5. Իգական գոյականները կազմվում են արականներից ուհի վերջաւորութեամբ. Թագուհի, վարդուհի:

6. Ռուազգական և փաղաքշական անունները կազմվում են ուկ և իկ մանրիկներով. տնուկ, որդեկ, Թռչնիկ, Շուշանիկ:

---

1. Հետևեալ գոյ. ու ած. անուններից և բայերից կազմեցէք առուեստ կամ պաշտօն ցոյց տուող գոյականներ:

Դուռ—ճանապարհ—այգի—միջին—առաջին—ուղտ—ձի—բանդ—պահել—բաժանել:

2. Հետևեալ բայերից ու գոյականներից կազմեցէք գործիք ցոյց տուող անուններ:

Տափել—կտրել—քերել—հաջել—քշել—կապել—խթել—ջնջել—ձեռ, գոգ—ակ:

3. Հետևեալ գոյականներից և բայերից կազմեցէք տեղ ցոյց տուող անուններ:

Սպասիկ—ձմեռ—ամառ—որջ—հիւր—ժողովուրդ—ուսումն—բնակել—նստիկել—վարժել—վաճառել—Պարսիկ—Տաճիկ—կոյս:

4. Հետևեալ գոյականներից կազմեցէք հայրենիք ու ծագում ցոյց տուող անուններ:

Աշտարակ—Անի—Վան—Թիֆլիս—Վաղարշապատ—Վիննա—Փարիզ—Անգլիա—Գերմանիա—Լեհաստան—դաշտ—կղզի:

5. Հետևեալ արական գոյականներից իգական անուններ կազմեցէք:

Իշխան—կայսր—կոմս—դուքս—քուրմ—աշակերտ—Տիգրան:

6. Հետևեալ գոյականներից կազմեցէք նուազական ու փաղաքշական անուններ:

Նաւ—հայր—մայր—քոյր—թաթ—դրօշ—Հայկ:

§ 75. Վերացական գոյականների ածանցական վերջաւորութիւնները:

1, Վերացական գոյական անունները, եթէ որպիսութիւն են ցոյց տալիս, կազմվում են որակական ածականներից ութիւն մանրիկով. մարդութիւն, դառնութիւն, ուրախութիւն:

2. Վերացական գոյականները, եթէ գործողութիւն և դրութիւն են ցոյց տալիս, կազմվում են բայերից զանազան մանրիկներով, որոնց վրայ հայերէն լեզուի յատկութեամբ շատ անգամ աւելանում է տառը: Այսպէս պատահում է.

1) Բայի արմատի վրայ լոկ ս, տես, դիր, ելս: կամ անցեալ կատարեալի արմատի վերայ գնաց, լուաց:

2) Ած և ուած մանրիկներից վերջինի վրայ: կոտրած, դիպուած, գրուած կամ գրուածք, նայուածք:

3) Լե վերջով բայածականների վրայ ս կամ բայի արմատի վրայ եբ. հագնելեբ, ուտելեբ, կարծելեբ:

4) Ան և մանաւանդ անբ. կարկատան, տանջանբ, պարծանբ:

5) Ոմ մանրիկի վրայ, որ այն ժամանակ փոխվում է մոնբ յոգնական ձևի. խաւարումն, ուսումն կամ ուսմունբ, մտածմունբ:

Իսկ ութիւն, ունբ, ուած, ոց մանրիկները ս չեն առնում. սովորութիւն, անուանբ, խաւնունբ, կորուած, խշիշոց:

Բայերից առաջ եկած գոյական անունները կոչվում են քայանուն, որովհետև բայի միտք ունին. Ցաարի խօսուածքը նշանակում է օտարի խօսելը:

---

1. Հետևեալ ածականներից կազմեցէք վերացական որպիսութիւն ցոյց տուող գոյականներ.

Առողջ—հիւանդ—առաքինի—կարմիր—սպիտակ—հարուստ—աղքատ—բարի—գեղեցիկ—խոր—լայն—երկայն—ծանր—թեթեւ։

2. Հետևեալ բայերից կազմեցէք վերացական գործողութիւն ու դրութիւն ցոյց տուող գոյականներ։

Մտնել—խնդրել—թռչել—կտտրել—խօսել—կենալ—չարչարել—աղաչել—պաղատել—զարմանալ—պարծենալ—զրկել—հալածել—բամբասել—մխիթարել—աւետել—սպառնալ—հարցնել—համոզել—վարուել—զգալ—օծել—քննել—մտանել—տեսնել—ձանձրանալ—ծնել—ժողովել—փախչել—ապրել—գոռգոռալ—թրխթրխկալ-փսփսալ—կռկռալ։

§ 76. Բարդ գոյականներ։

Բարդ գոյականների մէջ երկրորդ բառը միշտ գլխաւոր տեղն է բռնում. իսկ առաջինը կախում ունի նորանից և լինում է

1. Յոգնական, երբ գոյականը գոյականի հետ է բարդւում. ինչպէս. եղէնաիմաց (երինքի կամար)։

2. Լծական, երբ գոյականը բայի արմատի հետ է բարդւում. ինչպէս ձիաոտ (նա որ ձուկ է որսում հմմ պարզ՝ ձուկ որսացող)։

Այս տեսակ գոյականները շատ անգամ ածականապէս են վարվում։

Պատահում է երբեմն որ երկու գոյականները միմեանցից անկախ են. ինչպէս. ոդգապոհմ (ազգ և տոհմ), Եռչնաճնճճ (թռչուն և ճանճ)։ Այսպէս են մանաւանդ ո՛ շաղկապով բարդուածները. Նոյ-Տաճատ, Վարդան։

Հետևեալ գոյականներից կազմեցէք բարդ գոյականներ։

Ձորք, գլուխ—պար, գլուխ—մարդ, գլուխ—տարի. գլուխ—հայր պետ—մայր, պետ—նաւ, պետ—ժամ, գիրք—գիրք, տուն—հաւ, տուն

փիղ, ոսկր—մուկ, դեղ—ջուր, չուն—գարի, ջուր—չոգի, նաւ—հարց, փորձ—հայր, եղբայր—մայր, քոյր—քոյր, որդի—տուն, տէր—ահ, դող որբ, այրի։

2. Հետևեալ գոյականներից ու բայերից կազմեցէք բարդ գոյականներ։

Հող, գործել—երկիր, գործել—մատեան, գրել—առակ, խօսել—նաւ, վարել—գիրք, վաճառել—օրէնք, գնել—մարդ, սպանել—ջուր, վիժել—կրակ, պաշտել—կուռք, պաշտել—ջուր, օրհնել։

§ 77. Գոյական անունների հոլովումը։

Գոյական անունները երեք հոլովում ունին. որոնք միմեանցից որոշվում են գլխաւորապէս եզակի սեռականի վերջաւորութիւններով։ Միւս հոլովները ընդհանրապէս իրարու նման են, կամ շատ քիչ են զանազանվում միմեանցից, ինչպէս որ կարելի է տեսնել հետևեալ պատկերի մէջ։

	Եզակի			Յոգնակի
	Ա. հոլ.	Բ. հոլ.	Գ. հոլ.	Բոլոր հոլ.
Ո՞ւ. հայց.	—	ի	— իւն	եր (ներ)
Սե՞ռ. տր.	ի	ու	ան, եան	երի
Բացա՞ռ.	ից	ուց	ից	երից
Գործի՞ք.	ով	ով	ով, ամբ, եամբ	երով
Ներգո՞յ.	ում	ում	ում	երում

Այս պատկերից երևում է որ եզականում հայցականը ուղղականի նման է, և տրականը սեռականի նման։ Գործիական և ներգոյական հոլովները ամէն հոլովների մէջ միակերպ են. իսկ բացառականը երկրորդ հոլովման մէջ խոտորվում է։

Յոգնականում հոլովումների զանազանութիւն չկայ, այլ եր

կամ՝նէր մանկիկը եղականի վրայ աւելացնելուց յետոյ՝ բոլոր բառերը միակերպ հոլովւում են առաջին հոլովման վրայ:

Եր մանկիկ ընդունում են միավանկ բառերը. ինչպէս քար-քարեր, ծառ-ծառեր, տուն-տներ, քոյր-քոյրեր:

Ներ մանկիկ ընդունում են բազմավանկ բառերը. պատկեր-պատկերներ, սեղան-սեղաններ, բարեկամ-բարեկամներ:

Նոյնպէս դէր մանկիկ առնում են 1) այն միավանկ բառերը՝ որոնց արտաբերութեան մէջ ը տառը մնում ու մէկ վանկից երբ երկու վանկ է կազմում. ինչպէս. ձրագ—ձրագներ, բլուր—բլուրներ, պսակ—պսակներ, կայսր—կայսրներ: 2) Այն միավանկները որոնց վերջին արմատական ն անյայտացել է*. դուռ-դռներ, ձեռ—ձեռներ, եզ—եզներ, մուկ—մկներ:

* Գաւառական բարբառներում այս կարգի բառերը ընդունում են ը. եզը, գառը, նուռը: Բայց սում են չե՛, ոչ կամ ձեռ, ոտ:

Սորա հակառակ կան միավանկ գոյականներ, որոնք բարդ բառերի կազմութեան մէջ մնալով՝ յոգնականում էր մանկիկ են ընդունում: Այսպէս են՝ էրկ, պուռն, հայր, մայր, ծոյր, ծեր. դասակարգեր, գրաւներ, հօրաքոյրեր, և այլն:

§ 78, Առաջին հոլովում ի սեռականով:

Եզակի	Յոգնակի	Եզակի	Յոգնակի
Ո-ղ. Հայց.	Բանդ	Բանդեր	Սեղան	Սեղաններ
Սե-ռ. Տր-ի.	Բանդի	Բանդերի	Սեղանի	Սեղաներին
Բացառական	Բանդից	Բանդերից	Սեղանից	Սեղաններից
Գործիական	Բանդով	Բանդերով	Սեղանով	Սեղաներով
Ներփոյական	Բանդում	Բանդերում	Սեղանում	Սեղաներում

Այսպէս հոլովում են գոյական անունների մեծ մասը:

---

1. Հետեւեալ նախադասութիւնների մէջ գոյ. անունները դրէք պէտք եղած հոլովով և թուով:

Ծառ ծաղկում են գարնանքին:—Պտուղ քաղում են աշունքին:—Ձիւնին չինում են խաղալ:—Մեր տան պարտէզը զարդարուած են տեսակ տեսակ ծառի (յգ. զուրծ.):—Վարդ, ջեմ և մանիշակ՝ շուշանը դաշտ ծաղիկ է:—Թուղն ու արմաւը տաք երկիր պտուղ (յոգ.) են:—Ցորենը ցանում են դաշտ (յգ.), իսկ պտղատու ծառերը տնկում են պարտէզ:—Ալյօր նամակ գրեցի իմ բարեկամ:—Հայկը յաղթեց Բել և իր ազգն ու երկիրը ազատեց նորա բռնութիւնից:-Հայաստանը հիւսիսում բաժանվում է վրաստան կոր գետ:—Արարատը՝ որ Հայաստանի լեռ ամէնից բարձրն է, միշտ պատած է ձիւն:

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւեալ գոյականներով և հոլովական վերջաւորութիւնների տակ դիծ քաշեցէք:

Բաժակ—դանակ—կացին—ոզոց—խարտոց—մանգաղ—բլուր—անտառ—տերև—թռչուն—ագռաւ—սոխակ—վանդակ—աղուէս—փիղ դունդ—զօրք—բանակ—պատերազմ—ղինուոր—զօրավար—երգ—ձայն—երաժիշտ—բժիշկ—պատկերահան:

§ 79 Երկրորդ հոլովւում ու սեռականով:

Եզակի	Յոգնակի	Եզակի
Ո-ղ. Հայց.	Մատանէ	Մատանիք, մատանիներ	ձի
Սե-ռ. Տր-ի.	Մատանու	Մատանիների	ձիու
Բացառական	Մատանուց	Մատանիներից	ձիուց
Գործիական	Մատանով*	Մատանիներով	ձիով
Ներփոյական	Մատանում	Մատանիներում	ձիում

* Արտաբերութեան հակառակ ոմանք գրում են մատանով, կեղեցով, աղանով:

Այս հոլովման պէս հոլովւում են բոլոր է վերջացած բառերը. միավանկները է տառը պահում են:

Կան մի քանի է վերջացած բազմավանկ բառեր, որոնք է պահում են և հոլովւում են առաջին հոլովման վրայ՝ այսպէս.

հայելին, աճխլող, բանալին, լայլն, որ եթէ կանոնաւոր հոլովենք՝ աճելոյ, բանալով, կարող են շփոթուիլ աճել և բանալ բայերի հետ:

Այսպէս հոլովում են հայ և մանաւանդ օտարազգի յատուկ անունները. Անիի հազար ու մէկ եկեղեցին. Գարիբալդիի հայրենասիրութիւնը. Նապոլէոնէ է գալիս:

---

1 Հետևեալ նախադասութիւնների մէջ նշանակած գոյականները դրէք պէտք եղած հոլովով ու թուով:

Զէյթէնի ճիւղը խաղաղութեան նշան է:—Առողջութիւնը թանկ է ոսկի ու արծաթից:—Վենետկի Մխիթարեանց վանքը գտնվում է սուրբ Ղազարի կղզի վրայ: Չինաւօրների գիակները թաղուած են փոշի և աւազի մէջ:—Քաղաքացի պարտաւորութիւնները օրէնքով հաստատվում են: Պարտիզպանը տնկեց մեր պարտէզում նռնիներ, պոմիներ, ընկոյզներ (յգ.) և ուրիշ պտղատու ծառեր:—Մեր պապերը շատ եղեռնքի (յգ.) չինեցին իրանց հոգի փրկութեան համար: Ազգասանդրոպոլի եկեղեցին չինուեցաւ Անի մայր եկեղեցի ձևով:—Աբովեանի Աղոռ մէջ հոգի լոկած խօսքեր շատ կան:—Մովսէս Խորենացի պատմութիւնը գրուեցաւ Սահակ Բուբրոնի առաջարկութեամբ:—Ծաղկազարդի օրը Հրէայք Քրիստոսի առաջ գնացին ձիերեն և ոչխարներ (յգ.) ճիւղերով:—Տէրտէրնուհի խոհեմութիւնը գոված է պատմութեան մէջ:—Աժդահակ պահանջում էր Տէրտերնուհի, որ իւր եղբօր՝ Տիգրանին և նորա կնոջ՝ Զարուհի դաւաճան է:

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ գոյականներով և հոլովական վերջաւորութիւնների տակ գիծ քաշեցէք:

Կենդանի—աղաւնի—ծերունի-եկեղեցի—քաղաքացի—որդի—գինի—թշնամի—լանճորենի-տանձենի—իչխանուհի—թագուհի—կայսրուհի աշակերտուհի—Վահան Ամատունի—Գարիբալդի—Լոսինի—Նապոլի-

§ 80. Երրորդ հոլովում ան եւ եան սեռականով:

Եզակի.

Ո—ղ. Հ—յց.	Զուկ	Հարցում	Ընկերութիւն
Սե—. Տրտ.	Զկան	Հարցման	Ընկերութեան
Բ—ց—ու—ն	Զկնէ	Հարցմանէ	Ընկերութենէ
Գ—ր—ծ—ու—ն	Զկնով	Հարցմամբ	Ընկերութեամբ, թիւնով
Ն—ե—գ—ց—ու—ն	Զկնոմ	—	Ընկերութեանոմ

Յոգնակի

Ո—ղ. Հ—յց.	Զկունք	Հարցումունք	Ընկերութիւններ
Սե—. Տրտ.	Զկանց	Հարցմանց	Ընկերութեանց
Բ—ց—ու—ն	Զկունէից	Հարցումանէից	Ընկերութիւնենէից
Գ—ր—ծ—ու—ն	Զկունեւք	Հարցումանեւք	Ընկերութիւնենեւք
Ն—ե—գ—ց—ու—ն	Զկունեաւք	—	Ընկերութիւնենեաւք

Շատ բառեր պէս պէս հոլովում են նախ՝ ան վերջացած բառերը, ինչպէս ոսկի, գիրուն: Խոտորում են հաւն և քաւն միաւորները, նոյնպէս և այն գոյականները որոնց մէջ ան արմատական չէ, այլ ածանցական մասնիկ. ինչպէս. Նաչքան, աղջան:

Երկրորդ, այն գոյականները որոնց վերջին արմատական ն տառը անյայտացել է. ինչպէս. դուռ (դուրն), դրան, մինու, ընոջ, Նոյան, Նոյին լայլն:

Այն կարգի բառերի մէջ կան որ խառն հոլովում են առաջին և երկրորդ հոլովման վրայ միանգամայն, վերջին ձևը երևում է աւելի ընդհանրական լեզուի մէջ. Այսպէս ասում են՝ քաւն հայց. և քաւնի միս և գառնի միս: Կան էլ որ միատեսակ հոլովում են առաջին հոլովման վրայ, բայց յոգնակի տառը կրկին երևում է: Ահաւասիկ այդ բառերի նմանութեամբ ն տառը կրկին է: Ահաւասիկ այդ բառերի ցանկը. ոտ, ձեռ, հոտ, անձ, հոտ, եզ—ոտի, ոտներ, մատի, մատներ, եղներ:

Հետևեալ բառի պէս հոլովում են ոմ (ումն) վերջացած բառերը, որոնք կարող են անխտիր հոլովիլ և առաջին կանոնաւոր հոլովման վրայ, վերջինը աւելի ընդհանրական լեզուի մէջ. օճման և օճումի, խառնման և խառնումի, խոտոմամբ և խոտո-

տուժվել: Ամեն մարդ ճանաչում է աստծո օգուտը և որդուս սուտն ու ճշմարիտը:

Բայց սովորական է այս տեսակ բառերին ունենալ յոգնական վերջաւորութիւնը տալ եզականում, և յետոյ նրանց աւելացնելով կրկին հոլովել յոյնակի. զգացում-զգաց՛մունք, զգաց՛մունքներ, հարց՛մունք, հարց՛մունքներ, վար՛մունք, վար՛մունքներ: Ահաւասիկ մի օրինակ այսպիսի հոլովման:

	Եզակի	Յոգնակի
Ուղ. Հայց.	Մտածմունք	Մտածմունքներ
Սեռ. Տրէ.	Մտածմունքի	Մտածմունքների
Բացառէն.	Մտածմունքից	Մտածմունքներից
Գործիքէն.	Մտածմունքով	Մտածմունքներով

Ընկերութեան բառի պէս հոլովում են բոլոր ունենալ վերջացած գոյականները, որոնց սեռականը և մանաւանդ բացառականը, գործիականն ու ներգոյականը դրած են ածվում նոյնպէս եօ երկբարբառը ե փոխուելով. տէրութենէ, տէրութենից, տէրութենով, տէրութենում, տէրութեններէ, տէրութեններից: Բայց այս ձևերը խորթ ու անսովոր են այժմ:

Յոթանասուն, հարիւր և սոցա նման մարդկանց յատուկ անունները ևս հոլովման վրայ են հոլովում. յոթանասնի գիրքը. հարիւրյոտի գիրքը:—Իսկ եկեղեցական մտքով ասում են յոթանասնից օրը. հարիւրյոտան պօնը:

1, Հետևեալ նախադասութիւնների մէջ գոյականները գրէք պէտք եղած հոլովով ու թուով:

Հին ժամանակ Անի քաղաքը նշանաւոր էր իր ճեմարանի և գիտնականներով: Այս քաղաքի փառաւոր մատենադարանները պարծանք են հանապարհորդներին:—Գարուն ու աշուն օրերը զուարճալի են:—Հները արևի և լուսնի խաւարում վրայ ծուռ կարծիքներ ունէին,—Տիգրան Բ վաղարշակի ծոռ որդին է:—Պարսիկները ուրացող Վասակի յետ ու ող (յդ.) կապելով բանդ գրին, Այս նախադասութեան մէջ պատճառ եղաւ Հայոց նահապետը Բաբելոնից ծով տեղով գաղթեցաւ Հայաստան:—Աշոտ Ա-ի օծում հանդէսը կատարուեցաւ 885 թուականին:—Հայոց տէրութեան չորս հարստութեան մէջ ամենից նշանաւորն է Արշակունեաց հարստութիւնը իր մեծութեան, ընդարձակութեան և աշխարհակալութեան:—Արարատը Ամասիա նահապետի անուն կոչվում է Մասիս: Այս վերջին անուն ծագումը մի ոմանք ուրիշ կերպով են մեկնում.—Հայրենասիրութեան ոգեորմը շատ բնական է մարդուս:—Ընդարձակութեան լսեցէք, որ կարդացած պատասխանել իմ հարցում (յդ.):—Ինչով է զանազանվում լուսաւորեալ մարդը տգէտից, եթէ ոչ ուսումն և դիտութեան:

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ գոյականներով և հոլովական վերջաւորութիւնների տակ գիծ քաշեցէք:

Ցուկ—մուկ—փուռ—գառ—լեռ—նուռ—ուսում—օծում—խոստումնք—վարմունք—մտածմունք—կարդացմունք—առաքինութիւն—հեղութիւն—տէրութիւն—պաշտպանութիւն:

§ 81. Ժամանակ ցոյց տուող գոյականների հոլովումը:

	Եզակի	Յոգնակի
Ուղ. Հայց.	Օր	Օրեր
Սեռ. Տրէ.	Օրուան, օրուայ	Օրերի
Բացառէն	Օրուանից	Օրերից
Գործիքէն	Օրով	Օրերով
Ներգոյէն	Օրում	Օրերում

Ժամանակ ցոյց տուող բառերը հոլովում են երրորդ հոլովման վրայ, վորը ինչ փոփոխութեամբ, այսինքն սեռ. ուսանկամուայ, բացառ. ուսանկից. ունեք նաև առաջին կանոնաւոր հոլովման պէս: Այսպէս անկանիր գործ է ածվում առանձին, շաբաթի և շաբաթուան, կէսօրի և կէսօրուան, գիշերից և գիշերուանից: Իսկ յոգնակին բոլորովին կանոնաւոր է:

Ա. Հասարակ անուն վերջաւորութեամբ վարուողները ա-ծականի զօրութիւն ունին. ինչպէս. Ա[illegible] շոքը (փոխանակ «[illegible]» շոքը). Գնչերուհի անձրև. այս պարագան առաւտութիւնը:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ գոյականներով և հոլովական վերջաւորութիւնների տակ դիծ քաշեցէք.

Ձմեռ—ամառ—օր—գիշեր—ցերեկ—տարի—ամիս—շաբաթ—ժամ առաւօտ—իրիկուն—կէսօր—կէս գիշեր.

§ 82. Ա.զդակցութիւն ցոյց տուող բառերի հոլովումը.

	Եզակի		Յոգնակի	
Ո. Հ.	Հայր	Քոյր	Հայրեր	Քոյրեր
Ս. Տ.	Հօր	Քրոջ	Հայրերի	Քոյրերի
Բ-ո.	Հօրից	Քրոջից	Հայրերից	Քոյրերից
Գ-ր-ծ.	Հօրով	Քրոջով	Հայրերով*	Քոյրերով

Ազգակցութիւն ցոյց տուող գոյականների սեռականը ըստ մեծի մասին անկանոն է լինում—օր կամ ոջ, որոնցից կազմ-վում են բացառական և գործիական հոլովները: Յոգնակին կա-նոնաւոր է:

* Հայրերով, քոյրերով և մանաւանդ հօրով, քրոջով, գործիականները շատ չեն գործ ածվում, այլ ասվում է հօր հետ, քրոջ հետ: Առհասա-րակ շնչաւոր առարկաների գործիականի համար հետևեալը նկատելու է: Եթէ գործողութիւնը շնչաւոր առարկայի ձեռով կամ միջնորդութեամբ է կատարվում, բուն գործիական է դրվում. իսկ եթէ շնչաւոր առար-կան գործողութեան մասնակից է, այն ժամանակ հետ նախա-դրութեամբ սեռական է վարվում ինչպէս. Ցուվսէփ իր եղբայրներէ հետ ըսպիտաճավ էր խօսում: Ա.յսպէս դարձեալ չէ՛ (այսինքն չէ նպաստ) վազ տալ և չէ՛ հետ վազ տալ:—Բայց ընտանեկան լեզուի մէջ գործա-ծական է հօրով մօրով ասլիս.—փոխանակ հօրէ հետ, մօրէ հետ ասլիս:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ գոյական ա-

նուններով, և հոլովական վերջաւորութիւնների տակ դիծ քաշեցէք.

Հայր—մայր-քոյր—եղբայր-կին—տէր-անէր—սկեսուր—հօրեղբայր մօրեղբայր—հօրաքոյր—մօրաքոյր—նախահայր—կնքահայր—կնքամայր-տանտէր—տանտիկին-տալ—ընկեր.

§ 83. Բաղադրեալ գոյականների հոլովումը.

	Եզակի	
Ո. Հ.	Հաց ու ջուր	Ողբ ու լաց
Ս. Տ.	Հացի ու ջրի	Ողբ ու լացի
Բ-ո.	Հացից ու ջրից	Ողբ ու լացից
Գ-ր-ծ.	Հացով ու ջրով	Ողբ ու լացով.

Երկու կամ մօտիկ նշանակութիւն ունեցող (ըստ մեծի մասին միավանկ) գոյականները ո՛ շաղկապով կազմուած են բա-ղադրեալ գոյականներ, որոնք եթէ իրրև առանձին բառեր նը-կատուին, կարող են երկուսն էլ հոլովվել, իսկ եթէ իրրև մէկ բառ ընդունուին՝ միայն վերջինը, որ աւելի սովորական է: Ա.յս տեսակ բառերը ընդհանրապէս յոգնակի չեն գործածվում, այլ յոգնականի մտքով եզակի են վարվում. ինչպէս. Ականջ դիր քո հօր խօսք ու խրատին (փոխանակ խօսքերին ու խրատներին):

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ բաղադրեալ գո-յականներով, փոխելով երկու բառն էլ, կամ միայն վերջինը, նայե-լով թէ որ ձևը յարմար է.

Սուգ ու լաց—լաց ու կոծ—աղջ ու տակ—խօսք ու արօր—լուծ ու կամ—օր ու գիշեր—չափ ու սահման—հարց ու պատասխան—փող ու բաժինք—դուստր ու փեսայ.

§ 84. Յատուկ անունների հոլովումը.

Յատուկ անունները առ հասարակ հոլովվում են առաջին հոլովման պէս: Բայց կան յատուկ անուններ, որոնց մի քանի

Հոլովները գրաբար ձևով են լինում: Սորանով մեկնվում են այն անկանոն ձևերը, որ երևում են երբեմն հասարակ գոյականների և գլխաւորապես անձերի անունների մէջ:

1. Մարդկանց և քաղաքների յատուկ անունները հոլովում են առաջին հոլովման վրայ. ինչպէս. Դրիգորէ, Յովհաննէսէն, Սմբատէց, Թիֆլիսէց, Էջմիածնո՜ւմ:

Բայց հայ պատմական անունները սովորութիւն է եղել հին ձևով էլ հոլովել, այսինքն ոյ սեռականով, նոյնպէս և մի քանի ծանօթ քաղաքների անունները ոյ և ո սեռականով. այսպէս.

	Եզակի		
Ո. Հ.	Տրդատ	Երևան	Թաւրիզ
Ս. Տ.	Տրդատոյ*	Երևանոյ**	Թաւրիզո՜
Բտ.	Տրդատէց	Երևանէց	Թաւրիզո՜ց
Գործ.	Տրդատով	Երևանով	Թաւրիզով
Ներգ.	—	Երևանո՜ւմ	Թաւրիզո՜ւմ

* Հայցականը սովորաբար տրականի պէս է լինում (տես § 87):

** Գաւառական բարբառներում բացառականը սեռականի պէս է լինում հին ձևով. Երևանոյ, Աշտարակոյ է գալի, այսինքն Երևանէց, Աշտարակէց:

2. Այգերի յատուկ անունները, բաց ի կանոնաւոր հոլովումից, յոգնականում ունին և մի անկանոն հոլովում, ուղղականի և հայցականի համար ⁎, իսկ սեռ. և տր. հոլոմների համար ոց, ից, ոց վերջաւորութիւնները: Ահաւասիկ երեքից էլ մէկ մէկ օրինակ.

	Յոգնակի		
Ո. Հ.	Յոյնք (Յոյներ)	Հայ⁎	Հրէայ⁎
Ս. Տ.	Յունաց	Հայոց	Հրէից

Բտ.	Յոյներէց	Հայերէց	Հրէաներէց
Գործ.	Յոյներով	Հայերով	Հրէաներով

Հասարակ գոյականներից Յոյն բառի պէս հոլովում է Ծնողք, Ծնողաց. իսկ Հայ բառի պէս՝ տղայ (տղոց), երբեմն նաև երեխայք երեխայոց:

3. Յերկու հայրենական յատուկ անունները յոգնակի ուղղական հոլովում ունին այս վերջաւորութիւնները. Եանք, ուներ (ոյք, եցիք), սեռ. և տր. հոլոմներում՝ Եանց, Եաց, ցոյց. ինչպէս.

		Յոգնակի		
Ուղ.	Մամիկոնեան⁎	Արշակունի⁎	Կարնեցի⁎
Ս. Տ.	Մամիկոնէանց	Արշակունեաց	Կարնեցոց

Հասարակ գոյականներից Մամիկոնեան բառի պէս հոլովում են՝ մարդ, կին, աղջիկ, երբեմն և եղեալ բառերի յոգնակին. մարդիկ. մարդկանց, մարդկանցից. կանայք, կանանց, կանանցից, աղջկանց, երեխանոցով ⁎:

Արշակունի բառի պէս հոլովում են՝ ընտանիք, ընտանեաց, նախնիք, նախնեաց, հայրենիք, հայրենեաց:

Կաթնեցիք բառի պէս հոլովում են բոլոր ցի վերջացած յատուկ և հասարակ գոյականները. քաղաքացիք, քաղաքացոց, տանտոյց, երկրացոց, սրևանցոց, Ագուլեցոց: Նոյնպէս և որդիք, որդոց:

⁎ Գաւառական բարբառներում այս կարգի բառերը ուղղականում ընդունում են եք կամ ե⁎ վերջաւորութիւնը, իսկ սեռականում եանց կամ եաց. մարդկեք, մարդկեանց, աղջկեք, աղջկեանց, երեխեք, երեխեանց, տղեքանց և այլն:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ յատուկ ուհասարակ գոյականներով, և հոլովական վերջաւորութիւնների տակ գիծ քաշեցէք.

Արամ—Տիգրան—Սահակ—Մեսրոպ—Արտաշատ-Վաղարշապատ-Թիֆլիս—Ռուս—Տաճիկ—տղայք—երեխայք—մարդիկ—կանայք—Աբծրունիք—Նախնիք—դաշտեցիք—վանեցիք—որդիք։

§ 85 Կորուսմամբ եւ փոփոխմամբ հոլովում։

Ձայնաւորների կորուսման և փոփոխման կանոնը, գոյականների հոլովման մէջ մի քանի խոտորումներ ունի։

1. **Ի** ձայնաւորը եզականում միշտ դուրս է ընկնում, իսկ յոգնականում միայն միավանկ բառերի մէջ, իսկ բազմավանկների մէջ սովորաբար պահվում է. ինչպէս.

	Եզակի		Յոգնակի	
Ո. Հ.	Սէրտ	Անկողին	Ս'րտեր	Անկողիններ
Ս. Տ.	Ս'րտի	Անկողնի	Ս'րտերի	Անկողինների
Բց.	Ս'րտից	Անկողնից	Ս'րտերից	Անկողիններից
Գործ.	Ս'րտով	Անկողնով	Ս'րտերով	Անկողիններով
Նեբէ.	Ս'րտում	Անկողնում	Ս'րտերում	Անկողիններում

Խոտորում են է վերջացած միավանկները. ձի, ձիու, Թիւով. որոնց յոգնակին անկանոն ձևով լինում է՝ ձիեր, կամ ձիաններ, ձիանեղից, Թիանեղով։

2. **Ո** երկբարբառը միավանկ բառերի մէջ միշտ դուրս է ընկնում. բազմավանկների մէջ ազատ է պահել կամ չպահել եզակիում, իսկ յոգնակիում գրեթէ միշտ պահվում է։ Ջորօրինակ.

	Եզակի		Յոգնակի	
Ո. Հ.	Ջուր	Թուչուն	Ջ'րեր	Թուչուններ
Ս. Տ.	Ջ'րի	Թուչ'նի, Թուչունի	Ջ'րերի	Թուչունների
Բց.	Ջ'րից	Թուչ'նից, Թուչունից	Ջ'րերից	Թուչուններից

Գործ.	Ջ'րով	Թուչ'նով, Թուչունով	Ջ'րերով	Թուչուններով
Նեբէ.	Ջ'րում	Թուչ'նում	Ջ'րերում	Թուչուններում

Խոտորում են ա վերջացած բառերը. ինչպէս՝ լեզու, լեզուի, մեղու. որոնցից միավանկների յոգնակին անկանոն է. ձու, ձուանեղից, լու, լուանեղով։

3. **Ա** և այ մի քանի գործածական բառերում դուրս են ընկնում, և այն միայն եզականում. այսպէս են՝

	Եզակի		Յոգնակի	
Ո. Հ.	Բերան	Փեսայ	Բերաններ	Փեսաներ*
Ս. Տ.	Բեր'նի	Փես'ի	Բերանների	Փեսաների
Բց.	Բեր'նից	Փեսա'ից	Բերաններից	Փեսաներից
Գործ.	Բեր'նով	Փեսա'ով	Բերաններով	Փեսաներով
Նեբէ.	Բեր'նում	Փեսա'ում	Բերաններում	Փեսաներում

* Այ երկբարբառը պահվում է յոգնականում միայն գրաբար հոլովման մէջ. պայծ, եղեայծ։

4. **Իա** երկբարբառը եզականում վոխվում է ա, իսկ յոգնականում անփոփոխ է մնում. բայլ Թիւ, Թուեր։

	Եզակի	Յոգնակի
Ո. Հ.	Հաչիա	Հաչիաներ
Ս. Տ.	Հաչուի	Հաչիաների
Բց.	Հաչուից	Հաչիաներից
Գործ.	Հաչուով	Հաչիաներով
Նեբէ.	Հաչում*	Հաչիաներում

* Եզակի ներգոյականում սովորութիւն է եղել գրել վուի վոխանակ ա, երկբարբառը չկրճնելու համար։

5. **Էա, եա, ոյ** առ հասարակ անփոփոխ են մնում. հանապէա, հանապէայ, հանապէաներ. ակնեայ, ակնեայի, ակնեայներ. վարպետոյ, վարպետոյի, վարպետոյներ։ Բայց սէր, յոյս և նոյս միավանկները սո-

վորութիւն է եղել գրաբարի ձևով, այսինքն փոփոխմամբ հոլովել. սիրոյ, սիրոյ. յուսոյ, յուսոյ. լուսոյ, լուսոյ: Ա յսպէս երբեմն և կ՚ասէ, կ՚ուսոյ (բաժակ):

Դրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւեալ դոյականներով. Գիրք—միս—գետին—երկինք—մարմին—թուղթ—պատուղ—օդուտ կերակուր—ժողովուրդ—մեղու—քաղաք—Աստուած—տղայ—երեխայ—թիւ—հովիւ—հանդէս—ծէս—վայրկեան—խնջոյք—յոյս—լոյս—սէր:

§ 86. Դոյական անունների յօդը.

Յօդ ասվում է այն տառը կամ մասնիկը, որ դոյական անուան վրայ դրուելով՝ որոշ նշանակութիւն է տալիս նորան և ընդհանուր միտքը մասնաւորի է ամիսւում: Ա յսպէս ընդհանուր միտք կ՚ունենան դոյականները, եթէ ասենք՝ ես գիրք եմ կարդում. Քայրս սովոկ ունի, որովհետև չէ խմացվում թէ որ գրքի կամ սոխակի վրայ է խօսքը, կամ կարող է հասկացուիլ թէ ես գիրք եմ կարդում, քոյրս սոխակներ ունի: Բայց միևնոյն դոյականների միտքը որոշվում և մասնաւորի է ամիսւում, եթէ ասենք՝ ես քո տուած գիրքն եմ կարդում, Քոյրս մի սոխակ ունի:

Երկու տեսակ յօդ կայ. որոշեալ յօդ, որ դոյականից յետոյ է դրվում. և անորոշ յօդ, որ դոյականից առաջ է դրվում:

Որոշեալ յօդն երկու է՝ ն և ը. առաջինը ձայնաւոր տառով վերջացած բառերի վրայ է դրվում, երկրորդը բաղաձայնով վերջացածների վրայ. ինչպէս. ձին, բաղէն, երեխան *. ծովը, տունը, անտառը:

Որոշեալ յօդը գործ է ածվում 1) երբ խօսքը ծանօթ ու յայտնի առարկայի վրայ է. զորօրինակ. Հայոց լեզուն շատ հին է: Ա յստեղ խօսքը ծանօթ (Հայոց) լեզուի վրայ է, որ անկա-

ժելի է շփոթել ուրիշ լեզուի հետ: 2) երբ հարկ է ցոյց է տալ թէ առարկան մի առանձին ցեղի կամ դասի ներկայացուցիչ է, ինչպէս. Հայը աշխարհիս ամէն կողմերը ցրուած է. այսինքն՝ Հայ ազգը աւ հասարակ, բոլոր Հայերը ցրուած են:

Անորոշ յօդն է ն, որ գործ է ածվում այն ժամանակ երբ հարկ է առարկայի վրայ եղած ընդհանուր հասկացողութիւնը մասնաւորի ատիպիլ. զորօրինակ. Մի խոտալացի գտաւ Նոր Աշխարհը և մի գերմանացի տպագրութեան արհեստը. — այսինքն խոտալ և մի գերմանացի տպագրութեան արհեստը. Մի անհատ այն ազգից որ կոչվում է խոտալական, գերմանական ազգ:

Սորանից պարզ երևում է որ ն և ը (ը) յօդերը միևնոյն ժամանակ չեն կարող գործ դրուիլ, կամ որոշեալ բառը անյօդ թողնել. չէ կարելի ասել Մի մշակը կամ Երեկուան մշակ եկաւ, այլ Ն մշակ, երեկուան մշակը:

* Ն յօդը բաղաձայնով վերջացած բառի վրայ է, է դրվում, երբ յաջորդ բառը ձայնաւորով է սկսվում. զորօրինակ. Ա յն մարդն է գտաւ վութեան արժանի, որ իր յոյսն ուրիշի վրայ չէ դնում: Ա յսպիսի դէպքերում կարող է ը յօդ գործ դրուիլ, եթէ հարկ լինի խօսքին աւելի որոշութիւն տալ, կամ երբ յօդ ունեցող բառը յաջորդ բառի հետ կից չէ: Ուստի սխալ չի լինիլ: եթէ ասենք՝ Ա յն մարդը է զուլութեան արժանի, որ իր յոյսը ուրիշների վրայ չէ դնում: Նոյնպէս՝ Բարեկամները բաժանուեցան ու գնացին, որը այ որը ճամ:

§ 87. Որոշեալ յօդով հոլովում.

	Եզակի	Յոգնակի
Ո. Հ.	Պարտէզը	Պարտէզները
Սեռ.	Պարտէզի	Պարտէզների
Տքէհն.	Պարտէզին	Պարտէզներին
Բացա.	Պարտէզից	Պարտէզներից
Գործ.	Պարտէզով	Պարտէզներով
Ներփոյ.	Պարտէզում	Պարտէզներում

Ողղ.	Որսորդը	Որսորդները
Սեռ.	Որսորդի	Որսորդների
Ծր. Հյց.	Որսորդին	Որսորդներին
Բաց.	Որսորդից	Որսորդներից
Գործ.	Որսորդով	Որսորդներով

Որոշեալ յօդով հոլովման վրայ մի քանի հարկաւոր գիտելիք կայ։

1. **Սեռական հոլովը երբէք որոշեալ յօդ չէ ընդունում.** ինչպէս. պարտէզի դուռը. բրուտի հրացանը։

2. **Մի՛ւս հոլովները առանց բացառութեան կարող են յօդ առնել.** միայն գրաւոր լեզուի մէջ բացառական գործիական ու ներգ. հոլովները աւելի անյօդ են վարվում քան թէ յօդով. զգօրինակ. իմ բարեկամը մարդասիրական ընկերութիւնից օգնութիւն ստացաւ։ Հողագործները կերակրվում են դաշտերի բերքով և ծառերի պտուղներով։ Աշակերտները խաղում են ուսումնարանի բակում։

Ուրիշ են դերանունական յօդերը, որ ամէն հոլովների վրայ դրվում են անխտիր, ինչպէս որ յետոյ կը տեսնենք։

3. **Յատուկ անունները իրանք իրանցից որոշուած լինելով՝ միշտ որոշեալ յօդ են պահանջում.** Գրիգորը գնաց։ Մարիամին պատահեցանք։ Արագածը գեղեցիկ սար է։ Բայց գրաբար ձևով հոլովող բառերը առ հասարակ որոշեալ յօդ չեն ընդունում. վաղարշակը նոր օրէնքներ տուեց Հայոց (և ոչ Հայոցը)։ Իշխանի մահը յայտնեցին փողոցում։ Աբրահամը յօժար էր իր միակ որդուն նուիրել Աստուծոյ (ԽՄ Աստուծուն)

4. **Բաղադրեալ բառերի մէջ (§ 83) անորոշ յօդ շատ անգամ միայն առաջինի վրայ է դրվում, և որոշեալ յօդ վերջինի վրայ։** Մէկ տղայ ու աղջիկ ունի որ աշխարհի հետ չի փոխիլ։

խեղճի տղը ուշացաւ։ Գնալ գալը կտրեց մեր տանից։ (Վերջին օրինակի մէջ ու շաղկապը դուրս է ընկած)։

5. **Անձի անունները որոշեալ յօդով հոլովելիս՝ հայցականը սրականի հետ նոյնանում է։** Այսպէս ասում են՝ Հայրը սիրում է որդուն։ Կիրակոսը տեսաւ Մարիամին. ու, եթէ ասէինք՝ Կիրակոսը տեսաւ Մարիամը, չէր իմացուիլ թէ կնքահայն է տեսնողը, թէ Մարիամը։

---

1. Հետևեալ նախադասութիւնների մէջ նօտարագիր սխալները ուղղեցէք։

Վարդ ու հիւթ դեղեցիկ ծաղիկներն են։—Ոսկի կրծում է մարդուս ձեռ ու ոտքը։—Երկրի չեմ կարդ է։—Յունաստան գեղարուեստների հայրենիք է։—Մամսէս խորենացի Հայոց պատմութեան հայր է։—Աչքերիցն ջրեր տալիս են փնթիթոյր։—Յուրդ վնասակար է քնքոյշ բոյսերին։—Աշխաղղ արիթմետիկան նշան է։—Պետրոս տեսաւ Յովհաբը։—Նշմարում ես գրքերը։—Բժիշկ չկարողացաւ հիւանդը բժշկել։—Ես ունիմ մ տոյբ և երկու եղբայրը։—Տուն հրաւիրեցիք բարեկամներդ։—Ուսուցիչը սիրում է աշխատասէր աշակերտները և աշխատասիրները։—Պատուէր նման են վտրներին, շներին աղաւնիներին ու փայլերին։ Լոնդոն աւելի մեծ է քան թէ Փարիզ, բայց Փարիզ աւելի գեղեցիկ է։—Թիֆլիս կովկասու գլխաւոր տղայ է։—Մի երեխան պատռւում էր ի պարեհորդ և ծաղիկներն էր քաղում։

2. Գրեցէք ձեղանից մի քանի նախադասութիւններ և գտէք դրէք որոշեալ և անորոշ յօդերը։

Ե. Ածական անունների կազմութիւնը.

§ 88. Ածականների արմատները.

Արմատական ածական անունները, ինչպէս և գոյականները,

շատ սակաւ են. ինչպէս. մէծ, ծոռը, խոր, ծոյլ, ոռ: Մնացած ածականների մեծ մասը կազմվում են

1. Հայերի արմատներից. շրջուն, վախկոտ, ապուշ, ընկուճակ:

2. Գոյական անուններից. նախանձոտ, եղբայրական, փայլուն, խելացի:

3. Ածական անուններից. փոքրիկ, հպարտ, կոմպլագոյն:

4. Մակբայներից. այծմեան, երեկուան, հեռաւոր:

§ 89. Որակական ածականների ածանցական վերջաւորութիւնները.

1. Որակական ածականները, եթէ հասարակ որպիսութիւն են ցոյց տալիս, կազմվում են հայերի արմատներից և գոյական անուններից ուն, ոտ, կեն մասնիկներով. գիտուն զօրաւոր, բանական:

Ուն և ոտ ածանիկներով կազմուածներից գոյական են այժմ ընդունակ, ջնջոտ, ընթացող:

2. Որակական ածականները, եթէ որպիսութեան աստիճան են ցոյց տալիս, կազմվում են

1) Հայերի արմատներից ան, ուկ, կեն, կոտ մասնիկներով. հարբեցող, քնասէր, մրսկան, ամաչկոտ:

2. Գոյական անուններից ապ, եղ, ական մասնիկներով. կրակոտ, զօրեղ, պտղաբեր:

3. Որակական ածականները, եթէ փոքրութիւն և փաղաքշանք են ցոյց տալիս, կազմվում են իկ մասնիկով. փոքրիկ, հնդիկ, քաղցրիկ:

---

1. Հետևեալ բայերից ու գոյականներից կազմեցէք հասարակ որպիսութիւն ցոյց տուող ածականներ.

Շարժել—աճել—գնալ—սահել—փայլել—սիրել—լռասել—բաղդ—նշան—փառք—թոյն—ահ—տաղանդ—հանճար—պատիւ—(սուր և նոյն մասն.)—բան—ուսում.

2. Հետևեալ գոյականներից ու բայերից որպիսութեան աստիճան ցոյց տուող ածականներ կազմեցէք.

Աճել—կչկչալ—քնել—խրտնել—կտրել—լալ—մրսել—վախենալ—(նոյն և նոյ մասն.)—երկնչել—պարծենալ—մոռանալ—ամաչել—եղ—արիւն-միս—սիրտ—աւազ—ճահիճ—ժայռ—քար—ժանդ—հիւանդ—ոյժ զօր—ահ—համ—հանճար—չահ—օգուտ—խոտ—պտուղ—ծաղիկ—կանաչ:

§ 90. Յարաբերական ածականների ածանցական վերջաւորութիւնները.

1. Յարաբերական ածականները, եթէ ազգանուն են ցոյց տալիս, կազմվում են հօր կամ ուրիշ յատուկ անունից, նոյնպէս և հասարակ անուններից և մինչև ածականներից եան, եանց վերջաւորութիւններով. Տիգրան Երուանդեան, Գրիգոր Հայրապետեան, Ստեփան Կապուտիկեան:

Այս եան, եանց գրոց եզ. և յգ. սեռ. վերջաւորութիւններ են:

2. Յարաբերական ածականները, եթէ ցոյց են տալիս թէ մեկ բան ունէ՛ն է պատկանում, կամ ինչ անձի և իրի է վերաբերում, կազմվում են յատուկ և հասարակ գոյականներից կան, այն, ուր, անի մասնիկներով. Հայկական, աստուածային, մարմնաւոր. երկաթ մանանեխ (եղան). մեծ գլխանի (երեխայ):

Այն մասնիկով կազմուած ածականները իրանցից առաջ միշտ մի թուական անուն կամ ածական են պահանջում: Գլխաւոր կայ երեսուն սուր (երկու բերնանի սուր):

3. Յարաբերական ածականները, եթէ ցոյց են տալիս թէ մեկ բան ինչ նիւթից է շինուած, կազմվում են գոյական անուններից ի, ե (գրբր. եայ), եղէն մասնիկներով. երկաթի, պղնձէ, հողեղէն:

Եղէն մասնիկով աշխարհաբար լեզուի մէջ կազմւում են շատ գոյական անուններ. կերակրեղէն, ձկնեղէն, կաթնեղէն, մսեղէն, հաւեղէն և այլն:

4. Յարաբերական ածականները, եթէ ցոյց են տալիս թէ մէկ բան ո՛ր տեղի կամ ժամանակի է վերաբերում, կազմվում են գոյական անուններից ու մակբայներից եան, եան (ուայ) այն, ին մասնիկներով. արևմտեան, վաղուան, երկնային, վերջին:

---

1. Հետևեալ գոյականներից կազմեցէք պատկանելութիւն ցոյց տուող առարկաներ:

Հայր—մայր—որդի—բարեկամ—ընկեր—քրիստոնեայ—հեթանոս յոյն—պարսիկ—Ֆրանսիա-Անգլիա—Գերմանիա-Հոգի—մարմին—միտք-գիր—երկինք—երկիր—երկու բերան (թուր)—մեծ պոչ (ձի)—վեց թև (հրեշտակ)—երկու երես (մարդ)—հարիւր գլուխ (հրէշ):

2. Հետևեալ գոյականներից կազմեցէք նիւթ ցոյց տուող ածականներ:

Երկաթ—պղինձ—ոսկի—ապակի—փայտ—բուրդ—մազ—փուշ—ծաղիկ—կաւ—հող—հուր—բոց:

3. Հետևեալ գոյականներից և մակբայներից կազմեցէք տեղ ու ժամանակ ցոյց տուող ածականներ:

Արևելք—արևմուտք—հիւսիս—հարաւ—գարուն—աշուն—ձմեռ—ամառ—երկինք—երկիր—դաշտ—լեռ—անտառ—տուն—երէկ—այսօր—վաղը—էգուց—հիմայ—առաջ—յետ—վերջ—վերև—ներքև:

§ 91. Դերբայների ածանցական վերջաւորութիւնները:

1. Ներկայ դերբայն կազմվում է 1) ող մասնիկով պարզ արմատից, եթէ Ա. Ա-Բ վերջաւորութեան բայ է, և 2) անցեալ կատարեալից, եթէ Գ և Դ վերջաւորութեան բայ է. ինչպէս. սպասել-սպասող, խօսիլ-խօսող, գնալ, գնացի-գնացող, խոստանալ, խոստացայ-խոստացող:

Եւ և իլ վերջացած բայերի մէջ ն, չ, ի եկամուտ տառերը պահվում են. գտնել-գտնող, փախչիլ-փախչող, կորցնել կոր-ցնող:

2. Անցեալ դերբայն կազմվում է եալ և ած մասնիկներով 1) Ա և Բ վերջաւորութեան բայերում պարզ արմատից. 2) Գ և Դ վերջաւորութեան բայերում կատարեալից. ազատել, ազատած. բնակիլ բնակէլ*-բնակած.—խաղալ, խաղացի-խաղացեալ, խաղացած. հասկանալ, հասկացայ-հասկացած:—

Եկամուտ տառերը դուրս են ընկնում. տեսնել, տեսէլ, տեսած. կորչիլ-կորեալ, կորած. զարմացնել-զարմացեալ, զարմացած:

3. Ապառնի դերբայն կազմվում է ու մասնիկը աւելացնելով առնրող դերբայի վրայ. գովել-գովելու, աշխատել—աշխատելու, ճաշակ-ճաշակու, լուանալ-լուանալու. մտնել-մտնելու. թռչիլ-թռչելու:

* Բ վերջաւորութեան բայերում է ձայնաւորը փոխվում է ի:

Հետևեալ բայերից կազմեցէք ներկայ, անցեալ և ապառնի դերբայներ:

Լսել—հանել—կանչել—գովել—բռնել—ուտել—խմել—աշխատիլ—նստիլ—նայիլ—հասարիլ—բնակիլ—խաղալ—ճոպալ—գնալ—խղճալ—հազալ—գողանալ—իմանալ—մոռանալ—տեսնիլ—դտնիլ—հասնիլ—հագնիլ—մեռնիլ—կպչիլ—թռչիլ—պպչիլ—մնծացնիլ—չորացնիլ—սովորցնիլ վերցնել—մոռացնել:

§ 92. Բացառական մասնիկներ:

Բացառական մասնիկները դրուելով ածական անունների վրայ հակառակ նշանակութիւն են տալիս նոցա և շատ անգամ ածականից գոյական են կազմում:

Բացառական մասնիկներն են

1. Ան. ան՛միտ, ան՛խոհեմ, ան՛հոգ (ան՛հոգութիւն)։
2. Ապ. ապո՛ւշ, ապե՛րախտ, (ապե՛րախտութիւն)։
3. Տ. ոգէտ, պ՛հաս, պ՛մարդի (պ՛մարդութիւն)։
4. Դժ. բժգո՛հ, բժբաղդ (բժբաղդութիւն)։

Հետևեալ բառերից բացասական ածականներ կազմեցէք, ածականներից էլ, եթէ կարելի է, (բացասական) գոյականներ։

ա) ան, հոգի—մարմին—սիրտ—հայր—մայր—զաւակ—պատուէր—արժանի—վախ—երկիւղ—մեղք—օրէնք—կարգ—չարժէք-չափել—թաղամել—ընտանի—բ) ող, արդիւնք—օրէնք— գ) ող, կարող—գեղեցիկ—ձև։

§ 93. Բարդ ածականներ։

Ածական անուանների բարդութեան համար երկու գլխաւոր կանոն կայ։

1. Ածականը գոյականի հետ կամ երկու գոյական իրարու հետ բարդուելով մի ածական են կազմում, որ նշանակում է ունեցող. ինչպէս. քաղեցիկ (բարի սիրտ ունեցող), ան-ճաճանչ (առիւծի սիրտ ունեցող)։

2. Ածական անունը բայի արմատի հետ բարդուելով մի ածական է կազմում, ածականը մակրայի միտք է ստանում, իսկ բայի արմատը դերբայի միտք. ոտագնաց (արագ շարժող)։

Հետևեալ բառերից բարդ ածականներ կազմեցէք

Արի, սիրտ—թոյլ, սիրտ—վեհ, սիրտ—հաստ, գլուխ—բաց, բերան—քաղցր, ձայն—թերի, հաւատ—սուր, միտք—բարի, միտք—բարի հոգի—վեհ, փառք—քարձր, հասակ—օձ, լեզու—չատ, խօսիլ—քաղցր, խօսիլ—դանդաղ, չարժել—արագ, սահել—թանձր, հոսել—հեռու, տեսնել—սուր, տեսնել։

§ 94. Բաղդատական եւ վերադրական ածականների կազմութիւնը։

Որակական ածականների համեմատութեան աստիճանների կազմութեան վրայ հետևեալ դիտելիքները կան։

1. Դրական աստիճանը ածականի սկզբնական ու անփոփոխ ձևն է. ինչպէս. տիգրանը քաջ երեխայ է։ Ծիծեռնակը գեղեցիկ թռչուն է։

2. Բաղդատական աստիճանը կազմվում է դրականից առաջ դնելով -ել՛ւ մակբայը. ինչպէս. տիգրանը -ել՛ւ բարի է քան թէ Արշակը։ Ծիծեռնակը -ել՛ւ գեղեցիկ է քան թէ ձնձղուկը։

Բայց շատ անգամ բաղդատական աստիճանը վարվում է դրականի ձևով, և այն ժամանակ բաղդատուող առարկաներից միևնոյնը սովորաբար բացառական հոլովով է դրվում, իբրև ածականի լրացուցիչ. Ծիծեռնակը ձնձղուկից գեղեցիկ է։ Վիճենան փոքր է քեռից։

3 Գերադրական աստիճանը կազմվում է դրականի սկիզբը դնելով ամենա մասնիկը. Աստուած ամենաբարի է։ Կէտը ամենաձանր ձուկն է։ Կոլերբին ամենափոքր թռչունն է։

* Քիչ անգամ պատահում է գերադրական կազմել ի-ն մասնիկով, ուր որ ամենա մասնիկը անյարմար է. ինչպէս՝ Աստուած է ամենաբարի։ Նայել պատրիարք։

Գերադրականի տեղ էլ դրական ածականը վարվում է այլ և այլ սեռակացուցիչ բառերով. ինչպէս. Առիւծը շատ զօրաւոր գազան է։ Տօրք լուխանը սոսկալի տգեղ մարդ էր։ Շուշանը ջութակոնից երկչոտ աղջիկ է։

Այս երկու տեսակ ձևերը բացարձակ գերադրական են, որովհետև չեն ցոյց տալիս ուրիշների համեմատութեամբ ամենից աւելի զօրաւորը, կամ տգեղը։ Բայց կայ համեմատու-

թեամբ — գերադրական՝ էլ, որ կազմվում է դրականից առաջ դնելով ամենից բառը և ածականի կամ գոյականի վրայ դերանունական յոդ, այսպես՝ ամենից ընտիրը. ամենից հաւատարիմը. ամենից ստորը: Պէքինը աշխարհիս ամենից բազմամարդ քաղաքն է (այսինքն ամէն քաղաքներից աւելի բազմամարդ քաղաք):

Վերջապէս կայ մի տեսակ գերադրական էլ, որ կազմվում է դրական ածականից առաջ դնելով նոյն ածականի յոգնակի սեռական հոլովը իբր յատկացուցիչ. վեցերէն վաս. անպիտաններէն անպիտան. յիմարներէն յիմարը. գիշերաղներէն գիշերաղը. կամ հեգնական ձևով՝ խելօքներէն խելօքը: Եւ նմանութեամբ գոյականը ածականի տեղ՝ օչխերէն օձ (փոխանակ խոյամանկներէն խորամանկ):

Հետևեալ որակական ածականներից կազմեցէք բաղդատական և գերադրական աստիճաններ վերևը յիշուած ձևերով.

Ծեր—բաղդատ—դժբաղդ—օգտակար—զուարճալի—բարակ—հաստ—թանձր—բարձր—զօրաւոր—տկար—խեղճ—մաքուր—կեղտոտ—խիստ—հպարտ—աղքատ—կորուստ:

---

§ 95. Ածականների հոլովումը.

Ածականը միշտ իր գոյականից առաջ է դասվում և հոլովման մէջ անփոփոխ է մնում, թէ եզակի և թէ յոգնակի. զորօրինակ.

Եզակի		Յոգնակի	
Ո. հ.	Լայն հրապարակ	Լայն հրապարակներ	
Ս. տ.	Լայն հրապարակի	Լայն հրապարակների	
Բացա.	Լայն հրապարակից	Լայն հրապարակներից	

Գործիական.	Լայն հրապարակով	Լայն հրապարակներով
Ներգոյական.	Լայն հրապարակում	Լայն հրապարակներում

Նոյնպէս որոշեալ յօդը միայն գոյականի վրայ է դրվում, իսկ անորոշը ածականից նախադաս. այսպէս. Ազնիւ մարդը. գեղեցիկ խնձորները. սիրելի բարեկամներին. ի ծանր գործ. ի հաստ փայտով և այլն:

Բայց երբ ածականը մենակ է, յօդով կամ առանց յօդի, գոյականի զօրութիւն ունի և հոլովում է նայելով իր վերջաւորութեանը. այսպէս.

	Եզակի	Յոգնակի
Ո. հ.	Աղքատ	Աղքատներ
Ս. տ.	Աղքատի	Աղքատների
Բացա.	Աղքատից	Աղքատներից
Գործ.	Աղքատով	Աղքատներով
Ո–ց.	Ողորմելին	Ողորմելիքը
Սե.	Ողորմելու	Ողորմելիների
Տ. հ.	Ողորմելուն	Ողորմելիներին
Բացա.	Ողորմելուցը	Ողորմելիներիցը
Գործ.	Ողորմելովը	Ողորմելիներովը

Ածականը գոյականաբար վարվում է 1) երբ գոյականը մտքով է լրացվում, կամ մի անգամ յիշուելով միւս անգամ մտքով է լրացվում. զորօրինակ. Քաղաքակիրթ մարդը կամ քաղաքակիրթը ամէն բանով գանազանվում է անկիրթից: 2) Երբ առարկայի վրայ վերացական կերպով է խօսվում. ինչպէս. Պէտք է նախադասել օգտակարը վնասակարից. — այսինքն օգտակար բանը, կամ ինչոր օգտակար է, զուարճալի է:

Գոյականաբար վարուող ածականները հոլովում են և

բ հոլովման պէս (երրորդ հոլովման պէս հոլովող ածական չկայ։)

Բայց շատ անգամ անսովոր է լսել վերջացած ածականները բ հոլովման պէս հոլովել. այսպէս. գուարճալի, սիրելի ածականները հոլովում են գուարճալիի, գուարճալիից, սիրելիից և այլն, և ոչ գուարճալու, սիրելուց, որ շատ անգամ հոլոված անորոշ դերբայի հետ կարող է շփոթուիլ։

Կան ածականներ որոնք չեն կարող հոլովիլ. այսպէս են՝ բալի, լեռնագ, սառցին և այլն։

Հետևեալ նախադասութիւնների մէջ գոյականաբար վարուող ածականները պէտք եղած հոլովով ու թուով դրէք։

Աչխատասէր աշակերտը կը վարձատրուի, ծոյլ կը պատժուի։—Հարուստ պարտական են օգնել նեղճ։—Իմաստուն հետ քար կրի, չիմաց հետ փլաւ մի ուտիլ (առած)։—Խելօք մին (ասա), անխելք քանի հուզես (ու)։ Փոքր (բցռ.) սկսիր որ մեծ հանիս։—Կոյր չեն կարող տեսնել, խուլ չեն կարող մեղ գալ, համր չեն կարող խօսիլ։—Եվրոպացւոյ հոյլ և համր համար ուսումնարաններ կան։—Տգէղ սովորութիւն է գինովնան չհաւանիլ (յդ.)։—Գեղարուեստների մէջ ճշմարիտ գեղեցիկ է, սուտ ազեղ է։—Նեղնային աչքով ինք տեսնում, վնասակար մարդով ըմբռնում։—Սա ու սպիտակ մէջ մեծ տարբերութիւն կայ։—Աղնիւ պէտք է զանազանել սուտ (բցռ.), գեղեցիկը գէշից։

Զ. Թուական անունների կազմութիւնը.

96. Քանակական եւ դասական թուականներ.

Թուական անունները երկու զլխաւոր տեսակի են բաժանւում.

1. Քանակական	2. Դասական
1. Մէկ, մի	Առաջին, (մէկերորդ)
2. երկու	երկրորդ
3. երեք	երրորդ
4. Չորս	Չորրորդ
5. Հինգ	Հինգերորդ
6. Վեց	Վեցերորդ
7. Եօթը	Եօթներորդ
8. Ութ, ութը	Ութերորդ
9. Ինը	Իններորդ
10. Տասը	Տասներորդ
11. Տասնումէկ	Տասնումէկերորդ
12. Տասներկու	Տասներկուերորդ
13. Տասներեք	Տասներեքերորդ
14. Տասնուչորս	Տասնուչորսերորդ
15. Տասնուհինգ	Տասնուհինգերորդ
16. Տասնուվեց	Տասնուվեցերորդ
17. Տասնուեօթը	Տասնուեօթներորդ
18. Տասնութ	Տասնութերորդ
19. Տասնուինը	Տասնիններորդ
20. Քսան	Քսաներորդ
21. Քսանումէկ և այլն	Քսանումէկերորդ և այլն
30. Երեսուն	Երեսուներորդ (երեսներորդ)
40. Քառասուն	Քառասուներորդ
50. Յիսուն	Յիսուներորդ
60. Վաթսուն	Վաթսուներորդ
70. Եօթանասուն	Եօթանասուներորդ
80. Ութսուն	Ութսուներորդ
90. Իննսուն	Իննսուներորդ
100. Հարիւր	Հարիւրերորդ
101. Հարիւր մէկ և այլն	Հարիւրումէկերորդ

200. Երկու հարիւր	Երկու հարիւրերորդ
500. Հինգ հարիւր	Հինգ հարիւրերորդ
1000. Հազար	Հազարերորդ
1001. Հազարումէկ եայլն	Հազարումէկերորդ եայլն,
10000. Տասը հազար	Տասը հազարերորդ
100000. Հարիւր հազար	Հարիւր հազարերորդ
1000000. Միլիոն	Միլիոներորդ

1. Քանակական թուականները մէկ-ից մինչև տասը, նոյնպէս և տաս, հարիւր, հազար, միլիոն, սարդ են, տասնամէկից մինչև տասնինը բարդ. իսկ երեսուն, քառասուն, յիսուն եայլն թէպէտ իսկապէս բարդ են, այսինքն երեք տասը, հինգ տասը, բայց որովհետև երկու բառերը որոշ չեն երևում, կարող են ածանցեալ համարուիլ:

2. Դասական թուականները, բացի տասնէն, ածանցվում են քանակական թուականներից երորդ մասնիկով *. հինգերորդ, եօթներորդ, հարիւրերորդ: — Մէկերորդ գործ է ածվում միայն ուրիշ թուականի հետ. քսանումէկերորդ, ութսունումէկերորդ:

* Երկերորդ, երրորդ, չորրորդ ընդունում են որդ մասնիկ:

3. Քանակական թուականները ն յօդ և էլ մասնիկ ընդունելով կազմում են նոր ձևով թուականներ. երկուսն էլ չորսն էլ, տասն էլ, հազարն էլ եայլն, որ նշանակում է երկուսը միասին, հազարը միասին:

Գրբ. երկոքեան կամ երկոքէն, չորեքէն, երկուասանեքէն:

5. Քանակական թուականները նոյ մասնիկ ընդունելով կազմում են արժէք ու չափ ցոյց տուող անուններ. երկքանոց, հնգանոց, հարիւրանոց:

Հետևեալ թուանշանները տառերով գրեցէք և ցոյց տուէք ուղղագրութեան առանձնութիւնները:

1, 1-ին, 2. 2-րդ· 3. 3-րդ. 30. 30-րդ· 4. 4-րդ. 40. 40-րդ 5. 5-րդ. 50. 50-րդ· 6. 60-րդ. 7. 70-րդ· 8. 80-րդ. 9. 9-րդ. 90. 90-րդ 10. 15. 17. 18. 18-րդ. 19. 19-րդ·

§ 97. Թուական անունների հոլովումը.

Թուական անունները, իբրև հասարակ ածականներ, դոյականից առաջ են դասվում և անխոտոխ մնում. երկու մարդու. եօթը զինուորից. հարիւր հոգով. տասներորդ օրը:

Իսկ եթէ մենակ մնան, դոյականի զօրութիւն ունին և հոլովում են առաջին հոլովման պէս: Միայն նկատելու է որ

1. Մի թուականը՝ եթէ յօդ ունենայ կամ հոլովվի, տասն ն ընդունում, իսկ երկու-ն տասը. մինի. մինից, մինով, մինում: երկուսը, երկուսի, երկուսից, երկուսով:

2. եօթը և ութը թուականները հոլովվելիս ը տասը կորցնում են. եօթի, ութի, ութից:

3. ինը, տասը թուականները ը տասը փոխում են ն. ննի, տասնի, տասնով:

4. Երկու և աւելի բառերից բաղկացած դասական թուականներից առաջինը քանակականի ձև ն ընդունում, վերջինը երորդ մասնիկ ն առնում և հոլովում է. հարիւր—քսանութերորդին. հազար— վեցհարիւրերորդից:

5. Բացարձակ թուականները դասականների տեղ վարվում են տարեթիւ և ամսաթիւ ցոյց տալու համար. ինչպէս. Լևոն Ջ մեռաւ փարիզում հազար երեք հարիւր քսանուեօթին, նոյեմբերի 19 պատահմանին (փոխանակ 1393-երդին, նոյեմբերի 19-երդին):

Հետևեալ նախադասութիւնների մէջ թուանշանով գրած թուականները տառերով գրեցէք·

$2 \times 2 = 4$, $7 \times 7 = 49$. Հինգը 10 կէսն է։—50 կէսը 25 է, ժամը $9\frac{1}{2}$* է։—Պատարագը սկսվում է $10\frac{1}{2}$-ին։—Մենք ճաշ ենք ուտում մէկտ 2։—Թատրոնը սկսվում է սովորաբար երեկոյեան $7\frac{1}{2}$-ին։ Շաբաթուան մէջ 6 օր աշխատում ենք և 7-րդ օրը հանգստանում։—Ջատկի 40-րդ օրը Համբարձում է, իսկ 50-րդ օրը Հոգեգալուստ։—56 որ 7 ով բաժանենք, կը տանանք 8։—99-ին 1 պակաս է որ 100 տանանք։—Մեծ Մասիսը 16000 ոտնաչափ բարձրութիւն ունի։—12ը 2 անգամ աւելի է 6-ից, 3 անգամ աւելի է 4-ից, 4 անգամ աւելի է 3-ից և 6 անգամ աւելի է 2-ից։—Կոլոմբոսը գտաւ Ամերիկան 1492 թուականին։—Տպագրութիւնը գտնուեցաւ 1440-ին։

* Շատերը սովորութիւն են արել $9\frac{1}{2}$-ը (ինն ու կէս) կարդալ տասնէ կէս։

Է. Դերանունների կազմութիւնը.

§ 99. Դերանունների գործածութիւնը։

Դերանունները գործ են ածվում հարցական, պատասխանական և պատմական նախադասութիւնների մէջ։ Հարցական նախադասութիւնների մէջ գործ են դրվում հարցական դերանունները, իսկ պատասխանական և պատմական նախադասութիւնների մէջ նոցա համապատասխանող անձնական, ցուցական, ոչացական, և անորոշ դերանունները։

Հարցական	Պատասխանական
	Անձնական
Ո՞վ, ինչ.	ես, դու, ինքը.
	Ցուցական
	սա, դա, նա.
	Անորոշ
	ոմն, իմն, մանաւանդ.

	Բացասական
	ոչով, ոչինչ.
Ո՞ր.	Ցուցական
	այս, այդ, այն,
	Անորոշ
	մեր, ուրիշ, իւրաքանչիւր, ամեն, ամենայն նոյն, միևնոյն, որևիցէ.
	Սահմանական
(Ո՞ւմ.)	իմ, քո, նորա, մեր, ձեր, իրանց.
	Անորոշ
	միմեանց, միմեանցմէ, իրարու.
Ո՞րպիսի.	այսպիսի, այդպիսի, այնպիսի, նոյնպիսի, որպիսի և իսկ.
Ո՞րքան, քանի՞.	այսքան, այդքան, այնքան, նոյնքան, մի քանի։

Բացի սորանից երկրորդական նախադասութիւնների մէջ գործ է ածվում որ յարաբերական դերանունը, երբ որ երկրորդական նախադասութիւնները կապում է գլխաւորների հետ։

§ 99. Գոյական դերանունների հոլովումը։

1. Հարցական

	Ուղակի (անյօդնական)	
Ո.	Ո՞վ	Ի՞նչ.
Հայց.	Ո՞ւմ	Ի՞նչ
Ս. Տ.	Ո՞ւմ	Ինչի, ինչին *
Բաց.	Ումնից, ումից	Ինչից
Գոչ.	Ումնով	Ինչով
Նեբէ.	Ումնում	Ինչում

* Գաւառական բարբառներում սկզբնական է փոխվում է ը. ընչի կամ ընչու, ընչից ընչով, ընչում։

2. Անձնական

Եզակի

	1-ին դէմք	2-րդ դէմք	3-րդ դէմք
Ո–ղ.	ես	Դու	Ինքը *
Սե–.	իմ	Քո, քու	Իր, իւր, իրա
Տ. Հ.	ինձ	Քեզ	Իրան
Բա–.	ինձանից, ինձնից	Քեզանից, քեզնից	Իրանից
Գոր–.	ինձանով	Քեզանով	Իրանով
Ներ–.	ինձանում	Քեզանում	Իրանում

* Ինքը, իրա՛ անձնականների մարքով գործ են ածվում յաճախ՝ նոյա ցուցականները:

Յոդնակի

Ո–ղ.	Մենք	Դուք	Իրանք
Սե–.	Մեր	Ձեր	Իրանց
Տ. Հ.	Մեզ	Ձեզ	Իրանց
Բա–.	Մեզանից, մեզնից	Ձեզանից, ձեզնից	Իրանցից
Գոր–.	Մեզանով	Ձեզանով	Իրանցով
Ներ–.	Մեզանում	Ձեզանում	Իրանցում

3. Ցուցական

	Եզակի		Յոդնակի	
	(Նոր ձև)	(Հին ձև)	(Նոր ձև)	(Հին ձև)
Ո–ղ.	Սա *	Սա	Սրանք	Սոքա
Սե–.	Սրա	Սորա	Սրանց	Սոցա
Տ. Հ,	Սրան	Սորան	Սրանց	Սոցա
Բացա–.	Սրանից	Սորանից	Սրանցից	Սոցանից
Գործ.	Սրանով	Սորանով	Սրանցով	Սոցանով
Ներ–.	Սրանում	Սորանում	Սրանցում	Սոցանում

Այսպէս հոլովում են պա և նա ցուցականները:

* Երկու ձևն էլ անխտիր գործ են ածվում, առաջինը աւելի ընտանեկան լեզուի մէջ, երկրորդը գրաւորի մէջ:

Գոյական դերանունների հոլովման և գործածութեան վրայ հետևեալ դիտելիքները կան:

1. Ով և ո՞ւմ հարցականները յոդնակի չունին. միայն ուղղականները երբեմն գործ են ածվում. Ո՞վքեր եկան մեզ մօտ: Նրանցից ո՞վքեր չանցան գնհատ:

2. Անձնական դերանունների տրականը երբեմն կրկնութեամբ գործ է ածվում. ինձ ու ինձ, քեզ ու քեզ, իրան իրան. մեզ ու մեզ ձեզ ու ձեզ, իրանց, իրանց: Ինձ ու ինձ մնացում էի անցած օրերիս վրայ:

3. Անձնական դերանունների տրականը գործ է ածվում երբեմն ստացական դերանունների հետ. իմը ինձ, քոնը քեզ, իրանը իրան. մերը մեզ, ձերը ձեզ, իրանց իրանց: Մինչև որ այս բանը գլուխ հանեմ, իմը ինձ կը հանուի:

4. Ինքը երրորդ դէմքը դերանուանական յօդով վարվում է միւս հոլովների հետ էլ եզակի և յոդնակի, խօսքին աւելի ոյժ տալու համար. էս ինքս, դո՞ ինքդ. մենք ինքներս. դուք ինքներդ: Մենք ինքներս լաւ ենք իմանում մեր օգուտն ու վնասը: (Ձօրուց Թեամբ իմացվում է ձեր խորհրդին կարօտ չենք:)

Նոյն գործածութիւնը երևում է երբեմն և ցուցական դերանունների հետ. սա ինքը, նա ինքը, նոքա իրանք:

5. Անձնական և ցուցական դերանունների մօտ աւելացրուցեամբ գործ են ածվում երբեմն էմբայիներկան ու անց. անկատարը՝ ը յարաբերականով, խօսքին աւելի որոշութիւն տալու համար. ես էմ ը, ինչ էնչ ը, դուքա կն ը, և այլն: Դուք էք ը ամէն բանի առաջ դժուարութիւններ էք հանում: Սա է ը մեզ այն-

քան ինձաներ հասցքեց: (Այսինքն դու և ոչ ուրիշները, ոչ և ոչ մի այլ մարդ:)

6. Անձնական և ցուցական դերանունների գործիականը վարվում է, երբ հարկ է ցոյց տալ թէ գործողութիւնը ում ձեռով կամ միջնորդութեամբ կատարվում. ինչպէս. Եղբայրս ֆեղնով կամ պոնով փրկուեցաւ վտանգից: Իսկ եթէ պէտք լինի գործողութեան մասնակցութիւնը ցոյց տալ, վարվում են սեռ. և տրակ. հոլովները հէպ նախադրութեամբ. Եղբայրս ֆեղ հէպ կամ ոտր հէպ փրկուեցաւ վտանգից:

7. Անձնական և ցուցական դերանունների յոգնակի ներգոյականը գործ է ածվում երբ ինչ անշունչ առարկաների վերաբերութեամբ. Ես պոնում ամառը աւելի շոք է լինում քան թէ ֆեղնում: Սրանում լաւ մրգեր կան.— այսինքն մէղ, ֆէր երկրում, պոնց պարտէզում:

8. Անձնական դերանունների տէղ կամ նոցա հետ միասին գոյականների վերջին ծայրը աւելացնում են երբեմն ս, ք, ն, դիմորոշ յօդերը 1) խօսքին աւելի ոյժ տալու համար. ինչպէս. Արարածնե՞ս չենք կարող սատմել Արարչի բոլոր փառք ու մեծութիւնը.— այսինքն՝ մենք արարածներս ենք ուսուցիչս քանիու քանի անգամ պատուիրեցի ֆեղ աշակերտներիդ որ ժամանակին ուսումնարան գաք: 2) Համեստութիւն ցոյց տալու համար. այսպէս ասում են՝ անարժանս, մեղաւորս. խեղճիս գլխին ինչ էր բերաւ:

Հետևեալ նախադասութիւնների մէջ գոյական դերանունները պէտք եղած հոլովով ու թուով դրէք:

Ո՞վ վրայ էք խօսում.—Ո՞վ եկան մեզ մօտ.—Ո՞վ մօտ էք գընում.—Ո՞վ հետ գնացիք ուսումնարան.—Դու ես հետ տանը կը մնաս

Ստեփաննոս Պողոսեան
ՍԵՐԵՐՈՒԿԱՅԻ ՆԱՀԱՏԱԿ

Ի՞նչ էք պարապում (գործ).—Ի՞նչ էք վաճառում (բցռ.).—Ո՞ր գրքեր էք կարդում.—Ի՞նչ (յգ.) չխօսեցան ես վրայ.—Ի՞նչ էք պարապում. Ես կ'ուղարկեմ ձեռ հայերէն գրքեր, իսկ դու ես ուղարկէ՞ք ինձանից գրքեր:—Ես ձեռ մասին շատ լաւ բաներ եմ լսել.—Մի խնդրէք ինձ. ձեզ համար առանց խնդիրքի պատրաստ ենք ամէն բան անելու.—Ես հետ գնում ենք զբօսնելու. ձեռ չէք կամենում ես հետ գալ:—Նա խնդրում է ձեռ որ ինձ շուտ շուտ նամակ գրեմ.—Ինձ էլ չեն իմանում թէ ինչ են անում.—Դու ինձ էք ձեր թշուառութեան պատճառը.—Ծող ամէն մարդ ինձ համար խօսի:—Դու չէի սպասում այդպիսի ապերախտութեան (բցռ.):—Ի՞նչ յանցանք տեսար ես (ներգ.):—Նստիր ես կողքին.—Դու կարող ես իմանալ մեր գործի դրութիւնը (բցռ.):—Ես իմ բոլոր գործերը յանձնեցի սոցա և նոցա:—Դա համար է իմ բոլոր աշխատանքը.—Դո՞ տեսար թէ ես եղբօրը:

§ 100. Ածական դերանունների հոլովումը.

Ածական դերանունները, հասարակ ածականների պէս, գոյականից նախադաս են վարվում և հոլովման մէջ անփոփոխ են մնում. իսկ եթէ մենակ մնան, գոյականի զօրութիւն ունին և հոլովում են: Այսպէս՝

1. Ո՞ր հարցականը յօդով կամ անյօդ գոյական է պահանջում. ո՞ր մարդը, ո՞ր մարդու, ո՞ր մարդով. ո՞ր տները, ո՞ր տներից և այլն:

Ուղղականը և հայցականը գոյականաբար են վարվում. ես ձակի յօդով, իսկ յոդնակին անյօդ. Ո՞րն է ձեր եղբայրը: Ո՞րը տամ, ո՞րը պահեմ: Որո՞նք են ձեր բարեկամները:

2. Ո՞ր հարցականից առաջ է գալիս որ յարաբերական գոյական դերանունը, որ հոլովում է այսպէս.

Ո. Հ.	Որ	Որոնք
Սե.	Որի	Որոնց
Տր.	Որին	Որոնց
Բ.	Որից	Որոնցից

Ցբտ.	-Որով	Որոնցով
Նբտ.	—	Որոնցում

Այս, այդ, այն ցուցականների դոյականը որոշեալ յօդ է պահանջում և ոչ դերանուանական (ցուցական). ուստի չէ ասվում այս գիրք», այս գրքի», այս գրքից», այլ

Այս գիրքը	Այս գրքերը
Այս գրքի	Այս գրքերի
Այս գրքին	Այս գրքերին
Այս գրքից	Այս գրքերից
Այս գրքով	Այս գրքերով
Այս գրքում	Այս գրքերում

Քիչ անգամ է պատահում ցուցական դերանուան և որոշեալ յօդի տեղ դերանուանական յօդ դնել սաստկութեան համար. ինչպէս. Աշխարհիսի առքն ու պատիւները անցաւոր են: Երկիր» պտտում է ինքն իր վրայ և արեգակի շուրջը: Նոյնպէս. այսօրուան օր», այժմեան ժամանակ»:

Այս, այդ, այն շատ անգամ մենակ էլ են վարվում իբրև դոյական, բայց միշտ անփոփոխ են ձեռում. Այս է ձեր հաշիւը: Այդ էր իմ ուզածը: Այս թող, այն տար:

Գաւառական բարբառներում այս, այդ, այն դերանուններից կազմու. ել են նս, նդ, նն, որ դոյականարար էլ են վարվում ու հոլովում են նոսով, նոսվից կամ նոսովն, նոսում. նոսով, նոսոց, նոսոցից կամ նոսոցովն. նոսոցով նոսոցում:

4. **Ս**տացական դերանունները որոշեալ յօդով դոյական են պահանջում, որ միայն հոլովում է, այսպէս.

1) **Իմ**, *ս* կամ *ս*», **ի**՝ կամ **ի**՝ ել ստացականները եզակի դոյական են պահանջում, եթէ ստացուածը մէկ է. իմ այգին, *ս* այգին, **ի**՝ այգին. յոգնակի դոյական՝ եթէ ստացուածը շատ է. իմ այգիքը, *ս* այգիքը, **ի**՝ այգիքը:

2. **Ո**՞ւր, յ՞ր, ե՞րբ յոգնակի ստացականները եզակի դոյական են պահանջում, եթէ ստացուածը մէկ է. Ո՞ր այգին, յ՞ր այգին, ե՞րբ այգին. յոգնակի դոյական՝ եթէ ստացողն էլ ստացուածն էլ շատ է. Ո՞ր այգիքը, յ՞ր այգիքը, ե՞րբ այգիքը:

Այժմ բացայայտութեան համար դնենք այստեղ ստացական ածականների հոլովման պատկերը իրանց դոյականների հետ:

1. Իմ, քո, իւր.

Եզակի (եզ. ստացող և եզ. ստացուած)

Ո. Հ.	Իմ	Քո	Իւր	Գիւղը
Ս. Տ.	Իմ	Քո	Իւր	Գիւղին*
Բց.	Իմ	Քո	Իւր	Գիւղից
Գործ.	Իմ	Քո	Իւր	Գիւղով
Նբտ.	Իմ	Քո	Իւր	Գիւղում

Յոգնակի (եզ. ստացող և յոգնակի ստացուած)

Ո. Հ.	Իմ	Քո	Իւր	Գիւղերը
Ս. Տ.	Իմ	Քո	Իւր	Գիւղերին
Բց.	Իմ	Քո	Իւր	Գիւղերից
Գործ.	Իմ	Քո	Իւր	Գիւղերով
Նբտ.	Իմ	Քո	Իւր	Գիւղերում

2. Մեր, Ձեր, Իրանց.

Եզակի (յոգ. ստացող. և եզ. ստացուած)

Ո. Հ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղը
Ս. Տ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղին
Բց.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղից
Գործ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղով
Նբտ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղում

Ցոգնակի (յոգն. ստացող և յոգն. ստացուած)

Ո. Հ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղերը
Ս. Տ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղերին
Բց.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղերից
Գործ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղերով
Ներփ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղերում

* Ն որոշեալ յօդը այս և յաջորդ օրինակների մէջ տրականին է վերաբերում և ոչ սեռականին (§ 87):

Շատ անգամ բաւական է համարվում ես, ից, ով, ում ցոյականների տեղ միայն դերանունական (ստացական) յօդ դնել գոյականի վրայ. ինչպէս. գիւղս գիւղերս, փոխանակ ես գիւղը, ես գիւղերը *:

Հետևեալ այս տեսակ հոլովման ամբողջ օրինակը:

Եզակի

Ո. Հ.	Գիւղս	Գիւղդ	Գիւղը (այսինքն իւր գիւղը)
Ս. Տ.	Գիւղիս	Գիւղիդ	Գիւղին
Բց.	Գիւղիցս	Գիւղիցդ	Գիւղիցը
Գործ.	Գիւղովս	Գիւղովդ	Գիւղովը
Ներփ.	Գիւղումս	Գիւղումդ	Գիւղումը

Ցոգնակի

Ո. Հ.	Գիւղերս	Գիւղերդ	Գիւղերը
Ս. Տ.	Գիւղերիս	Գիւղերիդ	Գիւղերին
Բց.	Գիւղերիցս	Գիւղերիցդ	Գիւղերիցը
Գործ.	Գիւղերովս	Գիւղերովդ	Գիւղերովը
Ներփ.	Գիւղերումս	Գիւղերումդ	Գիւղերումը

* Յաջորդ կրկնութիւն է ստացական յօդի հետ ստացական դերանուն գործ դնել. իմ տունս ծախեցի: Ձո հօրիդ լուր ունիս:

Իսկ մեր, ձեր, իրանց ստացականների գոյականը միայն այն

ժամանակ կարող է այս ձևով վարուիլ, երբ նախադասութեան միւս բառերից իմացվում է թէ որ դերանունը զօրութեամբ է իմացվում, ինչպէս. Ձանասարհին աւազակները պատահեցան մեզ և ունեցածները ձեռներից խլեցին. այսինքն մեր ունեցածները մեր ձեռներիցը:

Ստացական դերանունները, եթէ մենակ ճնան, գոյականի զօրութիւն ունին և յօդ առնելով հոլովում են այսպէս.

Իմս կամ իմը, իմին, իմիցը, իմովը, իմումը, իմերը, իմերին, իմերիցը, իմերովը, իմերումը:

Քոնդ կամ քոնը, քոնին, քոնիցը, քոնովը, քոնումը, քոնները և այլն:

Իւրը կամ իրանը, իրանին, իրանիցը, իրանովը, իրանումը, իրանները և այլն:

Մերը, մերին, մերիցը, մերովը, մերումը, մերերը և այլն:

Ձերը, ձերին, ձերիցը, ձերովը, ձերումը, ձերերը և այլն:

Իրանցը, իրանցին, իրանցիցը, իրանցովը, իրանցումը, իրանցները և այլն:

Այսպէս ասում են՝ լաւ ու փոսն տուն է քանդում: Մինչ մերովը դոհ ենք, դուք էլ չէքովը:

Բացի սորանից, մեր, ձեր առանձին ձևով յոգնակի են լինում. մերոնք, մերոնց, մերոնցից. ձերոնք, ձերոնց, ձերոնցից:— Այսօր մերոնք գիւղ գնացին. այսինքն՝ մեր ընտանիքը կամ մերձաւորները:

Հետևեալ նախադասութիւնների մէջ ածական դերանունները պէտք եղած ձևով դործ դրէք:

Ո՞ր աչքովդ իմ աշակերտներից ո՞ր արժանապատուին մրցանակը տանալու.—Ո՞ր քաքեւոներ իմ բարեկամներից ո՞ր այտեղ են.

Այս գրքերից ո՞ր առնեմ, ո՞ր տամ։—Ահա այն ըղձալով որ պարտական է քաղաքը իւր պաշտօնեան։—Մեր պարտէզում չատ պտղատու ծառեր կան, որ մեծ մասը հօրս անկածն են։—Բարեկամս, որ ստացայ այս նամակը, արժանաւոր մարդ է։ Ես պատիւ չունիմ ճանաչելու ոչ ձեր հօր ոչ ձեր տղու։—Իմ գիրքս ո՛ր լաւ է գրում (քցո.)։—Ձեր խելօքները ծախում են։—Այս պոռն իմ է։—Ձերոնք հետ տանուեցայ ու խօսեցայ։—Իմ բնաւորութիւնս պրծաւ, տուր ինձ ո՛ մէկ-երկու թերթ։—Իմ գրածի մէջ աւելի սխալ կայ քան թէ ո՛ մէջն։—Այս գիրքս ի՞նչ է թէ ո՛ է։—Մե՞րն են թէ չէն են այս մատիտները։

§ 101. Անորոշ դերանունների ուղղումը։

Անորոշ դերանունների մէջ կան որ գոյական են, կան որ ածական են, կան էլ որ միանգամայն գոյական և ածական են, այսինքն կարող են թէ գոյականաբար և թէ ածականաբար վարուիլ։

1. Գոյական անորոշ դերանուններ. ոչինչ (կարգա՛ օչինչ), ինչինչ, ոչուչ, ոչինչ, ոմանք, ինքս, մէկմէկ, միմեանց։

Ահա նոցա հոլովումը։

	Եզակի		Ցոյնակի	
Ո. Հ.	Ոքմին	Իքմին	Ոքմիններ (մներ)	Իքմիններ (մներ(
Ս. Տ.	Ոքմինի (մնի)	Իքմինի(մնի)	Ոքմինների	Իքմինների
Բ.ա.	Ոքմինից	Իքմինից	Ոքմիններից	Իքմիններից
Գ.ը.	Ոքմինով	Իքմինով	Ոքմիններով	Իքմիններով
Ն.ե.	Ոքմինում	Իքմինում	Ոքմիններում	Իքմիններում

	Եզակի (անյոգնական)		Ցոգնակի (անեզական)
Ո. Հ.	Ոչոք	Ոչինչ	Ոմանք*
Ս. Տ.	Ոչոքի	Ոչնչի	Ոմանց
Բ.ա.	Ոչոքից	Ոչնչից	Ոմանցից
Գ.ը.	(Ոչոքով)	Ոչնչով	Ոմանցով
Ն.ե.	Ոչոքում	Ոչնչում	(Ոմանցում)

* Եզակիի տեղ գործ է ածվում դէպք կամ երբեմն նաև հոգեկան. մարդ չէ իմանում թէ ինչ խօսի։

	Եզակի		Ցոգնակի	
Հայց.	Իրար	Մէկզմէկ	Միմեանց	
Ս. Տ.	Իրարու	Մէկզմէկու	Միմեանց	
Բ.ա.	Իրարուց	Մէկզմէկուց	Միմեանցից	
Գ.ը.	Իրարով	Մէկզմէկով	Միմեանցով	

2. Ածական անորոշ դերանունները իրանցից յետոյ միշտ գոյական են պահանջում ու երբէք չեն հոլովուում. ինչպէս. Ամեն մարդ պէտք է իր վերջը մտածէ։ Աշխատելու է ոք-եցէք կերպով վերջ տալ այս գործին։ Ոք-եցէ-եցէք գործեր։

3. Նշանացած բոլոր անորոշ դերանունները ածական են. եթէ գոյականի հետ են, գոյական են՝ եթէ մենակ են, և այն ժամանակ որոշեալ յօդ են առնում ու հոլովուում են այսպէս.

Մէ-ոք ո-ըիշը, ե-ր-ո-ւէ-ը կանոնաւոր են հոլովուում, վերջինը միայն եզակի. Միւսը, միւսին, միւսից, միւսով, միւսում, միւսները և այլն։

Ուրիշը, ուրիշին, ուրիշից, ուրիշով ուրիշում. ուրիշները և այլն։

Ամէն կամ ս-ով ամենս հոլովում է եզակի, բայց յոգնականի միտք ունի. Ամէնը, ամէնին, ամէնից կամ ամէնքից։

Ոմանք, այլոքն և այլն միայն յոգնակի են հոլովուում։

Այսպիսիքը կամ այսպիսիները, այսպիսիներից, այնպիսիքը այնպիսիներին, նոյնպիսիներից։

Ոչոքս, այլոքս, նոյնոքս հոլովում են եզ. և յոգն.

Մէկոքն, ոչոքն յօդից առաջ ո տառն են ընդունում և հոլովում են եզակի և յոգնակի, բայց միշտ յոգնակի նշանակութիւն ունին։

Մ՛ի քանիսը, մի քանիսին, մի քանիսիցը, մի քանիսովը, մի քանիսումը. քանիսները, քանիսներին, քանիսներիցը, քանիսներովը, քանիսներումը:

Ոչինչ, ինչ-ոչինչ սովորաբար միայն ուղղական և հայցական են գործ ածվում:

Հետևեալ նախադասութիւնների մէջ անորոշ դերանունները սխալ եղած ձևով գործ դրէք.

Ալէքսանդրապօլի նոր եկեղեցին համարեա ոչինչ չէ զանազանվում Անիի մայր եկեղեցուց:—Ո՛չին հետ տեսնուեցար այսօր:—Ի՛նչին վրայ խօսեցար նորա հետ:—Ոչո՛ չեմ տեսել և ոչինչ վրայ չեմ խօսել:—Երէկ ես տեսայ ամէն մի չի՛ չոչ իմ առաջուան ընկերներից:—Քանի գնեցիր այս գիրքը:—Այս երեխայքը զանազանվում են ինչո՛վ չէ՛ւնչէ՛ թէ բնաւորութեամբ, թէ ընդունակութեամբ:—Աշակերտներից ի՛ չոչ պատժեցին, միա՛ն ներեցին:—Քանի՞ կան որ տառերը չեն իմանում:—Ի՛րարից չէ՛ւ իր կարողութեան չափ է պահանջվում.

Ը. Բայերի կազմութիւնը.

§ 102. Բայերի արմատները:

Բայերը ցոյց են տալիս գործողութիւն և դրութիւն, կամ նաև որպիսութիւն որ հետզհետէ փոխվում է, ուստի և կազմվում են

1, Բայերի արմատներից. ընկել, նոքսալ, խոսանալ:
2. Գոյական անուններից. ջրել, ապալ, փրփրել, լուանալ:
3. Ածական անուններից. պեղնել, նոսրել, ծերանալ:
4. Մակբայներից. հեռանալ, մօտենալ, ուշանալ:

§ 103. Բայերի վերջաւորութիւնները.—Պարզ, բարդ, ու բաղադրեալ բայեր.

Բայերը ունին չորս վերջաւորութիւն եը, իլ, ալ, անալ, որոնց վերայ հիմնվում են բայերի չորս կանոնաւոր խոնարհումները: Այս վերջաւորութիւնները դրուելով բայերի արմատների վրայ՝ կազմում են

1. Պարզ բայեր. ինչպէս. գովել, բնակիլ, կարդալ, բաղկանալ:
2. Բարդ բայեր. ինչպէս. պատուհասել, խոտորիլ, վերադառնալ *
3. Բաղադրեալ բայեր որոնք կազմվում են գոյականով և մանաւանդ բայի արմատով ու բայով. ղեկավարել. ցոյն պահ, ուշադրել, պոռ գալ, հոշ գնալ ** և այլն:

Շատ անգամ բայի արմատի ու վերջաւորութեան մէջ զանազան տառեր ու մասնիկներ են մտնում և կազմում են ածանցեալ բայերը. այսպէս.

1) ն տառը, որ անցեալ ժամանակում, հրամայականում և անցեալ դերբայում դուրս է ընկնում. ինչպէս գնել, գոց, գոլ, գոել, գոած:

2) է տառը, որ միևնոյն ժամանակներում դուրս է ընկնում. փախչել, փախց, փախիլ, փախել, փախած:

3) ցն մասնիկը, որ չէզոք բայից ներգործական է կազմում խաղալ-խաղացնել, չորանալ-չորացնել իսկ ներգործականից բայից կրկին ներգործական կամ անցողական. մռայլանալ-մռայլացնել, սովորիլ-սովորեցնել:

4) ոտ, ոտ մասնիկները, որ ցոյց են տալիս գործողութեան մանր կրկնողութիւնը կամ թէ գործողութիւնը շատ միատե-

ան՝ առարկաների վրայ է կատարվում. քանոտել, մոլեոտել, հոպպտել, հոպտել:

Շատ անգամ նոյն մակրայ բայերի արմատն է կրկնում. այսպէս են՝ ցգճգել, լոպ[ը]թիլել, չոփչփել. և մանաւանդ հնչիւնների նմանողութեամբ. խշխշալ, մամռալ, փսփսալ, մրմրթալ, վնգվնգալ, պմբզմբալ:

* Նկատելու է որ բարդ բայի երկրորդ մասը պարզ արմատ պիտի լինի. այսպէս կոչտոտել բարդուած է կարդ գոյականով և դնել բայով, որի արմատն է դէ. լբոեռնել բարդուած է լոբ գոյ. և ռնել բայով, որի արմատն է ռնե:

** Բաղադրեալ բայերի մէջ կան որ պարզ ձևով էլ գործ են ածւում, բայց նշանակութիւնները փոխւում է. այսպէս են ըռել և ըռե տալ, տալել և տալ տալ:

---

1. Հետևեալ արմատներից պարզ բայեր կազմեցէք:

Ա[ս]—խօս—կար—գործ—չարժ—ծնծ—բեր—սպան—հան—չէն—սէր—տէր—դիծ—դին—լուծ—սուր—ջուր—կռիւ—հաչիւ—թիւ—հաւանութիւն—աչխատ—խաղ—խեղճ—ղեղջ—հազ—ողբ—մնծ—փոքր—ծանր—ղոր—գող—սև:

2. Հետևեալ արմատներից ու բայերից կազմեցէք ածանցեալ բայեր:

Ցնս—հաս—գետ—մուտք—մեռ—հատ—(ն տառով)—փախ—կորատառ—հալ—(չ տառով)—կարդալ—ուտել—խմել—ճանաչել—մոռանալ հաւանել—մնծանալ—չորանալ—տաքանալ—(ցնել մասն.):

3. Հետևեալ բայերից կազմեցէք գործողութեան կրկնողութիւն ցոյց տուող բայեր:

Կապել—բռնել—նստել—պոկել—խոցել—կտրել—կոտրել—պատռել—(ոփ, փ մասն.)—ձգել—քաշել—թափել—վազել—չափել—կապել—ծակել—ճաքել—տրաքել—(արմատի կրկնութեամբ):

4. Ցոյց տուէք հետևեալ պարզ ու բաղադրեալ բայերի նշանակութիւնը:

Քաշել, քաշ տալ—թափել, թափ տալ—չաղել, չաղ տալ—մանել, ման գալ, ման ածել—դիմել, դէմ անել:

§ 104. Բայերի պարզ եւ բաղադրեալ ժամանակները:

Բայերը երկու տեսակ ժամանակ ունին պարզ և բաղադրեալ:

Պարզ ժամանակները կազմվում են բայի արմատի վրայ այլ և այլ վերջաւորութիւններ աւելացնելով, ինչպէս. սպասեցի, սպասէ՛, սպասող:

Բաղադրեալ ժամանակները կազմվում են դերբայներով և ե՛ ու լինիմ չէզոք բայերով, որ այս պատճառով կոչվում են օժանդակ կամ օգնական բայեր. ոպոել եմ, ոպոել էի, ոպոելու էի, ոպոած կը լինի:

Ամեն պարզ և բաղադրեալ ժամանակների անունները իրանց խոնարհման կարգով:

Ա. Սահմանական եղանակն ունի ինը ժամանակ.

1. Ներկայ. ես տեսնում եմ*:
2. Անցեալ անկատար. ես տեսնում էի:
3. Անցեալ կատարեալ. ես տեսայ:
4. Վաղակատար. ես տեսել եմ:
5. Երկարաձգ յա. ես տեսած եմ:
6. Գերակատար. ես տեսել էի:
7. Երկարաձգ յա. ես տեսած էի:
8. Ապառնի պարզ. ես կը տեսնեմ:**
9. Ապառնի բաղադրեալ կամ անցեալ. ես տեսած կը լինիմ

Բ. Պայմանական եղանակն ունի երկու ժամանակ:

1. Ներկայ. ես կը տեսնէի:
2. Անցեալ. ես տեսած կը լինէի:

Գ. Հրամայական եղանակն ունի միայն մի ժամանակ, որ թէ նէրկայէ և թէ պռոշնէի միաք ունի. ես, տես՛ք:

Դ. Ստորադասական եղանակն ունի չորս ժամանակ.

1. Նէրկայ կամ պռոշնէ. Նա կամենում է որ ես պէնեմ:
2. Անկատար. Նա կամենում էր որ ես պէնէի:
3. Կատարեալ. Նա կասկածում է որ ես պէռած լինիմ:
4. Գերակատար. Նա կասկածում էր որ ես պէռած լինէի:

Ե. Դերբայն ունի երեք ժամանակ.

1. Նէրկայ. Տեսնող. 2. Անցեալ. Տեսել, տեսած: 3. Ապառնի. Տեսնելու:

* Սահմ. նէրկ. և անց. անկատարի մասնիկը գոյ. անուանների ներգոյականի վերջաւորութիւն է, այնպէս որ ես պէռնամ նշանակում է ես պէռնելս դէլ եմ, ես պէռնամ էի — ես պէռնելս դէլ էի:

** Ապառնի և պայմ. ժամանակների մասնիկը առաջ եկած է համարւում եմ բայի եզ. 3-րդ դէմքից — շաղկապով, այսինքն կայ —, որ կրճատուել, եղել է նախ կ՛—, կ՛— և վերջապէս կը.—Ձայնաւորով սկսող բայերից առաջ ը դուրս է ընկնում և նորա տեղը ապաթարց դրւում. կ՛էրթամ, կ՛ուխէ:

Բաղադրեալ ժամանակների օգնական բայերը կարող են բուն բայից բաժանուիլ, յետ ու առաջ դասուիլ, բաց թողուիլ, որով խօսքը առանձին այժ ու կենդանութիւն է ստանում:

Առ հասարակ եթէ խօսողը կամենում է խօսքի բոլոր այժը գործողութեան մէջ կենդրոնացնել, բուն բայն առաջ է դասւում և օժանդակը յետոյ. ինչպէս. Ես պէռնել եմ քո եղբօրը և նորա հետ խօսել (եմ), իսկ եթէ խօսքի զօրութիւնը ուրիշ որևիցէ բառի մէջ է կենդրոնացած, այն բառը օժանդակ բայի հետ նախադասւում են, իսկ բուն բայը յետադաս է մնում, ես ո՛ւ եղբօրն եմ տեսել և նորա հետ (եմ) խօսել. այսինքն ո՛ւ եղբօրն եմ տեսել և ոչ մի ուրիշի: Այս է պատճառը որ հարցական, բացագանչական և բացասական նախադասութիւնների մէջ հարցական և բացասական բառերը օժանդակ բայի հետ առաջին դասւում, և բուն բայն յետոյ. ինչպէս. Ո՞ւր ես գնում, Ո՞վ է եկել: Ինձ՛ էմ լսում, Չեմ իմանում թէ ի՛նչ է կամենում:

§ 103. Եմ և լինել բայերը ու նոցա խոնարհումը:

Եմ և լինել բայերը, որ ըստ սեռի չէզոք են, նախադասութեան մէջ կրկնակի պաշտօն են վարում. երբեմն ստորոգեալ են, երբոր առարկայի էութիւնը կամ գոյութիւնն են յայտնում, և այն ժամանակ կոչվում են էական բայեր. ինչպէս. Ո՞վ է. ես եմ. Նա չը լինի: երբեմն էլ ենթական ու բայն իրարու հետ կապակցում են, կամ օգնում են միւս բայերը խոնարհելու, և այն ժամանակ կոչվում են օժանդակ կամ օգնական բայեր:

Մի՛ւս բայերի խոնարհմանը ծանօթանալուց առաջ հարկաւոր է իմանալ օգնական բայերի խոնարհումը, նախ որովհետև միւսներից աւելի գործածական են և երկրորդ, որ բոլոր բայերի խոնարհման մէջ մտնում են: Ահաւասիկ նոցա խոնարհմունքը:

Ա. Եմ.

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Եզ.	ես եմ, դու ես, նա է.
Յոգն.	Մենք ենք, դուք էք, նորա են.

Անցեալ անկատար

Եզ.	ես էի, դու էիր, նա էր.
Յոգն.	Մենք էինք, դուք էիք, նորա էին.

Բ. Լինել

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Նէրկայ

Նէրկայ	ես լինում եմ, դու լինում ես, նա լինում է.
	Մենք լինում ենք, դուք լինում էք, նորա լինում են:

Անցեալ անէարար — Ես լինում էի, դու լինում էիր, նա լինում էր.
Մենք լինում էինք, դուք լինում էիք, նորա լինում էին։

Անցեալ էապարեալ — Ես եղայ, դու եղար, նա եղաւ.
Մենք եղանք, դուք եղաք, նորա եղան։

Վաղէապար — Ես եղել եմ, դու եղել ես, նա եղել է.
Մենք եղել ենք, դուք եղել էք, նորա եղել են։

Շղթ յՒ — Ես եղած եմ, դու եղած ես, նա եղածէ.
Մենք եղած ենք, դուք եղած էք, նորա եղած են։

Գերէապար — Ես եղել էի, դու եղել էիր, նա եղել էր.
Մենք եղել էինք, դուք եղել էիք, նորա եղել էին։

Շղթ յՒ — Ես եղած էի, դու եղած էիր, նա եղած էր.
Մենք եղած էինք դուք եղած էիք, նորա եղած էին։

Ապառնի պարզ — Ես կը լինիմ, դու կը լինիս, նա կը լինի.
Մենք կը լինինք, դուք կը լինիք, նորա կը լինին։

Ապառ. Բաղադր. — Ես եղած կը լինիմ, դու եղած կը լինիս, նա եղած կը լինի.
Մենք եղած կը լինինք, դուք եղած կը լինիք, նորա եղած կը լինին։

ՊԱՑՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներէայ — Ես կը լինէի, դու կը լինէիր, նա կը լինէր.
Մենք կը լինէինք, դուք կը լինէիք, նորա կը լինէին։

Անցեալ — Ես եղած կը լինէի, դու եղած կը լինէիր, նա եղած կը լինէր.
Մենք եղած կը լինէինք, դուք եղած կը լինէիք, նորա եղած կը լինէին։

ՀՐԱՄԱՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներէ կամ ապառ. — Եղիր դու, եղէք դուք։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներէայ — (որ) Ես լինիմ, դու լինիս, նա լինի.
(որ) Մենք լինինք, դուք լինիք, նորա լինին.

Անէապար — (որ) Ես լինէի, դու լինէիր, նա լինէր.
(որ) Մենք լինէինք, դուք լինէիք, նորա լինէին։

Կապարեալ — (որ) Ես եղած լինիմ, դու եղած լինիս, նա եղած լինի.
(որ) Մենք եղած լինինք, դուք եղած լինիք, նորա եղած լինին։

Գերէապար — (որ) Ես եղած լինէի, դու եղած լինէիր, նա եղած լինէր.
(որ) Մենք եղած լինէինք, դուք եղած լինէիք, նորա եղած լինէին։

ԴԵՐԲԱՑ

Անորոշ Լինել. Ներէ. եղող. Անց. եղել, եղած. Ապառ. լինելու։

Հետևեալ նախադասութիւնները լրացրէք՝ իւրաքանչիւրի մօտ ածելացնելով հետևեալը։

Երբ Արշակը աշխատում է, հիւանդ է լինում։ Վաղը եթէ Արշակը աշխատէր,...երբ Արշակը աշխատում էր,...Արշակը շատ կը ձանձրանար, ... Արշակը միշտ ձանձրացել է, երբ որ ... Արշակը միշտ կը ձանձրանայ, երբ որ...Բարեկամ, դու շատ ես ձանձրանում, երբ...Դու շատ էիր ձանձրանում, երբ որ...Որպէս թէ Արշակը ձանձրանայ, պէտք է...Որպէս թէ Արշակը ձանձրանար, պէտք է...

§ 106. Առաջին խոնարհում եւ վերջաւորութիւնները։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներէայ — Ազատում եմ, ազատում ես, ազատում է.
Ազատում ենք, ազատում էք, ազատում են։

Անկեալ անդրադարձ	Ազատում էի, ազատում էիր, ազատում էր. Ազատում էինք, ազատում էիք, ազատում էին։
Անկեալ հոգեբեալ	Ազատեցի, ազատեցիր, ազատեց. Ազատեցինք, ազատեցիք, ազատեցին։
Վաղանցուկ	Ազատել եմ, ազատել ես, ազատել է. Ազատել ենք, ազատել էք, ազատել են։
2-րդ յն	Ազատած եմ, ազատած ես, ազատած է. Ազատած ենք, ազատած էք, ազատած են։
Գերանդուկ	Ազատել էի, ազատել էիր, ազատել էր. Ազատել էինք ազատել էիք, ազատել էին։
2-րդ յն	Ազատած էի, ազատած էիր, ազատած էր, Ազատած էինք, ազատած էիք, ազատած էին։
Ապառնի պարզ	Կ՚ազատեմ, կ՚ազատես, կ՚ազատէ. Կ՚ազատենք, կ՚ազատէք, կ՚ազատեն։
Ապառ. բաղադրեալ	Ազատած կը լինիմ, ազատած կը լինիս, ազատած կը լինի. Ազատած կը լինինք, ազատած կը լինիք, ազատած կը լինին։

ՊԱՑՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներէոյ	Կ՚ազատէի, կ՚ազատէիր, կ՚ազատէր. Կ՚ազատէինք, կ՚ազատէիք, կ՚ազատէին։
Անցեալ	Ազատած կը լինէի, ազատած կը լինէիր, ազատած կը լինէր, Ազատած կը լինէինք, ազատած կը լինէիք, ազատած կը լինէին։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներէ. և ապառն Ազատ ի՛մ ազատիր, ազատեցէք.

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներէոյ	(որ) Ազատիմ, ազատիս, ազատի. (որ) Ազատինք, ազատիք, ազատին։
Անդրադարձ	(որ Ազատէի, ազատէիր, ազատէր. (որ) Ազատէինք ազատէիք ազատէին։
Կատարեալ	(որ) Ազատած լինիմ, ազատած լինիս, ազատած լինի. (որ) Ազատած լինինք, ազատած լինիք, ազատած լինին։
Գերադրական	(որ) Ազատած լինէի, ազատած լինէիր, ազատած լինէր. (որ) Ազատած լինէինք, ազատած լինէիք, ազատած լինէին։

ԴԵՐԲԱՑ

Անդրշ Ազատել. Ներէ. ազատող. Անց. ազատել, ազատած. Ապառն ազատելու։

Այսպէս խոնարհվում են պարզ եւ վերջացած ներգ. եւ չեզոք բայերը, որոնց անց. կատարեալը լինում է եցի, հրամայականը ե՛ւ եցէ՛. իսկ ապառնիի, պայմանականի և ստորադասականի պարզ ժամանակները կազմվում են եմ բայի ներկ. և անց. անկատար ժամանակներով։

---

1. Հեռանալ եղակի նախադասութիւնները յոգնակի փոխեցէք։ Կատուն մլաւում է։—Շունը հաչում է։—Կովը բառանչում է։—Երեխան աղաղակում է։—Սոխակը երգում է։—Մարդս մտածում է։—Այս մատաղ գառը մայում է, մայում էր, մայեց, մայել էր։—Ես պատ-

մում էի և դու լսում էիր։—Իզուր յանդիմանեցիր այս աշակերտին։—Յանկանում եմ որ վտրձես այս դրիչը։—կը ցանկայի որ վտրձէիր այս դրիչը։—Ես աղօթում եմ, ես աղօթում էի, ես աղօթեցի, ես աղօթել եմ, ես միշտ կ'աղօթեմ Աստծուն, դու էլ աղօթէ։

2. Հետևեալ յոդնակի նախադասութիւնները եղականի փոխեցէք։

Ձիանները խրխնջում են։—Ագռաւները մռնչում են։—Տիրեները խշխշում են։—Հողագործները արտերը վարում, ցանում և հնձում են։ Ծոյլ աշակերտները սիրում են խաղալ և ատում են ուսումը։—Դուրձակները ձեռցին և կարեցին մեր շորերը։—Տատն անգամ չափեցէք, մէկ անգամ կարեցէք։—Նամակը գրեցինք, կնքեցինք և ուղարկեցինք։ Անկարելի է որ այսպէս շուտ գրած լինիք ձեր նամակը։—Պէտք էր որ մինչև այժմ պատրաստած լինէիք ձեր դասերը։

§ 107. Երկրորդ խոնարհում իւ վերջաւորութեամբ։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	Համարում եմ, համարում ես, համարում է. Համարում ենք, համարում էք համարում են։
Անցեալ անկատար	Համարում էի, համարում էիր, համարում էր. Համարում էինք, համարում էիք, համարում էին։
Անցեալ հոտնեալ	Համարեցայ, համարեցար, համարեցաւ. Համարեցանք, համարեցաք, համարեցան։
Ապառնի	Համարել եմ, համարել ես, համարել է. Համարել ենք, համարել էք, համարել են։
2-րդ յն	Համարած եմ, համարած ես, համարած է. Համարած ենք, համարած էք, համարած են։
Դերբայական	Համարել էի, համարել էիր, համարել էր. Համարել էինք, համարել էիք, համարել էին։
2-րդ յն	Համարած էի, համարած էիր, համարած էր. Համարած էինք, համարած էիք, համարած էին։

Ապառնի պարզ	Կը համարիմ, կը համարիս, կը համարի. Կը համարինք, կը համարիք, կը համարին։
Ապառնի բաղադր.	Համարած կը լինիմ, համարած կը լինիս, համարած կը լինի. Համարած կը լինինք, համարած կը լինիք, համարած կը լինին։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	Կը համարէի, կը համարէիր, կը համարէր. Կը համարէինք կը համարէիք, կը համարէին։
Անցեալ	Համարած կը լինէի, համարած կը լինէիր, համարած կը լինէր. Համարած կը լինէինք, համարած կը լինէիք, համարած կը լինէին։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	Համարէք իմ համարիր, համարեցէք։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	(որ) Համարիմ, համարիս, համարի. (որ) Համարինք, համարիք, համարին։
Անկատար	(որ) Համարէի, համարէիր, համարէր. (որ) Համարէինք, համարէիք, համարէին։
Կատարեալ	(որ) Համարած լինիմ, համարած լինիս, համարած լինի. (որ) Համարած լինինք, համարած լինիք, համարած լինին։
Գերբայական	(որ) Համարած լինէի, համարած լինէիր, համարած լինէր.

(որ) Համարած լինէինք, համարած լինէիք, համարած լինէին։

ԴԵՐԲԱՅ

Անորոշ Համարիլ (համարել). Նեբէ. համարող. Անչ. համարել, համարած. Ատ. համարելու։

Այսպէս խոնարհվում են եւ վերջացած ըստ մեծի մասին չեզոք բայերը, որոնց անց. կատարեալը լինում է եցայ, հրամ. ի, եցէ՛ք։ Անորոշ դերբայը սովորութիւն է եղել առաջին խոնարհման բայերի պէս եւ վերջաւորել*. Քնաչել, ապրել, աշխատել. վախանակ Քնաչիլ, աշխատիլ։

* Այս է պատճառը որ ոմանք պարզ ապառնին և ստորադասական ներկան առաջին խոնարհման պէս են վերջացնում. ես խօսեմ, դու քնաչեմ, վախանակ ես խօսիմ, դու քնաչիմ։ Իսկ անց. կատարեալը շատ անգամ առաջին խոնարհման պէս են վարում. հարբեցի, խօսեցիր, ապրեցինք, ալեփոեց։

1, Հետևեալ եղակի նախադասութիւնները յոգնականի փոխեցէք։

Ծառը կանաչում է։—Ծաղիկը ծաղկում էր—Երեխան չոքից քրտնեցաւ ու կարմրեցաւ։—Դայլը սպիտակել է ձիւնից։—Ես սոված չեմ այդպիսի անգործ կեանք վարել։—Եթէ աշխատած լինէիր, այժմ կը վայելէիր։—Ես չեմ կարծում որ դու յաջողես քո ձեռնարկութեան մէջ։—Եթէ պատահիմ, հետը կը խօսիմ։—Եթէ պատահած լինէի, հետը խօսած կը լինէի։—Քանի վազը ես՝ աշխատէ, որ երբ մեծանաս, կորցրած ժամանակիդ համար չցաւիս։

2. Հետևեալ յոգնակի նախադասութիւնները եզականի փոխեցէք։

Մենք նստած ենք։—Դուք պառկած էք։—Մեր բարեկամները յոգնած են։—Կամաց գնացէք որ չդադրիք։—Մենք պարապում ենք, պարապեցանք և միշտ կը պարապինք մեր գործով։—Պարապեցէք ձեր դասերով։—Մենք կը պարապէինք մեր դասերով, եթէ դադրած չլինէինք։—Եթէ հետը խօսած լինէիք, կը հաւանէիք նորան։

§ 108. Երրորդ խոնարհում ալ վերջաւորութեամբ։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	կարդում եմ, կարդում ես, կարդում է. կարդում ենք, կարդում էք, կարդում են։
Անցեալ անէատար	կարդում էի, կարդում էիր, կարդում էր. կարդում էինք, կարդում էիք, կարդում էին։
Անցեալ չատարեալ	կարդայի, կարդայիր, կարդայ. կարդայինք, կարդայիք, կարդային։
Վաղուց անց.	կարդացել եմ, կարդացել ես, կարդացել է. կարդացել ենք, կարդացել էք, կարդացել են։
2-րդ յն	կարդացած եմ, կարդացած ես, կարդացած է. կարդացած ենք կարդացած էք, կարդացած են։
Գերազանց.	կարդացել էի, կարդացել էիր, կարդացել էր. կարդացել էինք, կարդացել էիք, կարդացել էին։
2-րդ յն	կարդացած էի, կարդացած էիր, կարդացած էր. կարդացած էինք, կարդացած էիք, կարդացած էին։
Ապառնի պարզ	կը կարդամ, կը կարդաս, կը կարդայ. կը կարդանք, կը կարդաք, կը կարդան։
Ապառ. բաղադրեալ	կարդացած կը լինեմ, կարդացած կը լինես, կարդացած կը լինի. կարդացած կը լինինք, կարդացած կը լինիք, կարդացած կը լինին։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	կը կարդայ, կը կարդայիր, կը կարդար. կը կարդայինք, կը կարդայիք, կը կարդային։
Անցեալ	կարդացած կը լինէի, կարդացած կը լինէիր, կարդացած կը լիներ.

կարդացած կը լինէինք, կարդացած կը լինէիք, կարդացած կը լինէին։

ՀՐԱՄԱՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

կարդա. կարդացէք։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ (որ) կարդամ, կարդաս, կարդայ.
(որ) կարդանք, կարդաք, կարդան.

Անկատար (որ) կարդայի, կարդայիր, կարդար.
(որ) կարդայինք, կարդայիք, կարդային։

Կատարեալ (որ) կարդացած լինիմ, կարդացած լինիս, կարդացած լինի.
(որ) կարդացած լինինք, կարդացած լինիք, կարդացած լինին։

Գերադրական (որ) կարդացած լինէի, կարդացած լինէիր, կարդացած լինէր.
(որ) կարդացած լինէինք, կարդացած լինէիք, կարդացած լինէին։

ԴԵՐԲԱՅ

Անորոշ կարդալ. Ներկ. կարդացող. Անց. կարդացել, կարդացած. Ապառնի կարդալու։

Այսպէս խոնարհվում են ել վերջացած ներգ. ու չէզոք բայերը, որոնց անց. կատարեալը լինում է ացի, հրամ.՝ և ացէ՛ք

---

1. Հետևեալ եղակի նախադասութիւնները յոգնականի փոխեցէք։

Ով կը խաղայ, նա կը կաղայ։—Առաջ կարդա, յետոյ խաղա։—Դու կը խաղաս, եթէ տանը մնաս։—Ջաղացպանը ցորենը աղում է, աղաց, կ՚աղայ։—Խղճա քո նմանին, որ ուրիշն էլ քեզ խղճայ։—Եթէ դու գնաս, ես կը մնամ, եթէ դու մնաս, ես կը գնամ։—Գնա ուր ալիսի գնայիր, ես կը մնամ այս տեղ։

2. Հետևեալ յոգնակի նախադասութիւնները եղականի փոխեցէք։

Մշակները ցորենը աղացին։—Մենք գնացինք պարտէզ։—Դուք ինչի տանը մնացիք։—Մենք գիրք կը կարդանք, եթէ տանը մնանք։—Մենք գիրք կը կարդայինք, եթէ...Մենք գիրք կարդացած կը լինէինք, եթէ...Պէտք է գնանք ուսումնարան։—Պէտք է գնայիք ակնոցին։—Պէտք է տուն գնային։

§ 109. Ձորրորդ խոնարհում անալ վերջատրութեամբ։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ խոստանում եմ, խոստանում ես, խոստանում է.
խոստանում ենք, խոստանում էք, խոստանում են։

Անկատար անալ խոստանում էի, խոստանում էիր, խոստանում էր.
խոստանում էինք խոստանում էիք, խոստանում էին։

Անկատար ձախորժական խոստացայ, խոստացար, խոստացաւ.
խոստացանք, խոստացաք, խոստացան։

Վաղակատար խոստացել եմ, խոստացել ես, խոստացել է.
խոստացել ենք, խոստացել էք, խոստացել են։

2-րդ յն. խոստացած եմ, խոստացած ես, խոստացած է.
խոստացած ենք, խոստացած էք, խոստացած են։

Գերադրական խոստացել էի, խոստացել էիր, խոստացել էր.
խոստացել էինք, խոստացել էիք, խոստացել էին։

2-րդ յն. խոստացած էի, խոստացած էիր, խոստացած էր.
խոստացած էինք, խոստացած էիք, խոստացած էին։

Ապառնի պարզ կը խոստանամ, կը խոստանաս, կը խոստանայ.
կը խոստանանք, կը խոստանաք, կը խոստանան։

Ապառնի բաղադրեալ խոստացած կը լինիմ, խոստացած կը լինիս, խոստացած կը լինի։
խոստացած կը լինինք, խոստացած կը լինիք, խոստացած կը լինին։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	կը խոստանայի, կը խոստանայիր, կը խոստանար.
	կը խոստանայինք, կը խոստանայիք, կը խոստանային։
Անկատար	խոստացած կը լինէի, խոստացած կը լինէիր, խոստացած կը լինէր.
	խոստացած կը լինէինք, խոստացած կը լինէիք, խոստացած կը լինէին։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Խոստացիր, խոստացէք։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	(որ) խոստանամ, խոստանաս, խոստանայ.
	(որ) խոստանանք, խոստանաք, խոստանան։
Անկատար	(որ) խոստանայի, խոստանայիր, խոստանար.
	(որ) խոստանայինք, խոստանայիք, խոստանային։
Կատարեալ	(որ) խոստացած լինեմ, խոստացած լինիս, խոստացած լինի։
	(որ) խոստացած լինինք, խոստացած լինիք, խոստացած լինին։
Գերադարձ	(որ) խոստացած լինէի, խոստացած լինէիր, խոստացած լինէր.
	(որ) խոստացած լինէինք, խոստացած լինէիք, խոստացած լինէին։

ԴԵՐԲԱՅ

Անորոշ խոստանալ. Ներկ. խոստացող. Անկատար խոստացել, խոստացած. Պարագայ խոստանալու։

Այսպէս խոնարհվում են ածող և մի քանի ենթավերջաւորուած ներգ. և չէզոք բայեր, որոնց անցեալ կատարեալը լինում է ացայ, հրամ. ացէք, ացէ՛ք։

---

1. Հետևեալ նախադասութիւնները յոգնականի փոխեցէք։

Ուսուցիչը ցանկանում է որ միշտ լաւ իմանամ իմ դասերը։—Ցանկալի կը լինէր որ ես նամակ ստանայի, որ դու ասածս հասկանայիր, որ նա ամէն դատարկ բանից չվախենար։—Ծերանաս, ձերի զարմը իմանաս։—Եթէ բարեկամս եկած լինէր, մինչև հիմայ իմացած կը լինէի։—Այս կրկիրը հարստացաւ վաճառականութեամբ։

2. Հետևեալ յոգնակի նախադասութիւնները եզակիի փոխեցէք։

Փիլիսոփաները քչով բաւականանում են։—Ինչո՞ր խոստացել ենք կը կատարենք։—Եթէ կամենում էք որ ձեզ իմանայեն, իմացեցէք ուրիշներին։—Հարուստները աղքատացան, աղքատները հարստացան։—Հարուստները աղքատացած են, աղքատները հարստացած են։—Հարուստները կ՚աղքատանան, աղքատները կը հարստանան։

§ 110 Կրաւորական բայերի խոնարհումը։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	Ազատւում եմ. ազատւում ես, ազատւում է.
	Ազատւում ենք, ազատւում էք, ազատւում են։
Անկատար անցեալ	Ազատւում էի, ազատւում էիր, ազատւում էր.
	Ազատւում էինք, ազատւում էիք, ազատւում էին։
Անկատար չարունակեալ	Ազատուեցայ, ազատուեցար, ազատուեցաւ.
	Ազատուեցանք, ազատուեցաք, ազատուեցան։
Վաղանցուկ	Ազատուել եմ, ազատուել ես, ազատուել է.
	Ազատուել ենք, ազատուել էք, ազատուել են։

2-րդ յՏ	Ազատուած եմ, ազատուած ես, ազատուած է. Ազատուած ենք, ազատուած էք, ազատուած են։
Գերբայական	Ազատուել էի, ազատուել էիր, ազատուել էր. Ազատուել էինք, ազատուել էիք, ազատուել էին։
2-րդ յՏ	Ազատուած էի, ազատուած էիր, ազատուած էր. Ազատուած էինք, ազատուած էիք, ազատուած էին։
Ապառնի պարզ	կ՚ազատուիմ, կ՚ազատուիս, կ՚ազատուի. կ՚ազատուինք, կ՚ազատուիք կ՚ազատուին։
Ապառնի բաղադրեալ	Ազատուած կը լինիմ, ազատուած կը լինիս, ազատուած կը լինի. Ազատուած կը լինինք, ազատուած կը լինիք, ազատուած կը լինին։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	կ՚ազատուէի, կ՚ազատուէիր, կ՚ազատուէր. կ՚ազատուէինք, կ՚ազատուէիք, կ՚ազատուէին։
Անցեալ	Ազատուած կը լինէի, ազատուած կը լինէիր, ազատուած կը լինէր. Ազատուած կը լինէինք, ազատուած կը լինէիք, ազատուած կը լինէին։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ազատուի՛ք կամ ազատուիր. ազատուեցէ՛ք։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	(որ) Ազատուիմ, ազատուիս, ազատուի. (որ) Ազատուինք, ազատուիք, ազատուին։
Անկատար	(որ) Ազատուէի, ազատուէիր, ազատուէր. (որ) Ազատուէինք, ազատուէիք ազատուէին։

Կատարեալ	(ր) Ազատուած լինիմ, ազատուած լինիս, ազատուած լինի։ (որ) Ազատուած լինինք, ազատուած լինիք, ազատուած լինին։
Գերբայական	(որ) Ազատուած լինէի, ազատուած լինէիր, ազատուած լինէր. (որ) Ազատուած լինէինք, ազատուած լինէիք, ազատուած լինէին։

ԴԵՐԲԱՅ

Անորոշ Ազատուիլ. Ներկ. ազատուող. Անց. ազատուել, ազատուած. Ապ. ազատուելու։

Հրամայական բայերը կազմվում են ներգործականներից անորոշ դերբայի էջ, էլ, ուլ, ալ վերջաւորութիւնները փոխելով ով ՝ն, (վիլ), միայն երրորդ և յորորդ վերջաւորութեան բայերում ուել մասնիկը դրվում է անցեալ կատարեալի վերջ, այսպէս.

Ներդ.	Ազատել	Հրաւ.	Ազատո՛ւել
,,	Համարել	,,	Համարո՛ւել
,,	Կարդալ, կարդացել	,,	Կարդացո՛ւել
,,	Խոստանալ, խոստացող	,,	Խոստացո՛ւել։

Հրաւորական բայերը խոնարհվում են միակերպ երկրորդ խոնարհման պէս, անորոշ դերբայի ուել մասնիկը պահելով բոլոր ժամանակների մէջ։*

Միայն ած անցեալ դերբայը կարող է ներգործական ձեւով վարուիլ. զոյնզոյն նեղնած զարբաններ. նոր նոխած զինի. ծաղիկներով ընտրուած սրահ։ (Փոխանակ՝ ներկուած, կոխուած, զարդարուած։)

* Որովհետև գաւառական բարբառներում էլ վերջացած բայ՛երը լոնաբհվում են միակերպ էլ վերջացածնելի պէս, այսինքն եղէ վիճակ եղայ (կանգնեցի, խօսեցի, ապրեց, ծնեց), կրաւորականներն էլ լինում են «առ հասարակ եղէ. ՝Ե՛ոօ՝եչէ ՝ե՛ոդ՝ոօ՝եչէՆ, օ՝ե՛ոօ՝եչ:

Դրեցէք ձեզանից մի քանի նախադասութիւններ հետեւեալ բառերով.

Բռնուիլ—փորձուիլ—տանջուիլ—չարչարուիլ—պատրաստուիլ—ուղարկուիլ—ընդուիլ—կարդացուիլ—աղուիլ—մոռացուիլ—լմացուիլ—խոստացուիլ:

§ 111. Բացատական բայերի խոնարհումը:

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	Զեմ խօսում, չես խօսում, չէ խօսում. Չենք խօսում, չէք խօսում, չեն խօսում:
Անկատար անցեալ	Չէի խօսում, չէիր խօսում, չէր խօսում. Չէինք խօսում, չէիք, խօսում, չէին խօսում:
Անկատար հարակատար	Չխօսեցայ, չխօսեցար. չխօսեցաւ. Չխօսեցանք, չխօսեցաք, չխօսեցան:
Վաղանցուկ	Չեմ խօսել, չես խօսել, չէ խօսել. Չենք խօսել, չէք խօսել, չեն խօսել:
2-րդ ներ.	Չեմ խօսած, չես խօսած, չէ խօսած. Չենք խօսած, չէք, խօսած չեն խօսած:
Գերանցուկ	Չէի խօսել, չէիր խօսել, չէր խօսել. Չէինք խօսել, չէիք խօսել չէին խօսել:
2-րդ ներ.	Չէի խօսած, չէիր խօսած, չէր խօսած. Չէինք խօսած, չէիք խօսած, չէին խօսած:
Ապառնի պարզ	Չեմ խօսիլ, չես խօսիլ, չի խօսիլ. Չենք խօսիլ, չէք խօսիլ, չեն խօսիլ:

Ապառ. բացատրեալ	Խօսած չեմ լինիլ, խօսած չես լինիլ, խօսած չի լինիլ: Խօսած չենք լինիլ, խօսած չէք լինիլ, խօսած չեն լինիլ:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	Չէի խօսիլ, չէիր խօսիլ, չէր խօսիլ. Չէինք խօսիլ, չէիք խօսիլ, չէին խօսիլ:
Անցեալ	Խօսած չէի լինիլ, խօսած չէիր լինիլ, խօսած չէրլինիլ. Խօս. չէինք լինիլ, խօս. չէիք լինիլ, խօս. չէին լինիլ:

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Մի՛ խօսիր ՝՝ մի՛ խօսիլ. մի՛ խօսիք:

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	(որ) Չխօսիմ, չխօսիս, չխօսի. (որ) Չխօսինք, չխօսիք, չխօսին:
Անկատար	(որ) Չխօսէի, չխօսէիր, չխօսէր. (որ) Չխօսէինք, չխօսէիք, չխօսէին:
Կատարեալ	(որ) Խօսած չլինիմ, խօսած չլինիս, խօսած չլինի. (որ) Խօսած չլինինք, խօսած չլինիք, խօսած չլինին:
Դերանուանական	(որ) Խօսած չլինէի, խօսած չլինէիր, խօսած չլինէր. (որ) Խօսած չլինէինք, խօսած չլինէիք, խօսած չլինէին:

ԴԵՐԲԱՅ

Անորոշ Չխօսել. Ներկ. չխօսող. Անց. չխօսած. Ապառ. չխօսելու:

Այս օրինակից երեւում է որ

1. Բացատական բայը կազմվում է ընդհանրապէս իւրաքան-

չիւր ժամանակի սկիզբը է դնելով, պարզ ժամանակներում բուն բայի վրայ, բաղադրեալներում օգնական բայի վրայ. էլսօսիմ, էիմ խօսում, խօսած էլինիմ կամ էլինիմ խօսած:

2. *Միայն պարզ ապառնին և պայմ. ներկան կազմվում են նրբ մանրիկի տեղ դնելով եմ բայի բացառական ձևերը և բուն բայն իր սկզբնական ձևը տալով. էիմ խօսել, էիմ գնալ**, *էէի խմանալ***:

3. *Մէ և ոչ բացասական մանրիկները կարող են աւելի սաստկութեան համար բայից յետոյ էլ դասուիլ. ուտիլ մէ, ամաչիլ մէ. մեռնիս ոչ, եկաւ ոչ, խօսում էէ, գտել չէ:*

4. *Բացասական բայերի կրաւորականը հասարակ կրաւորականների կանոնով է խոնարհվում. չեմ համոզված, չէի համոզված, չհամոզուեցայ, չեմ համոզուել, մի՛ համոզուել կամ մի՛ համոզուեք, որ չհամոզուեմ, չհամոզուել չհամոզուող:*

* Ապառնի եզ. 3-րդ դէմքը լինում է էէ խօսել, էէ գնալ (և ոչ էէ խօսիլ, էէ գնալ): Գաւառական բարբառներում էէ ձևը երևում է և ուրիշ ժամանակներում. էէ խօսում. էէ լսեցի. էէ մնացել. Թող էէ նրանայ:

** Գաւառական բարբառներում երբեմն չ տառը բաց է թողնում չեմ խօսէ. չեմ ուլնայ. չէէ ասէ. չէէ գնա. մի գնա. վազէ՛.—որ ոմանք գրաւորի մէջ էլ են գործածում:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ բայերով.

Ջլսել—չսպասել—չդուխել—չազատել—չխօսիլ—չհաւանիլ—չապրիլ—չաչխատիլ—չդադարիլ—չմնալ—չխաղալ—չիմանալ—չվախենալ:

§ 112. Նիլ եւ չիլ վերջաւորուած բայերի խոնարհումը:

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	Հասնում եմ կայլն	Փախչում եմ կայլն
Անցեալ անկատար	Հասնում էի կայլն	Փախչում էի կայլն

Անցեալ կատարեալ	Հասայ	Փախայ
	Հասար	Փախար
	Հասաւ	Փախաւ
	Հասանք	Փախանք
	Հասաք	Փախաք
	Հասան	Փախան
Վաղակատար	Հասել եմ կայլն	Փախել եմ կայլն
Ըղձ. ձև	Հասած եմ կայլն	Փախած եմ կայլն
Գերակատար	Հասել էի կայլն	Փախել էի կայլն
Ըղձ. ձև	Հասած էի կայլն	Փախած էի կայլն
Ապառնի պարզ	Կը հասնիմ կայլն	Կը փախչիմ կայլն
Ապառ. բաղադր.	Հասած կը լինիմ կայլն	Փախած կը լինիմ կայլն

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	Կը հասնէի կայլն	Կը փախչէի կայլն
Անցեալ	Հասած կը լինէի կայլն	Փախած կը լինէի կայլն

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

	Հասիր, հասէք:	Փախիր, փախէք:

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	(որ) Հասնիմ կայլն	(որ) Փախչիմ կայլն
Անկատար	(որ) Հասնէի կայլն	(որ) Փախչէի կայլն
Կատարեալ	(որ) Հասած լինիմ կայլն	(որ) Փախած լինիմ և այլն
Գերակատար	(որ) Հասած լինէի կայլն	(որ) Փախած լինէի և այլն

ԴԵՐԲԱՅ

Ներկայ	Հասնիլ. Ներկ. հասնող. Հասել, հասած. Ապառնի հասնելու:	Անորոշ փախչիլ. Ներկ. փախչող. Անց. փախել, փախած. Ապառ. փախչելու:

Ենել և էնել վերջաւորուած էջերը բայերը և մի քանի նել վերջով ներգործականներ խոնարհվում են երկրորդ վերջաւորութեան բայերի պէս. ո և է տառերը դուրս թողնելով անց. կատարեալում, հրամայականում և անց. դերբայներում:

Կրաւորականները կանոնաւոր է. պեռնուել, պեռնուեցայ, պեռնուել եմ, պեռնուած:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ բայերով:

Գանել—տեսնել—մտնել—դառնալ—հասնիլ—հարկնել—մնռնիլ—թռչել—դիպչել—կպչել:

§ 113. Ցնել վերջացած բայերի խոնարհումը:

Սահմ. անց. ներ.	Հագցրի, հագցրիր, հագցրեց (հագցրուց*) Հագցրինք, հագցրիք, հագցրին:
Հրամայական	Հագցրու. հագցրէք:
Դերբայ անցեալ	Հագցրել, հագցրած:

* կան գրողներ նոյնպէս հագցրեցէք, հագցրեցէ՛ք և հրամ. հագցրեցե՛ք: Միս ժամանակները կանոնաւոր են. հագցնում եմ, ես հագցնեմ, հագցնում:

Ցնել վերջացած բայերը խոնարհվում են առաջին վերջաւորութեան բայերի պէս ո տառը ը փոխուելով անց. կատարեալում, հրամայականում և անց. դերբայներում:

Շէջերը բայերի մեծ մասը ցնել առնելով ներգործական են դառնում, ինչպէս՝ վերցնել, ջնջոցնել, ծաղկեցնել, յագնեցնել*:

Իսկ ներգործականներից քիչ բայ ցնել մանրիկ ընդունելով անցողական է դառնում. այլ սովորաբար նոյն մաքով վարվում է ներգործական բայը պաշ բայով. կանչել պաշ, կարել պաշ, քերել պաշ, պնել պաշ: Իսկ եթէ հարկ լինի յայտնել թէ գործողութիւնը երրորդի ձեռով է կատարվում, պաշ բայը կրկնվում է. գրել պաշ պաւ. կարել պաշ պաւնոյ:

* ցնել վերջաւորութիւնից առաջ երբև յօդակապ կարող են պատահել ո և ե ձայնաւորները. եցնել կը լինին և ը վերջաւորութեան բայերից կազմուածները. ուցնել, եօնցնել. ացնել—դից և դից կազմուածները. էրցացնել, ուցացնել պարզ ցնել, լինում են նել, էել բայերից կազմուածները. հասցնել, թռցնել:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ բայերով:

Խմեցնել—աչխատեցնել—կարդացնել—դարձնել—ամաչեցնել—վախեցնել—խաղացնել—թռցնել—սովորեցնել:

§ 114. Կրկին կատարեալ ունեցող բայերի խոնարհումը:

Կան մի քանի բայեր որոնց անց. կատարեալը և նորանից կազմուած ժամանակները ոչ միայն անկանոն են, այլ երկու ձև կատարեալ ունին: Ա. հաւասիկ նոցա ցուցակը:

Բերել կրաւորական Բերուել:

Անցեալ կատարեալ	Բերի. բերիր, բերաւ, բերինք, բերիք, բերին: Բերեցի, բերեցիր, բերեց. բերեցինք, ցիք, ցին:
Հրամայական եղ.	Բեր, բերէք: Մի բերիլ կամ մի բերիր. մի բերէք:
Դերբայ	Ներկայ բերող. Անցեալ բերել, բերած:

Դնել կրաւորական դրուել:

Անցեալ կատարեալ	Դրի, դրիր, դրաւ. դրինք, դրիք, դրին: Դրեցի, դրեցիր, դրեց. դրեցինք. դրեցիք, դրեցին:
Հրամայական եղ.	Դիր, դրէք: Մի դնիլ կամ մի դնիր. մի դնէք:
Դերբայ	Ներկայ դնող. Անցեալ դրել, դրած:

Անել կրաւորական եանիլ:

Անցեալ կատարեալ	Արի, արիր, արաւ. արինք, արիք, արին: Արեցի, արեցիր, արեց. արեցինք. արեցիք, ցին:

Հրամայական եղ. Արա՛, արէ՛ք։ Մի անիլ ։ոմ մի՛ անիր. մի՛ անէք։
Դերբայ Ներ։ոյ անող. Անցեալ արել, արած։

Ա՛նել կրաւորական ասո՛ւել։

Անցեալ հոգեբեալ { Ասի, ասիր, ասաւ. ասինք, ասիք, ասին։ / Ասացի, ասացիր, ասաց. ասացինք, ասացիք, ցին։
Հրամայական եղ. Ասա՛, ասէ՛ք ։ոմ ասացէ՛ք։ Մի ասիլ ։ոմ մի՛ ասիր. մի՛ ասէ՛ք։
Դերբայ Ներ։ոյ ասող. Անցեալ ասել, ասած։

Թողնե՛լ կրաւորական Լողնո՛ւել։

Անցեալ հոգեբեալ { Թողի, Թողիր, — Թողինք, Թողիք, Թողին։ / Թողեցի, Թողեցիր, Թողեց. Թողեցինք, ցիք, ցին։
Հրամայական եղ. Թո՛ղ. Թողէ՛ք։ Մի՛ Թողնիլ ։ոմ մի՛ Թողներ. մի՛ Թողնէ՛ք։
Դերբայ Ներ։ոյ Թողնող. Անցեալ Թողել, Թողած։

Տա՛լ կրաւորական Տրո՛ւել։

Անցեալ հոգեբեալ { Տուի, տուիր, տուաւ. տուինք, տուիք. տուին։ / Տուեցի, տուեցիր, տուեց. տուեցինք. ցիք, ցին.
Հրամայական եղ. Տո՛ւր, տուէ՛ք։ Մի՛ տալ ։ոմ մի՛ տար. մի՛ տաք։
Դերբայ Ներ։ոյ տուող. Անցեալ տուել. տուած։

Սկե՛լ կրաւորական Սկո՛ւել։

Անցեալ հոգեբեալ { Սկայ, սկար, սկաւ. սկանք, սկաք, սկան։ / Սկեցի, սկեցիր, սկեց. սկեցինք, ցիք, ցին։
Հրամայական եղ. Սկի՛ (սկսիր). սկէ՛ք (սկեցէ՛ք). մի՛ սկսիլ ։ոմ մի՛ սկսիր. մի՛ սկսէ՛ք։
Դերբայ Ներ։ոյ սկսող. Անցեալ սկսել. սկսած։

Ա՛նել կրաւորական Ա՛նո՛ւել։

Անցեալ հոգեբեալ { Առայ, առար, առաւ. առանք, առաք, առան*։ / Առի, առիր, առեց. առինք, առիք, առին։
Հրամայական եղ. Առ. առէ՛ք։ Մի՛ առնիլ ։ոմ մի՛ առներ. մի՛ առնէ՛ք։
Դերբայ Ներ։ոյ առնող. Անցեալ առել, առած։

Տա՛նել կրաւորական Տարո՛ւել։

Անցեալ հոգեբեալ { Տարայ, տարար, տարաւ. տարանք, տարաք, բան / Տարի, տարիր, տարեց. տարինք, տարիք. տարին։
Հրամայական եղ. Տա՛ր, տարէ՛ք։ Մի՛ տանիլ ։ոմ մի՛ տաներ. մի՛ տանիք։
Դերբայ Ներ։ոյ տանող. Անցեալ տարել, տարած։

* Դասին ձևը ժողովրդական բարբառներում գործ է ածվում գրել բայի մասով։

Թէև անցեալ կատարեալի երկու ձևն էլ անխտիր վարվում են, բայց աւելի սովորական է առաջին ձևը, միայն եղ. երրորդ դէմքում ես վերջաւորութեամբ. Բերի, Բերիր, Բերէս. Բերին* Լայլն։ Դրի, դրիր, դրէս. դրին* Լայլն։

Կրաւորականների մէջ կան որ կանոնաւոր են, ինչպէս՝ բերել, Բերո՛ւել, առնել ասո՛ւել. կան էլ որ անկանոն. տալ, պատո՛ւել, դնել, դրո՛ւել։ Բայց կոնարհումները կանոնաւոր է. Բերո՛ւեմ, Բերո՛ւես, Բերո՛ւեայ, նէ Բերո՛ւի, Բերո՛ւինք, Բերո՛ւիք, Բերո՛ւած։ Դրվե՛մ, դրո՛ւեսց, դրո՛ւեայ, դրո՛ւող, դրո՛ւել։

Բոլորովին անկանոն կոնարհում ունին գալ և ասել բայերը, որոնց կատարեալի արմատը ներկայի արմատի հետ ոչինչ նմանութիւն չունի։

Գա՛լ

Անցեալ հոգեբեալ Եկայ, եկար, եկաւ. եկանք, եկաք, եկան։

Հբոմայական եղանակ:	Ե՛կ ։ոմ արի, եկէք:
Դերբեայ	Ներկայ եկող, Անցեալ եկել, եկած:

Ո՚ՊԵԼ կրաւորական Ո՚ՊՈՒԵԼ:

Անցեալ հոպոյբեալ	կերայ, կերար, կերաւ, կերանք, կերաք, կերան:
Հբոմայական եղանակ:	կեր. կերէք:
Դերբեայ	Ներկայ ուտող. Անցեալ կերել, կերած:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ վերոյիշեալ բայերի անկանոն ժամանակներով:

§ 115 Անդէմ բայեր:

Անդեմ կամ ինդեմ կոչվում են այն բայերը, որոնք միայն եզ. երրորդ դէմքով են վարվում:

Կան բոլոր անդէմ բայեր, և կան պարտադիր անդէմներ:

1. Բոլոր անդէմ են այն բայերը որ միայն եզ. երրորդ դէմք ունին. ինչպէս. պէտք է, հարկ է, բաւ է, հերիք է, մեղք է, ամօթ է, և այլն:

2. Պարտադիր անդէմ կոչվում են այն դիմաւոր բայերը, որոնք առանձին մտքով վարվում են իրրև անդէմ. այսպէս են բնութեան երևոյթները և կենդանիների ձայները. ամպել, անչքանել արտաշ, ցուցադրել, ցրտանալ, ձմռանել, ցանել, գոռալ: Բայց նմանութեամբ կարող են ամէն դէմքերով դործածուիլ:

Կան չէզոք և մանաւանդ կրաւ. բայեր որ անդէմի մտքով վարվում են. այսպէս են՝ երևում է, լսվում է, ծնում է, հնչում է, ասվում է, լսվում է, կոչվում է:

§ 116. Դիտելիք բայերի վրայ:

1. Գալ, պալ, լալ միավանկ բայերի ներկան ու անց. անկատարը լինում են ի վերջաւորութեամբ, որ անորոշ կերբայի

ներգոյականն է. գալիս եմ, պալիս է, լալիս են: Հարցական և բացասական նախադասութիւնների մէջ եմ օդնական բայը նախադասելով ։ տառը բաց է թողվում, բայց և կարող է պահպանուել: Այսպէս ասում են՝ Ո՞վ է գալիս և Ո՞վ է գալն: Չեմ պալիս և չեմ պալիս:

2. Եմ, իմ, անիմ, գիտեմ բայերի սահմ. ներկան և անցեալ անկատարը գրաբար ձևով է լինում. իմ, իս, իյ. իմք, իք, անս: Ունիմ, ունիս. ունէիմք, ունէիք: Գիտեմ, գիտիս. գիտէի, գիտէիք: Երբեմն նաև ասացէք ինձ ասէիմ: Կարծեմ թէ իրաւունք ունիմ: Ցուցամ թէ խոստմունքդ կը կատարես: (փոխանակ խնդրում եմ, կարծում եմ:)

Սրբա իսկապէս պակասաւոր են և լրանում են իրանց նոյնանշաններով. եմը լինել իական բայով. իմ—իէնալ, ունիմ—ունէնալ, գիտեմ—գիտէնալ որոնք խոնարհվում են ի վերջաւորութեան բայերի պէս:

3. Բաղադրեալ բայերի մէջ բուն բայն է խոնարհվում և իր մասնիկ ընդունում. անց եմ իէնալ. մանի՛ծէք. ծախ իր պատ շաղ իր պալին. և այլն: Միայն պիտի կամ պիտ է անդէմ բայն միշտ առաջին բառի վրայ է դրվում. պիտի, շաղ պանի, պիտի տան գայիք:

4. Ներգործական և կրաւորական բայերը չէզոքի միտք են ընդունում, եթէ իրանցից յետոյ լրացուցիչ բառեր չունին. ինչպէս. Շարունակ իպտամ է: Մարդիկ ուտում ու խմում են: Այս տունը ծախվում է: Արմաւիրը շինուեցաւ երասխի վրայ:

5. Կրաւորականի ունի մասնիկը ընդունում են մի քանի ներգործական բայեր, որոնք ցոյց են տալիս 1) փոխադարձ դործողութիւն, որով երկու կամ աւելի առարկայ միմեանց վրայ

ներգործում են. պետու-իլ, լուխ-իլ (ձեռուիլ), այսինքն ինձանից տեսնել, թակիլ: Ա. այս տեսակ բայերը կոչվում փոխադարձ: 2) Ա. յնպիսի գործողութիւն, որով առարկան ինքն իր վրայ է ներգործում. ինչպես. պըճու-իլ, ասդըս-իլ, լուացու-իլ, խեղդու-իլ, այսինքն ինձ ինձ երես սրբել, խեղդել: Ա. այս տեսակ բայերը կոչվում են անդրադարձ:

Փոխադարձ և անդրադարձ բայերը խոնարհվում են կրաւորական բայերի պէս:

Թ. Մակբայների կազմութիւնը.

§ 117 Բուն մակբայներ:

Բուն մակբայները կամ պարզ բառեր են, ինչպես երբ, թող այժ, ուր. կամ պարզ բառերից առաջ եկած են այլևայլ մասնիկներ ու հին հոլովական վերջաւորութիւններ ընդունելով:

1. Ես, էտ մասնիկները ժամանակական մակբայների համար. երբես, ոչ երբէտ:

2. Բուր, բէն, պես, ղէ մասնիկները որակական մակբայների համար. եղբայրաբար, հայերէն, վերջապէս, յանկարծակի:

3. Ի-, ա-, ով գործիականի վերջաւորութիւնները որակական մակբայների համար. հազի-, կամա-, շտապով, բարով:

4. Ա.նց, ա-ց բացառականի վերջաւորութիւնները որակական և ժամանակական մակբայների համար. սրտանց, երեսանց, վաղա-ց, հնա-ց:

§ 118. Անուններից ու ներանուններից առնուած բառեր:

Հայերէն լեզուի մակբայների մեծ մասը փոխ առած են դոյական ու ածական անուններից և ներանուններից, որոնցից շատը յօդ են ընդունում և հոլովում են:

1. Գոյական անուններից առնուած մակբայները, եթէ տեղական են, կարող են յօդ ընդունել և հոլովիլ Ա. հոլովման պէս եզ. և յոգ. ինչպես. վերի- կամ վերևը, վերևից, վերևա-ը. ներքի-, ներքևից, ներքևով, ներքևա-. դուռ- կամ դուրսը, դրսից, դրսում, դրսերը, եռևներից, եռևներում, եռևներովը, եռևներո-ը*: Նոյնպէս և տեղ ու ետոյ գոյականներով և այս, ո՞ր ներանուններով ու ձեզ նախադրութեամբ. այստեղ, ո՞րտեղ կամ որ տեղ, որ տեղից կամ որ տեղից. այն տեղից. մէջ տեղը, մէջ տեղից, մէջ տեղովը, մէջ տեղո-ը. մէջ տեղերը, մէջ տեղերից, և այլն:

* Սոցա տեղականներից կազմւում են ածականներ. նախատակի-ը ու երէկ տաները. դեմ-դեմ տանը. վերի-ի յատակը. դրսե պատուհանը:

Ժամանակականները հոլովւում են միայն եզ. բացառական ա-անից վերջաւորութեամբ. այսօր, այսօրա-անից. երէկ, երեկա-անից. վաղը, վաղա-անից. հետոյ, համակա-անից:

2. Ածական անունները բայի վրայ դրուելով մակբայ են դառնում, առանց ուրիշ որևիցէ փոփոխութեան. ա-ղէղ խօսել. ծանր լսել. խոր քնել. քաջի մահճել. քաջչարչոյն աղաղակել. կամ էբէղ գոյականի գործիական հոլովով. խելացի էբէղով գործ կատարել. ծանր էբէղով քննել:

3. Ներանուններից կազմուած մակբայները սակաւ են: Այսպէս են այս, այդ, այն ներանուններից՝ այսպէս, այդպէս, այնպէս որոնք և գործիական հոլովով վարվում են. այսպէսով, այդպէսով, այնպէսով: Իսկ այն, նոյն ներանուններից՝ այնպէս, նոյնպէս:

Գաւառական բարբառներում կան բազմաթիւ դէրանուանական ձակբայներ, որոնք գրաւոր լեզուի մէջ մուտք չեն գտել, կամ շատ հազիւ գործ են ածւում: Այսպէս են հօրեռ, հօրեդ, հօրէն կամ հրճա. տուած. հրե՛, հրեդ, հրէն. (գրոց աւասիկ, աւադիկ, աւանիկ). Եոդէ, ենդէ, (այար, անդր կամ առա, անդ) Եոդհէց, ենդհէց. (առաւել, անդրի) դէ-դէն կամ դէռս-դէն. (կրճատուած և ամփոփուած գրոց 'դ ասյ, 'դ ասյ այսինքն ընդ ասյ, ընդ ասյն նախդիւ հոլովներից:)

4. Վերջապէս կան դոյ. ու ածական անուններ և նոյն իսկ մակբայներ որ կրկնութեամբ են վարւում, անփոփոխ կամ հոլոված դրաբարի ձևով. փեղ փեղ նստել. կոտ կոտ շարուիլ. Ընել ընել բաժանել. Տանը տանը կտրել. Ձեռ ձեռ խօսիլ. Հոմայ հոմայ շարժել. շուռ շուռ առաջ գնալ.—օրէցօր, ծայրէ ի ծայր, պռանդ պռաւը, հեռուհեռէ, դէմ առ դէմ և այլն:

§ 119. Մակբայների դործածութիւնը:

Մակբայները դործ են ածւում հարցական, պատմական և պատասխանական նախադասութիւնների մէջ: Հարցական նախադասութիւնների մէջ դործ են դրւում հարցական մակբայները պատասխանականների մէջ նոցա համապատասխանող պատասխանական մակբայները:

Հարցական.	Պատասխանական.
1. Տեղական	
ա) Ո՞ր-ը կամ ո՞ր տեղ.	այս տեղ, այն տեղ, շատ տեղ, ամէն տեղ, ոչ մի տեղ. վերև, ներքև դուրս, ներս, հետ, առաջև, տակը, վրան, նայն:
բ) Ո՞ր տեղից.	այս տեղից, այն տեղից, ամէն տեղից, հետևից, ներքևից, դրսից, ներսից, նայն:

2. Ժամանակական.	
ա) Ե՞րբ.	այժմ, միշտ, երբեմն, վաղ, ուշ, կանուխ, արդէն, առաջուց, յետոյ, երբէք, ոչ երբէք:
բ) Ո՞ր ժամանակից.	հետևանից, այսօրուանից, առաջուանից, առաւօտուանից:
գ) Մինչև ո՞ր ժամանակ:	մինչև այժմ կամ մինչև հիմայ, մինչև վաղը:
3. Որակական Ի՞նչպէս.	այսպէս, նոյնպէս, յայտնի, հայրաբար, կամայ ակամայ, սիրով, արագ, ծուռ ծուռ, և այլն:
4. Քանակական. Քանի՞, ո՞րչափ.	այսքան, այսչափ, նոյնքան, շատ, սակաւ, քիչ քիչ, շատ շատ:

Բացի սորանից հարցական մակբայները դործ են ածւում իբրև յարաբերական մակբայներ, երբ որ երկրորդական նախադասութիւնները կապւում են գլխաւորների հետ. ինչպէս. Ուր փեղ գնաս, այն տեղ գդակը ծածկիր:

Ժ. Նախադրութիւնների կազմութիւնը.

§ 120. Բուն նախադրութիւններ:

Հայերէն լեզուի մէջ բուն նախադրութիւն շատ քիչ կայ. որոնք դասւում են ոմանք հոլովական բառերից յետոյ, ոմանք էլ առաջ:

1. Յետադաս նախադրութիւնները տրական հոլովով բառն են պահանջում իրանցից առաջ այսպէս.

Ա.յս դրքերը ֆեղ հոմաբ են: Ինչ պէս տակարին յաղթեց: Ո՞ր հէք տեսնուեցաբ: Մեղ տօ է բնակում: կամ առաջական յօ-դով՝ հետս, հետդ, հետը. մեռս, մեռդ, մեռը կամ մեռնէ. հետ-ներս, մեռներդ:

Ձեր ուզածին չափ*: Նորա պատուէրներին համեմատ: Բաղմութեան կանքին հակառակ:

* կան դրուղներ սեռականով չէր հաբար, չէր մեռ, չէր պէս, եր չափ:

2. Ենթադասները նոյնպէս տրական հլոով են պահան-ջում. ոմանք ուրիշ հոլովներ էլ:

Ա.ոնց ինչ չգնաք: Ա.ոնց բան ասելու հեռացաւ: Փոխանակ օտարին պոլու: Դէպի ծով են գալիս: Ընկնել ֆեղ կը հասնի:

Դէպի, մինչև, մինչ նախադրութիւնների հոլովը, եթէ գոյական է կամ անորոշ դերբայ, հայցական է դրվում. դնա-յին դէպի առն: Մինա ձեր գալը, մինչև գնշել ապասելինք:

Բացի պահանջում է բացառական հոլով. Ամէնքը թողին ու գնացին. բացի ինչոնից ու չեղոնից:

Իբրև, ինչպէս նմօքի նմանութին նայելով կարող են ամէն հոլով առնել. Իբրև կամ ինչպէս թշնամի վարուելցաւ: Իբրև օտարից հեռանում է, նուիրում եմ ձեզ իմ աշխատանքը, իբրև ամենօտ բոլորիս:

§ 121. Գոյականից ու մակբայից առնուած նախադասութիւններ

Կան շատ գոյական անուններ ու մակբայներ որ նախա-դրութեան մեջով են վարվում.

1. Գոյական անուններից առնուած նախադրութիւնները իրանցից առաջ սեռական հոլով են պահանջում և կարող են յօդ առնել ու հոլովել. զորօրինակ.

Ա.նտառի ջրէն, անտառի ջրի (ծառերը), անտառի ջրէին, անտառի ջրիցը, անտառի ջրիցէն, անտառի ջրիցէն:

Նոյնպէս և յոգնակի. անտառի ջրերը, տան եաներերը, պա-րտէզների վրաներիցը, քաղաքների ասոյներո՞ր ևայլն:

Ա.հա և ուրիշ օրինակներ, տան ջրի, տան կող, պարտէզի վրայ, սեղանի պոչ: կամ տակացական յօդով՝ եռևս, մեջը, տա-կը, վրաները:

2. Մի քանի հոլոված դոյականներ կան (դորճական հո-լովով) որ նախադրութեան մեջով են վարվում. զորօրինակ.

Ա.տուածաշունչն մեծ մասը թարգմանուեցաւ տուրը Սահակի ձեռով:

Լրագրների ջրոցով հրատարակուած լուրերը միշտ չեն ճշմարտվում:

Վիճակագրական տեղեկութիւններին նայելով հայոց թիւը հասնում է մինչև չորս ու կէս միլիոն:

3. Մակբայներից առնուած նախադրութիւնները իրան-ցից առաջ բացառական հոլով են պահանջում*. ինչպէս.

Ասօսելոց ասոջ պէտք է մտածել: Ձաշից յետոյ տոլորութիւն ունի հանգստանալու: Դասից հետո մնաս: Բոլորից պռոտ միասաս: Օգոստից ասելի ոչինչ միտս չկրեց: Ամէն բանից հետո է: Մօրից առաջ ձանապարհ ընկաս:

* Տորանով զանազանում են նախադրութիւնները մակբայներից:

ԺԱ. Շաղկապների կազմութիւնը.

§ 122. Ա.րմատական եւ ածանցեալ շաղկապներ:

Շաղկապների պաշտօնն է նախադասութիւնները միմեանց հետ կապել:

Ըստ կազմութեան շաղկապները լինում են պարզ և ածանցեալ:

Արմատական շաղկապներն են՝ ե՛, ու՛, եւ, ոչ, ևէ, կամ քայց, եթէ:

Իւրաքանչիւր մանր-բանի շաղկապն նշանակութիւն է ըստանում, եթէ խօսք խօսքի հետ կապում է: Այս պատճառով շաղկապները ածանցվում են.

1. Գոյական անուններից, անխուխս կամ հոլոված. նախադրութիւններով. անգամ, ըստ նմանի, պղծութեամբ:

2. Դերանուններից և թուական անուններից. այնպէս, այնուամենայնիւ, ըստ որում, ասելով, երէկուզ և այլն:

3. Բայերից. կարծես ևէ, ասես ևէ, ևող ևէ:

4. Մակբայներից. այսպէս, ինչպէս որ, այնպէս որ:

5. Նախադրութիւններից. երբե՛ ևէ, որպէս ևէ:

§ 123. Շաղկապների գործածութիւնը.

Շաղկապների գործածութիւնը կախուած է նախադասութիւնների նշանակութիւնից: Բայց կան մի քանի հարկաւոր դիտելիքներ ամենագործածական շաղկապների վրայ:

1. Ե՛, ու՛.—Այս շաղկապները ընդհանրապէս նոյնանշան են. բայց տեղ կայ, որ աւելի մէկն է գործածվում, և տեղ կայ որ միւսը:

Ե՛ շաղկապը սովորաբար նախադասութիւն նախադասութեան հետ է կապում, իսկ ու՛ նախադասութեան անդամները իրարու հետ. ինչպէս. Բազմութիւնը դիմեց քաղաքից դուրս, և մարդ ու՛ կին, մեծ ու՛ փոքր անհամբերութեամբ սպասում էին դիմաւորելու իշխանին:

Ո՛ շաղկապը գործ է ածվում մանաւանդ ո՛ յօդով բա-

ռերի հետ. Մարդն ու՛ կենդանին. Ջեռն ու՛ ոտը. Օգտակարն ու՛ զուարճալին:

Միևնոյն բայը կրկնուելով ու՛ շաղկապով կապվում է գործողութեան կրկնութիւնը կամ շարունակ տևողութիւնը յայտնելու համար, այսպէս. Պարապ նստած խօսո՛ւմ է ու՛ խօսո՛ւմ: Խեղճերը էրթա՛ն ու՛ էրթա՛ն մինչև լաւ կշտացան: գնաց ու՛ գնաց: գնա՛ս ու՛ գնա՛ս:

2. Թէ և ո՛չ շաղկապները շատ անգամ միմեանց տեղ կարող են վարուիլ. բայց առ հասարակ սահմանական եղանակի հետ ևէ է վարվում. ստորադասականի հետ ոչ, ինչպէս. խոստացաւ ևէ կը գայ, կը տանէ մեզ: խոստացաւ ոչ գայ, տեսնէ մեզ:

Ե՛, այս շաղկապներից յիշոյ, ուր զլխաւոր նախադասութեան բայն զօրութեամբ է իմացվում, թէ շաղկապ է դրվում՝ թէև խօսքը ոչ շաղկապով սկսած լինի. այսպէս. Ճշմարիտ է ոչ ամենահատաղն գաղաններն անգամ կերակրում են իրանց ձագերը, և ևէ մօր պէս են հոգում նոցա բոլոր պիտոյքը: (Այսինքն՝ ճշմարիտ է ոչ մօր պէս.....:)

3. Շաղկապները խօսքի մէջ գործ են ածվում մէկ մէկ, ինչպէս. ե՛, եւ, ոչ, և այլն. կամ երկու նոյն և նման շաղկապներ կրկնվում են. ոչ—ոչ, ևէ—ևէ, կամ—կամ, ե՛—ե՛. և կամ վերջապէս ուրիշ ուրիշ շաղկապներ երկու երկու են դրվում, այնպէս որ նոցանից միևը պատասխանում է միւսին. եևէ—ուրիշ, ևէպէս ե՛—քայց, ոչ միայն—այլև, և այլն:

4. Միևնոյն շաղկապը դասաւորութեան նայելով այլևայլ նշանակութիւն կարող է ունենալ. ինչպէս. Անօգնականն մնա-

ջինք՝ Ե՛ ես, Ե՛ դու, կամ ես ԵԼ, դու ԵԼ,* (այսինքն ԼԵ՛ ես, ԼԵ՛ դու)։ Լա՛վ դուք ո՞ւր էիք։ Թշնամին խո՛վ խոստովանում է նո՛ր արժանաւորութիւնները (այսինքն՝ Թշնամին ԽՈՎ)։

* ԵԼ (ղրբր. ՈՅԼ) շաղկապ է, ԼԵՔ յետադաս վարուի, և մակբայ՝ ԼԵՔ նախադաս. տեսայ ԵԼ, ճանաչեցի ԵԼ։ ԵԼ չտեսայ ձեր ասած մարդուն (այսինքն ՈՅԼ ԼՈ)։

ԺԲ. Զայնարկութիւնների կազմութիւնը.

§ 124. Զայնարկութիւնների տեսակները։

Զայնարկութիւնները, իբրև բոլէական զգացմունքներ բացատրող հնչիւններ, իսկապէս ոչինչ իմաստ չեն պարունակում. նոքա ակամայ հնչիւններ են նման թռչունների երգին, շան հաչելուն, կատուի մլաւելուն եւայլն։ Այս վերջին հնչիւնները էլ մենք ընդունում ենք և ձայնարկութիւններով արտայայտում։ Սորանից առաջ են գալիս երկու տեսակ ձայնարկութիւններ. ԽՈՎՈՂ ՅՈՅ և ԲԱՑԱԳԱՆՉԱԿԱՆ ձայնարկութիւններ։

1. Ընդհանուր ձայնարկութիւններով մենք արտայայտում ենք անշունչ առարկաների և կենդանիների հնչիւնները. ինչպէս. ՀՐ ԼԻ, ԼՐ ԼԻ, ՃՈ՜Ո, ՀՐ ԼԻ, Պ՜ՈՓ—Պ՜ՈՓ, ՊՈ՜Ո (ադաւաւի), ՀՈ՜Ո (շան), ՅՈ՜Ո (կատուի), եւայլն։

2. Բացատանչական ձայնարկութիւնները արտայայտում են մարդուս այլ և այլ զգացմունքները, այսինքն՝ ուրախութիւնը. Ո՜Հ, Ա՜Հ։ Տրտմութիւնն ու ափսոսանքը.—ՎՈՅ, ՎՈ՜Հ, ՎՈ՜Ի, Ո՜Հ Ա՜Հ, ՈՒՈ՜Ի, ՈՒՆՈ՜Ո։ Յանկութիւնը.—ԷՔՈՆԵ՛, ԷՔՈՆԵ՛ ԼԵ՛, ԷՔՈՆԵ՛ Ի, Ո՜Ր Է ԼԵ՛։ Խարհութիւնը.—Ա՜Յ, ՀԱՅ։ Զզուանքը.—Ո՜Հ, Է՜Հ։ Կոչական ձայնարկութիւններ.—Ա՜, Ա՜Ի, Ա՜, Ա՜, Է՜։ Յուցական՝ ՈՆԱ՛ և ընտանեկան լեզուի մէջ՝ ՀՈՐԷ՛Ո, ՀՈՐԿ՛Ո։

§ 125. Զայնարկութիւնների ժողով գործ դրուած Մասունք—Բանի։

Իւրաքանչիւր ձայնարկութիւն կարող է մեկնուիլ մի որևէ իցէ նշանական բառով և մինչև ամբողջ նախադասութեամբ։ Զորօրինակ. ՊԷ՛ՔԸ նշանակում՝ «դնա՛ այստեղից». Կ՜-ԱԲՐԻ՛ ԱՅՍՏԵՂ. ՀԸ՞—«ի՞նչ ես ասում». ՈՒՈ՜Ո—"լուռ կաց,,։

Այս պատճառով ձայնարկութիւնների մնքով շատ անգամ վարվում են

1. Գոյական անուններ. ՀԵՂԷ, ՂԱՐՆՈՒՄ, ՈՂՋՅՈ՜Ո, ԼՈՈՒԼԸ՜Ո։
2. Ածական անուններ. ՈՒՈՂՈՒ՜Ո, ՊԻՐՂԷ, ԲՈՐԸ՜Ո։
3. Բայեր. ՈՒԼԸ՜Ո, ՏԵՂՅ, ՀԵՑՅԸ՛ (ղրբր. ՀԵՒԼ բայից)։
4. Մակբայներ. ՀԵՈՒ՜Ո, ՊԷ՛ՆԸ, ՊՈՒ՜ԲՈ, ՈՒՈՒ՜Ը։
5. Դերանուններ. Ի՛ՆՉ (Ի՞ՆՉ ես ասում՝)։
6. Ամբողջ նախադասութիւններ. ԱՈՈՒՈ՜Ծ ՈՒՐ։ ՓՈ՜Փ ԱՈՈՒՈ՜Ծ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԲԱՂԴԱՍՈՒԹԻՒՆ

§ 126. Բաղդասութիւն եւ նորա բաժանումը։

Ստուգաբանութիւնը իւրաքանչիւր Մասն—Բանի առանձին առած քննում է ու նոցա կազմութիւնը ցոյց տալիս. բայց թէ ինչպէս պէտք է բառերը կարգաւորել որ հասկանալի խօսք կազմուի, այդ ուսուցանում է մեզ Քաղդասութիւնը։

Ուրեմն Քաղդասութիւնը քերականութեան այն մասն է, որ ուսուցանում է թէ ինչպէս պէտք է առանձին բառերը միմեանց հետ կապակցել, որ հասկանալի ու կարգաւորեալ նախադասութիւն կազմուի, նախադասութիւններից էլ ամբողջ խօսք։

Առանձին բառերից ու նախադասութիւններից հասկանալի խօսք կազմելու համար, լեզուն երկու միջոց է տալի մեզ. 1. փոփոխական մասանց-բանի վերջաւորութիւնները փոխել և 2. շաղկապները ու նոցա մտքով գործ դրուած պերասութիւնները և տեղքերը։ Առաջին միջոցը տեղիք ունի գլխաւորապէս պարզ նախադասութիւնների մէջ, երկրորդը—բաղադրեալ նախադասութիւնների մէջ։

Այս հիման վրայ բաղդասութիւնը բաժանվում է երկու գլխաւոր մասն։ Առաջին մասը ցոյց է տալիս՝ թէ երբ և ինչի համար պէտք է փոխել փոփոխական մասանց-բանի վերջաւորութիւնները։ Բաղդասութեան այս մասը կոչվում է Կապակցութիւն տասանց-բանի։ Երկրորդ մասը ուսուցանում է՝ թէ երբ և ինչ շաղկապներ (դերանուններ և մակբայներ) պէտք է գործ դնել նախադասութիւնները յարմարաւոր կերպով կապելու համար։ Համաձայնութեան այս մասը կոչվում է Կապակցութիւն նախադասութիւնների։

Բայց բառերը միմեանց հետ կապվում են երկու ձեղանակով. կամ մէկ բառ միւսի հետ հոլովիչն է դրվում թուով, հոլովով կամ դէմքով, և կամ պահանջում, ինչպէս որ իւրաքանչիւր կախում ունեցող բառը այս կամ այն հոլովով դրուի։ Այս պատճառով մասանց-բանի կապակցութիւնը բաժանվում է երկու առանձին մաս. 1. Համոիչութիւն տասանց-բանի, և 2. Խնդրութիւն տասանց-բանի։

Այսպէս և նախադասութիւնների կապակցութիւնը երկու տեսակ է լինում, նայելով թէ բաղադրեալ նախադասութիւնը կազմուած է մի գլխաւոր և մի կամ աւելի երկրորդական նախադասութիւններից, թէ այնպիսի նախադասութիւններից որոնք քերականօրէն կախում չունին միմեանցից, այլ ընդհակառակն իւրաքանչիւրն առանձին առած՝ ամբողջ ու անկախ միտք է պարունակում իւր մէջ։ Այս պատճառով նախադասութիւնների կապակցութիւնը բաժանվում է նոյնպէս երկու մաս. 1, Երկրորդական նախադասութիւնների հոլովիչութիւնը, 2. Անհոլով նախադասութիւնների հոլովիչութիւնը։

ՀԱՑՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Կապակցութիւն Մաստոց-Բանի

Ա. Համաձայնութիւն Մաստոց-Բանի.

§ 127 Բայի համաձայնութիւնը ենթակաների հետ պարզ նախադասութեան մէջ։

1. Պարզ նախադասութեան մէջ* բայը համաձայնում է ենթակայի հետ դէմքով և թուով. այսինքն՝

Ա. Եթէ ենթական առաջին դէմքի է, բայն էլ առաջին դէմքով է դրվում, եթէ երկրորդ կամ երրորդ դէմքի է, նոյնպէս բայն էլ երկրորդ կամ երրորդ դէմքով է դրվում. զորօրինակ. ես գնում եմ գիւղ։ Դու նիր տես այստեղ։ Նոքա չեն փարիզում։

Բ. Եթէ ենթական եզակի է, բայն էլ եզակի է դրվում, իսկ եթէ յոգնակի է՝ յոգնակի, ինչպէս. Աբեգեանը խոսուեցաւ։ Գարունքին ծառերը ծաղկում են։

* Պարզ ասելով այստեղ հասկանում ենք և այնպիսի նախադասութիւն, որ կազմուած է երկու կամ աւելի նախասութիւնից, որոնց ցոյց իրաքանչիւրը մէկ ենթակայ ունի և մէկ ստորոգեալ (բայ)։

2. Հաւաքական բառերը, թէև յոգնակի նշանակութիւն ունին, սովորաբար եզակի բայ են պահանջում. ինչպէս. Մեծ քաղաքներում հաւաքուեցաւ ժողովուրդը։ Ժողովուրդը ոտի հանգիստեցաւ և իւր շնորհակալութիւնը յայտնեց նախագահին։

Բայց երբեմն յոգնակի է դրվում բայն, մանաւանդ եթէ ենթակայի մօտ յոգնակի սեռ. յատկացուցիչ լինի. զորօրինակ. Բոլոր ժողովուրդը միաբերան բողոքեցին դատաւորի անիրաւութեան

դէմ։ Աշակերտների հինը վարձատրութիւն ստացան։ Հայոց պատմագրները մեծ մասը լատինացած են եւրոպական լեզուներով։

3. Եթէ եզակի ենթակայի հետ թուական անուն լինի, բայն կարող է դրուիլ թէ՛ եզակի և թէ՛ յոգնակի. ինչպէս. Երկու տարի բանդից փախաւ։ Հինգ լուսնեակ ապատուեցաւ թշնամիների ձեռից։ Վարդանանց պատերազմում հարիւր երեսունուվեց հոգի ընկան Հայոց ազգի անկախութեան համար։

4. Եթէ եզակի ենթակայի մօտ երկրորդական առարկայ լինի հետ նախադրութեամբ սեռական հոլովով, որ գլխաւոր առարկայի գործողութեան մասնակցութիւն ունենալ է ցոյց տալիս, բայն յոգնակի է դրվում, եթէ կամենանք որոշակի յայտնել երկրորդական առարկայի մասնակցութիւնը, եզակի՝ եթէ բոլոր գործողութիւնը կենդրոնացնում ենք ենթակայի մէջ. ինչպէս. Հայրս մօտ հետ գիւղ գնացին։ (Այսինքն՝ Հայրս ու մայրս գնացին։) Եղբայր եղբօր հետ հաշտ չէ ապրում կամ չեն ապրում։

---

1. Հետևեալ նախադասութիւնները զրաբարից աշխարհաբար թարգմանեցէք և ցոյց տուէք երկու լեզուների հատաձայնութեան մէջ եղած նմանութիւնները ու զանազանութիւնները։

Հովիւ՝ տրտնջէն զխաչինս։—Աբեգեան լուսաւորէ զամենայն տիեզերս։ Աւուրս իմ որպէս հովանի անցին և ես որպէս խոտ ցամաքեցայ։—Դուք էք աղ երկրի, ապա թէ աղն անհամ իցի։—Մինչ զբանս տնեն և ինձ զկերակուրս ճաշակեն։—Ի բառնալ ազգին Արշակունեաց պիրուզն աշխարհիս Հայոց ազգն Սասանայ Պարսկի։—Անենայն տարի աչօք բացօք պտուղներ։ Ժողովուրդն ոչն ուներ Զաքարիայ և ղրմանացին ընդ յամեղն նորա։ Հինգ հատ երկուց դանդաց վաճառի։—Էին անդ երիտասարդ ոչիւր ջուրց։—Քանի էլեկտրական զիւրաքանչիւր ոք ի մեծամեծ աւազանացն Հայոց տուրք Ղևոնդ

հանդերձ երանելեաւն Յովսեփա։ Ցեւեալ մարդին զծիծառն նոսաւ ճանապհէն դնասանել գարնայնոյն։—Մարդոյ ’ի սուրբ օրս վայելել առողջագոյն լինի։—Թողեալ յեղ զԱստուած քարանց պաշտօն մատուցանելիք։

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ ենթակայի ու բայի համաձայնութեան պարզ նախադասութեան մէջ։

§ 128. Բայի համաձայնութիւնը միաւորեալ նախադասութեան մէջ։

1. Միաւորեալ նախադասութեան մէջ, ուր երկու և աւելի եզակի կամ յոգնակի ենթականեր կան, բայն յոգնակի է դրվում, եթէ բոլոր ենթականերին է վերաբերում. այսպէս. Աղջիկն ու հարսնաքոյր հաւասարապէս վայելում են բնութեան պարգևները։ Հայոց նախնիքն ու հոգեւորականքը մեծամեծ արտօնութիւններ ունէին։

2. Երկու և աւելի եզակի ենթակաների բայն եզակի է դրվում.

Ա. Երբ ենթակաները նոյն կամ նման նշանակութիւն ունին. ինչպէս. Մարդուս էնտիկն ու գոյութիւնը զանազան հանգամանքներից է խնամուած։ Ամէն բանի մէջ չափ ու սահման կայ։

Բ. Երբ հետզհետէ դասուած ենթակաները պարունակվում են վերջին ենթակայի մէջ, որ սովորաբար անորոշ դերանուն է լինում. այսպէս. փառք, պատիւ, հարստութեան բոլորը կորաւ։ Հարուստ, աղքատ, մեծ կամ փոքր, ոչոք ապրած չէ մահից։

Գ. Երբոր ենթակաները կապուած են ոչ միայն-այլև, կամ-կամ նէ-նէ և այլն շաղկապներով, որովհետև այդպիսի տեղերում բայն միւս ենթակաների մօտ զօրութեամբ է իմացվում. Ոչ միայն եւրոպան, այլև Ասիան ճանաչէց Հռոմայեցոց իշխանութիւնը։ (Ասիանքն՝ ոչ միայն եւրոպան ճանաչէց։) Պապանէնք, ինչպէս նաև

քնագիտութիւնը, ուսանուվեցերորդ դարու վերջերից ոչոա մշակուվիլ։

3. Եթէ ենթակաները զանազան դէմքի են, զորօրինակ առաջինն և երկրորդ դէմքի միանգամայն, բայն դրվում է յոգնակի առաջին դէմքով. եթէ երկրորդ կամ երրորդ դէմքի են, բայն դրվում է յոգնակի երկրորդ դէմքով. ինչպէս. Դու, ես և եղբայրդ որսի կը գնանք։ Ցոյս ունիմ թէ դուք և ձեր ծանօթք կը գոք ինձ մօտ։

4. Բայց եթէ այլադէմ ենթակաները կապուած լինին ոչ, նէ-նէ, կամ-կամ, ոչ միայն-այլև և այլն շաղկապներով, բայն համաձայնում է, մօտիկ ենթակայի հետ. Ոչ նոքա դասերը գիտեն և ոչ դու։ Թէ դու պարգև կը ուտնաս և թէ մենք։ կամ ես, կամ դուք պարտէզ պիտի գնանք։

1, Թարգմանութիւն.—Գնէք և ասբէցոնէնն ոտոխանէն զարս իմաստուցնոյս։—Գոդն և գողութեցն ’ի միում պատժի են։—Մոլն Մովսէս և Ահարոն առաջի փարաւոնի և ասէն ցնա։—Եւն Ագրիպպաս և Բերենիկէ բազում երևելի սպասուք, և տուն յատեանն։—Եթէ յոռնիցն ’ի միջի քում տեսցէ կամ երազոկան և լինիցի նշանն կամ սքանչին, տեսցէ այն կամ երազողն ետուն. —Դու և ես մի էմք։—Պատիւս և շատ պարգևս գոնեմ յարքայից արքայէ և դու և դէ։—Ես և դու և ամենայն քաղաքացիք աշխէրթեցոյս աստուածային գրոց։—Մեղայ դու և ամենայն ոտն քո. զի ոչ ըստեպաս առաջի իմ ճշմարիտ։

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ ենթակայի ու բայի համաձայնութեան միաւորեալ նախադասութեան մէջ։

§ 129. Բայի ժամանակների գործածութիւնը։

1. Սահմանականի ներկան գործ է ածվում՝ 1) երբ հարկ է յայտնել թէ գործողութիւնը մեր խօսակցութեան ժամա-

նային է կատարվում. ինչպես. Ձեր հայրը գալիս է: Նա քոռկլմամբ մեր տան մոտ: 2) երբ հարկ է յայտնել մի ընդհանուր ճշմարտություն, մի սովորական բան. ինչպես. Մարդիկ մահկանացու են: Ծառերը ձմեռը հանգստանում են, գարունքին ծաղկում են, ամառը պտուղ բերում և աշունքին հասցնում են:

2. Ներկայ ժամանակը գործ է ածվում նոյնպես անցեալ կատարելի տեղ պատմական նկարագրությունների մէջ, երբ կամենում են անցեալ գործողությունը իբր աչքի առաջ բերել, որով խօսքը աւելի կենդանություն է ստանում: Ցորօրինակ. Ս.ին միջոցին երբ դաշնակիցները անհոգ կացած իրանց յաղթութեան վրայ էին ուրախանում, յանկարծ թշնամին վրայ է հասնում ու անխնայ ջարդում, հրկիզում է առաւօտեան յաղթողներին:

3. Ներկան վարվում է և ապառնիի տեղ, երբ հարկ լինի մերձաւոր ապագայ գործողության ստուգությունը յայտնել. ինչպես. Ա.յսօր ձանապարհ եմ ընկնում: Էգուց մայր կհիվանդանամ մեծ հանդէս կայ:

4. Անցեալ անկատարը գործ է ածվում երբ կամենում ենք յայտնել այնպիսի գործողություն, որ տևում էր սակաւին, երբ մի ուրիշ գործողություն սկսաւ ու ընդհատեց նորան. ցորօրինակ. Մենակ նստած գիրք էի կարդում, երբ որ բարեկամս ներս մտաւ: Աշակերտները խաղում էին, երբոր ուսուցիչն եկաւ:

5. Անկատարը վարվում է նոյնպես երկու կամ աւելի ժամանակակից գործողություններ յայտնելու, որոնց ոչ սկիզբը յայտնի է և ոչ տևողությունը, ինչպես. Ծաղիկ էր փողում և քնքուշ, քաղցնում էր բոլոր ծանօթներին:

6. Անկատարը գործ է ածվում դարձեալ երբ հարկ է

նկարագրել բնութեան տեսարանները, մարդկանց և իրերի յատկութիւնները, բարքն ու սովորութիւնները, և այլն: Երկիրս այդ միջոցին մի գրաւիչ տեսարան էր ներկայացնում, լուսինը լիաքանդակ էր ծառերի տերևների միջով և ամենաթանձր մթութեան մէջ լոյս էր տալիս:—Վարդան Մամիկոնեանեանը քաջ զօրավար էր և առաքինի մարդ: Հայք շատ հին ժամանակ պաշտում էին արեգակն ու լուսինը:

7. Անկատարը վարվում է երբեմն կատարելի տեղ մերձաւոր անցեալը յայտնելու համար. Ի՞նչ էիր ասում: Փոքր ինչ առաջ ձեր եղբայրը այստեղ էր:

8. Անցեալ կատարեալը գործ է դրվում պատմական նկարագրությունների մէջ, երբ հարկ է հետզհետե շարել պատահած անցքերը, որոնց սկիզբն ու վերջը որոշվում է. ինչպես.

Օրն էր տարաժամ. մարդիկ դադարած,
Փողը հընչեցին՝ մարտին կատարած.
Մութը պղպջաւեց, աստեղք ցոլացին.
Երկնից ցօղն ելաւ արնալից գետնին . . .
Ցետ պոչին պարսիկը իրանց բանակը
Նորից նոր սրբել սուրն ու դանակը . . .

9. Անց. կատարեալը վարվում է վաղահապաւորէն տեղ, երբ հարկ է յայտնել մի պատմական իրողություն առանձին առած, որի ժամանակը ճիշտ յայտնի է: Քրիստոնէությունը պաղպջաւեց Հայաստանում չորրորդ դարու սկզբում: Գրիգոր Լուսաւորիչը ծնաւ 257-ին: Սահակ Մեծը ձաւս 440-ին: (Փոխանակ տարաճուել է, ծնել է, մեռել է:)

10. Երկու վաղահապաւորէից առաջինը վարվում է երբ անցած բանի վրայ օտարի վկայությամբ է խօսվում, կամ թէ ան-

ցեալ գործողութեան հետեւանքը ներկայումս երեւումէ. այս-պէս. Լսեցի թէ հայրդ եկել է: Ասում են թէ իշխանը հեռաց-պոյել է: Այս երեխան շատ վատ բաներ է սովորել: Իսկ երկրորդը ցոյց է տալիս թէ գործողութիւնը մի ժամանակ անշուշտ կա-տարուած է կամ չէ կատարուած. Բոլոր գործերս աւարտած եմ: Իմ օրումը այս տեսակ բան ոչ պեսած եմ, ոչ լսած:

Ես օժանդակի տեղ երբեմն հմմ բայն է վարվում՝ սովո-րաբար հարցական ձեւով. Տեսած հո՞ւ այսպիսի գեղեցիկ դեղձեր: Գնացած հո՞ւ Ա. քաղաքը: (Այսինքն՝ պատահել է քեզ գնալ, տեսնել:)

Արեւմտեան լեզուի մէջ այսպիսի դէպքերում գործ է ածվում ունի բայն: Այսպէս նոյն մտքով ասում են. Տեսած ունի՞ւ այսպիսի գեղե-ցիկ դեղձեր:

11. Երկու գերադասող ժամանակները վարվում են հեռա-ւոր անցեալ ժամանակը յայտնելու, առաջինը անորոշ մտքով, իսկ երկրորդը որոշեալ. Թէեւ երբեմն երկուսն էլ միմեանց փո-խանակ դրվում են: Դոյն է ասել՝ Տուն էի գնացել և Տուն էի գնացած: Բարեկամներս եկել էին կամ եկած էին տեսնելու: Լսել էի թէ այս երկրումը մեծ անձրեւներ են գալիս, բայց չէի պեսած:

Առաջին գերադասող երբեմն պայմանականի մտքով է վարվում, ինչ, որ շաղկապներով կամ առանց այդ շաղկապների, ինչպէս. եթէ իմացել էի թէ դու այստեղ ես, վաղ կը գայի: Մէկ էլ հետս խօսել էր: բանը գլուխ կը գար:

12. Պարզ ապառնին գործ է ածվում սովորական ապագայ գործողութիւնը բացատրելու. ինչպէս.

Բայց ահա՝ երբոր հանգիպ ամիս ու տարի,

Կը մոռանաս դերեզմանը այն քարի,
Հետքը անգամ չէ ծաղկա իմ խաչին,
Իմ անունը, իմ յիշատակ չէ երկնի:

Կը մանրիկի տեղ գործ է գրվում պիտի կամ պէտք է անդէմ բայն, երբ հարկ է յայտնել թէ գործողութիւնը անշուշտ կատարուելու է. Այս առաւ երկար ճանապարհորդութիւն պիտի անենք: Պէտք է գնամ տուն:

13. Ապառնին գործ է ածվում երբեմն հպանցական եղա-նակի մտքով. երեք դէմքով էլ. զորօրինակ. Կ'երթաս արեւե-լեան երկիրն՝ որ գործիքները բերէ, և երկուսդ էլ չը պիտի մինչև որ ես գամ:

14. Եթէ ապառնին հարցական ձեւով է, կամ իրանից առաջ ունի ո՞ր, ո՞վ, ի՞նչ, ի՞նչպէս և այլն հարցականները կամ որ թէական շաղկապը, չը մանրիկը շատ անգամ բաց է թողվում: Այսպէս ասում են՝ Գնա՞նք թէ քիչ էլ սպասենք: Որ գնանք լաւ կը լինի: Ի՞նչ խօսենք: Երբ պէտենք ձեր ասած մարդուն:

15. Պայմանական եղանակը յայտնում է մի գործողութիւն որ մի որևիցէ պայմանից կախում ունի. և այն ժամանակ երեք, երբ որ շաղկապներից յետոյ չը մանրիկը բաց է թողվում: Զորօրինակ. Ուսուցիչը չը նեղէր աշակերտներին, երեք իրանց յանցանքը խոստովանէին: Երեք թուղթ ու գրիչ առնէայի, իսկոյն չը պատմեմ նորան:

Նոյն ձեւով ու մտքով գործ է ածվում և ապառնին. կը գամ ձեզ մօտ, երեք ժամանակ առնեմ:

Երբեմն երկրորդական նախադասութիւնը զօրութեամբ է իմացվում, և այն ժամանակ պայմանականը ցանկալիան կամ փափաք է յայտնում. կը ցանկանայի իմանալ թէ ի՞նչ է ձեր

տխրութեան պատճառը: (Այսինքն կը ցանկանայի, եթէ հնար լինէր:) կ՚ուզէի գնալ տեսնել նորան:

16. Պատանիի ու պատանեկանի բաղադրեալ ժամանակները արտայայտում են մի գործողութիւն, որ ներկայի վերաբերութեամբ ապառնի է, բայց անցեալ է ուրիշ ապառնի ժամանակի վերաբերութեամբ: Այս երկու ժամանակները շատ անգամ թէականի կամ պայմանականի միտք ունին: Սխալ գաղափար պոռած կը լինինք մեր նախնեաց կեանքի վրայ, եթէ վերացական գաղափարներով բաւականանանք և չենք նորոգիլ մեր մէջ անցեալ ժամանակների յիշատակները: Եթէ երէկ ձանապարհ ընկած լինէիք, այժմ ձեր տեղը կը հասնէիք կամ հասած կը լինէիք:

Երբեմն ապառնի բաղադրեալը ենթադրութիւն կամ կարծիք է ցոյց տալիս. ինչպէս. Անշուշտ մեր նամակը ոտոյած ու հրապոյած կը լինի:

17. Պորտոպոռիկոն եղանակը դործ է ածվում 1) հարց և պատասխան յայտնող բայերի հետ. ինչպէս. Յանկանում եմ որ ինձ հետ գաս: Վախենում եմ որ անձրև չգայ և չսիրուհին զիշերն անցկացնել այս խրճիթի մէջ: 2) Անդէմ և բացատական նախադասութիւնների հետ.—Չեմ կարծում որ ձեր քոյրը ձեր ձայնը լոած լինի: Անկարելի է որ պոռոնճոած էլինի ձեզ:

18. Պորտատասական ներկան համապատասխանում է սահմանական ներկային և ապառնիին, իսկ ստորադասական անկատարը սահմ. անկատարին ու պայմանականին. ինչպէս. խնդրում եմ (կամ կը խնդրեմ) որ գաս ինքդ ամէն բան քո ձեռովը կարգի դնես: Մարդ չկայ որ պակասութիւններից ազատ լինի: Մենք չենինք

ցանկանում (կամ չենինք ցանկանալ) որ թշնամին պեռնէը ու յոլչոնոէը մեզ վրայ:

Բայց առ հասարակ նկատելու է որ ստորադասական անկատարի տեղ գրեթէ միշտ ներկան է վարվում, մանաւանդ յոգնականում. Սպասում էինք որ գաս, մեզ պեռնէն (և ոչ՝ գայինն, պեռնէինն): Նոյնպէս սահմ. անցեալ ժամանակների հետ ստորադասական ներկայ է դրվում. Դատաւորը հրամայեց (հրամայել է, հրամայել էր) որ վկաների ասածները լսեն, քննեն և այնպէս վճիռը պատ:

19. Ստորադասականը գործ է ածվում երբեմն հրամ. եղանակի նշանակութեամբ. գնա՛մ, պեռնէ՛մ կամ գնա՛ռ պեռնէ՛ռ թէ ինչ են անում: Ի՞նչ ես նստել. վեր կենաս, գրքերդ հաւաքես:

Բայց շատ անգամ աւելի աստկութեան համար աւելացնում են Լոդ շաղկապը, մանաւանդ անկատարի հետ. Թո՛ղ կարդան ու գրեն: Թո՛ղ յանցանք չգործէր: Թո՛ղ իրանց գլխին բան չգռնէին:

20. Ենէ, ենդ շաղկապների հետ ապառնիի ու պայմանականի տեղ վարվում են ստորադ. ներկան ու անկատարը՝ թէականի նշանակութեամբ. ինչպէս. ենէ չգամ ու չտեսնեմ քեզ, ինքդ արի՛ ինձ մօտ: Պապզը իւր գլխի անցքը, վախենում էր որ հօր սիրտը չվշտացնէ, ենէ չպապզէր՝ գիտէր որ բանը ծածուկ չի մնալ:

---

1. Եւ մինչդեռ անցանէր (Ցիտաս), էտէս այր մի կոյր ի ծնէ. և նորա աշակերտքն նորա և ասեն. Ռաբբի, այր վնաս է, սորա թէ հօր և մօր իւրոյ, զի կոյր ծնաւ: Պատասխանի է Ցիտաս. Ոչ դո-

բա և ոչ հօր և մօր իւրոյ, այլ զի յայտնի լինիցի գործքն Աստուծոյ ի նմա։ Զայս իբրև ասաց, ելոյ ի գետին, և սկսաւ կաւ ի թքոյն, և ծեփեաց զկաւն ի վերայ աչաց կուրին, և ասէ ցնա. Երթ, լուա յաւազանին Սելովմայ, որ ընդփոխանն առաքեալ։ Զոփաս, լուացաւ, եկն և դիտէր։ Իսկ դրացիքն որոց տեսեալն էր զնա յառաջագոյն թէ մուրացիկ էր, ասէին. Ո՞չ սա էր որ նստէր և մուրանայր։ Կէսքն ասէին, Ոչ, այլ նման է նմա. և ինքն ասէր թէ ես եմ։

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ բայի զանազան եղանակներով ու ժամանակներով.

§ 130. Դերբայների կազմած ուրիշ ժամանակները։

1. Եղել անցեալ դերբայն վարվում է դիմաւոր բայի ժամանակների հետ, երբ առարկայի գործողութեան վրայ ուշադրութիւնն է ընկնում. Տեսնում է եղել. Տեսած է եղել. կը տեսնէ կամ պիտի տեսնէ եղել—նշանակում է՝ Աստո՞ւած թէ տեսնում է, տեսել է, պիտի տեսնէ։—Սմէն առաւօտ ու երեկոյ գնում է եղել լողանալու։

2։ Լինել վերջաւորութեամբ անորոշ դերբայի ներգոյականը լինիլ օժանդակ բայի ժամանակներով վարվում է գործողութեան հաստատուն լինելը ցոյց տալու. կարծում է լինում. կարծելու է եղել. կարծելու կը լինի (ներկ. և ապառ.). Որ կարծելու լինիլ—նշանակում է՝ հաստատուն է որ կարդում է, կը կարդայ ևայլն։

Նոյն մտքով գործ է ածվում ներկայի ու վերջաւորութիւնը։ Միևնոյն է ասել՝ Նա այժմ հաց ուտելու է լինի կամ, Նա այժմ հաց է լինի ուտում։

3. Ող ներկայ դերբայն եմ բայի բացատական ձևով գործ է ածվում երբեմն ներկայի և ապառնիի տեղ. Ես նորա հետ խօսողը եմ նշանակում է՝ խօսելու եմ կամ երբէք չեմ խօսիլ։

4. Լու ապառնի դերբայն գործ է դրվում եմ և լինիլ բայերի զանազան ժամանակներով, երբ կամենում ենք յայտնել թէ պիտանութիւնն կայ գործողութիւնը կատարելու. Գնալու եմ. Գնալու էի. Գնալու կը լինիմ. Թէ գնալու լինելի ևայլն, նշանակում է՝ պիտանի ունիմ, ունէի, կ՚ունենամ գնալու։—Թէ գիւղ գնալու լինիմ, քեզ իմաց կը տամ։

Երբեմն էլ հարկադրականի մտքով է վարվում, մանաւանդ եթէ բայն բացատական է. երբ և իցէ գնալու ենք։ Աշխարհս մեզ գնալու չէ։

4. Ած անցեալը լինիլ բայով կազմում է մի տեսակ հրամ. անցեալն նշանակութեամբ. Տեսած եղիր. Տեսած եղէք։—Գնա, դու էլ հանդիսը գնած եղիր։ Ինձ հետ այդ մասին խօսած չլինիր։

6. Նոյն ած անցեալը պիտի կամ պետք է անդէմներով վարվում է անորոշ դերբայի տեղ՝ խօսքին աւելի որոշութիւն տալու համար. զորօրինակ. Ի՞նչ պէտք է պատած։ Սեղաւորը պէտք է պատճած։ Պատ օրին միս չպէտք է ներած։ (Փոխանակ՝ չպէտք է ուտել։)

Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ վերոյիշեալ ձևերով։

§ 131. Բայի գործածութիւնը անդէմ նախադասութեան մէջ։

1. Անդէմ նախադասութեան մէջ առ հասարակ գործ է ածվում անդէմ բայն 1. Սորադասական եղանակով. ինչպէս. Պետք է որ տուն գնամ, դասերս պատրաստեմ։ 2. Անորոշ եղանակով, և այն ժամանակ ենթական շատ անգամ տրական հոլովի ձև է ստանում. Հարկաւոր է վաղ քնել և վաղ կանուխ։ Անօգնական է մեզ մեր ձեռից եկած օգնութիւնը չանել խեղճերին։

Երևանայ բարբառին յատուկ ձև է դիմաւոր բայի մօտ անորոշ դերբայի տեղ ածոր. եղ. գործ դնել, ինչպէս. Ուզում եմ գնամ, գնանք իմ բարեկամներին: Պատրաստ է հոգին գոյ քեզ համար:

2. Անդէմ բայի մնքով գործ է ածվում երբեմն 1) դիմաւոր բայի յոգնակի 3-րդ դէմքը, երբ որ զօրութեամբ է իմացվում ոմանք կամ շատ մարդիկ ենթական. ինչպէս. կոչծոած են թէ լուանի վրայ բնակիչներ կան: Ասել են առ ու տուր, ոչ թէ առ ու կուլ: 2) դիմաւոր բայի եզ. 2-րդ դէմքը, երբ որ զօրութեամբ է իմացվում ընդհանուր մարդ ենթական. ինչպէս. Սգաւոր մարդ տեսնելիս՝ ուղում են մխիթարել նորան, բայց չեն կռահում թէ ինչ ասեն կամ որ տեղից սկսեն:

Գաւառական բարբառներում առնէ բայի ենթական տրական հոլովի փոխուելով. անդէմ նախադասութիւն է կազմվում: Այսպէս ասում են ինձնից հաց ուտելու: ինչ երկու եղբայր առնէ և մեկ քոյր: Այս մեքով գրքր. գործ է ածվում եմ բայը, որի ենթական սեռ. հոլովի ձև է առանում. ես իմ եղբայրք հինգ:

---

1. Թարգմանութիւն.—Պարտ է մանկանց առնել բարբառ չափաւոր և հեզ:—Բազում նեղութեամբ պարտ է ձեզ մտանել յարքայութիւն երկնից:—Անհնար է խոտոյ և ջրոյ ի միասին ելանել:—Չհայկակ ասեն լինել առ Բելզեբուղ:—Քանի որդիք նչեն նորա—Է՞ր ես աստ բարեկամ:—Ասեն ուրուն էին գանձք բազումք:—Զեն նորա ծնողք:

2. Գրեցէք ձեղանից մի քանի անդէմ նախադասութեան օրինակներ:

§ 132. Բաղադրեալ բայի համաձայնութիւնը ենթակայի հետ:

1. Բաղադրեալ բայի մէջ ածականը կամ գոյականը սովորաբար անփոփոխ են մնում և միայն օգնական բայն համաձայնում է ենթակայի հետ դէմքով և թուով. ինչպէս. ես

հայ եմ: Հայաստանի օրէնք բարեխառն է: Դուք մեղաւոր էք: Ուրախ եմ քո տէրութեանը:

Մեր քերականները այս տեսակ նախադասութիւնները այսպէս են մեկնում. ես մարդ եմ—ես տէր բայի (ենթ.), եմ բայ (ստորոգ.) մարդ ուղ. հոլովով խնդիր (արաց.): Բայց այդ ճիշդ չէ. որովհետև այսպիսի տեղերում գլխաւոր միտքը գոյականի կամ ածականի մէջ է, և ոչ եմ բայի մէջ, որ միայն գոյ. և ածականին բայի ձև է տալիս, և այս պատճառով օգնական բայ է, և ոչ էական:

2. Բայց շատ անգամ բաղադրեալ բայի գոյականը հետևով համաձայնում է ենթակայի հետ, այսինքն յոգնակի է դրվում, թէ մեկ յոգնակի ենթակայ լինի և թէ շատ եզակի ենթականեր. զորօրինակ. Այսպազանց առաջին եկեղեցիները լուսաճառագեղեր էին: Աչքերն ու վզերը կատաղի գողեր են:

3. Միաւորեալ նախադասութեան մէջ, ուր երկու կամ աւելի բաղադրեալ բայեր կան, օգնական բայն բաւական է միայն մի անգամ յիշել սկզբում կամ վերջում. ինչպէս. Մեր քաղաքների փողոցները երկար են ու լայն: Մովսէս Խորենացին Հայոց գրականութեան փառքն ու պարծանքն է: Ուրաժշտութիւնը մարդուս համար օգտակար, հարկաւոր ու զուարճալի է:

4. Բաղադրեալ բայի մէջ օգնական բայի պաշտօն են վարում, բացի եմ բայից, լինել, գտանել, ճոլ, և ուրիշ սոցա նման բայերը. պարոյրը թագաւոր եղաւ: Գոյրդ մեծ աղջիկ գտաւ: Լեզուը սառած ճոյ:

---

1. Թարգմանութիւն.—Սուղ է կենցաղս—փոփոխ և տխրադէպ է լեզուս.—Ցորժամ պղծութիւն ես ծառ, յայնժամ պէղեցիր ես:—Աշխարհ Հայոց ձեզ է և արփաւանդ:—Վարդապետք էին առաքելական քարոզութեանցն, արդ ուշիմք էիք մոլոր խաբէութեանն: Ասացին էին ճշմար-

տութեանն, արդ ուսուցանիցէք զպատիր խաչէութիւն մոգաց։ Քո-
ղոչ էր արարչական զօրութեանն, արդ պատրիարս աստուածծս խոստո-
վանիլ։ Ժառանգ էր արքայութեանն, արդ անձամբ զանձինս արարէք
ժառանգ գեհենին։—Լէր դու ինձ յորէ։—Նչէլէ դուք մեզ է ծառայ։
Նչէյեն ամենայն գժռարինք ՚է ջէրէն և առապարքն ՚է ջաշա։

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ բաղադրեալ բայի համաձայնութեան

§ 133. Ածական յատկացուցչի համաձայնութիւնը յատկացեալի հետ։

1. Ածական յատկացուցիչը միշտ իր յատկացեալից առաջ է դրվում և անփոփոխ մնում. ինչպէս. Բոլոր մարդը իր քրտի գործերից է ճանաչվում։

2. Եթէ նախադասութեան մէջ այլ և այլ ածականներ լինին, առաջ դասվում են աւելի որոշեալները, ինչպէս են ցուցական և ստացական դերանունները և թուական անունները, յետոյ անորոշ դերանունները, որակ. և յարաբ. ածականները. այսպէս. Մեր գեղեցկի փարշէն տունը ծախեցինք։ Այս մի քանի ա-
պա օրերը անդորձ պիտի մնանք։ Իմ քոլոր պոպէկից բարեկամները այստեղ են։ Ասացէն լաւ համբաւը մեզ կը հանի։

3. Ածականը կարող է երբեմն իր գոյականից յետոյ դասուիլ, կրճատեալ նախադասութեան ձևով. այսպէս. Մի շան ունիմ զարմանալի հատկութիւն։ Այլեք տեսանք ամէն տեսակ մըրգերով լի։ (Ասյինքն՝ մի շուն որ հաւատարիմ է. այլեր որ լի են)։

4. Առանձին ձևով ածականը երբեմն իր գոյականից յետոյ է դասվում պեռոի ցոյց տալու համար, և այն ժամանակ գոյականը սեռ. յատկացուցչի ձև է առանում. այսպէս ասում

են դեղձի ընթերը երևան կը գանես։ Կատաւի լաւ Հոլանդիայումն են գործում։ (Ասյինչն՝ ընտիր դեղձը, լաւ կտաւը)։

5. Շատ անգամ յոգնակի գոյականի մօտ միևոյն ածականը կրկնվում է սաստկութեան համար, այսպէս. ոռը ոռը խօսքեր. ծանր ծանր դանդատներ. հանր հանր հատիկներ. ջեն ջեն խոստմունքներ. լայն լայն փեշեր։

Նոյն մտքով և գոյական անունն է վարվում կրկնուած՝ պեռոի պեռոի բոյսեր. գոյն գոյն ծաղիկներ. շորթ շորթ մարգարիտներ։

6. Եթէ հետզհետէ երկու ածական լինին, երկրորդը գոյականի զօրութիւն ունի և հոլովում է ու յօդ ընդունում. Խեղճ ողորմելիէը օրուան հացի կարօտ են։

7. Եթէ գոյականը զօրութեամբ է իմացվում, ածականը նորա հոլովը ու թիւն ընդունում է. ինչպէս. կարմիր վարդերը աւելի ախորժելի են քան թէ ոպնոպոնէքն ու դեղնոնէքը։

8. Ածականի տեղ շատ անգամ վարվում են գոյական անունները այլ և այլ մտքով։

Ա. Պարզ ածականի մտքով. այսպէս ասում են՝ ցորթ եղանակ. շորթ տեղեր. ոռա վկայութիւն. ծակ ամաններ։

Բ. Չափ ու ձև ցոյց տուող գոյականները՝ առաջինները թուական անունով միասին, երկրորդները ածականով. այսպէս. Մի քաշոկ չայ. երկու լնոր շաքար պառը կոնգուռն կտաւ. Մի փոնի ապլ խոտ. Նոր պեռոի ճարտարապետութիւն. Հին չէ զարդարանքներ։

Գ. Նմանութեամբ և փոխաբերական մտքով. ծաղկի հասակ. ապառաժ քարեր. կրակ մարդ. հրեշ մարդ։

1. Թարգմանութիւն.—Եղիազարոս այր ՌԽ, ընդ առաջինան ի գնդի ինր, լցեալ աւուրքն, ծերացեալ հոգւովս, գեղեցիկ երեսօք, ածեալ գայլ ի բերան, ստիպէին ուտել խոզենիւ։ Նա գեղեցիկ խորհուրդս հաստատուն յանձին եղեալ զարժանի հասակին, ըստ ծերութեան մեծութեանն, ըստ երևելի վայելչութեանն, ըստ զառաքինաբոյժ ալեացն ը՞արժացելոց, ըստ գեղեցիկ անպիծին, մանաւանդ առաւել ըստ աստուածգործ արբանեան օրինացն իւրոյն, անկեալ լաթփ լի, արագ արագ առնէր զպատասխանին։—Երկոտեան խոզհանէն լի սրտմտութեամբ և ՆՀաս բարկանալով զարմանային և գողանացեալ զօրանվամբ յիրեարս յարձակէին երկոքեան. և ամենս աղաղակին երկոցանց խողհանց իրերև ի մէջ անպոյ չերնէնդոյ ճայթմանս գործէր։—Իսկ նորին պատան եւթուէ քաջ նիզակաւոցն ոչ սակաս նախանձոյ գործեաց ի տեղւոջն, յորում փեղաջ և ինքն իսկ արժանի եղև առնուլ զնոյնպիսի նահատակութեանն պսակ։—Թոստովան լիցուք զգաղտնիս սրտից Ծածկափերին Աստուծոյ։ Աւժդ փառաց անցաւորիւ—Պատճառն փշեայ զարդարիցին զգլուխ Նախատորին երկնաւորի։—Աքել ի հարատարկն իւրմէ սպանաւ չեղբօրէ։—ի վերայ այսր վէմ (կամ վէմիք ապրիլ) չինեցից զեկեղեցի իմ։—Որ ելանէ ի բերանոյ, ի սրտէ անպէ գայ։—Ընդքէր տեսանելոք զարև յետ ծերոյ պերեչեայն։

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ ածական յատկացուցչի գործածութեան վրայ։

§ 134 Գոյական յատկացուցչի համաձայնութիւնը յատկացեալի հետ։

1. Գոյական յատկացուցիչը ածականի պէս յատկացեալից նախադաս է վարվում, և յատկացեալը մնքին նայելով կարող է ստացական յօդ առնել և չառնել. ինչպէս. Հայաստանի կլիման բարեխառն է։ Մեր պարտէզի ծառերը պտղատու են։ Մարիամը վարդեր ու ՆՀասմիններ մարգեր ունի։

2. Գոյական յատկացուցիչը երբեմն կարող է իր յատկացեալից յետոյ դասուիլ. զորօրինակ. Մովսէս Խորենացին իրատամբ կոչվում է հայր պատմութեան Հայոց։ Նոյնպէս և գրքերի անունները՝ Պատմութիւն Ցանոց. Աշխարհագրութիւն Հայաստանի։

Միայն եթէ յատկացեալը որոշեալ է, այս տեսակ դասաւորութիւնը անընդունելի է. ուստի չէ կարելի ասել՝ Եղիշէի պատմութիւնը վարդանոյ հին հայկարանութեան օրինակ է.— այլ Եղիշէի վարդանոյ պատմութիւնը։

3. Գոյական յատկացուցիչը ցոյց է տալիս գիտաւորապէս թէ մէկ առարկայ ումն է պատկանում կամ վերաբերում. այսպէս. Իմ եղբօր գրատան մէջ (այսինքն՝ այն գրատան մէջ որ իմ եղբօրն է պատկանում) շատ օգտակար գրքեր կան։ Հայքենեաց փուշը քաղցր է քան թէ օտարի վարդը։ (Այսինքն՝ հայրենեաց վերաբերող փուշը։

Այս տեսակ սեռական յատկացուցիչը յարաբերական ածականի միտք ունի. նոյն է ասել՝ ՆՀօր ՆՀօրհնութիւն և Հոյրական օրհնութիւն. Հոյոց լեզու և Հայկեան լեզու։

Միայն ածական ձևը միշտ չէ կարող գործ ածուիլ. չէ կարելի ասել շնչաւոր առարկայի վերաբերութեամբ յանկան թագաւոր, պղտկան շահ.—այլ ցունաց թագաւոր. պարսից շահ։ Այս բանիս ուշք դարձնելու է օտար լեզուներից թարգմանելու ժամանակ։

4. Գոյական յատկացուցիչը երբեմն ցոյց է տալի մէկ որև իցէ առարկայի որպիսութիւնը. ինչպէս. Այս մարդը զարմանալի յոյժ-ԼԻՆ-ՈՒԹԵՆ տէր է։ Երկուսն էլ մէկ Հոգուն մարդիկ են։ Հպարտութիւնը յատին ոգոյՀՈՒՆ անմտութիւն է.

Այս տեսակ սեռական յատկացուցիչը որակական ածականի միտք ունի, և այս պատճառով միայն որակական ածականով կարող է գործ ածուիլ. այնինքն բնաւորութեան, կամ վարքի տեր. ոգոյին կարդի մարդիկ։

Եթէ ուղղական կամ հայցական հոլովով յատկացեալը զօրութեամբ է իմացվում, յատկացուցիչը ստանում է

նորա յօդը և հոլովական վերջաւորութիւնը. Այս դիրքը պետրոսինն է. այսինքն՝ պետրոսի դիրքն է: Գետերի ջուրը աւելի համեղ ու առողջարար է քան թէ աղբիւրինը:

Նկատելու է որ այս դէպքում յօդից առաջ ն տառն է աւելացում:

---

1. Թարգմանութիւն.—Մեծ է սէրն Աստուծոյ քան զմինոյն մեծութիւն երկրաւոր և այսպէս աներկիւղ առնէ զմարդիկ, իբրև զանմարմին զօրս հրեշտակաց.—Նա հրաման (ճազկերա) յավիտեանակ ջրեղոնէից գինւոյ և զատացուածս, որք էին ի մէջ պարսկաց աշխարհին.—Դրդեցին, ժողովեցին զբազմութիւն սրոնց և նոնանց, չինուհոց և պղտոց, գնկանոյից և ղնեռուէնցոց. խրատ եդին, սնդեցին և արարին զամենեսեան զինուորս փղեպատ:—Զինարդ ոչ է զօրաւոր գինի. զի ամենայն մարդիկ որ ըմպեն գինւ՝ յիմարացուցանէ զմիտսն, և գնեփոխոյց և գրոհապնէց մի միտս առնէ. նոյնպէս գրեան և գծուոյն, գնծոպոնց և գողդոպոց, և գոնեցոն միտս զարձուցանէ և չրջէ յուրախութիւն:—Սատակեցի զնոսա քանիս էբռոնով ինձ:—Ոչ էր արբեալ նորա այնչափ յօրէ ծնանելն իւրմէ:

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ գոյական յատկացուցչի գործածութեան վրայ:

§ 135. Բացայայտի և բացայայտեալի համաձայնութիւնը:

1. Բացայայտիչը եթէ մէկ բառով է արտայայտվում, միշտ բացայայտեալից յետոյ է դասվում և ինքը միայն ընդունում որոշեալ յօդ ու հոլովական վերջաւորութիւն. ինչպէս. Թիֆլիս գաղաքը կուր գետի վրայ է: Հայկ նահապետը Հայկազանց հարցատութեան հիմնադիրն է:

2. Երկու կամ աւելի բառից բաղկացած բացայայտիչը կարող է բացայտեալից նախադաս էլ վարուիլ, յետադաս էլ.

Ա. Եթէ բարդ բացայտիչը յետադաս է, երկուսն էլ ընդունում են յօդ և հոլովական վերջաւորութիւն. Առաջին, Բագրատունեաց հայրապետական, նշանաւոր էր իւր ճարտասանութեամբը: Աղէքսանդր Մակեդոնացին բարկութեան ժամանակ սպանեց կլէտոսին՝ իւր հետապետին զօրավարին: *

Բ. Եթէ բացայտիչը նախադաս է, սովորաբար նոյնպէս բացայտեալի հետ համաձայն է դրվում, թէ և երբեմն անհամաձայն է լինում. այսպէս. Մեր հին վիպասանները երգեցին Տիգրանի հպարտ որդու Վահագնի քաջութիւնները: Արշակ որդին կորցրեց (կամ Արշակի որդի կարդացէք) գերի ընկաւ Սասրեատանցոց ձեռքը: Սուրբն գրաւարը պատասխանի գլուխն ուղարկեց Հռոմայեցոց սենեկի Տիգրանին (կամ Հռոմայեցոց սենեկիմ Տիգրանին):

3. Առանձին ոճով երբեմն բացայայտեալը սեռական հոլովով է դրվում, գոյական յատկացուցչի ձևով. գորօրինակ. Եփեսոսի գլուխն ուղարկեց Հռոմայեցոց սենեկի Տիգրանին (կամ Հռոմայեցոց սենեկիմ Տիգրանին):

---

1. Թարգմանութիւն.—Ցասմն եղբոյր Ոնեայ, ցանկացաւ հանել (խլել) զքահանայապետութիւն յՈնեայ.—Որդի որբոյ Ցոհաննէս Պապ և Աթանագինէս մահ անձանց նենգեցին.—Ասէ Հռոգուել ցՀեգնա ոչինչ է.—Տեսանես զի նման է պատանեական Տուբիթայ եղբօր որբոյն ինոյ.—Պետրոս էր ի Հռոմ ժողովէ.—Ա. Ներսոնիս հոյակէպ գլխատեցաւ Պօղոս ի Հռոմ ժողովէ:

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ բացայայտի գործածութեան վրայ:

Բ. Խնդրառություն Մաաւելց-Բանի

§ 136. Խնդրառու եւ խնդիր բառեր։

Այն բառերը որոնք մի որևիցէ հոլով են պահանջում, կոչվում են **խնդրառու**. իսկ այն բառերը որոնք կախում ունին խնդրառու բառերից և այս կամ այն հոլովին են դրած ածվում, կոչվում են **խնդիր**։ Ցորօրինակ. փայտը կտրում են կացինով նախադասութեան մէջ երկու են խնդրառու բառ է, իսկ փայտը և կացինով խնդիր։

Խնդիր պահանջում են գլխաւորապես բայերը, ինչպէս նա և անունները և նախադրութիւնները։ Իսկ խնդիր լինում են գլխաւորապես գոյական անուններըը, նոյնպէս և ածականները ու դերանունները, երբ որ գոյականի մաքով են վարվում, և անորոշ դերբայը։

Խնդիրների մէջ պէտք է զանազանել գլխաւորները երկրորդականներից։ Գլխաւոր խնդիր են լրացուցիչ բառերը, որոնք անհրաժեշտ են նախադասութեան մէջ. իսկ երկրորդական խնդիր պարագայական բառերն են, որոնք սերտ կապակցութիւն չունին բայի հետ և կարող են նախադասութիւնից դուրս թողուիլ։ Այսպէս այս նախադասութեան մէջ՝ Տղաները հայրս ինչ որ գիրք պարգևեց—ինչ և որ գիրք գլխաւոր խնդիրներ են, տղաները—երկրորդական։

§ 137. Հայցական հոլովով խնդիր։

1. Հայցական հոլովով խնդիր դրվում է գլխաւորապէս այն առարկան, որի վրայ անցնում է ներգործութիւնը. այս պատճառով բոլոր ներգործական բայերը պահանջում

են միշտ հայցական։ Ցորօրինակ. Հերոստրատ այրեց Եփեսոսի տաճարը։ Տրդատ մեկ հարուածով սպանեց Բասլաց Լագուղին։ փոքրիկ առուները կազմում են մեծամեծ գետեր։

2. Հայցական հոլովով խնդիր առնում են ծնել, ունենալ, ընդունել և ընդունիլ, նկատել և նկատիլ, պատահել, օծել, պսակել, անուանել և սոցա նման ներդ. կրաւ. և չեզոք բայերը, որոնք ցոյց են տալիս առարկայի դրութեան փոփոխութիւնը. ինչպէս. Նապոլէոն Ա. ծնաւ Հռոմի թագաժառ, դարձաւ կայսր և մեռաւ գերի։ Վաղարշակը Բագրատ իշխանին Լագուղին կարգեց։ 885-ին Աշոտ Ա. մեծ հանդիսով Լագուղ օծուեցաւ։ Մենք Հայկի անունով կոչվում ենք Հայ։

Նկատելու է որ այս հայցականը միշտ անորոշ է, ուստի և աննախդիր է վարվում։

3. Հայցական հոլով պահանջում են շարժուն ցոյց տուող բայերը իրրև պատասխան ո՞ւր հարցման, երբ մի տեղ գնալ, գալ են նշանակում. ինչպէս. Բարեկամս Հռոմ է գնացել։ Գնա տուն և գիրքդ բեր ուսուցչիդ։ Սթենեցաւ Թէ չէ, ամէն մարդ իր տունը քաշուեցաւ։

Այս հայց. համապատասխանում է գրոց նախդիրս տրականին. երթ է տուն, յուսուցիչդ։

4. Հայցականը գործ է ածվում երբեմն ներգոյականի տեղ յօդով, եթէ հասարակ անուն է, և առանց յօդի՝ եթէ յատուկ. այսպէս. Մեր խոշերը ամենևին ձիուն չէ գալիս։ Ո՞ր տեղ էք բնակում, — Սիոնն Թէ Եղիեցիներ։ (փոխանակ՝ մեր կողմերում, Երևանում։)

5. Հայցական խնդիր դրվում է ամէն տեսակ բայերի մօտ՝ ժամանակի տևողութիւնը ցոյց տալու, իրրև պատասխան ջրչան

ծոմածոռ հարցման. ինչպէս. Ամբողջ գիշեր չարչարուեցաւ: Վեց օր աշխատէ, և եօթներորդ օրը հանգստացիր: Գիշեր ցերեկ իր գործի հետ է լինում: Բազրատունեաց թագաւորութիւնը տևեց 160 տարի:

Յոգնակի է դրվում հայցականը՝ եթէ գործողութեան կրկնութիւն է ցոյց տալիս, ինչպէս. Ուրեմն այնքան՝ պարապում էինք ընթերցանութեամբ:

6. Հայցական խնդիր պահանջում են բաղդատական ածականները տան նէ բառերով. Սագը աւելի մեծ է տան նէ քսորը: Ասիան աւելի ընդարձակ է տան նէ Եւրոպան:

---

1. Թարգմանութիւն.—Այր ոմն էր մեծատուն և զգաներ բեհեզս և ծիրանի:—Թագաւոր ոմն արար հարսանիս որդւոյ իւրում. և առաքեաց ղծառայս իւր կոչել ղհրաւիրեալսն ի հարսանիս և ոչ կամեցան գալ: Դարձեալ առաքեաց այլ ծառայս և ասէ. Ասացէք հրաւիրելոցն. Ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի. եկայք ի հարսանիս: Եւ նոքա յուշացեալ գնացին ոմն յարտ իւր և ոմն ի վաճառ իւր. և այլք կալան ղծառայս իւր, թշնամանեցին և սպանին:— Անուն աշխարհիս մերոյ կոչի յանուն նախնոյն մերոյ Հայկայ Հայք-իմաստասէրք ցմարդ փոյթ աշխարհ առացին:—Անուշ և անօգուտ ղպօռնկանան համարիմ և առ ոչինչ ղդպրութիւն ղքաղաքս:—Զվէց օր գործեսցես և արասցես զամենայն գործս քո, զի զվէց օր արար Աստուած զերկինս և զերկիր:—Նովն ջրհեղեղ ղտապատուն գին և ղտապատուն գիշեր:—Ակն կարևորագոյն է տան ղամենայն անդամս:—Հատն մանանխոյ փոքր կամ փոքրագոյն է տան ղամենայն սերմանիս, բուսանի և լինի ՚ի ծառ տան ղամենայն բանջար:

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ հայց. խնդիրներով:

§ 138. Սեռական հոլովով խնդիր:

1. Սեռական հոլովով խնդիր պահանջում են ներգործական և կրաւորական բայերից առաջ եկած բայանունները.

ինչպէս. Գրչեցէք ընդնէցմունքը ամէն հասակի համար օրտակար է: Փոքր երեխաները քնոմէջը ծնողաց է յանձնուած: Աստուած է խեղճ ճերի հնձնաւորութիւնը: Մարդիկն ուզէն փրկիչը ծնաւ բնթղհէմում: Միութիւնը լաւութեան ծնող է*: Յաւատհատութիւնը փոքրագործութեան ծնունդ է:

* Ոչ ներկայ դերբայն, եթէ իբրև գոյական առնուի, միշտ սեռական հոլովով խնդիր է պահանջում. իսկ եթէ իբրև բայ առնուի, իր պէսք եղած հոլովն է ընդունում: Այսպէս կսքելի է ասել՝ երէցէ ու երէցէ ստեղծողը, և երէնէն ու երէրը ստեղծողը.— Ծը ծառայողները և Ծղ ծառայողները (տր.):

2. Սեռական հոլով առնում են նոյնպէս սանելու և պարտ բայերը, երբ հարկ է նիւթի քանակութիւնը ցոյց տալ. ինչպէս. Հայրս պատ Տանելիք փայտ գնեց: Երէկ հարիւր Տանելիք դիրք ծախեցի: Վաճառ Տանելիք ալիւր առաւ, որից տան Տանելիք ինձ տուեց:

---

1. Թարգմանութիւն.—Սկիզբն ուսմանց էրոյ աշխատութեամբ լինի—Անատունք ի սպասաւորութիւն (ծառայութիւն) Տրդէնի եղեն:—Քրիստոս եկն յաշխարհ ի խնդիր Տղրկել ոչխարին—Ցետ վախճանին Ցովսեփայ նեղէին եգիպտացիքն զիսրայել ի չինուած տաղտոյ և ի գործս ծղրտոյ:—Միտք են Տրջոյ և հոգւոյ կառավար:

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ սեռ. խնդրով:

§ 139 Տրական հոլով խնդիր:

1. Տրական հոլովով խնդիր պահանջում են առ հասարակ ներգ. և չեզոք բայերը՝ երբ որ մէկ առարկայի գործողութիւնը մեսին օգուտ կամ վնաս է բերում, ինչպէս. Ուսուցիչը աշակերտներին դրքեր ընծայեց: Ողորմեցէք աղքատներին, որ Աստուած էլ փոխարէնը տայ ձեզ: Լաւ չէ առնչներին նախանձել: Անձրև օրը հասներին ջուր տուող չատ կը լինի (Ասած):

2. Կան մի քանի ներդործական բայեր որոնք հայցական խնդրի տեղ տրական խնդիր են պահանջում. այսպէս են՝ յաղթել, պէրել, ներել, տալ (առ-առնել բայի մասով), սպառել, օգնել, ղրկել, ծեծել և այլն. Արաքը Նէապոլին յաղթեց: Տիգրան Բ Ասորոց երկրին տիրեց: Օգնեցէք չէտուրներին: Պղպեղին շատ տեղ տաքդեղ են ասում: (Ա յսաեղ Նէապոլին երկրին և այլն, տրական են՝ և ոչ սեռական):

3. Տրական հոլով պահանջում են այն բայերը որոնք ցոյց են տալիս մի առարկայի դէպքերը, նպատակը ուրիշ առարկայի. ինչպէս. Նաւը ծոցին խփուեցաւ և խորտակուեցաւ: Ոտս ծռաքին դպաւ: Գլուխդ տոլին տուիր: Սարը տոլին չի դիպչիլ, մասրը մորդոան կը դիպչի (Ա.ռաճ):

Այս ձևով կազմուած են հետևեալ զուրցուածները գոյների նրբութիւնները բացատրելու համար. Կապոյտին պոլ, դեղնին պոլ, սևին պոլ, և այլն:

4. Տրական հոլով առնում են շարժում ցոյց տուող բայերը, բայց միշտ առանց յօդի, երբ գործողութեան նպատակն են յայտնում. զորօրինակ. Դաւաւորը իր օգնականներին խորհուրդ կանչեց: Այսօր հօրեղբօրս մօտ ճաշի ենք հրաւիրուած: Ջօրքը պոռեցողին դնաց:

5. Այնպէս ձգտում ցոյց տուող բայերը տրական են պահանջում՝ սովորաբար յօդով. երկար աշխատանքից յետոյ վերջապէս նպատակին հասայ: Տկարը զօրաւորի օգնութեան է դիմում: Աղուեսի գունչը խոպոպին չհասաւ, ասաց խակ է: (Ա.ռաճ):

6. Տրականը, որոշեալ կամ դերանուանական յօդով, շատ անգամ դործ է ածվում ներդրականի տեղ կամ ՁԸ, ԸԼՑ, մօտ նախադրութիւններով սեռականի փոխանակ: Զորօրինակ. վաճառականը պարսից թագաւորի պալատը գնում էր գնելու ոսկի թագ ծածկած, ջնջին ականակուռ և մարգարտաշար գօտի, շնորհ գումարտակ գցած, առնելու սամուր և պինդ օգեր: Աղքատը կկեղեցու դրան կանդնած ողորմութիւն էր խնդրում: Սուրը ձեռս և հրացանը ուսս առաջ վազեցի: Ձանապարհին հանդիպեցայ իմ բարեկամին: Մխան է ծառին, հաւն է ընտին: (Փոխանակ՝ գլխի վրայ, դրան մօտ, ձեռումս, ճանապարհումը, թագի վրայ):

7. Տրականը որոշեալ յօդով դրվում է դարձեալ ներգոյականի տեղ՝ գործողութեան ժամանակը յայտնելու.

Ս. Ամենայն, պսակը և առ հասարակ բոլոր ժամանակ ցոյց տուող անունները, երբ որ պատասխանում են երբ հարցմանը. Ինչպէս. Օգոստոսին ցորենը հնձում են, Սեպտեմբերին խաղողը քաղում: Ամենամեծ ցրտերը յունվար և փետրվար ամիսներին են լինում: Ծնունդին խաչը ջուրն են ձգում: կարմիր ձուն Զատկին կը սազի: (Ա.ռաճ): Իրկնապահին եկաւ հասաւ: Կէսօրին արևը խաւարեցաւ: Ա.յդ ջնջին ամէն բան վերջացած էր:

Ա.յսաեղից կազմուած են՝ գիշերին, աշխատին ժամանակական մակբայները:

Բ. Տարեվերս, ամառվնե և օրուան ժամերը յայտնող բառերը, երբ որ պատասխանում են ինչի՞ն հարցմանը. Հայոց տօմարը նորոգուեցաւ 553-ին: Կորոնա ն ծնաւ 1500-ին, փետրուարի 24-ին: Ամէն իրիկուն ժամը տասին քնում եմ, և առաւօտեան հինգ ու կէսին զարթնում եմ:

8. Տրական հոլովով խնդիր առնում են մի քանի որակական ածականներ՝ արժանի, ընդունակ, կարօտ, օգտակար, պէտքին, յարմար և ընդհանրապէս նրանք վերջացածները, ինչպէս են՝ պիտանի, ցանկալի և այլն:

Աշխատասէր աշակերտները վարչապետութեան արժանի են: խեղճ մարդը օգնութեան կարօտ է: Այս սենեակը երիտասիս բաւական է: Անձնասէրը ամէնին ատելի է: Ղեւայրդ ընդունակ է նկարելու:

---

1. Թարգմանութիւն.– Կայրիոսէն յորժամ առաջնորդէ՝ սխալէ. և երկաքին ի խորխորատ անկանին: Մարմին մեր հոնապող օրեաց ելեւէջոյ պէտս ունի: Բարի արարէք ոտքերուդ ձեռոց:—Ոչհար զոտն ղժոխ:—Ած գօտի ընդ ձէջ քո: Ներեցան ամենեքեան զինեալք և սաղաւարտեալք (սաղաւարտներ գլխներին), սուր ընդ ձէջ և վահան ի ձեռին՝ ոչ միայն արանց քաջաց, այլ և կանանց առնականաց (մարդ ունեցող):—Ի ծովին ձեծի արարին ճաշ մեծ:—Ի ձեր սովորութիւն զի զմի ոք արձակեցից (ազատ թողնել) ձեզ ի զատիկն. արդ կամիք զի արձակեցից ձեզ զթագաւորն Հրէից: Սահակ Պարթև նստաւ յաթոռ հայրապետութեան յամի 390-րդի և վախճանեցաւ յամի 440-րդի:—Յակ գունդն Հայոց ամենայն օդնականաքն հանդերձ և մոգացն բազմութեամբ յոտնեան չորրորդի եկին ի հասին յայրխարհն Հայոց:—Պետրոս և Յովհաննէս ելանէին ի տաճար անդր յինն երորդ ժամ աղօթից:—Ամբարտաւանութիւն առելի է Աստուծոյ և մարդկան:

2. Դրեցէք ձեզանից մի քանի օրինակներ տրակ. խնդրով:

§ 140. Բացառական հոլովով խնդիր:

1. Բացառական հոլովով խնդիր դրվում է նախ կրաւորական բայերի ժամ, և ցոյց է տալիս թէ ենթական ումից է ընդա գործողութիւնը. զորօրինակ. Աբել սպանուեցաւ Կայէնից: Մեծամեծ գետերը կաղմվում են փոքր առուներից: Պոմպէոսը յաղթուեցաւ Կեսարից: Ցիտուս Հրէաներից խաչուեցաւ:

Այս բացառականը շատ գործածական չէ մեր լեզվում, այնպէս որ յաճախ անառոր ձևեր է կազմում, երբեմն նաև խոսքի մթութեան պատճառ է. զորօրինակ. եթէ ասենք՝ Հռոմ քաղաքը առնուեցաւ Գալլեացիներից, կարող է հասկացուիլ թէ Հռոմ առնուեցաւ Գալլեացի-

Ներէ չէ՞ւ կամ սորա հակառակ՝ Հռոմ առնուեցաւ Գալլեացիներէ չէ՞ւ: Այս պատճառով կրաւորական նախադասութիւնները շատ անգամ ուրիշ ձևերով են արտայայտում. այսպէս

փոխանակ ասելու՝	ասում են՝
Անձնասէրը ոտվտմ է ամենից,	Անձնասէրը ոտնէ է ամենին:
Որդին սիրվում է հօրից,	Հայրը սիրուտ է որդուն:
Արմաւիրը շինուեցաւ Արմայենից,	Արմաւիրը շինուեցաւ Արմայենի ձեռով:
Դաշտերը ծածկուեցան ձիենից,	Դաշտերը ծածկուեցան ձիեռվ:

2. Բացառական հոլովով խնդիր պահանջում են ընդհանրապէս ամէն տեսակ բայերը, երբ որ ցոյց են տալիս գործողութեան ստղծութիւնը իրրև պատասխան ումի՞ց, ինչի՞ց, ո՞րտեղից հարցերին. ինչպէս. Լուսինն իր լոյսը առնում է պեզակից: Ընդհօրից նամակ ստացայ: Անհնազանդ որդին զղկուեցաւ, հօր ծառնգութենից: Ով որ մահից վախենում է, չէ կարող զինուոր լինել: Ոչ թէ ստղծութենից պէտք է ամաչել, այլ ծուլութենից:

Այս մտքով բացառական հոլով են առնում՝ ազատ, զուրկ, հեռու տարբեր, անյոյս և սոցա նման ածականները: Հոգեբերից ազատ ես: Այդպիսի կապիճներից հեռու եմ: Ամէն չնչնաղութենից զուրկ ենք:

3. Բացառական հոլով պահանջում են շինել, հանել, կղութացնել և այլն, երբ ցոյց են տալիս թէ ինչ նիւթից շինում է մի բան. ինչպէս. Դինին քամում են խաղողից: Սիւների կէսը հասարակ փորից շինել տուաւ, կէսն էլ մարմարիոնից: Կապեցէք մի փունջ սոա ծաղիկներից:

4. Բացառական հոլովով խնդիր պահանջում են անուղղակի դերանունները և թուական ու դոյական անունները ամբողջի մասերը ցոյց տալու համար. ինչպէս. Մեղանից ոչ ոք այն-

տեղ չեր: Աշակերտներից ոմանք ուսումնարան չեկան: Նոցանից երկուսը մեր ծանօթներն են: Այս պատճէրից մի մասը ծախսու են:

5. Բաղդատական աճականները գոն ևն բառերով հայցականի տեղ բացառական հոլովով լինդիր են առնում, որ աւելի սովորական է. նոյնպէս և գերադրական աճականները, երբ որ ուրիշների համեմատութեամբ ամենից գերազանցը կամ ստորըն են ցոյց տալիս. ինչպէս. Պատիւը հարուստներից թանդ է: Ասիան Եւրոպայից ընդարձակ է: Տիգրանը ամենից աշխատասէր արշակերտն է:

6. Բացառական լինդիր պահանջում են չէզոք բայերը, երբ որ գործողութեան կամ դրութեան պատճառն են յայտնում. ինչպէս. Ահից պատից լեզուն կապուեցաւ: Մարդս անգործութենից հիւանդի պէս է լինում: Ծաղիկները թառամեցան ցրտից: Շատ լալուց աչքերը կուրացան:

Գաւառական բարբառներում այս բացառականը երբեմն տրական. նի ձև է առանում: Այսպէս ասում են նրա տրտում չկամ: Ահա, ա. տրու մեռաւ:—Գրբր. հիշտ նոյն ձևն երևում է ա նախագրութեամբ. ա ահի ա ամօնց:

7. Բացառական հոլովը վարվում է ինչպէս նախագրութեամբ հայցականի հետ պատճառական և ժամանակի սահմանը որոշելու մէկ նշանակեալ կէտից մինչև նշանակեալ կէտը, երբ պատասխան այս հարցերին. ո՞ր ժամանակից, կամ ո՞ր տեղից, ինչպէս ո՞ր տեղ կամ ինչպէս ո՞ր ժամանակ: Ցորօրինակ. Հայաստանի սահմանները տարածվում էին Վրաստանից ինչպէս Առրեթում և Փոքր Ասիայից ինչպէս Պատիճոսպան: Հայից ինչպէս Վահէ երկու հազար և աւելի տարի են հաշվում: Ինը ժամից այստեղ եմ:

8. Նոյնպէս բացառական է դրվում, եթէ հարկ է ցոյց տալ գործողութեան վերջը մի նշանակեալ ժամանակից հաշուե-

լով. սրիք ժամից տեղերս կը հասնենք: Մի քանի օրից ծնողացս նամակ կը գրեմ: կամ նաև յետոյ, յետ նախադրութիւններով. Մէկ երկու պատուց յետոյ բոլոր գործերս կ'աւարտեմ:

---

1. Թարգմանութիւն.-Ցիտուս խօսեցաւ ի շրէից:—Կրասոս պատերազմեցաւ ի դէմ Տիգրանայ արքայի Հայոց:—Ընդ եղանելն Ցիտուսի ի Հռոմ, պատահեաց նմա այր մի ի գերեզմանաց զոր ունէր այս սիրոյ, իբրև նախ ղՑիտուս ի հերոսանէն, ընթացաւ և երկիր եպագ նմա:—Մարիամ Մագդաղինացի սեռականէ զվէմն բարձեալ ի դրոց գերեզմանին և ասէ ցաշակերտան. Բարձին զՏէր ի գերեզմանէ անտի:—Դատաւոր մի էր ի քաղաքի միում, չԱստուծոյ ոչ երկնչէր և ի մարդիանէ ոչ ամաչէր:—Մի ոմն չարչէս ձերմ, որոյ թափեալ են ատք նորա և անկեալ պճղունք նորա՝ կայ ի դրսպակի անդ մեռեալ:—Հինգն ի հնոանոյն իմաստուն էին և հինգն յիմար:—Մեծն ի յէնջ եղիցի ձեր ապատաւոր:—Տիպրան երեսանդևան ամենեցուն ևոփաւորոցն ձերոց հարստագոյն և խոհեմագոյն էր:—Շնորհ յոյժ ունիմ զերբերութենէն ձերմէ:

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ բացառ. խնդրով:

§ 141. Գործիական հոլովով խնդիր.

1. Գործիական հոլովով խնդիր պահանջում են ամէն սեռի բայերը, երբ հարկ է ցոյց տալ թէ ո՞ւմ յետոյ, ի՞նչ գործիքով կամ ի՞նչ ձևով է կատարվում գործողութիւնը. Հողագործները երկիրը վարում են գութանով: փայտը կտրում են կացինով: Մնողքը երանց ղաւակներին են մխիթարվում: Այս պատկերը նկարուած է տախտակով:

2. Գործիական հոլովով խնդիր առնում են ասենալ և պալ բայերը նիւթի ազդող-ներ ցոյց տալու համար. ինչպէս. Քաղո՞ւ առաք այս ձին: Իմ բարեկամը մի տուն գնից 15,000 հանդերով: Ապրանքս լաւ գնով ծախեցի:

3. Գործիական հոլովը վարվում է առարկաների և նոցա գործողության որակությունը ցոյց տալու համար.

Ա. Բայի մօտ՝ սովորական որակութիւն յայտնելով, իբրև պատասխան ինչպէս հարցման. զորօրինակ. Բարեկարգ տէրութիւնների մէջ ամէն գործ վճռվում է օրէնքով: Ջգուշացիր նեամբ գնա, որ ճանապարհդ չկորցնես: Բոլիմոլով է խօսում: Հայկ նահապետը պոռվ աեղով գաղթեցաւ Հայաստան:

Բ. Անձականների մօտ՝ առարկաների որակութիւնը յայտնելով. Այս աշակերտը առաջինն է կանոնաւորութեամբը, յաջողապեհութեամբն ու քրէլ վարքով: Տրքիով մեծ է, բայց նեչով տկար:

Գ. Գոյականների մօտ՝ ապէ, արուեստ, ծոփառ և հոչակ ցոյց տալով. Գրիգոր Լուսաւորիչը ապէով պարթև էր և ցեղով պահլաւ: Մխիթարը հայրենիքով Սեբաստացի էր, իսկ հէմմէթ հոգևորական:

4. Գործիական հոլովը վարվում է եզակի ժամանակի անպատեհութիւնը ցոյց տալու, յոգնակի ժամանակի երկարութիւնը ցոյց տալու համար: Այսպէս ասում են՝ գիշերով ոնր գնամ: Ցերկնով, քնում է: Մինով ևկաւ:— ձոմերով նստած շարունակ սարքապում է:

5. Գործիականը ցոյց է տալիս զարձեալ ճանապարհի ուղղութիւնը նոյնպէս և փեղի պատճառութիւնը: Ոչ ճանապարհով սիրտ գնանք. ձոմով թէ ցամոտով: Փողոցների երկայնութիւնը ճաւներ անկեցին:

Գաւառական բարբառներում կայ մի ուրիշ գործիական էլ գրոց պարառականի ժաքով: Այսպէս սովորական է ասել մկի ճռռը կամ ընթոցը լսենել, արևելքը փաթաթուել, երեկոյը մանուկ: Աչխարհ ալեպուռվ էր գալչում: (Այսինքն զպարանոցաւ, զուսիք, զաշխարհաւ:) Գրաբար լեզուի մէջ այս ձևի տեղ գործ են ածվում հայց. և տրակ. հոլովը լը.— առնէր լսենել, ընթացն փաթաթուել:

Թարգմանութիւն.—Մարիամ օծ պՏէրն խղալ և ջնջեաց զամս նարա հեբով խրով:—Ցիսուս ի չոյն ջեռ ազազակեաց և ասէ. Ղազարջ, արի ևկ արտաքս, և ել մեռեալն ոտիւ ետուղէյ և չեռօյն էրէսօյն վրշոմոպոօյ: Այր մի Լիւստրայի տկար յոտից նստեր, կաղ յորովայնէ մօր իւրոյ:—Հրէայ սմն Ապեղէս անուն ազէքսանդրացի չոգէ, զօրաւոր էր գրովք:—Վաճառելին զՅովսէփ Իսմայելացւոյն էրէսոն դոհէլուն: Մարթ էր զիւղդ այդ վաճառել էրէսէրդ դոհէլուն: Սգով և պըրտուհանէմբ երթալոյ էլբայրն ճանապարհին:—Պնդեցան արքն զկնի նորա զճանապարհն Ցորդանանու: ՋՏարսոն ըշխ և ըշխով: Բաբելոնի չինէր:—Ադամ անէծ պկայէն ածէն ցոհոգէնուն:—Ինդացին յոյժ ուրախութիւնն ՏԷն:—Հայրն անկեալ պոռոնոցաս անսուտակ որդւոյն համբուրեաց զնա:

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ գործ. հնդրով:

§ 142. Ներդոյական հոլովով խնդիր:

1. Ներդոյական հոլովով խնդիր դրվում է ամէն տեսակ բայերի մօտ գործողութեան կամ դրութեան պէղը ցոյց տալու համար. ինչպէս. Մենք նստած կինք պոլսեղոմ, երբ որ անճրեը սկսաւ: Ի՞նչ պակասութիւններ տեսար նորանում: Ջկները լողում են ջրո՞մ: Այն մարդիկը որ Ամերիկացոնն են բնակւում, կոչվում են Ամերիկացիք:

2. Ներդոյականը ցոյց է տալիս նոյնպէս ժամանակի տևողութիւնը. Այս գիրքը երկու օրո՞մ կը կարդամ: Երկիրս իր վրայ պատում է 24 ժամո՞մ: Իմ օրոմը այսպիսի բան չէի լսած:

Սրանից կազմուած է ջնջոցմ նախադրութիւնը, որ սեռ. հոլովով է վարվում, երկու շաբաթուան ջնջոցմ մի ամբողջ գիրք թարգմանեց:

---

1. Թարգմանութիւն.—Գաւառին լերինք բարձունք օրպէս է ցամոտի նոյնպէս և է ծովս:—Աղեղն ձգի յամոց յոտարոտ անչնաջնու:—Կայէն սպան զեզբայր իւր է դաշտ:—Տղայք բնաւորեցան չեմնեղոցդոմ ամէնն հանել

զատամունս և յոլե ածէն փոխել։—Ցէրուսալէմ ի Պրոպատիկէ սատանին անկեալ դնէր քաղմութիւն յոյժ հիւանդաց,—էլին իսկ այնպիսիքն բնակեալ է Հեռու իւրեանց իրրև է Լուդիոմած խաւարն և ողիքն արդելեալք է Տրնի իրրև զկենդանի է գերեզմանէ։

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ նեղգ. խնդրով։

§ 143. Նախադրութեամբ խնդիրներ։

Շատ անգամ բայերը նախադրութիւնների միջնորդութեամբ խնդիր են առնում. այսպէս. Ծնողքը ուրախանում են իրանց որդոց յաջողակութեան վրայ։ Ուսուցիչը եղբօր պէս է վարվում աշակերտների հետ։ Գնանք դէպ 'ի տուն։ Որ ևիէ նախադրութիւնները վերցնէինք, կամ ամենևին միտք չէր լինել, ինչպէս երկու առաջին օրինակների մէջ, կամ դոնէ միտքը կը փոխուէր, ինչպէս վերջին օրինակի մէջ։

Դ,ախադրութիւնների սկզբնական պաշտօնն էր ցոյց տալ նիւթական առարկանների մէջ եղած զանազան յարաբերութիւնները, այսինքն թէ մէկ առարկայ ո՛ր տեղ է գտնվում, միւսի վրայ կամ տակը, ներքև, մօտը նուրբն, հետ, առաջը, ետևը, նայեն. ինչպէս. Դրքերը դրած են բազմարանի մէջ, սեղանի վրայ, ընկած են սեղանի տակ։ Մուկը վազվզում է անկողնի առաջ կամ ետև, վազում է դէպ անկողինը կամ դնէ անկողինը նայեն. Այս է նախադրութիւնների բուն պաշտօնը և նշանակութիւնը։ Բայց յետոյ նախադրութիւնները սկսան դրած ածուխ վերացական առարկանների հետ, և այսպէսով փոխաբերեցան միտք առացան։ Այսպէս ասում են գործի վրայ մտածել, պայտպանութեան տակ գտնուիլ, ուսման մէջ յառաջանալ· թէև գործ, պաշտպանութիւն, ուսում վերացական առարկաններ են։

Հայերէն լեզուի առանձին յատկութեամբ նախադրութիւնները հոլովում են՝ (§ 119) երբ հարկ է առարկաների մէջ եղած յարաբերութիւնները աւելի ոշղ կերպով արտայայտել, և դոյականը դրվում է սեռ. հոլովով. այսպէս. Սոխակը թռաւ վանդակի մէջից (փոխանակ վանդակից)։ Ջօրքը կամրջի վրայով

անցաւ (կամրջով)։ Մենք կանդնած էինք անտառի մէջին կամ մէջում (անտառում)։ Հողի տակից մետաղներ են հանում։

1, Թարգմանութիւն.—Հրէայք չարախօսէին ընդ-առ (մասին, վրայ)։ Հրէայք ասէ նախանձ մատնեցին զՅիսուս (բցռ.)։—Ա՜ Նոյնս եղև ըստ-հեղեղ մեծ (ժմնկ.)։—Զայս ձամանակս թագաւորեաց Ծունաց ամբարիշտն Ծուլիանոս։—Զաւակ անարգ է, որ անցանէ ղողոքրնաս ծնողաց։—Պատերին զբազաքաւն պոռնէր։—Խաղաց գնաց յԱնտիոք քաղաքէ, և անց նա (Անտիոքոս) ընդ էբեն մեծ ըստ Եփրատ և երթայր ընդ ետևն վերնագաւառացն։—Որ ինչ մտանէ ընդ բերան, ոչ պղծէ զմարդ։—Ա՜ Տէրունս ասէրնով Մարք անկան ընդ էշխոնութեամբ Հայոց։—Բանաձև կեցաւ Տէր չերուսաղէմ։—Մոգպետն ինքնին տէրն հանդերձ հասանէր մեծաւ զօրութեամբ քակել զդրունս եկեղեցւոյն յաւուր միաշաբաթուն։

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ նախադրութեամբ խնդրով։

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Կապակցութիւն նախադասութիւնների

Ա. Երկրորդական նախադասութիւնների կապակցութիւնը.

§ 144. Ցատկացուցիչ նախադասութիւնների կապակցութիւնը։

1. Ցատկացուցիչ նախադասութիւնները կապվում են գլխաւորի հետ ոչ յարաբերական դերանունով, որին ներդրծութեամբ կամ զօրութեամբ պատասխանում են գլխաւոր նախա-

դասուԹեան մէջ այն, այնպիսի ցուցական դերանուններու ջորո-
բինակ. Այն ցամաքը որ ամէն կողմից ջրով պատած է, կոչւում
է կղզի։ Ցոյց տուր մի (այնպիսի) մարդ, որին կարելի լինի յանձ-
նել այս գործը։ Ի՞նչպէս է կոչւում այն ջուրը որ ամէն կող-
մից ցամաքով է պատած։

2. Եթէ յատկացուցիչ նախադասուԹիւնը այնպիսի բա-
ներ է յարաբերում գլխաւոր նախադասուԹեան մէջ, որ պէտ
կամ ժամանակ են ցոյց տալիս, որ յարաբերականի տեղ կարող
են գործ ածուիլ տեղական և ժամանակական մակբայներ. ինչ-
պէս. Մինչև այսօր ցոյց են տալիս խոր վիրապը։ ուր (փոխանակ
որի մէջ) ձգուեցաւ Սուրբ Գրիգորը Տրդատ Թագաւորի հրամա-
նով։ կար (ի՞նչպիսի) ժամանակ՝ երբ այժմեան ծաղկած քա-
ղաքների տեղ անԹափանցելի անտառներ էին բուսնում։

3. Որ յարաբերական դերանունը գրւում է այն հոլո-
վով, որ պահանջում է երկրորդական նախադասուԹեան բայն.
իսկ ԹիւրԸ կախուած է գլխաւոր նախադասուԹեան այն բառից
որին որոշում է երկրորդական նախադասուԹիւնը. այսպէս. Ես
վստահուԹիւն ունիմ այն մարդոց վրայ, որոնք խղճմտանքով են
կատարում իրանց գործը։ Սոկրատ, որին դատաւորները դատա-
պարտել էին մոլախինդ խմելու, առաքինի քաղաքացի էր։

Միայն ուղ. երբեմն նաև հայց. հոլովում յարաբերական
դերանունը կարող է յոգնականի տեղ եզակի վարուիլ, և-
ԹԷ միայն յարաբերեալից բաժանուած չէ. ինչպէս. Այն մար-
դիկը որ մեր դէմ ու դէմը նստած են և որոնք միմեանց հետ
խօսում են, մեր բարեկամներն են։

4. Երբ յարաբերեալը զօրուԹեամբ է խմացվում, յարա-
բերիանի հետ վարվում է երբեմն որ շաղկապը, և այն ժամանակ
յարաբերականը եզականում ն յօդն է ընդունում, իսկ յոգ-

նականում անյօդ է մնում. այսպէս. Որ որ, որին որ, որոնց որ
որոնց որ։ Ահա օգտակար գրքեր. ընտրէ որոնք կամենում ես։—
Փոխանակ ընտրէ այն գիրքը որ կամենում ես. կամ պարզա-
պէս յարաբերականի վրայ յօդ դնելով՝ ընտրէ որը կա-
մենում ես։

5. Ընտանեկան լեզուի մէջ ուղ. հոլովով որ յարաբեր-
կանը չատ անգամ ամէն հոլովների տեղ է վարվում՝ եզակի և
յոգնակի, և իրանից յետոյ պէտք եղած հոլովով մի դերանուն
է դրվում. այսպէս. Որ նրան կամ որ նրա, փոխանակ որին, որ
նրանով կամ որ նրանով, փոխանակ որոնցով ևայլն. ինչպէս. կան
մարդիկ որ ամէն բան դժուարացնում է նրանց։—Այսինքն՝ կան
մարդիկ որոնց.....։ Արշակն ու Տիգրանը այնպիսի աշակերտներ
են, որ բոլոր ուսուցիչները պարծենում են նրանով։—Այսինքն՝
որոնցով պարծենում են։

6. Երկու կամ աւելի նոյնահոլով յարաբերականներից
վերջինը սովորաբար դուրս է թողվում. այսպէս. Արաբացիք, ո-
րոնց ձեռքը յարգի են և ուղտերը օգտակար, մինչև այսօր
Թափառական կեանք են վարում։—Այսինք՝ և որոնց ուղտերը։

---

1. ԹարգմանուԹիւն։—Մեղու՝ որ փոն գոմենայն փոքր է, զերկասիրու-
Թիւն պատուէ։—Ամենայն տուն և ԹագաւորուԹիւն որ յանձն իւր բաժա-
նէ, ոչ կարէ կալ հաստատուն։—Տեղի որ ասուլն է, յատակ և քաղցրահամ
բղխէ գ[illegible]։—Են ոմանք որ ոչ գիտեն ընաւ ի՛ր գինւոյ երբ և ի՞նչ չեն
ուտեն շրջապատեցան։—Ես իբրև ակն (պօղոս), կային չուրջ զնովաւ որ չնչու-
աղնիւ էին Հրէայք։—Ո՞ր է որ ծնաւ արքային Հրէից։—Հասին այ
նրա աւետաւոր որոյ յանդիպել էին։—Մատուռք առ Աստուած կենդանի,
ոչ ոչ ևս ելանելոց էին ի նմանէ։—Այլն այն Մովսէս որ էհան զնոսա չնչփորուե
ոչ գիտեմք ի՛ր եղև նմա։

2. Դրեցէք ձեղանից մի քանի բազադրեալ նախադասութիւններ երկրորդական յատկացուցիչ նախադասութիւններով։

§ 145. Յատկացուցիչ նախադասութիւնների կրճատումը։

1. Յատկացուցիչ նախադասութիւնը կրճատուելիս՝ ածանի յոգնակուցէն է վիոխվում, երբոր ստորոգեալը կազմուած է ածականից ու օգնական բայից. ինչպէս չէի գիտէն աւելի յարգի է քան թէ նորը։ (Փոխանակ ասելու՝ Այն գիտէն որ հէնց է։)

2. Յատկացուցիչ նախադասութիւնը կրճատուելիս՝ քացայայելէ է վիոխվում, երբ նորա ստորոգեալը կազմուած է գոյականից ու օգնական բայից. այսպէս. Աբգարը որ առաջին փրկոնեայ կառավարն է, շատ քաղաքագէտ ու խելացի մարդ էր։ Աբգար, առաջին փրկոնեայ կառավարը, շատ քաղաքագէտ ու խելացի մարդ էր։ Անին, որ Բագրատունեաց մայրաքաղաքն էր, այժմ աւերակ դարձած է.— Անին, Բագրատունեաց մայրաքաղաքը, կամ Բագրատունեաց մայրաքաղաքը՝ Անին այժմ աւերակ դարձած է։

3. Յատկացուցիչ նախադասութիւնը ներկայ, անցեալ կամ ապառնի դէրբայի է վիոխվում, երբ ստորոգեալը սահմ. ներկայ, անցեալ կամ ապառնի ժամանակներումն է։ Միևնոյն ժամանակ անցեալ և ապառնի դերբայների ենթական, եթէ գոյական է՝ սեռ. յատկացուցիչ է դառնում, եթէ դերանուն է՝ ստացական. իսկ ենթերը դառնում է յատկացեալ՝ ստացական յօդով։ Զորօրինակ. Այն մարդը որ ընդերքին օգնած է, չէ կարող՝ միայն իր անձի վրայ մտածել.— Ընդերքին օգնող մարդը չէ կարող միայն իր անձի վրայ մտածել։ Այն գիշերն որ Աղբիսիոսը ծնաւ, հերոստրատ այրեց եփեսոսի տաճարը։— Աղբիսիոսի ծնած գիշերը հերոստրատ այրեց եփեսոսի տաճարը։ Ո՞ւր են այն աշակերտները որ պա- գոված էին (կամ գովեցիր, գովել ես, գովել էիր)։—

Ո՞ւր են պա գոված աշակերտները, կամ սարդասիէս Ո՞ւրեն գոված աշակերտները։ Այն օրն որ նա պիտի ծագի, կը դամ ձեզ ճանապարհ ձգելու։ Ձեր նա ծագելը էրը..... Բաւական ընդարձակ է այն սրահը ուր (որի մէջ) Լոպրոնական հերկայացումները պիտի պրուէին (կամ պիտի տրուէին)։ Բաւական ընդարձակ է Լոպրոնական հերկայացումները պրաելիս սրահը։

Երբեմն ներկայ դերբայի տեղ անցեալն է գործ դրվում. այսպէս. Մեր քնած տունը շատ հին է. այսինքն՝ այն տունը որի մէջ մենք քնած ենք։

Դրեցէք ձեղանից մի քանի օրինակներ կրճատեալ յատկացուցիչ նախադասութիւններով։

§ 146. Ենթակայ եւ լրացուցիչ նախադասութիւնների կատարելութիւնը։

1. Երկրորդական ենթակայ նախադասութիւնը կապվում է գլխաւորի հետ ով կամ ով որ դերանունով և ընչ, որ շաղկապներով, որոնց գլխաւոր նախադասութեան մէջ ներգործութեամբ կամ աւելի զօրութեամբ պատասխանում են նա, այն ցուցական դերանունները։ Զորօրինակ. Ով կը խաղայ, նա կը կաղայ։ Ով որ իւր վիճակից գոհ է, նա բաղդաւոր է։ Ցայտնի է որ բոլոր մեռածները հալվում են։

2. Երկրորդական լրացուցիչ նախադասութիւնը կապվում է գլխաւորի հետ ինչ կամ ինչ որ, որ դերանուններով և ընչ, որ շաղկապներով, որոնց գլխաւոր նախադասութեան մէջ ներգործութեամբ կամ զօրութեամբ պատասխանում են այն, նա ցուցական դերանունները։ Նա, այն ցուցական դերանունները զօրութեամբ իմացվող գոյականի հոլովն են ընդունում, իսկ յարաբերական դերանունը զրվում է այն հոլովով որ պահանջում է երկրորդական նախադասութեան բայն, ուրիշն և ցուց. դերա-

նաւան հոլովից իմացվում է թէ երկրորդական նախադասութիւնը ինչ հոլովի տեղ դրուած է: Զորօրինակ. Ինչ կը ցանես, այն կը հնձես (հայց.): Լսեցի ես շուտով ձանապարհ էք ընկնում (հայց.): Երանի նորա որ իւր վիճակից գոհ է (ալլ): Բաւականացիր նորանով (այն բանով) որ տալիս են քեզ (զօրձ): Շեռուց կաց նորանից (այն մարդուց), որի չար օրինակը կարող է գայթակղութիւն պատճառել քեզ:

3. Օտարի վկայութիւնը, որ խօսքի մէջ բերվում է, լրացուցիչ նախադասութեան միաք ունի և ոչինչ բառով չէ կապվում գլխաւոր նախադասութեան հետ՝ եթէ խօսողն սեպհական բառերն է պարունակում, այլ միջակէտով և չակերտներով բաժանվում է գլխաւորից. ինչ և որ շաղկապներով է կապվում, եթէ նորա խօսքերի բովանդակութիւնն է յիշվում. ինչպէս. Քրիստոս ասաց. «Ես չեմ եկել օրէնքները լուծելու, այլ լրացնելու»: կամ Քրիստոս ասաց ինչ ինքը չէ եկել օրէնքները լուծելու, այլ լրացնելու:

---

1. Թարգմանութիւն.—Որ ընտ ոչ կենդի, երկնչի ի մահուանէ. իսկ որ կենդ ընտ ոչ երկնչի ի նմանէ:—Որ փափաքէ վաստակաւն յաչխարհի եւրեւր, և անօգտար մահ ի նմանէ գտանիր. իսկ որ տալոնութեամբ յառաջ տարէքն զանձանուն ազգի ժառանգիր, և պարգեւս մեծամեծս յանցաւոր և ի մահկանացու թագաւորէն ընդունէր—Որ ինքն զհոգեւոր երջանկութեան ոչ ունի, արդ իրրև զգոյն ի մարմնոյ չկարէ չրջել:—Մեք պիտեմք զի ճշմարիտ է վկայութիւն նորա՝ յանձնէ և յընկերաց մատուցանէր (Վարդան), որոյ գիր չէր, գիր պատրաստէր, և որոմ հանդիպէր ոչխոյ էր՝ հանդերձ գրոցացանէր, և որոմ էրնվոր՝ երիվար առնոյր:—Որոմ խնդրէ ի գիր՝ տուր, և որ ինչ փոխ առնուլ է գիր՝ մի դարձուցաներ զերեսս:

2. Գրեցէք ձեզանից մի քանի բազադրեալ նախադասութիւններ երկրորդ. ենթ. և լրաց. նախադասութիւններով:

§ 147. Ենթակայ եւ լրացուցիչ նախադասութիւնների կրճատումը:

1. Երկրորդական ենթակայ նախադ. որ գլխաւորի հետ կապուած է ոչ կամ ոչ որ դերանունով, կրճատուելիս դէպքում է փոխվում. իսկ եթէ կապուած է ըէ, որ շաղկապներով անփոփոխ բայի հետ, անորոշ դերբայի է փոխվում: Զորօրինակ. Ոչ որ փող ունի, խելք չունի. ոչ որ խելք ունի, փող չունի: փող ունեցողը խելք չունի, խելք ունեցողը փող չունի: Ամենին յայտնի է որ երկիր շրջվում է:—Ամենին յայտնի է երկիրը շրջուելը:

2. Երկրորդական լրացուցիչ նախադասութիւնները կրճատուելիս փոխվում են գոյական անուան կամ անորոշ ու անցեալ դերբայների, վերջինը որոշեալ կամ ստացական յօդով. ինչպէս. Մեզ գրեցին ըէ դա ջնջել է:—Մեզ գրեցին նորա ջնջուելը: Խորհուրդ են տալիս ինձ որ գնացուցանելով պղպեղ.—Խորհուրդ են տալիս ինձ գնացուցանելով պղպեղը: Ահա պատմեմ քեզ բոլոր ինչդ պէսայ ու լսեցի.—Ահա պատմեմ քեզ բոլոր պէսաձս ու լսածս: կեանքիս մէջ չեմ յիշում ըէ ոտք խօսած չկինի.—կեանքիս մէջ ոտք խօսած չեմ յիշում:

Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ կրճատեալ ենթակայ և լրացուցիչ նախադասութիւններից:

§ 448. Պարագայական նախադասութիւնների կազակցութիւնը:

Երկրորդական դոյական նախադասութիւնները ցոյց են տալիս գլխաւոր նախադասութեան ենթակայի գործողութեան պեղը, ժամանակը, տեղը, պատճառը և այլն: Պարագայա-

կան նախադասութիւնները կապվում են գլխաւորների հետ այլ և այլ շաղկապներով ու մակբայներով:

1. Տեղական նախադասութիւնները կապվում են գլխաւորների հետ ուր, ուր որ, որտեղ, կամ ինչ տեղ, որ տեղից կամ ինչ տեղից մակբայներով, որոնց գլխաւոր նախադասութեան մէջ ներդործութեամբ կամ զօրութեամբ պատասխանում են այն տեղ, այն տեղից, ամէն տեղից, ոչ մի տեղ և այլն: Զորօրինակ. Ինչ տեղ պանիր, այն տեղ բանիր: Ուր որ երթաս, ամէն տեղ հետդ կը լինինք: Գնամ (այն տեղ) ուր պատիւդ ու պարտքդ կանչում են քեզ: Գնում եմ (այնտեղ) որտեղից ելել եմ:

2. Ժամանակական նախադասութիւնները կապվում են գլխաւորների հետ այլ և այլ մակբայներով ու շաղկապներով, նայելով թէ երկրորդական նախադասութեան գործողութիւնը գլխաւորի հետ ներկա է կատարվում, թէ նորանից առաջ կամ յետոյ:

Ա. Եթէ երկրորդ. նախադ. գործողութիւնը գլխաւորի հետ միասին է կատարվում, հետևեալ մակբայներով է կապվում. երբ կամ երբ որ, որ ժամանակ—այն ժամանակ (սահմ. ներկ. և անց անկատարի հետ), ինչքա այն ժամանակ, - ինչքա որ, այն տէրպէս որ. ինչպէս. երբ որ անձրև էր գալիս, (այն ժամանակ) մենք նստած էինք հովանոցում: Այն տէրպէս որ դուք խօսում էիք, ես մի ամբողջ գլուխ կարդացի: Մինչև դու պատրաստուիք, (ինչքա այն ժամանակ) ես նամակը կը վերջացնեմ:

Բ. Եթէ երկրորդ. նախադ. գործողութիւնը գլխաւորից առաջ է կատարվում, հետևեալ մակբայներով է կապվում: երբ որ—այն ժամանակ (անց. կատ. և ապռ. հետ), հազիւ ինչ—որ, հէնց որ կամ հէնց—որ. ինչպէս. երբ որ անձրևը դադարեցաւ, (այն ժամանակ) վերադարձանք պարտէզ. երբ որ ժամանակ կ'ունենամ, (այն ժամանակ) կը պարապիմ ձեզ հետ: Հազիւ ինչ տուն հասայ, որ սաստիկ անձրև սկսաւ: Հէնց որ մեծնեցաւ, ամէն մարդ իր տունը քաշուեցաւ:

Հազիւ ինչ, հէնց որ մակբայների տեղ յատկապես գործ են ածվում ինչ չէ, որ չէ բացատական ձևերը. Մեծնեցաւ ինչ չէ, ամէն մարդ իր տունը քաշուեցաւ: Աչքդ որ բաց չես անում, մէկ էլ տեսնում ես որ.....: (Այսինքն հէնց որ մեծնեցաւ, հազիւ ինչ աչքդ բաց ես անում:)

Գ. Եթէ երկրորդ. նախադ. գործողութիւնը գլխաւորից յետոյ է կատարվում, հետևեալ բառերով է կապվում. մինչև չէ, պէս չէ—որ, քանի որ պէս չէ, մասն քան ինչ. ինչպէս, դէս չէի ստացել այս նամակը, որ բարեկամիս մահուան լուրը առել էի: քանի որ պէս ոչինչ հասկացողութիւն չունէի, կարծում էի թէ արեգակը պտտում է երկրի շուրջը: Մասն քան կը սկսիմ գործ, մտածէ թէ որտեղից կամ ինչպէս սկսիս: (Աւելի լաւ է կրճատեալ նախադասութեամբ ասել՝ Սէ գործ սկսելուց մասն...:)

3. Որակական նախադասութիւնները կապվում են գլխաւորների հետ ինչպէս-այնպէս, ինչպէս որ—այսպէս, այնպէս-իբրև ինչ, այնպէս որ մակբայներով—երբ մի գործողութիւն կամ դրութիւն որպիսութեան կողմից համեմատվում է ուրիշ գործողութեան կամ դրութեան հետ. որքան-այնքան որչափ-այնչափ քանակական մակբայներով—երբ համեմատութիւնը լինում է քանակութեան կողմից. Ինչպէս կը սկսիս գործդ, այնպէս էլ գլուխ կը գայ: Որքան ծանր է աշխատանքը, այնքան մեծ կը լինի վարձը:

4. Պատճառական նախադասութիւնները որ ցոյց են տալիս գործողութեան պատճառը, աստիճանը, նպատակը, կապվում

են դլխաւորներին հետ վատ պէս, որովհետեւ, որպէս պէս, որ շարկապներով. ինչպէս. Հին աղգերը պաշտամունք էին արեգակը, լուսինն ու աստղերը, վասն պէս կարծում էին թէ երկնքի լուսաւորները հոգի ու կեանք ունին: Չկարողացայ գալ ձեր տեսիլից, որովհետեւ շատ էի շտապում: Աստիճն նեղացած է ինձ վրայ որ վաղուց չեմ եղել իւր մօտ: Պարտէզը ոռոգելէք (ինչ նպատակով) որ ծաղիկները չչորանան: Մահը միշտ աչքի առաջ ունեցիր, որպես պէս չվախենաս նորանից:

5. Պայմանական նախադասութիւնները կապվում են դլխաւորի հետ էլէ, ըէ որ-ոչէն շաղկապներով. ինչպէս. Եթէ կամենում ես երաժշտութիւն սովորել, պէտք է շատ աշխատիս որ լաւ երաժիշտ դառնաս: Թէ որ ձեզ մօտ եկած չլինէի, այսքան բազմութիւն տեսնելու առիթը չէի ունենալ: Մարդս որ ցանկութիւն ունենայ (փոխանակ՝ եթէ մարդս ցանկութիւն ունենայ), ամենադժուար գործը կարող է յաջողութեամբ գլուխ տանել:

Աւելի սաստկութեան համար պայմանական նախադասութիւնը երբեմն հարցականի ձև է ստանում. այսպէս. կամենո՞ւմ ես որ ես քեզ միշտ բարի խորհուրդներ տամ, ասածս ներս կատարէ: — Ասինքն՝ եթէ կամենում ես:

6. Տեղատուական նախադասութիւնները, որ տեղի են տալիս դլխաւոր նախադասութեան դործողութեանը, կապվում են հետևեալ շաղկապներով. ընդէր, ընդէրքայց, ուսկից, այնուամենայնէ. զորօրինակ՝ թէև շատ արդելքների պատահեցաւ, այնուամենայնէ հասաւ իր նպատակին: Թէպէտ չեմ կարող խոստանալ, բայց կ'աշխատեմ խնդիրքդ կատարել:

Շատ անգամ ընդ, ընդէրքայց և շաղկապների տեղ դիմաւոր

բայի մօտ դրվում է նոյն բայի անորոշ դերբայն գործիական կամ նաև ուղղական հոլովով՝ խօսքին աւելի հաստատութիւն տալու համար. ինչպէս. Ուսումն ամէն բան ուսումէ, բայց չէ կարող մարսել: Ցաւելով շատ եմ ցաւում, բայց հնար չունիմ օդնելու: Խոստանալ ամէնքը խոստանում են, բայց ոչ ամէնքը կատարում են: — Այսինքն՝ թէև ուսում է, թէպէտ խոստանում են:

Երբեմն այս ձևերը գործ են ածվում նաև անկախ նախադասութեան մէջ, այսինքն ուր ընդ-քայց շաղկապները չկան: Մեռնիլ ամէնքս պիտի մեռնինք: Հրաժարվում ենք այսպիսի անվայել գործողութիւնից:

---

1. Թարգմանութիւն. — Ուր են եմ, անդ և պաշտօնեայք իմ եղիցին: Ուր մարմին է, անդր և արծուիք ժողովեսցին: — Նա ընդէր անդէն՝ ի ձմեռուցին էր թագաւորն, առանց հարցափորձի հրամայէր լինել: Ընդէր յերկարեցաւ ամրաստանութիւն զաւուրս բազումս, պարտաւորեցաւ կողմ ուրացելոյն: — Մինչ հասու լսօնալ իրէ՝ երիցս ուրացաւ պիտ: — Որպես մեծ է հոգին քան զմարմին, այնպես սեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոյ: — Բայց ընդէր անկեալ էր մեծ սպարապետն Հայոց՝ ի պատերազմին, ոչ զը գոյր այնուհետև՝ ի մէջ գլխաւոր՝ յոր յեցեալ (թէև ընկնիլ) ժողովէին զանդ մեռացելոցն: — Թէպէտ բազում այն էր որ ասացեան՝ քան թէ որ մեռանն, սակայն ցանեալ ցրուեցան (ցիր ու ցան եղան), և հասեալ անկանէին՝ ի տեղիս յամուրս (բերդ) աշխարհին: — Թէպէտ զնետ եկն, չկարաց հասանել: — Որպես չէ չէք յանդրանութենէ արդարութեան, սակայն՝ ի սուտութենէ ճշմարտութիւն: — Ո՞նէ ունէր պարծանս, այլ ոչ առ Աստուած: — Ընդունալ ամենևքին ընծանան, բայց մի ոք առնուս: — Շինել լինէին զաշտարակն ի պաշտօն դիւաց:

2. Գրեցէք ձեզանից մի քանի բաղադրեալ նախադասութիւններ երկրորդ. պարագ. նախադասութիւններով:

§ 149. Զարադայտեան նախադասութիւնների կրճատումը.

Երկրորդական պարագայական նախադասութիւնները կրճատուելիս վոխվում են պարագայական բառերի պէս. և գոյ. անուան ձևով:

1. Տեղական նախադասութիւնները վոխվում են անդ. և ապա. դէպքերի աճականաբար վարուած թեղ գոյականի հետ, որ դերանուանական յօդ է ընդունում. ինչպէս. Արևմուտքն այն տեղ է, ուր արեը մայր է մտնում.—Արևմուտքն է արեի մայր մտած տեղը: Գնա՝ ուր գնալու է:—Գնա գնալու տեղը:

2. Ժամանակական նախադասութիւնները վոխվում են 1) ածգոյական և հայց. հոլովիներով անորոշ դէպքերի կամ երբեմն նաև գոյականի երբ որ դիմադարձի հետ կապվում են էդ որ, ոյն ինչպէս որ, ինչ կամ ինչ որ բառերով. ինչպէս. Էդ որ գիդէ էլ կարող՞, քունը տարաւ.—Գիդէ կարողա՞ կամ գիդէ կարողանա՞ քունը տարաւ: Էդ ու ընչին բան է պատահում, յուսահատվում ես.—Ու ընչին բան պատահելու կամ ու ընչին բան պատահելու՞ քոնանակ յուսահատվում ես: Ոյն ինչպես որ դուռ խօսում էին, ես ու ամբողջ գլուխ կարդացի.—Ձեր խօսակցութեան ինչպես (կամ քոնանակ) ես ու ամբողջ գլուխ կարդացի: Սպասեցէք այստեղ մինչև ինչ գանգ.—Սպասեցէք այստեղ մինչև ես գալը: 2) Սեռ. հոլովով անորոշ ու անդ. դէպքերի պէս նախադրութեամբ, երբ կապվում են հարցե՞ր ինչ, հենց որ մակբայներով. Հարցե՞ր ինչ տուն հասայ, որ սաստիկ անձրև սկսաւ:—Տուն հասնելու պէս կամ տուն հասածի պէս սաստիկ անձրև սկսաւ: Հենց որ տեսնեցա՞, ամէն մարդ իր տունը քաշուեցաւ.—Մտնելու պէս ևայլն: Հենց որ պետնես, կը ճանաչես նորան.—Տեսնելու պէս կամ տեսածի պէս կը ճանաչես նորան: 3) Անցեալ դերբայի բացատակ. ձևով երբ,

որ կապվում են պետ էի, պէտի որ պետ էի, ապաչ պէտ ինչ բառերով. Աբեգիկը պետ էր ծագում, որ նա արդէն ոտի վրայ է.—Աբեգիկը պետ էր ծագած՝ նա արդէն ոտի վրայ է: Պետ էին սպուղել այս նամակը, որ բարեկամիս մահուան լուրը առել էի.—Այս պետ նամակը չպատած՝ ևայլն:

Վերջին տեսակ նախադասութիւնները կրճատվում են նաև էսպ. հոլովով անորոշ դէպքերի պէս նախադրութեամբ. իսկ եթէ ժամանակական նախադասութեան գործողութիւնը դիտաւորից յետոյ է կատարվում, յետոյ նախադրութեամբ. այսպէս. Գնալուդ պատճառ ես մեզ մօտ: Աշխատելուց յետոյ պէտք է հանգստանալ:

3. Որակական նախադասութիւնները վոխվում են գործ. հոլովով գոյականի, իսկ ենթական սեռ. յոգնածութեան. ինչպէս. Այնպէս է շարժում, ինչպէս ուրիշները խորհուրդ տուին.—Ուրիշների խորհրդովն է շարժում:

Համեմատական նախադասութիւնների մէջ, եթէ երկու առարկայ միմեանց հետ համեմատվում են որպիսութեան կողմից, երկրորդ. նախադ. ենթական վոխվում է պես. հոլովի պէս նախադրութեամբ կամ նմանի ածականով. իսկ եթէ քանակութեան կողմից՝ բայն վոխվում է գոյականի՝ չափ նախադրութեամբ. ինչպէս. Ախտի պէս յարձակեցաւ թշնամու վրայ: Վահագնի աչքերը, ասում է երգը, արեգակի նման էին փայլում: Ուրիշ հարցողացայ, այնքան սովորեցայ.—Կարոդացածիս չափ կամ խոսդալենաս չափ սովորեցայ:

Անորոշ դէպքերի գործ. հոլովը վարվում է որակական կրճատեալ նախադասութեան տեղ, բայց կատարեալ նախադասու-

թիւնից չէ կազմուած, և չէ էլ կարող կատարեալ նախադասութեան փոխուիլ. զորօրինակ. երեխանց ապականում են (ինչպէս) նոցա բոլոր ուզածները կատարելով: Մարդս (ինչ եղանակով) ճանապարհորդելով շատ բան է սովորում:

Երբեմն այս մոքով վարվում է անցեալ դերբայն. Մայրը որդիքը հետն առած՝ եկեղեցի է գնում: Ներսունս ձեռիցը բռնած՝ փողոցներումը մանր էր գալիս:

4. Պատճառական նախադասութիւնները կրճատուելիս փոխվում են բայական և համար նախադրութեամբ ածական հոլովով գլխ. անուան և անորոշ դերբայի. վերջինը վարվում է և գոլոշինի հոլովով. զորօրինակ. Յամառութենից ամէն բան կորչէր: Զամբասանից աշխատել չէ: (Որովհետև յամառ ես, որովհետև չամբասանց աշխատում է:) Շատ ուրախացայ քեզ այս տեղ պատահելս համար (կամ լոկ պատահելս): Ջեռ ցաւում այդպիսի յարմար առիթ կորցնելս համար: (Ա. յիշեցնէն՝ որ տեսել եմ, որ կորցրել ես): Ամէնքը գնացին ընծոնելս*: Ինչ նեղութիւն ասես յանձն առի նորա փրկութեան համար: Չկարողանալով հետաքրքրութիւնս զսպել՝ ներս մտայ: Սերոնց կողմից անօգնական ծնելով՝ սարսափեցանք անձնատուր լինել:

Այս գործ. հոլովով անորոշ դերբայն վարվում է, երբ երկրորդ. նախադասութեան գործողութիւնը զլխաւորի հետ միասին է կատարվում. իսկ եթէ զլխաւորից առաջ է կատարվում, գործ է ածվում անորոշ դերբայի կատարեալ ձևը նոյնպէս գործիական հոլովով: Զորօրինակ. Տեսնելով (այժմ) ձեր ջանասիրութիւնը՝ վարձատրում եմ ձեզ: Տեսած լինելով (վաղուց) ձեր ջանասիրութիւնը՝ վարձատրում եմ ձեզ:

Երբեմն այսպիսի դէպքերում օժանդակ բայն դուրս է ձգվում. Այս համբաւովն ածկոտած՝ բոլոր ցաւերս մոռացայ:

* Անորոշ դերբայն ներգործական ժամանակ է ընդունում եթէ գործողութեան պատճառն է ցոյց տալիս, և անյօդ է մնում, եթէ գործողութեան նպատակն է ցոյց տալիս:

Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ կրճատուել պարագայական նախադասութիւններից:

Բ. Անկախ նախադասութիւնների կապակցութիւնը.

§ 150. Անկախ նախադասութիւնների կապակցութեան տեսակները:

Անկախ կոչվում են այն նախադասութիւնները՝ որոնք քերականօրէն միմեանցից անկախ կանգնում, այլ իրաքանչիւրը առանձին առած մի ամբողջ միտք է պարունակում իւր մէջ:

Անկախ նախադասութիւնները կապակցվում են 1. բաղհիւսական շաղկապներով, երբ որ համաձայն մոքեր են պարունակում և 2. ներհակական շաղկապներով, երբ անհամաձայն կամ հակառակ մոքեր են պարունակում: Առաջին տեսակ կապակցութիւնը կոչվում է բաղդիւսական, երկրորդը՝ հնչհակական:

Անկախ նախադասութիւնների մէջ շաղկապների մոքով գործ դրուած մակբայները կարող են դուրս ձգուիլ, եթէ նախադասութիւնների բովանդակութիւնից երևում է թէ ինչ յարաբերութիւն ունին միմեանց հետ:

§ 151. Բաղհիւսական կապակցութիւն:

1. Բաղհիւսական կապակցութեան մէջ մտնում են մասնաւոր ու անկախ նախադասութիւններ՝ իրրև մի ամբողջի մաս-

նել, որոնք սովորաբար միմեանց հետ կապվում են և կամ ու շաղկապով:

2. Ե՛ շաղկապը երբեմն դուրս է ձգվում, երբեմն էլ կրկնվում է, նայելով թէ խօսքին կամենում ենք աւելի ազատութիւն տալ, թէ աւելի ոյժ ու ծանրութիւն, ինչպէս. եկէք թաղեցէք, փակէք, գնացէք. էս դառն աշխարքիցս ոտներդ քաշեցէք ու ձեր անբաղդ մօր հոգին յիշեցէք:

Թասով գինին խմելիս՝ հայք միշտ Աստուած յիշում են,
Խրոովարկու հարբողին խընջոյքիցը քըշում են.
Երգ սիրում են—հոգևոր, խաղ սիրում են,—բայց անմեղ,
Միով բանիւ և ըղգաստ և խելօք են ամէն տեղ:

Բայց առ հասարակ և-և կրկնաւոր շաղկապի տեղ գործ են ածվում ևէ-ևէ, էլ-էլ. իսկ բացառական նախադասութիւնների մէջ՝ ազ-ազ. ինչպէս. թէ՛ մեզ համար զգալի եղաւ նորա դըժբաղդութիւնը և ևէ նորա բոլոր բարեկամների համար: Ձեր ուղարկած ընծաները ստացանք էլ, վայելեցինք էլ, ոչ մեր բարեկամական խորհուրդները կարողացան համոզել նորան, ոչ իւր սեպհական ձախորդութիւնները կարողացան կոտրել նորա յամառութիւնը:

3. Եթէ երկու համաձայն մարքերից հարկ լինի մէկին աւելի ոյժ տալ, գործ են ածվում ոչ Թէն-այլ շաղկապները. այսպէս. Տիգրանը ոչ Թէն խելացի, այլ բարեսիրտ երեխայ է: Ոչ Թէն տեսայ նորան, այլ խօսեցայ հետը:

4. Եթէ կամենանք ցոյց տալ թէ ինչ կարգով հետևում են միմեանց առարկաները կամ գործողութիւնները, գործ են դրվում հետևեալ մակբայները. նախ կամ նախ և ապա, յետոյ, վերջապէս և այլն: Աստղ աստղ քաղաքապետը դիմաւորեց իշխանին, յետոյ քաղաքի պաշտօնատէրերը, ամենից վերջը ժողո-

վուրդը: Նախ և առաջ եկեղեցի գնացէք, յետոյ փողը ինչ զբօսեցէք և վերջապէս ամենքդ միասին տուն եկէք:

5. Իսկ եթէ հարկ լինի ցոյց տալ թէ գործողութիւնը փոփոխակի կրկնվում է, վարվում են հետևեալ կրկնաւոր բառերը. երբեմն-երբեմն, մէկ-մէկ. զորօրինակ. երբեմն ոտով հինք ըզբօսնում, երբեմն կառքով: Մէկ հանդարտ էր գնում, մէկ շուտ շուտ վազում:

Գրեցէք մի քանի օրինակներ բաղդատական կապակցութեան:

§ 152. Ներհակական կապակցութիւն:

1. Ներհակական կապակցութեան մէջ մտնում են անհամաձայն, երբեմն նաև իրարու հակառակ նախադասութիւններ, որոնք սովորաբար կապվում են քայց, բայ, սակայն, այլ շաղկապներով, երբեմն էլ ընդհակառակն, մեծն մակբայներով: Զօրօրինակ. Ջալալը թևեր ունի, քայց չէ կարող թռչել: Անդրանիկ եղբայրս երեսուն տարեկան է, բայ քոյրս տասնուվեց տարեկան:

Մեծն մակբայը գործ է ածվում առ հասարակ երբ հակառակ իմաստը զօրութեամբ է խնդրվում. Մեծն դուք կարող էիք այդ բանը անել: (Զօրութեամբ խնդրվում է՝ Ուրիշ ոչոք չէր կարող այդ բանը անել):

2. Ներհական կապակցութեան վերաբերում են և այնպիսի իմաստների կապակցութիւնը, որոնցից մինի ընդունելովը միւսը հերքվում է: Այս տեսակ իմաստները կապվում են կամ և կամ շաղկապներով. ինչպէս. կամ դու տանը մնար և ես գնամ, կամ ես տանը մնամ և դու գնա: կամ ձշմարիտը կը խօսիմ, և կամ բոլորովին կը լռեմ:

3. Ներհակական կապակցութեան մէջ պատահում է երբեմն որ նախադասութիւններից մինը կրճատվում է՝ փոխանակ բայի և փոխանակ կամ պէղ նախադրութիւններով բդռ. և սեռ. հոդերների. ինչպէս. Մեզ մօտ ոչոք չկար. հապ մյուն ֆո եղբայրը.—Մեզ մօտ ոչոք չկար քայլ ֆո եղբօրից: Ոչ թէ ուրախանալ էր պատահ մեզ այնտեղ, այլ ամենամեծ տրտմութիւն. Ուրախանալ պէղ ամենամեծ տրտմութիւն էր պատահ մեզ այնտեղ:

4. Շատ դործածական է մեզանում նոյնպէս այն ձևը՝ որով պայմանական նախադասութիւնը դուրս է ձգվում և միւսը միայն նորա համապատասխան դլխաւոր նախադասութիւնը ևն, ապա ևն ոչ շաղկապներով, որ այսպէսով անկախ նախադասութեան զօրութիւն է ստանում. ինչպէս. Ճշմարիտն ասա, ևն չէ՝ կը պատժուիս: (Ա. յսինքն՝ իսկ եթէ չես ասիլ, կը պատժուիս:) Գիտութեան մէջ չպէտք է ոչինչ արհամարհես, ապա ևն ոչ՝ ամենահասարակ ճշմարտութիւններից զուրկ կը մնաս:

Գրեցէք մի քանի օրինակներ ներհակական կապակցութեան:

Ս. Էջմիածնայ Գրադարան
Սերիա Ընդհանուր
№ 1-2

Հատուածներ

Վերլուծութեան համար

1. Ծիծեռնակ:

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա,
Թռչում ես այդպէս արագ:
Ա՜խ, թռիր, ծիծեռնակ,
Ծընած տեղըս Աշտարակ,
Անդ չինիր քո բունը
Հայրենի կըտուրի տակ:
Անդ հեռու ալևոր
Հայր ունիմ սըգաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէ օր:
Երբ տեսնես դու նորան,
Ինձնից չատ բարև արա.
Ասա, թող նըստի լայ
Իւր անբաղդ որդու վրայ:
Դու պատմէ՝ թէ ինչպէս
Ասա անտէր ու խեղճ եմ ես.
Միշտ լալով, ողբալով՝
Նհանքս մաշուել, եղել կէս:
Ինձ համար ցերեկը
Մութ է չըրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտ չի գալիս:
Ասա որ չի բացուած
Թառամեցայ միացած,
Ես ծաղիկ գեղեցիկ՝
Հայրենի հողից զրկած:
Դէ՜հ, սիրուն ծիծեռնակ.
Հեռացիր, թռիր արագ
Դէպի Հայոց երկիրը,
Ծընած տեղս—Աշտարակ:

2. Երկու քոյր.

Մեզնից չատ առաջ կար մի թագաւոր,
Հոգւով դեռ արի, գլխով ալւոր.
Մեծ ծով էր պատել նորա աշխարհը,
Ոսկի առագին գիտուն այն դարը.
Ունէր նա երկու մատաղհաս աղջիկ,
Մինը խիստ տըգեղ, միւսը գեղեցիկ.
Մի օր տըգեղը առաց միւսին.
"Երթանք ծովի ափ, քոյրիկ, միասին,,.
Սիրունը գընաց առաջից տրտում,
Տըգեղը ետևից ոխ պահած սրտում.
Հազիւ թէ ծովի ափին էր հասած,
Իր սիրուն քըրոջ գլուխը նա ցած.
Կանչեց կիսամեռ սիրունը ջըրից.
"Քոյրիկ իմ, քոյրիկ, փրկէ ինձ մահից.
Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,
Ա'ռ, էն քեզ լինի, պարգեւ ինձ կեանք,,...
—Էն առանց քեզ էլ կարող իմ ատանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ—
—"Քոյրիկ, թէ այդ էլ քեզ չէ բաւական,
Կը տամ քեզ ոսկի պըսակ պատուական,,.
—Էն առանց քեզ էլ կարող եմ ատանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ.
«Քոյրիկ, մի թողնիլ դու ինձ անտէրունչ,
Քեզ սիրուն փեսաս կը տամ անտրտունջ,,.
Տըգեղի սիրտը գարձել էր ժէտ քար,
Քըրոջ խնդիրքը թողեց անկատար.
Ձկնորսը ծովը ձըգեց մեծ ուռկան,
Բըռնեց մարմինը սիրուն աղջկան.
Ջըրիցը հանեց, դըրեց ափի մօտ,
Շատ ծաղիկ ցանեց վըրան ու չատ խոտ.

Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջկան,
Լացեց ու առաւ, դըրեց ուսի վրան.
Տարաւ իրա տուն այդ անգին գիւտը,
Զօրացուց նորա մարմնոյ դիպի հիւթը.
Գեղեցիկ տաւիղ չինեց ոսկերից,
Քաղցրաձայն լարեր հիւսեց մաղերից.
Երբ որ ամէն բան պատրաստեց կարգին,
Գընաց արքունիք տաւիղը ձեռքին.
Երբ մտաւ դահլիճ չըքեղ զարդարած,
Տեսաւ տըգեղին փեսի մօտ կանգնած.
Բացեց բերանը, լարերին խըփեց,
Հիւրերի առջև քաղցրաձայն երգեց.
"Չընչէ, իմ տաւիղ, հնչէ համարձակ,
Հարազատ քոյրս խըլեց իմ պըսակ.
Լըսէ, իմ ծընող, լըսէ, սիրական,
Հարազատ քոյրս խըլեց իմ փեսան.
Լըսէ, ժողովուրդ, լըսէ ախտով,
Հարազատ քոյրս գըլորեց ինձ ծով,,.
Միւս օր դահիճք խարոյկ չինեցին,
Մահապարտ քէրոջ մէջը գլորեցին.
Հուրը պըլպլաց, աղջիկը կանչեց.
"Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց,,.

3. Ամերիկայի գիւտը.

Այն միջոցին երբ Պորտուգալացիք աշխատում էին Հնդկաստանի ճանապարհը գտնել, Քրիստափոր Կոլոմբոս Գենուացին մտածեց թէ կարելի է Հնդկաստան հասնել չարունակ դէպի արևմուտք նաւելով. Նա համոզուած էր թէ Եւրոպայի ու Հնդկաստանի մէջ ուրիշ երկրներ էլ կան, թէև ոչինչ հասկացողութիւն չունէր այն ցամաքի մեծութեան վրայ, որ վիճակուած էր իրան գտնելու. Այս համոզմունքը ստացել էր նա երկար ժամանակ աշխարհագրութեամբ պարապելուց,

ինչպէս նաև ուրիշ կողմնակի հանգամանքներից։ Նա լսել էր, օրինակի համար, թէ Ասորեան կղզիների մօտ այնպիսի մարդկանց մարմիններ են գտնուել, որ երբէք տեսնուած չէին Եւրոպայում։ Առաջ ու առաջ Կոլոմբոսը դիմեց իւր երկրի կառավարութեանը, բայց նորա առաջարկութիւնը մերժուեցաւ։ Յետոյ իր խորհուրդը յայտնեց Պորտուգալացոց թագաւորին։ Թագաւորը հրամայեց իւր խորհրդականներին որ քննեն նորա առաջարկութիւնը։ Երբ տեղնի տեղը իմացան նորա բոլոր դիտաւորութիւնները, վճռեցին առանց Կոլոմբոսի գլուխ տանել այս մեծ գործը։ Պատրաստեցին մի նաւ և ձիննեւացու հաղորդած տեղեկութիւնները տուին նաւապետին։ Բայց այս արշաւանքը ոչինչ յաջողութիւն չունեցաւ։ Կոլոմբոսն այս անիրաւութեան դէմ զայրացած՝ հեռացաւ Լիսաբոնայից և իւր աչքերը դարձրեց Սպանիայի վրայ։

Տասնութը տարի սպասելուց յետոյ՝ Կոլոմբոսին յաջողեցաւ վերջապէս Կաստիլիայի Իզաբելլա թագուհուց երեք փոքրիկ նաւ ստանալ իւր ձեռնարկութիւնը գլուխ տանելու համար։ 1492 թուականի օգոստոսի 3-ին ճանապարհ ընկաւ նա Պալոսի նաւահանգստից, և չնայելով նաւաստիների անհնազանդութեանը՝ հոկտեմբերի 12-ին հասաւ Կուանահանի կղզին, այնտեղից Կուբա և Գայիտի, ուր և առաջին փոքրիկ գաղթականութիւնը հիմնեց։ Իւր երկրորդ ճանապարհորդութեան ժամանակ, 1493-ին, Կոլոմբոսը գտաւ Կարայիբեան կղզիները և Ցամայիքան, և մի փոքրիկ ամրութիւն չինեց Գայիտիի վրայ, ուր Հնդկացիք ջնջել էին նորա առաջին գաղթականութիւնը։ Երրորդ ճանապարհորդութեան ժամանակ այս յանդուգն ծովագնացը գտաւ Տրինիդատը (Երրորդութիւնը) և Ամերիկայի ցամաքը՝ Օրինոկոյի գետաբերանի մօտ։ Այդ միջոցում Սպանիայում Կոլոմբոսի թշնամիները ամէն տեսակ զրպարտութիւն բարդեցին նորա գլխի վրայ։ Ֆերդինանդ թագաւորը Բովադիլլա պալատականին հրամայեց որ գնայ բռնէ Կոլոմբոսին և չղթայակապ Սպանիա բերէ։ Սպանիա հասնելուն պէս՝ Կոլոմբոսը իսկոյն ազատութիւն ստացաւ և ամենամեծ պատիւներով ընդունուեցաւ թագաւորական պալատը։ Բայց իզուր պահանջում էր նա որ կատարեն այն խոստումնքները որ տուած էին իրան Նոր երկիրը

գտնելուց առաջ։ 1502-ին Կոլոմբոսը չանձն առաւ չորրորդ և վերջին ճանապարհորդութիւնը. նա մեռաւ չորս տարի յետոյ Վալլադոլիդում, մոռացուած այն ժողովրդից՝ որին ընծայեց մի ամբողջ աշխարհ։

4. Իմ երգը։

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերս բարեկամք անջատած են ինձանից,
Թառամում եմ ես այս օտար երկրումը,
Լռնակ բրած ծաղկի նըման դաշտումը։

Կամաց կամաց տարիները անցնում են,
Մեզ նորոգած գարուն, ամառ գարձնում են.
Միայն իմ խեղճ կեանքը չունի ոչինչ նոր,
Ինձ երեկը կըրկնըվում է միշտ այսօր։

Ասպարիզիս նեղ է ճանփան ու փշոտ,
Խեղճութիւնս համարում են ինձ ամօթ.
Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի,
"Դա, ասում են, իր օրումը գարդ չունի,,։

Ես գարդ ունիմ, գարդըս մեծ է ու պէս պէս,
Բայց չեն տեսնում ձեր աչքերը կարճատես։

Երբ ես մըտայ անհիւրընկալ այս աշխարհ,
Քանի րոպէ բաղդը ժպտաց ինձ պայծառ.
"Հա, ասացի, գարձել է իմ անիւը,
Լըրացել է իմ վատ բաղդի չար թիւը,,։

Ցանկարծ փըչեց անտուժելի հիւսիսին,
Թառամեցուց վարդ մանուշակ մայիսին.
Այսպէս չորցուց իմ նաղելի հասակը,
Իմ անուղղում, անագորոյն վիճակը։

Ա՜խ մօտեցիր, օրհասական օր մահուան,
Բեր քու հետը սև հող ու նեղ գերեզման.
Թող սառ լինի իմ նոր տանը յատակը,
Ծանր քարէ վերաս ծածկած վերմակը։

Բայց ախ, երբ որ կ'անցնի ամիս ու տարի,
Կը մաժռոտի գերեզմանը այն քարի,
Հետքը անգամ չի մընալու իմ խաչին,
Իմ անունը, իմ յիշատակ կը կորչին։

Բայց կ'ուզէի թողնել այստեղ մի արձան,
Որ դարէդար մընար ամուր, անկործան...
Ես երգեցի երգ ոլորուն ու անուշ,
Իմ քընարի ձայնն էր մեղմիկ ու քընքուշ.
Մի՞թէ այնքան անգութ կ'լինի Լեռա գետ,
Որ անունըս անգամ կ'անէ նա անհետ։

5. Վայր ընկնող աստղեր։

"Հայրիկ, ասաց դուստրը հօրը,
Կապոյտ երկնքի վերայ
Ո՞րքան աստղեր վայրումն վառ.
Ասես համար թիւ չըկայ։
Ասում են որ ամենայն մարդ
Աստղիկ ունի երկնքում.
Ճշմարիտ է, ասա, հայրիկ,
Իմը որտեղ է փայլում"։
—Այո՛, դստրիկ, այդ աստղերը
Ունին հաչիւ ու համար,
Եւ մեզանից իւրաքանչիւր
Մի աստղ ունի իւր համար։
"Հայրիկ, տես, տես, աստղը թռաւ
Ցետքից պայծառ գիծ թողեց.
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց,,։
—Ով իմ դստրիկ, հանգիստ կացիր,
Դա մեծատան մի աստղ էր,
Որ իւր օրում, իւր կեանքում
Խիղճ ասածը չըգիտէր։
Աղքատները նորա դռնից
Գիշեր ցերեկ հալածուած,
Մի մարդ չը կար նորան ծանօթ
Որ չը լինէր վշտացած։
«Հայրիկ, տես, տես, աստղը թռաւ
Ցետքից պայծառ գիծ թողեց,
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց»։
—Ով իմ զաւակ մի վրդովուիր,
Դա աղջկայ մի աստղ էր,
Որ իւր հօր ու մօր խօսքը
Իւր կեանքումը յարգած չէր.
Նա փախել էր իւրեանց տընից...
Մուր էր քրսել տան վերայ...
Իւր ծընողքը լացուցել էր,
Ինչքը վատնել անխնայ։
«Հայրիկ դարձեալ թռաւ մի աստղ
Վայր ընկաւ նա երկնքից.

Հայրիկ, ովի՞ աստղն էր արդեօք
Որ զրկուեցաւ իւր տեղից»։
Ո՜հ դստրիկս, հանգիստ կացիր.
Կեղծաւորի դա աստղ էր,
Որ իւր օրում ուղիղ մի խօսք
Մարդու երբէք ասած չէր.
Փարիսական իւր ձեռով
Աչխարքը խաբեց, զարմացուց,
Այդ պատճառով Աստուած նորա
Աստղի լոյսը խաւարցուց։
«Հայրիկ, տես, տես մի աստղ թռաւ
Եւ գիծ անգամ չըթողեց,
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց»։
—Ո՜հ, սիրական, խաղաղ մընա,
Բռնակալի դա աստղ էր,
Որ աչխարհը իւրեան գերի
Ծնած օրից կարծել էր.
Շատ հալածանք չատ նեղութիւն
Պատճառեց նա իւր կեանքում
Շատ տուն քանդեցչատ մարդ զրկեց,
Գութ չունեցաւ իւր սրտում.
«Ապա այն ինչ աստղ է, հայրիկ,
Որ այնպէս պարզ վառվում է,
Նորա մաքուր, պայծառ լոյսը
Ջորս կողմը բակ բռնել է»։
—Ո՜հ իմ դստրիկ, աղօթք արա
Դա ծերուհու մի աստղ է,
Որ իւր կեանքում ոչինչ մարդու
Ոչինչ վընաս տուած չէ.
Ա՛յն լուսաւոր բակն է նորա
Առաքինի գործերը.
Աղօթք արա որ երկարուին
Նորա կեանքի թելերը։

Շատ օր չանցաւ, երկնքիցը
Մի այլ վառ աստղ պակասեց.
Ովի՞ աստղիկն էր որ ընկաւ,
Բան հարցանող չերևեց։
Մինչդեռ լուսինն արծաթափայլ
Լոյս էր տալիս գիշերին,
Խորհրդաւոր մինչ տիրել էր
Անվրդով խոր լըռութիւն,
Մի սրտաթափ մազերն արձակ
Վաղեց աղջիկ սրգաւոր
Դէպի գեղի գերեզմանքը,
Ծունկ չոքեց մի չիրմի մօտ։
«Հայրիկ, աստղիկդ չէ փայլում,
Դու յաւիտեան քընեցիր.
Առ ինձ քո մօտ, քո ծոց, քո գիրկ,
Ինչո՞ւ անտէր թողեցիր:
Իմ աստղիկն ասա նոյնպէս
Որ չըփայլի հերիք է.
Այս աչխարհը ինձ առանց քեզ
Մութն ու խաւար մի բանդ է»։
Երրորդ օրը չատ սգաւորք
Փորեցին մի գերեզման,
Ուր թաղուեցաւ իւր հօր մօտին
Մարմինը խեղճ աղջկան։

«Հայրիկ տես, տես, աստղը թռաւ,
Ցետքից պայծառ գիծ թողեց,
Աստղիկն ընկաւ երկնքիցը
Միւս անգամ այլ չերևեց...»։

Մի մարդ չըկար որ նկատէր
Թէ հեռանալ դիշերին
Պակասեցաւ երկունքիցը
Մի պայծառ աստղ իւնդպին։

6. Արաքսի արտասունքը։

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գընում եմ,
Հին հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պարում եմ։
Բայց նոքա միշտ յեղյեղուկ
Պղտոր ջըրով եզերքին
Դարիւ դարիւ խփելով
Փախչում էին լալագին։
Արաքս, ինչու՞ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դևռ ծովը չըհասած
Սըգաւոր ես ինձ նըման։
Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սէգ հըպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։
Մի պըղտորիլ յաւակըդ,
Հանդարտ հոսէ խայտալով
Մանկութիւնը քու կարճ է,
Շուտ կը հասնիս դէպի ծով։
Վարդի թըփեր թող բանին
Քու հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ։
Աշտարակար ուռիներ
Սառ ծոցի մէջ քու ջըրին
Ճկուն ոտեն ու տերև
Թող թաց անեն առաջ օրին։
Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թող դան համարձակ,
Գառն ու ուլը քու վրճիտ
Ջուրը մանեն միշտ արձակ։
Մէջքը ուռցուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից.
Ամպի նըման դուռալով
Նոպէս խօսեց յատակից։
Խիզախ, անմիտ պատանի,
Նիրհըս ինչու՞ դարևոր
Վրդովում ես, նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր։
Սիրելիի մահից յետ
Ե՞րբ ես տեսել որ այրին
Աչքից գըլուխ պճնուի
Իր զարդերով թանգագին։
Որի համար զարդարուիմ,
Որի աչքը հրապուրեմ,
Շատերն ինձ են առելի,
Շատերին ես օտար եմ։
Իմ ազգակից գիժ Քուռը,
Թէև այրի ինձ նըման,
Ըսարկօրէն տանուամ է
Գայթակղչի կուռ չղթան։

Բայց նա ինձ չէ օրինակ,
Ես հայ՝ հայիս կը ճանչնամ,
Օտար փեսայ չուզելով,
Ես միշտ այրի կը մնամ։
Կար ժամանակ որ ես էլ
Շըքեղազարդ հարսի պէս
Հաղար ու բիւր պըչրանքով
Փախչում էի ափերէս։
Ցատակըս պարզ ու վըճիտ,
Կոհակներըս՝ ոլորուն,
Ձուսաբերը մինչև այգ
Ջըրիս միջին էր լողում։
Ինչըն մընաց էն օրից,
Ո՞ր ջըրամօտ գեղերըս,
Ո՞րը իմ չէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերըս։
Տօրքը ջըրի աւէն օր
Իր սուրբ ծոցէն Արարատ
Մայրաքընամ ինձ սրնունդ
Պարգևում է լիառատ։
Բայց ես այն սուրբ ջըրերով
Սուրբ Ակոբի աղբիւրին
Պիտի ցօղեմ արտորայքն
Իմ առելի օտարին։
Կամ կենսատու իմ ջըրով
Ափերիս մօտ կըկըզած
Իւր նամազը կատարէ
Թուրք կամ Պարսիկը հոտած։
Մինչ իմ որդիք—ով գիտէ
Վարաւ, նօթի անտէրունչ
Օտար աշխարհ յածում են
Թալլ ոտքերով, կիսաշունչ . . .
Հեռու, հեռու, քըշեցին
Բընիկ ազգը իմ հայկեան,
Նոցա տեղը ինձ տըւին
Ազգ անկըրօն, ժոլեկեան։
Դոցա համար զարդարեմ
Իմ հիւրընկալ ափերը,
Ես կամ դոցա հրապուրեմ
Ճըպռոտ, պըլշած աչերը։
Քանի որ իմ զաւակունք
Ա՛յսպէս կու մընան պանդուխտ՝
Ինձ միշտ սրգուր կը տեսնէք,
Ա՛յս է անխաթ իմ սուրբ ուխտը։

Էլ չի խօսեց Արաքսը,
Ցորձանք տուեց ահագին,
Օղակ օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեգին։

7. Սերվիլիոսը Հռովմայ ժողովրդի առաջ։

Եթէ դուք ինձ այստեղ կանչեցիք վերջին պատերազմի ժամանակ պատահածներիս վրայ հաշիւ պահանջելու, ես պատրաստ եմ տալ ձեզ հարկաւոր տեղեկութիւնները. իսկ եթէ այդ միայն մի-

առիթ է ինձ կորցնելու, ինչպէս որ կասկածում եմ, ազատեցէք ինձ ունայն տեղը խօսելուց. արիւնս ու կեանքս ձեր ձեռին է, արէք ինչ որ կամենաք։

Ես հիւպատոս ընտրուեցայ Վիրգիլիոսի հետ այն ժամանակ՝ երբ Հռոմի մէջ թագաւորում էր երկպառակութիւնն ու սովը։ Հայրենիքը, որի պաշտպանութեան համար կանչուեցայ, ցաւալի դրութեան մէջ էր։ Ես առաջ գնացի թշնամու դէմ, որին ջարդեցի երկու պատերազմների մէջ, և ստիպեցի նորան ապաւինել մի բերդում, ուր և երկար ժամանակ թաք կացաւ՝ վախենալով մեր զէնքերից։ Այս հանգամանքը թոյլ տուեց ինձ դրաւել նորա երկիրը, ուր ես ձեռք բերի անթիւ քանակութիւն հացի և ուրիշ պաշարեղէններ ու ուղարկեցի Հռոմ, որով և սովը վերացրի։

Դուք ինձ մեղադրում էք մի քանի զինուոր կորցնելուս համար թշնամիներին հալածելու ժամանակ։ Այս է միակ յանցանքս, որի համար դուք ինձ մեղադրում էք։ Դատապարտեցէք ինձ եթէ համարձակում էք։ Աղատութիւնը որով խօսում եմ, գուցէ վիրաւորէ ձեզ. բայց ես չեմ վախենում մահից, պատերազմի դաշտերում չատ անգամ եմ գտնուել մահուան վտանգի մէջ, և միշտ արհամարհել եմ նորան, ուր մնաց այժմ։ Կեանքը միայն մի ծանր բեռ կարող է լինել այն զօրավարի համար, որ հարկադրուած է իր անձը պաշտպանել տարած յաղթութեան համար։

Դուք ինձ մեղադրում էք, Հռոմայեցիք, թէ ես չատ մարդ եմ կորցրել վերջին պատերազմի մէջ։ Բայց որ զօրավարը կարող է առանց կորուստի կռիւ տալ պատերազմական արուեստի մէջ փորձուած ժողովրդի հետ։ Ինչումն է յանցանքս. ուրիշ ինչ սխալ գործեցի, ասացէք։ Կամ թէ աստուածները պարտաւորուել են Հռոմայեցոց աղգի առաջ յաղթութիւնը ուղարկել նորան, առանց նորա զինուորների արիւնը թափելու։ Ես յարձակեցայ թշնամիների վրայ, որոնք աւելի բազմաթիւ էին քան թէ ձեր ինձ յանձնած զօրքերը, փախցրի նոցա։ Ուրիշ ինչ էր մնում ինձ անելու. ես պէտք է ընկնէի նոցա հետից. որ բոլորովին ոչնչացնեմ նոցա։ Ձեզանից ոմն կը հրաժարուէր կատարեալ յաղթութիւնից, որ ինձ վիճակուեցաւ ձեռք բերելու։ Կարող էի ես

ձեր զինուորների ոգևորութիւնը զսպել և արգելել նոցա թշնամիների հետից ընկնելու։ Ի՛նչ եմ ասում. եթէ ես հրամայած լինէի նոցա յետ քաշուիլ, ինչ մեղադրանքներ չէին թափիլ գլխիս. ձեր տրիբունների որը կ՚արդարացներ իմ բռնած ընթացքը. չէին ասիլ թէ ես խօսքս մէկ արի թշնամիների հետ հայրենիքս դաւաճանելու համար։ Ուրեմն ինչում չկատարեցի ես զօրավարի պարտաւորութիւններս։ Թող առաջ դան ձեր տրիբունները և երեսիս ասեն ինձ իմ յանցանքը։

8. Կառավարութիւնը հին Հայոց մէջ։*

Կրօնի պէս կառավարութեան սկիզբն էլ խոր հնութեան մէջ ծածկուած է։ Իւրաքանչիւր ցեղ, իւրաքանչիւր ժողովուրդ, երբ միասին հաւաքուում են ընկերութեամբ կեանք վարելու համար, պէտք է կարգա՝ որևէ կառավարութիւն ունենայ որոշ օրէնքներով։

Բայց կառավարութեան մէկ կամ միւս ձևը կախուած է երկրի դրութիւնից, ժողովրդական կեանքի հանդամանքներից և շրջակայ աղգերի բնաւորութիւնից։ Պատմութիւնից տեսնում ենք որ ժայռոտ, աւազոտ, քարքարոտ տեղերում և ծովային ափերի մօտ բնակող ժողովուրդները, իրանց չոր ու ցամաք երկրի պատճառով, շուտով սոխվում են դաչտային երկրները ասպատակել կողոպուտ անելու դիտաւորութեամբ։ Այսպիսի ժողովուրդների մէջ բնականաբար գերագոյն իշխանութիւնը անցնում է հէնց սկզբից այն գերդաստանի ձեռքը, որից դուրս են գալիս քաջասիրտ և յաջողակ առաջնորդներ. կազմվում է ժառանգական հարստութիւն և միապետական իշխանութիւնը անզգալի կերպով հաստատութիւն է ստանում։ Ուրիշ բան է պատահում հովուական ու երկրագործական խաղաղ ժողովուրդների մէջ։ Այստեղ առանձին գերդաստաններ միանում և ցեղական ընկերութիւններ են կազմում առանձին ցեղապետների պաշտպանութեան տակ, որոնց պարտքն է հովուել իրանց ցեղը և պաշտպանել նորա անկախականութիւնը և աշխատանքի պտուղը անիրաւութեան դէմ։ Այստեղ արիւնակից գեր-

* Այս և յաջորդ հատուածը հանած են մեր ձեռագիր Հայոց պատմութիւնից։

դաստաններ կամաց կամաց ցեղական ընկերութիւններ կազմելով՝ դերդաստանի հօր իրաւունքներն էլ անցնում են ցեղապետին, և այսպէսով կազմվում է կալուածական կամ տանուտիրական կառավարութիւնը, որ Հայոց էլ՝ իբրև հովուական ու երկրագործական ժողովուրդի, սեպհական էր սկզբնական ժամանակումը։ Մեր առաջին նահապետները մինչև Արամը ժողովրդեան համար ոչ այլ ինչ էին, եթէ ոչ հայրեր, որոնք խնամում էին իրանց ցեղը այնպէս, ինչպէս որ դերդաստանի հայրը հոգում է իւր որդոց պիտոյքը, կամ ինչպէս այժմեան գիւղացիան կեանքում պռնո-պէրը կամ ծերը կառավարում է իւր գիւղը։ Զանազանութիւնը միայն նորանումն էր, որ մեր նահապետների մէջ միշտ կար մէկը, որ ժառանգութեամբ ստանում էր ազգի ընդհանուր կառավարութիւնը և որի հովանաւորութեան տակ գտնվում էին միւս բոլոր ցեղապետները։ Այս առաւելութիւնը ունէին Հայկից յետոյ ուղիղ ըստ ծուլ յաջորդող նահապետները, որոնց տանուտիրական իրաւունքների ընդհանրութիւնը հիմնվում էր ժառանգական սեպհականութեան վրայ, որով մէկը, իբրև գլխաւոր նահապետ, իր ուղածին պէս կամ հին սովորութեան համեմատ բաժանում էր կալուածները արիւնակից ցեղերին։ Բայց այս գլխաւորութիւնը այնպէս անզգալի էր, որ երբեմն գլխաւոր տանուտէր նահապետը իւր հայրերից իրան ժառանգութեամբ ընկած երկիրը թողնում և ուրիշ տեղեր էր գաղթում։ Այսպէս Ամասիան թողնում է Արմաւիրը և գնում Մասիսի ստորոտը գաղթում։ Գեղամը գաղթում է Սևանայ լճի ափերը և այն կողմերը իրան սեպհականում։ Սորանից երևում է, որ գլխաւոր նահապետի իրաւունքը շատ չէր զանազանվում երկրորդական նահապետների կամ ցեղապետների իրաւունքից։

Այս տանուտիրական խաղաղ ու պարզ կառավարութիւնը տևեց Հայոց մէջ մինչև այն ժամանակ, երբ Հայկի սերունդը սկսաւ չփոթել դրացի ազգերի հետ, որոնց յարձակումներից պաշտպանվելու համար՝ հարկ էր բոլոր ցեղերը միացնել և մէկ մարմին կազմել նոցանից, մէկ անձի հրամանի և իրաւունքների տակ։ Այս բանը կատարեց Արամը, որ Տիգրանեան իշխանութեան սկիզբը դրեց Հայաստանում։ Արամի հաստատած միապետութիւնը ժողովրդական կեանքի հանգամանքներից ըղձխելով և ոչ իշխանական փառասիրութիւնից, արդիւնաւոր հետևանք-

ներ կ՚ունենար Հայոց համար, եթէ Ասորեստանի տիրապետութիւնը չընդհատեր այդ բնական ու պարզ կառավարութիւնը։ Նինուէի թագաւորները, ուրիշ նահանգների պէս, Հայաստանն էլ կառավարեցին մինչև ութերորդ դարու սկիզբը և նորանից յետոյ էլ մասամբ մինչև Պարոյրը, բնիկ կուսակալների ձեռով, որոնց գլխաւոր պարտքն էր հարկ հաւաքել, մէկ մասը թագաւորութեան և միւսը իրանց պիտոյքի համար։ Նոքա իրանց ձեռի տակ ունէին բաղմաթիւ դատաւորներ, որոնք ցրուած էին երկրի բոլոր նահանգներում և փոքրիկ գաւառներում։ Այս վերջինները ունէին իրանց տեղական կառավարիչները, որոնք առանձին խորհրդի միջնորդութեամբ հոգում էին ժողովրդի պիտոյքը։ Տարակոյս չկայ որ այս վարչական ձևը առանց ազդեցութեան չմնաց Հայոց կառավարութեան վրայ Պարոյրի և նորա յաջորդ թագաւորների ժամանակ, որոնց կառավարութեան եղանակի վրայ թէ և ոչինչ չունք իմանում, այնու ամենայնիւ հաւանական է, որ սոցա կամ աւելի ճիշտ Տիգրանի ժամանակ մտած լինին Հայոց մէջ առաջին կարգաւորեալ կառավարութեան ձևերը, բարեկարգ դատարաններով, դրաւոր օրէնքներով և դաշնագրութիւններով և այլն, որոնք Պարսից և Յունաց լեզուով էին գրվում։

9. Երկրագործութիւն եւ վաճառականութիւն։

Հայերը՝ ի բնէ ժիր և աշխատասէր ժողովուրդ լինելով՝ շատ վաղ ժամանակներից իրանց տուին երկրագործութեան և անասնապահութեան։ Հայաստանի բերրի դաշտերը ու ճոխ արօտատեղիքը այս բնական զբաղմունքին զօրաւոր պատճառներն են։ Բացի ատրանից, ղրաղաշտական վարդապետութիւնը երկրի մշակութիւնը մարդուս հարկաւոր առաքինութիւններից մինն էր համարում։ Հայաստանի արգաւանդ դաշտերը տարէց տարի առատութեամբ տալիս էին ցորեն, գարի, բրինձ. հովիտներն էլ, որոնք լի էին արօտներով, սնուցանում էին անհամար ընտանի կենդանիներ՝ ձի, ջորի, դոմէշ, ոչխար, այծ, էշ ու կով։ Բաց՝ ի սորանից, իւրաքանչիւր նահանգ կամ գաւառ իւր կլիմայի և դրութեան համեմատ տեսակ տեսակ բերքեր ու հանքեր էր տալիս. հիւսիսային արևմտեան կողմերը տալիս էին աղ և բիւրեղ, Աղձնիքը և

Տուրուբերանը ունէին պղնձի, երկաթի ու կապարի հանքեր, Արարատը և Սպերը ոսկի, Փայտակարանի կողմերը բամբակ. Տուրուբերանը դաշտային ու մեղր, գոդմին դաւառը անուշահոտ ու առատ գինի. Տայքը թուղ, նուռն, սերկևիլ ու նուշ, Ուտի նահանգը ձիթենի, Ալբարատը, որդան կարմիր ներկը։ Երասխի ափերի և Սիւնեաց ու Փայտակարան նահանգների անտառները տալիս էին ամէն տեսակ աղնիւ փայտեր, որոնց գործ էին ածում պալատների չինութեան համար։

Ալպիսի բնական ու արուեստական բերքերով լի երկիրը, ժողովրդեան պիտոյքը լցնելուց յետոյ, բնականաբար ընդարձակ վաճառականութեան ասպարէզ պէտք է բանար Հայոց համար։ Եւ իրաւի, Հայերը նշանաւոր էին իրանց վաճառականութեամբ ամենահին ժամանակներում։ Հայաստանը թէև ցամաք երկիր է, բայց իւր շուրջը ունէր ծով ու ձկնի և մէջը չորս երեսի գետ, որոնց միջնորդութեամբ միանում է այն ծովերի հետ։ Ճորոխ գետով կապւում է Սև ծովի հետ, Երասխ գետով միանում է Կասպից ծովի հետ, Եփրատ ու Տիգրիս գետերով միանում է մէկ կողմից Ովկիանոսի հետ, իսկ Եփրատը Սամոսատի և Մարաշի կողմից մօտենում Միջերկրական ծովին։ Ալսպիսի դիրք ունենալով՝ Հայաստանը դիւրութեամբ կարող էր վաճառականական յարաբերականութիւններ ունենալ նոյն ժամանակի բոլոր ծանօթ աղգերի հետ։

Բայց ծովային վաճառականութիւնից առաջ սկսաւ Հայոց մէջ ցամաքայինը. այս վերջինն էլ սկզբումը դրացի աղգերի հետ է լինում, որոնց հետ Հայերը փոխանակում էին իրանց բերքերը։ Ցետոյ կամաց կամաց սկսան հեռաւոր երկիրներ գնալ և աւազակների յարձակմունքներից աղատ մնալու համար՝ կարաւաններով, այսինքն բազմութեամբ էին ճանապարհորդում ասիական սովորութեամբ, մինչև որ սկսան գետերի ու ծովերի վրայ գնալ։ Ալնուհետև ցամաքային վաճառականութիւնը, որ մեծ նեղութիւններով էր լինում, երկրորդական տեղն է բռնում և ծովայինը ընդարձակութիւն ստանում։ Արևելքում հայ վաճառականները երասխ և կուր գետերով գնում էին Կասպից ծովը, այնտեղից էլ Եաքսարտէս և Ոքսոս գետերով Բազտրիացոց, Սոգդիացոց, Պարթևաց և Հնդկաց երկիրներն էին գնում, և այնտեղից իրանց ապրանքները բե-

ռելով Սև ծովով՝ Յունաստան և մինչև Իտալիա էին ուղարկում։ Արևմտեան հարաւում կարաւաններով Կապադովկիայից Փիւնիկէ էին հասցնում հայ երկրի բերքերը։ Տիւրոսի և Տարսոնի վաճառանոցներում վաճառւում էին Հայոց երկրի բամբակեայ ձիւանները ու ջորիները, որոնց վրայ Սուրբ Գիրքն էլ յիշատակութիւն է անում, և յետոյ տարածւում էին դրացի երկրները, մանաւանդ Պաղեստին։ Նոցա տեղ բերւում էին Հայաստանի վաճառանոցները կամ, լինչպէս որ հները ասում էին, «չահաստան քաղաքները» ոսկի, արծաթ, գոհարեղէն, աղնիւ կտաւեղէններ ու ներկեր, ցորեն, իւղ ու մեղր։

Ամենի յառաջ երեւելութիւն ունէին Հայերը Նինուէ ու Բաբելոն, ուր Եփրատ ու Տիգրիս գետերի միջնորդութեամբ մեր վաճառականները տանում էին Հայաստանի գինին, մրգեղէնները, վայրը, տախտակը և ուրիշ վաճառքները, ու նոցա տեղ բերում էին Բաբելոնի դոյնզդոյն ու թանկագին կտաւեղէններ, կերպասներ, գորգեր, որոնց մասին հարևանցի ակնարկում է Մ. Խորենացին։ Հերոդոտոս այսպէս է նկարագրում Բաբելոն գնացող հայ նաւերի կազմութիւնը. «Հայաստանում, գրում է նա, նաւերի կողմերը ուռենիներից են չինում և յետոյ դրսից մորթով պատում են. նաւի ոչ առաջին կողմը յատակի է և ոչ յետինը սուր, այլ վահանի ձեւով է բոլոր բոլորակ»։ Ալսպիսի նաւերի մէջ ապրանք բարձելով՝ մանաւանդ. գինի, երկու մարդ թիկ քաշելով, գրում է, տանում էին գետի վերայ։ Ցետոյ աւելացնում է. «Ալս նաւերի մէջ մեծեր էլ կան, փոքրեր էլ. ամենից մեծերը մինչև 1000 տալանդի բեռն էին տանում։ Իւրաքանչիւր նաւ ունի իւր մէջ մէկ էշ, մեծերը չատ աւելի։ Երբ որ նաւավարները Բաբելոն են հասնում և բեռը թափում, վայրն ու յարդը ծախում են, իսկ մորթերը էշերի վերայ բարձելով՝ Հայաստան են քշում, որովհետև անկարելի է գետի ընթացքին հակառակ գնալ, այնքան սրընթաց է. հէնց այս պատճառով նաւերը փայտից չեն չինւում, այլ մորթից»։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յառաջաբան ..... Ա—Բ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Կազմութիւն եւ Մասունք-Բանի

Կազմութիւն բանի

§§ Եր.

1. Ինչից է կազմվում բանը կամ խօսքը 3

Ա. Նախադասութեան կազմութիւնը.

2. Ի՞նչ է նախադասութիւնը .....
3. Նախադասութեան գլխաւոր անդամները — ենթակայ և ստորոգեալ 4
4. Համառօտ և ընդարձակ նախադասութիւն 6
5. Յատկացուցիչ բառեր 7
6. Բացայայտիչ բառեր 9
7. Լրացուցիչ բառեր 10
8. Պարագայական բառեր 12
9. Կոչական բառեր 14

Բ. Նախադասութեան տեսակները.

10. Դիմաւոր և անդէմ նախադասութիւն 16
11. Դիմաւոր և երկրորդական նախադասութիւն 17
12. Երկրորդական ենթակայ նախադասութիւն 18
13. Երկրորդական յատկացուցիչ նախադասութիւն 19

§§ Եր.

14. Երկրորդական լրացուցիչ նախադասութիւն 21
15. Երկրորդական պարագայական նախադասութիւն 22
16. Միջանկեալ նախադասութիւն 24
17. Կրճատեալ նախադասութիւն 25
18. Պարզ և բազադրեալ նախադասութիւն 27
19. Միաւորեալ նախադասութիւն 28
20. Պատմական, հարցական, պատասխանական, բացագանչական և հրամայական նախադասութիւններ 30

Մասունք-Բանի

21. Բառերի նշանակութիւնը 33

Ա. Գոյական անուն։

22. Ի՞նչ է գոյական անունը ..... —
23. Առարկաների տեսակները 34
24. Յատուկ և հասարակ գոյականներ 35
25. Գոյական անունների թիւը 37
26. Հոլովները և նոցա նշանակութիւնը 38
27. Հոլովում 42
28. Գոյական անունների պաշտօնը նախադասութեան մէջ ... 43

Բ. Ածական անուն։

29. Ի՞նչ է ածական անունը 45
30. Որակական և յարաբերական ածականներ 46
31. Յատուկ և հասարակ ածականներ 47
32. Որակական ածականների աստիճանները 48
33. Ածականների պաշտօնը նախադասութեան մէջ 49

Գ. Բայ։

34. Ի՞նչ է բայը 50

§§ Եր.

35. Բայերի սեռը 51
36. Բայի եղանակները 53
37. Բայի ժամանակները 55
38. Բայի դէմքերը 56
39. Բայերի թիւը 57
40. Խոնարհում 58
41. Բայերի պաշտօնը նախադասութեան մէջ 60

Դ. Մակբայ։

42. Ի՞նչ է մակբայն 62
43. Մակբայների տեսակները ..... —
44. Մակբայների պաշտօնը նախադասութեան մէջ 63

Ե. Դերանուն։

45. Ի՞նչ է դերանունը 64
46. Դերանունների տեսակները 65
47. Դիմորոշ կամ դերանուանական յօգներ 67
48. Դերանունների պաշտօնը նախադասութեան մէջ 68

Զ. Թուական անուն։

49. Ի՞նչ է թուական անունը և քանի է բաժանվում ..... —
50. Թուական անունների պաշտօնը նախադասութեան մէջ ... 69

Է. Դերբայ։

51. Ի՞նչ է դերբայն և քանի է բաժանվում 70

Ը. Նախադրութիւն։

52. Ի՞նչ է նախադրութիւնը 72

§§ Եր.

Թ. Շաղկապ.

53. Ի՞նչ է շաղկապը ..... 73.
54. Շաղկապների տեսակները 74

Ժ. Ձայնարկութիւն.

55. Ի՞նչ է ձայնարկութիւնը 75
56. Փոփոխական և անփոփոխ մասունք բանի ..... —

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Տուգաբանութիւն

Ա. Հնչիւն, վանկ եւ բառ.

57. Ի՞նչ է հնչիւնը 77
58. Ի՞նչ է վանկը ..... —
59. Ինչից են կազմւում վանկերը 78
60. Ի՞նչ է բառը 79
61. Ձայնաւորների փոփոխման ու կորուսման կանոնները ..... —

Բ. Բառերի կազմութիւնը եւ նշանակութիւնը.

62. Բառերի արմատը 80
63. Նախատիպ և ածանցեալ բառեր 81
64. Պարզ և բարդ բառեր 82
65. Բառերի բուն և փոխաբերական նշանակութիւնը 83
66. Նոյնանշան բառեր 84

Գ. Ուղղագրութեան ընդհանուր կանոնները.

67. Գրերը և նոցա զանազանութիւնը հնչիւններից 85
68. Ձայնաւորների գործածութիւնը 86

§§ Եր.

69. Բաղաձայնների գործածութիւնը 88
70. Տողադարձի կանոնները 90
71. Համառօտագրութիւն 91
72. Գլուխ և մանր տառեր 92

Դ. Գոյական անունների կազմութիւնը.

73. Գոյականների արմատները 93
74. Նիւթական գոյականների ածանցական վերջաւորութիւնները ..... —
75. Վերացական գոյականների ածանցական վերջաւորութիւնները 95
76. Բարդ գոյականներ 96
77. Գոյական անունների հոլովմունքը 97
78. Առաջին հոլովում է սեռականով 98
79. Երկրորդ հոլովում — սեռականով 99
80. Երրորդ հոլովում ան և եան սեռականով 100
81. Ժամանակ ցոյց տուող գոյականների հոլովումը 103
82. Ազգակցութիւն ցոյց տուող բառերի հոլովումը 104
83. Բաղադրեալ գոյականների հոլովումը 105
84. Յատուկ անունների հոլովումը ..... —
85. Կորուսմամբ և փոփոխմամբ հոլովում 108
86. Գոյական անունների յօդը 110
87. Որոշեալ յօդով հոլովում 111

Ե. Ածական անունների կազմութիւնը.

88. Ածականների արմատները 113
89. Որակական ածականների ածանցական վերջաւորութիւնները 114
90. Յարաբերական ածականների ածանցական վերջաւորութիւնները 115

§§ Եր.

91. Դերբայների ածանցական վերջաւորութիւնները 116
92. Բացառական մասնիկներ 117
93. Բարդ ածականներ 118
94. Բաղդատական և գերադրական աստիճանների կազմ. ... 119
95. Ածականների հոլովումը 120

Զ. Թուական անունների կազմութիւնը։

96. Քանակական և դասական թուականներ 122
97. Թուական անունների հոլովումը 125

Է. Դերանունների կազմութիւնը։

98. Դերանունների գործածութիւնը 126
99. Դասական դերանունների հոլովումը 127
100. Ածական դերանունների հոլովումը 131
101. Անորոշ դերանունների հոլովումը 136

Ը. Բայերի կազմութիւնը։

102. Բայերի արմատները 138
103. Բայերի վերջաւորութիւն.—Պարզ, բարդ և բաղադր. բայեր. 139
104. Բայերի պարզ և բաղադրեալ ժամանակները 141
105. Ե՛մ և լինել բայերը ու նոցա խոնարհումը 143
206. Առաջին խոնարհում եւ վերջաւորութեամբ 145
107. Երկրորդ խոնարհում եւ վերջաւորութեամբ 148
108. Երրորդ խոնարհում ալ վերջաւորութեամբ 151
109. Չորրորդ խոնարհում անալ վերջաւորութեամբ 153
110. կրաւորական բայերի խոնարհումը 155
111. Բացառական բայերի խոնարհումը 158
112. Նեղ և չէզ վերջաւորուած բայերի խոնարհումը 860
113. Ցնել վերջացած բայերի խոնարհումը 162

§§ Եր.

114. Կրկին կատարեալ ունեցող բայերի խոնարհումը 163
115. Անդէմ բայեր 166
116. Գիտելիք բայերի վրայ ..... —

Թ. Մակբայների կազմութիւնը։

117. Բուն մակբայներ 168
118. Անուններից ու դերանուններից առնուած մակբայներ... —
119. Մակբայների գործածութիւնը 170

Ժ. Նախադրութիւնների կազմութիւնը։

120. Բուն նախադրութիւններ 171
121. Գոյականից և մակբայից առնուած նախադրութիւններ... 172

ԺԱ. Շաղկապների կազմութիւնը։

122. Արմատական և ածանցեալ շաղկապներ 173
123. Շաղկապների գործածութիւնը 174

ԺԲ. Ձայնարկութիւնների կազմութիւնը։

124. Ձայնարկութիւնների տեսակները 176
125. Ձայնարկութիւնների մաքով գործ դրուած մասունք-բանի 177

ՄԱՍՆ ԵՐԲՈՐԴ

Բաղդասութիւն

126. Բաղդասութիւն և նոցա բաժանումը 178

§ § Եր.

Կապակցութիւն Մասանց-Բանի

Ա. Համաձայնութիւն Մասանց-Բանի.

127. Բայի համաձայնութ. ենթակայի հետ պարզ նախադ. մէջ 180
128. Բայի համաձայնութիւնը միաւորեալ նախադասութ. մէջ 182
129. Բայի ժամանակների գործածութիւնը..... 183
130. Դերբայների կազմած ուրիշ ժամանակները..... 190
131. Բայի գործածութիւնը անդէմ նախադասութեան մէջ..... 191
132. Բաղադրեալ բայի համաձայնութիւնը ենթակայի հետ..... 192
133. Ածական յատկացուցչի համաձայնութ. յատկացեալի հետ 194
134. Գոյական յատկացուցչի համաձայնութ. յատկացեալի հետ 196
135. Բացայայտչի և բացայայտեալի համաձայնութիւնը..... 198

Բ. Խնդրառութիւն Մասանց-Բանի.

136. Խնդրառու և խնդիր բառեր..... 200
137. Հայցական հոլովով խնդիր..... —
138. Սեռական հոլովով խնդիր..... 202
139. Տրական հոլովով խնդիր..... 203
140. Բացառական հոլովով խնդիր..... 206
141. Գործիական հոլովով խնդիր..... 209
142. Ներգոյական հոլովով խնդիր..... 211
143. Նախադրութեամբ խնդիր..... 212

Կապակցութիւն նախադասութիւնների

Ա. Երկրորդական նախադասութիւնների կապակցութիւնը.

144. Ցատկացուցիչ նախադասութիւնների կապակցութիւնը... 213
145. Ցատկացուցիչ նախադասութիւնների կրճատումը..... 216
146. Ենթակայ և լրացուցիչ նախադասութիւնների կապակցութիւնը 217

§ § Եր.

147. Ենթակայ և լրացուցիչ նախադասութիւնների կրճատումը 219
148. Պարագայական նախադասութիւնների կապակցութիւնը. —
149. Պարագայական նախադասութիւնների կրճատումը..... 224

Բ. Անկախ նախադասութիւնների կապակցութիւնը.

150. Անկախ նախադասութիւնների կապակցութեան տեսակները 227
151. Բաղհիւսական կապակցութիւն..... —
152. Ներհակական կապակցութիւն..... 229

Հատուածներ վերլուծութեան համար

1. Ոլիմպոս..... 231
2. Երկու քոյր..... 232
3. Ամերիկայի դիւրը..... 233
4. Իմ երգը..... 235
5. Վայր ընկնող աստղեր..... 236
6. Արաքսի արտասուքը..... 238
7. Սերվիլիոսը Հռոմայ ժողովրդի առաջ..... 239
8. Կառավարութիւնը հին Հայոց մէջ..... 241
9. Երկրագործութիւն և վաճառականութիւն..... 243

Ստացված է 1954 թ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0686585

